ՄԱՏԵՆԱՇԱՐ «ՑՈՒՍԱՔԵՐ» ԹԻՒ 15

Մ. ՎԱՐԱՆԴԵԱՆ

ՀԱՄԱՅՆԱՎԱՐՈՒԹԻՒՆ

ԵՒ

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ

ԳԱՀԻՐԷ
ՏՊԱՐԱՆ «ՑՈՒՍԱՔԵՐ»
1926

9(47.925)
Վ-29

499

ՄԱՏԵՆԱՇԱՐ «ՑՈՒՍԱՔԵՐ» Թիւ 15

Մ. ՎԱՐԱՆԴԵԱՆ

ՀԱՄԱՅՆԱՎԱՐՈՒԹԻՒՆ

ԵՒ

ՀԱՄԱՃԽԱՐՀԱՑԻՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ

3400

ԳԱՀԻՐԷ
ՏՊԱՐԱՆ «ՑՈՒՍԱՔԵՐ»
1926

ՀԱՅ ԳԱ ԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱԿ.
ԳՐԱԴԱՐԱՆ
БИБЛИОТЕКА

ՑԱՌԱՋԱԲԱՆ

Բաղդի քմահաճ բերումով, Հայաստանն այսօր դրուած է «Վօմմունիզմի» նշանակի տակ եւ բնաշխարհի հայ ժողովուրդը պաշտօնապէս անդամագրուած է Երրորդ Ինտերնացիօնալին։ Վասնզի Հայ երկիրը անբաժան մասն է կոմմունիստական, աւելի նիշտ՝ բոլշեվիկեան Ռուսաստանի, որի ձեռքով ստեղծուած է այդ Երրորդ Ինտերնացիօնալը իր բազմաթիւ նիւղաւորումներով արեւմտեան եւ արեւելեան երկիրներում,— ստեղծուած է աշխարհը յեղաշրջելու եւ սօվէտական իրաւակարգը ամենուրեք հաստատելու նպատակով։

Բնականաբար, Ռուսաստանի իրադարձութիւնները եւ այն բոլոր անցքերը—դաւեր, խլրտումներ, ապստամբութիւններ ու վերիվայրումներ— որոնք Երրորդ Ինտերնացիօնալի դրօշակի տակ եւ Մօսկուայի սադրանքներով ու նիւթական աջակցութեամբ տեղի են ունենում երկրագնդի բոլոր ծայրերում, Բալկաններից մինչեւ Մարօկկօ, Թիւրքիայից մինչեւ Չինաստան ու Հնդկաստան, փոքրկելով Ասիան ու Աֆրիկան, ուրի հանելով մահմէտական մարդկութիւնը ընդդեմ արեւմտեան պետութիւնների,— վաղ թէ ուշ իրենց ուժգին անդրադարձումները պիտի ունենան եւ կովկասեան ժողովուրդների ճակատագրի վրայ...

Ո՞ւր է մղում ռուսական յեղափոխութեան

ստեղծած այս կազմութիւնը, ի՞նչ է ներկայացնում սովետական Ռուսաստանը, զարգացման ի՞նչ երաշխիքներ ունի նա, ի՞նչ է բոլշեվիկեան յեղաշրջման բնոյթը, որքա՞ն է նա համապատասխանում ընկերային գիտութեան պահանջներին, ի՞նչ է, վերջապես, *Երրորդ Ինտերնացիոնալը*, որ այսօր միջազգային կազմութեան խոշոր ազդակներից մինն է, մի կազմակերպութիւն, որի անողոք դիրեկտիվների թելադրութեամբ կատարուեց հայ ժողովրդի քաղաքական ողջակիզումը...

Ահա խնդիրներ՝ հրատապ ու յուզիչ՝ որ այսօր զբաղեցնում են ողջ աշխարհը, զբաղեցնում են եւ մեր երկրի հարցասէր երիտասարդութիւնը, ստեղծում են կարծիքներ ու տրամադրութիւններ...։ Լաւ է, որ գիտնանք այդ Նոր Ոյժի էութիւնը, ծանօթանանք նրա դեկավարող սկզբունքներին ու կիրառած մեթոդներին, հետեւենք նրա ելեւէջին բոլոր քաղաքակիրթ երկիրների մէջ, հետեւենք եւ զաղափարային այն տիտանեան զօտեմարտին, որ սկսուած է Երկրորդ ու Երրորդ Ինտերնացիօնալի միջեւ— առաջինը ընկերվարական, վերջինը՝ կոմունիստ կամ բոլշեվիկ— մի զօտեմարտ, որի ելքից կախուած է Խորհրդային Ռուսաստանի եւ նրա բոլոր բաղկացուցիչ տարրերի բախտը։

ՀԱՄԱՅՆԱՎԱՐՈՒԹԻՒՆ

ԵՒ

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ

(ԿՈՄՄՈՒՆԻԶՄԻ ՀՈՍԱՆՔԸ.
ԵՐԿՐՈՐԴ ԵՒ ԵՐՐՈՐԴ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼ)

ՄԻՆՉԵՒ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Ինտերնացիոնալի ծնունդն ու հաւատամքը.— Մարքս, Բակունին և Լենին.— Մահ և վերածնունդ.— Երկրորդ Ինտերնացիոնալը.— 1889 թուի Պարիզեան Համագումարը.— Շարժման ծաւալումը և փոքրիկ ազգերը.— Հ. Յ. Դաշնակցութիւնը Ինտերնացիոնալի մէջ.—

Համայնավարութիւնը «բոլշեվիզմ» անուան տակ՝ մի նոր երեւոյթ է և, կարելի է ասել, զուտ ռուսական երեւոյթ։ Նա ունի, սակայն, գաղափարային ազգակցութիւն արեւմտեան ընկերային հոսանքների հետ։ Մինչ-

չեւ 1917 թուականը «բոլշեվիզմ» բառը *) հոլովւում էր միայն ռուս էմիգրանտների նեղ շրջաններում։ Աշխարհը գիտէր մի ուրիշ անուն, հին ու տարածուած մի բառ— սոցիալիզմ, ընկերվարութիւն։ Նա ֆրանսիական ծագումն ունի։ Ֆրանսիայի մէջ է, որ մօտաւորապէս մի դար առաջ ծայր են տուել աշխատաւորական շարժումները և նրանց լուսաբանող ու հիմնաւորող տեսութիւնները, թէորիաները։ Նոյն շարժումների թատր է եղել— աւելի խոշոր ծաւալով— Անգլիան, ուր սկզբից իսկ նա ընդունեց գործնական բնոյթ, զերծ թէորիական բարդ ու կենսաւոր կառուցուածքներից։ Ապա շարժումն անցաւ Գերմանիա և հեղեղեց ողջ աշխարհը։

Լինելով էութեամբ համաշխարհային եւ դուրս գալով կամաց-կամաց սկզբնական խարխափումների շրջանից, աշխատաւորական շարժումը ստեղծեց իր միջազգային օրգանը, իր

*) Ուրոպացիք երբեմն գործածում են մարքսիմալիզմ, որպէս համանիշ ռուսական բառի։ Հայերս չունինք համապատասխան բառ։ «Բոլշեվիկ» թարգմանւում ենք մեծամասնական։ Այդպէս կոչւում էր Ռուսական Սոցիալ-դեմոկրատիայի մէկ հատուածը, որ Լենինի ղեկավարութեամբ կազմում էր Թուական մեծամասնութիւն, դժգոհ էր կուսակցութեան մեղկ, պատեհապաշտ ընթացքից և քարոզում էր, 1903 թուականից իվեր, ուեւլի կոթով, յեղափոխական գործելակերպ՝ առաւելապէս, «մաքսիմալիստ» պահանջներով։ Լենինաակերդ հատուածը կոչւում էր մենշեվիկ, որ ասել է փոքրամասնական։ Բնաւ պէտք չէայ հայացնելու այդ բառերը, որ դարձել են համաշխարհային։

քաղաքական կազմակերպութիւնը, որ և կոչուեց Ինտերնացիոնալ։ Փոքր ինչ կանգ առնենք այդ կազմակերպութեան վրայ։

Եղել է Առաջին Ինտերնացիոնալ, եղել է Երկրորդը, կայ այժմ Երրորդը։

Ներկան ըմբռնելու համար, հարկ է պատմել — դէթ թռուցիկ գծերով— անցեալը։

Ինտերնացիոնալը— Միջազգային Աշխատաւորական Միութիւնը— Ծնունդ է առել 1864-ին Լօնդօնի մէջ և նոյն Լօնդօնում նախանցեալ տարեայ Սեպտեմբերին տօնեցինք նրա գոյութեան 60-ամեակը։

Լօնդօնը մեծագոյն որրանն եղաւ աշխատաւորական շարժումների և ընկերվարական համագումարների, որովհետեւ Անգլիայի մէջ էր ամենազարգացած տնտեսութիւնը և ամենազարգացած քաղաքական իրաւակարգը։ Այնտեղ էին ապաստանում և ցամաքային երկիրների հալածական ըմբոստները, գերման, ռուս, մաջառ, ֆրանսիացի, իտալացի և այլ յեղափոխական պարագլուխները։

Եւ իրօք աքսորականներն էին, որ հիմնեցին— Անգլիայի և Ֆրանսիայի արհեստակցական միութեանց ներկայացուցիչների հետ— առաջին ընկերվարական միջազգային կազմակերպութիւնը։ Այդ աքսորականների մէջ էր գերմանացի Կարլ Մարքս, որ եղաւ Ինտերնացիոնալի գլխաւոր նախաձեռնողն ու հիմնադիրը և որի ներշնչմամբ կազմուեցաւ Միջազգային Աշխատաւորական Միութեան ծրագիրն ու կանոնադրութիւնը։

Ծրագրի մէջ յայտարարուած էր հետեւ-

եալը։—

Դրամագլուխը և վերին դասակարգերը ճնշում հարստահարում են աշխատաւոր ընդհանրութիւնը, արտադրելով թշուառութիւն ու նոր ձեւի ստրկութիւն։ Ուստի բոլոր երկիրների աշխատաւորները պէտք է միանան՝ ընդհանուր ուժերով պայքարելու տնտեսական անարդար կարգերի դէմ։ Պայքարը մէկ գերագոյն նպատակ ունի— վերացնել ստրկութեան ու կախումի բոլոր ձեւերը, վերացնել միանգամ ընդմիշտ չքաւորութեան պատուհասը, որ այլասերում ու այլանդակում է մարդկային ցեղը և հաստատել մարդկանց միջեւ քաղաքական հաւասարութեան հետ՝ նաև տնտեսական հաւասարութիւն։

Այդ նպատակով հիմնուեցաւ Ինտերնացիոնալը և հաստատեց իր կենտրոնական մարմինը Լօնդօնի մէջ։ Լօնդօնից նա ձգտեց ստեղծել ցամաքային բոլոր երկիրներում աշխատաւորական միութիւններ։

Եւ Ինտերնացիոնալը ունեցաւ պարբերաբար իր համագումար ժողովները— կօնգրէսները— Ժընեւում, Լօզանում, Բրիւսէլում, Բազէլում, Հաագում, այն ժամանակուայ միակ ազատ, ռամկավարական վայրերի մէջ, ուակից պարբերաբար ազդարարում էր աշխարհին ընկերվարութեան, սոցիալիզմի աւետարանը։

Երկար կեանք չունեցաւ միջազգային այդ անդրանիկ կազմակերպութիւնը։ Ներքին և արտաքին ոյժեր փորում էին նրա հիմքերը։ Եւրոպան, բացի Անգլիայից, Զուիցերիայից, Հոլանդայից ու Բելգիկայից, ապրում էր դեռ բռնապետական ռէժիմի տակ և սոցիալիզմի գաղափարը հալածական էր գրեթէ ամբողջ ցամաքի վրայ։

Միւս կողմից, կազմակերպութեան ձեւը կենտրոնական էր և չէր կարող տեւողաբար միացնել իր մէջ տարբեր երկիրների աշխատաւորական ու մտաւորական խմբակցութիւնները, անգլիացի, ֆրանսիացի, գերման, ռուս, իտալացի, սպանիացի և այլն, իրենց տարբեր պայմաններով, կրթութեամբ ու խառնուածքով։ Լօնդօնի կենտրոնական մարմնի մէջ ղեկավարող դէմքն էր Կարլ Մարքս. որքան էլ նա հմուտ ու ձեռնհաս լինէր, չէր կարող այնուամենայնիւ Լօնդօնից վարել ամբողջ Եւրոպայի աշխատաւորական շարժումը։

Սկսուեց անխուսափելի պայքարը ընդդէմ Մարքսի ու կենտրոնի և ի նպաստ ապակենտրոնացման։ Այդ պայքարող բանակի մէջ ամենանշանաւոր դէմքն էր ռուս անիշխանական Բակունին 1), երդուեալ, անհաշտ հակառակորդ Մարքսի ու նրա վարդապետութեան։

Բակունին չունէր Մարքսի ոչ տաղանդը, ոչ էլ գիտական հեղինակութիւնը. այնուամենայնիւ, հանգամանքներից նպաստաւորուած, նա կարողացաւ փոթորիկ հանել Մարքսի դէմ, մանաւորապէս Իտալիայի ու Սպանիայի աշխատաւորական շրջաններում— ուր

1) Բակունինի վարդապետութեան մանրամասն ցուցադրութիւնը տեսնել մեր միայլ աշխատութեան մէջ, «Հոսանքներ», Ժընև 1911, «Դրօշակի» տպարան։

միշտ էլ ուժեղ են եղած անիշխանական հակումները — և նա եղաւ գլխաւոր հեղինակները մէկը Ինտերնացիոնալի կործանման։

Պատմական զարգացումը իր քմահաճոյքներն ունի։ Մի այլ ռուս, Ուլիանով Լենին, խմորուած նոյն Բակունինեան ցնորապաշտ գաղափարներով, մօտ կէս դար յետոյ նոյնանման փոթորիկ պիտի հանէր ընդդէմ Երկրորդ Ինտերնացիոնալի և Մարքսեան ընկերվարութեան։

Լենին ևս Մարքս չէր, ոչ Էնգելս և ոչ Փուէյ. մի կողմանի էր նրա մտաւոր պատրաստութիւնը, սահմանափակ էր նրա գիտական-փիլիսոփայական մշակոյթը և չատ հեռու էին նրա հրապարակագրական ու հոսանքական կարողութիւնները։ Անուամենայնիւ, նա մեծ արգելքներ նիւթեց համաշխարհային սոցիալիզմի դէմ — ինչպէս կը տեսնենք յետագայ էջերում — առաջ բերաւ աննախընթաց պառակտումներ միջազգային աշխատաւորական զանգուածներում։ Այդտեղ ևս հանգամանքները, պատմական բացառիկ միջավայրը, հոգրապէս աջակցեցին գործող ու կամքատ Անհատին — և այդտեղ է պատճառը Լենինիզմի ժամանակաւոր յաջողութեանը, եթէ յաջողութիւն կարելի է անուանել Ռուսաստանի հիմնայատակ փլուզումը և միջազգային համատարած ռէակցիան ընդդէմ սոցիալիզմի *) ու դէմոկրատիզմի...

*) Սոցիալիզմ և ընկերվարութիւն, սոցիալիստ և ընկերվարական գործածում եմ, իբրև նոյնիմաստ բառեր։ Նմանապէս բոլշեվիկ և կոմունիստ բառերը։

Առարկայական պայմանները կուռան. եղան 60-ական թուականներին Լենինի ցեղակից ու գաղափարակից Բակունինին, որի կործանարար հանճարը պահ մի յաղթանակեց ընկերվարական շինարար հոսանքի դէմ։

Ժամանակաւոր էր «յաջողութիւնը»։ Ինտերնացիոնալը լուծուեցաւ 1872-ին, ութ տարուայ ալեծուփ գոյութիւնից յետոյ. բայց վերաստեղծուեց աւելի լայն ծաւալով 1889ին։

Առաջին Ինտերնացիոնալը մեռած էր. մեռած՝ և նրա ստեղծագործող վարպետը, Կարլ Մարքս։ Գաղափարը ապրում էր։ 1889-էն ի վեր նա աճեց, զարգացաւ նոր, Երկրորդ Ինտերնացիոնալի մէջ։

Նպատակը նոյնն էր — աշխատաւորութեան տնտեսական և քաղաքական ազատագրումը։ Կարգախօսը նոյնն էր — «Պրոլետարներ համայն աշխարհի, միացէք»։

1889-ին Պարիզի մէջ հաւաքուած էին արեւմտեան և արեւելեան Եւրոպայի ամենափայլուն ընկերվարական դէմքերը. Գերմանիայից՝ Բէբէլ և Լիբկնեխտ։ Ֆրանսիայից՝ Գեդ, Վայեան, Լաֆարգ։ Անգլիայից՝ Կէր Հարտի, Ուիլեամ Մորիս։ Բելգիայից՝ Սէզարը Պէպ, Վոլդերս և Անսիլ։ Հոլանդայից՝ Դոմէլ Նիւվենհաուս։ Իտալիայից՝ Անդրէա Կոստա և Ամիլկարէ Չիպրիանի։ Սպանիայից՝ Իգլեզիաս։ Աւստրիայից՝ Վիքտոր Ադլեր։ Լեհաստանից՝ Դաշինսկիյ։ Ռուսաստանից՝ Լավրով և Պլեխանով։

Շուրջ 400 պատգամաւորներ։ Նիստը բացուեց Յուլիս 14-ին։ 1889-ի Յուլիս 14...

խորհրդաւորթեամբ։ Ուղիղ 100 տարի առաջ Պարիզեան ժողովրդի բուռն գրոհի տակ ընկել էր Բաստիլը, քաղաքական բռնապետութեան համաշխարհային խորհրդանիշը։ Այժմ մի դար յետոյ գումարուել էր նոյն Պարիզի մէջ Աշխատաւորութեան Միջազգային Պարլամենտը, գումարուել էր որոշ, միահամուռ ցանկութեամբ՝ գրոհ տալու կապիտալիստական Բաստիլի դէմ, խորտակելու տնտեսական բռնապետութեան լուծը։ Երկրորդ ինտերնացիոնալի ծնունդն էր, առաջինի չաթունակութիւնը։

Պարիզը, դրոշազարդուած այդ օրերում, հիւրընկալել էր համաշխարհային ցուցահանդէսը։ Ֆրանսիան ու ողջ աշխարհը տօնում էին Աշխատանքի ու Քաղաքակրթութեան տօնը։ Սոցիալիզմի գաղափարական առաջնորդներն էլ դիտմամբ այդ օրն էին ընտրել՝ յիշեցնելու համար միջազգային կապիտալիզմին, որ անիրաւութիւններ դեռ շատ կան աշխարհի մէջ և որ տիրող կարգերը կարօտ են հիմնական վերիվայրումի։

Ուտոպիստներ, ցնորամիտ երազողներ չէին աշխատաւորութեան առաջնորդները։ Նրանք գիտէին, որ տնտեսական Բաստիլը կործանելը դիւրին բան չէ, գիտէին որ անհրաժեշտ է տասնեակ տարիների ճիգ ու աշխատանք, պրոպագանդ ու կազմակերպում, ռէֆորմների, բարենորոգչական փորձերի երկայնաձիգ մի շարան։ Գործնական մարդիկ էին նրանք — և «հաւատոյ հանգանակը» ցուցադրելով հանդերձ, հեռաւոր նպատակները հոլովելով հանդերձ, հետամուտ էին կենդանի գործի. պա-

հանջում էին կառավարութիւններից՝ ապահովել իրաւազուրկ աշխատաւորների կեանքն ու վաստակը, մանկութիւնն ու ծերութիւնը, պահանջում էին սահմանել 8-ժամեայ աշխատանքի օր, աւելացնել օրապահիկը և այլն։

Այնուհետեւ պարբերաբար գումարւում էին Ինտերնացիոնալի կոնգրէսները, արծարծում էին աշխատաւորութեան կեանքը չոչափող խնդիրներ, — բանւորական օրէնսդրութիւն, արհեստակցական շարժում, գործադուլների օրինականացում, միլիտարիզմ ու համաժողովրդային բանակ, կանանց իրաւունքները, մայիսեան տօն, պարլամենտական գործունէութիւն, կռիւ յանուն ընտրողական իրաւունքի, կռիւ յանուն քաղաքական իշխանութեան, կռիւ ընդդէմ իմպերիալիզմի ու պատերազմների, կռիւ ընդդէմ ալքոհոլի ու այլասերումի և այլն և այլն։

Մեր նպատակից դուրս է՝ երկարօրէն ցուցադրել Ինտերնացիոնալի մի քանի տասնեակ տարիների արգասաւոր գործունէութիւնը։ Ասենք միայն որ 1889-էն ի վեր աստիճանաբար աճելով նա ցանցատեց ողջ լուսաւոր երկրագունդը իր ծաւալուն կազմակերպութիւններով, աճեց մասնաւորապէս Անգլիայում, Գերմանիայում, Ֆրանսիայում, Իտալիայում, Բելգիայում, Աւստրօ-Ունգարիայում և անգամ միապետական Ռուսաստանում, որ երկար ժամանակ Ինտերնացիոնալի մէջ ներկայացնում էր Գիւրգի Պլեխանով, իսկ 900-ական թուականներէն ի վեր, նրան աւելացան Լենին և սոցիալիստ-յեղափոխական կուսակցութեան

վարիչները՝ Ռուբանովիչ, Զերնով և ուրիշներ։

Ահեղ Ինտերնացիոնալի թիւն ու կշիռը մեծ ազգերի խորհրդարաններում և այնտեղ տասնեակ տարիներ հնչեց Ժորէսների ու Բէբէլների ձայնը, անդուլ խարազանելով տիրող անիրաւութիւնները և արծարծելով ընկերային հաւասարութեան հաւատամքը։ Ընկերվարական վարդապետութիւնը տարածուեց արեւմուտքից դէպի հարաւ ու արեւելք, թափանցելով մտաւորականութեան ու չարքաշ աշխատաւորութեան լայն ծալքերը, ոզոզելով կեանքի բոլոր ասպարէզները — քաղաքականութիւն, գեղարուեստ, գիտութիւն, փիլիսոփայութիւն և այլն։

Հեղեղէն տարուեցան նաեւ հեռաւոր փոքրիկ ազգերի մտաւորական տարրերը, որ կ'ուսանէին եւրոպական համալսարաններում։ Տարուեցաւ, բնականաբար, և հայ երիտասարդութիւնը։ Որքան աւելի դժուար է մի ազգի վրայ ծանրացած բռնապետութեան լուծը, այնքան աւելի խանդավառութեամբ են նրա զաւակները որդեգրում արեւմտեան ազատաշունչ վարդապետութիւնները։ 1887-ին արդէն «Հնչակ»ը հիմնւում էր արտասահմանում ընկերվարական նշանաբաններով, և քիչ յետոյ հրապարակ էր գալիս Հ. Յ. Դաշնակցութիւնը երկրի մէջ նոյն «հեռաւոր նպատակի» տեսութիւններով... թէեւ, ի հարկէ, զուտ ընկերվարական բնոյթ չէր կրում այդ կուսակցութիւնների կուրը Թիւրքիայում... Դա զասակարգային կուիւ չէր արեւմտեան իմաստով։ «Դաշնակցութիւնը» առաջին հայ կուսակցութիւնն էր, որ ընդունուեցաւ Ընկերվարական Ինտերնացիոնալի մէջ, ուր աշխատում է քսան տարուց ի վեր։ Նպատակը նոյնն էր — ծառայեցնել Ինտերնացիոնալը որպէս ամբիոն՝ հայոց ազատութեան դատը արեւմտեան լայն զանգուածներին քարոզելու համար։

«Դաշնակցութեան» առաջին քայլը Մի, ջազգային Աշխատաւորական Ատեանի առջեւ արուեցաւ 1896-ի Օգոստոսին, երբ «Դրօշակ»ի խմբագրութեան որոշումով — այն ատեն՝ Ռոստոմ, Յոնան, Իւսուփեան, Մինասեան — գնացի Լօնդոնի Միջազգային Կոնգրէսին ներկայացնելու Դաշնակցութեան յիշատակագիրը և արծարծելու Թիւրքահայ դատը։ Ներկայացանք Քրիստոֆորի հետ նաեւ 1900-ի պարիզեան բազմամարդ համագումարին։

Իսկ 1907-ին կուսակցութիւնը արդէն պաշտօնապէս ընդունուեց Ինտերնացիոնալի մէջ, իբրեւ հայկական ժանանգիւղ, հայ աշխատաւորութեան ներկայացուցիչ։

ՊԱՏԵՐԱԶՄ ԵՒ ՊԱՌԱԿՏՈՒՄ

Գերման Սոցիալ-դեմոկրատիայի տարբերութիւնը.— Ժորէս և Բեբել գոտեմարտի մէջ.— Ահազանգը Բազելի կոնգրէսում.— Աւստրիական վերջնագիրը և գեղջերի շրջայաղերծումը.— Ժորէսի մահը.— Պատերազմի պատասխանատուութիւնները.— Ընկերվարական կուսակցութիւնների դիրքը պատերազմող երկիրներում.— Կոմունիստ կուսակցութեան՝ հայրենիքի պաշտպանութեան շնորհով.— Ինտերնացիոնալի վերանորոգման փորձեր.— Ցիմմերվալդ և Քինթալ.— Լենին՝ զուիցերական կոնգրէսներում.— Մերժուած Ռուսիայի սոցիալիստներից՝ նա գնաց կազմակերպելու Սովէտները Ռուսաստանում.—

Մեծ պատերազմը անխնայ եղաւ դէպի Երկրորդ Ինտերնացիոնալը։ Նախորդ կոնգրէսների մէջ գերմանացի, ֆրանսիացի, անգլիացի և այլ ընկերվարական պարագլուխները հանդիսաւոր կերպով որոշել էին, որ աշխատաւոր ընդհանրութիւնը բոլոր հնարաւոր միջոցներով պիտի ձգտէ միջազգային ընդհարումների առաջն առնելու, իսկ պատերազմը ծագելու պարագային, նոյն աշխատաւորութիւնը իւրաքանչիւր երկրում պիտի ջանայ իր տրամադրելի միջոցներով ըստ կարելւոյն շուտ վերջ տալու արիւնահեղութիւններին։

Այդ ծանր խնդիրը սուր կերպով դրուած էր դեռ 1907-ին, Շտուտգարտի միջազգային կոնգրէսում, ուր ֆրանսիացիների կողմից խօսեցին Ժորէս ու Վայեան, գերմանացոց կողմից՝ Բեբել և Ֆոլլմար։ Արդար լինելու համար պէտք է չեշտենք, որ ընդհանրապէս

ֆրանսիացի սոցիալիստները շատ աւելի անվերապահ ու վճռական էին իրենց յայտարարութեանց մէջ։ Նրանք թելադրում էին մինչեւ իսկ սարքել ընդհանուր գործադուլ ու զինադուլ՝ պատերազմը արգիլելու համար։ Նրանք այն ներքին համոզումն ունէին, որ պատերազմի վտանգը սպառնում էր յամենայն դէպս ոչ Ֆրանսիայի կողմից... Գերման պարագլուխները վարանոտ էին և առաջարկում էին տարտամ բանաձեւեր... Նրանք վախենում էին, թէ չկարողանան իրագործել ընդհանուր գործադուլն ու զինադուլը, վախենում էին, թէ կայսերական կառավարութիւնը յանուն պրուսական երկաթէ կարգապահութեան, զանգւածօրէն կոտորել տայ ըմբոստներին։ Այդ վախը գոյութիւն ունէր, փոքր ինչ նուազ չափով, նաեւ ֆրանսիական աշխատաւորութեան համար։

Շտուտգարտում եղած բոլոր ականատեսների յիշողութեան մէջ անմոռանալի կը մնայ հանդիսաւորական այն գոտեմարտը, որ տեղի ունեցաւ այդ պատմական համագումարում Ժորէսի և Բեբելի միջեւ։ Դրանից երեք տարի առաջ, Ամստերդամի կոնգրէսում, Բեբելն էր, որ, իբրեւ պաշտպան կարմիր, անհաշտ յեղափոխական բանաձեւերի, ընդհանուր ծափերի մէջ խարազանում էր Ժորէսի պատեհապաշտութիւնը, նրա չափաւոր գաղափարները։ Այժմ Բեբելն էր, որ առիւծի գլուխը խոնարհեցրած, կրում էր Ժորէսեան լախտի հարուածները։ Ժորէս խորունկ ցաւով էր արձանագրում, որ գերման աշխատաւորութիւնն ու սո-

3400

ոիալիզմը, հակառակ իրենց ահարկու թուին, չեն ներկայացնում յեղափոխական կարեւոր ոյժ և որ այնքան նուրբ, հրատապ հարցի մէջ, ինչպիսին է պատերազմի և խաղաղութեան հարցը. Բէբէլները չեն կարողանում արտասանել իրենց վճռական, ընկերվարական խօսքը...

Ֆօռէս խարանում է Բէբէլի ընթացքը և մի օր ցասումով ցացագանչում.

— «Գերմանական Սօցիալ-Դեմօկրատիայի թուլութիւնը մեծագոյն վտանգն է համաշխարհային խաղաղութեան համար...»։

Մարգարէական խօսքեր էին։ Չէր սխալւում այդ հոյակապ մարդը, որ տասնեակ տարիներից ի վեր այնքան նիզակներ էր ջարդել խաղաղութեան համար, թէ՛ պարլամենտի ու ժամուլի մէջ և թէ հրապարակային ժողովներում։ Գերման Սօցիալ-Դեմօկրատիան, արդարեւ, իր քանակով ու կուռ, ծաւալուն կազմակերպութիւններով ամենահզօր կազմակերպութիւնն էր Գերմանիայում և եթէ կամենար աւելի կորովի ընթացք բռնել իր հայրենի կառավարութեան հանդէպ, գուցէ չէր պայթի աշխարհասասան աղէտը...

Ֆօռէս նոյն ահազանգը հնչեցրեց ու նոյն աղիողորմ կոչերը՝ Բազելի կօնգրէսում, 1913-ի Դեկտեմբերին, և Բրիւսէլում, պատերազմի նախօրեակին, 1914-ի Յուլիսի վերջին օրերում, երբ արդէն հրատարակւել էր աւստրիական վերջնագիրն Սերբիայի դէմ և երբ մեծ հաեստորի ձայնը հնչում էր, որպէս մրրկահաւի գուժաբեր ճիչ... Տասնեակ տարիներ ստեղծագործել էր նա իր չքեղ հանճարով, տասնեակ տարիներ քարոզել էր համաշխարհային եղբայրութեան գաղափարը, որ տարածուել էր լայն ծփանքներով բազմամիլիոն զանգւածների մէջ, տասնեակ տարիներ ընկերվարութիւնը ողջ Եւրոպայում կատարել էր վերաշինութեան ու ընկերային արդարութեան վիթխարի գործ, զարկ տալով ամենուրեք աշխատաւորական ռէֆորմներին,— և ահա մի չարաշուք հոգմ գալիս էր յանկարծակի խորտակելու բովանդակ շէնքը և յետ չրջելու պատմութեան անիւը դէպի մառլ ու անաւոր միջնադարը...

Ֆօռէս վերադարձաւ Բրիւսսէլի ժողովից ընկճուած ու տրտում. ուրագանը գալիս էր. աւստրօ-գերմանացիք նետել էին արդէն աղետաւոր կայծը վառօդի հսկայ տակառի մէջ — որ էր՝ հռչակաւոր Զինեալ Խաղաղութիւնը — և մեծ ֆրանսիացին բնաւ վստահ չէր, թէ հզօր Սօցիալ-Դեմօկրատիան ոեւէ լուրջ փորձ պիտի անէր՝ աղէտը կանխելու կամ կասեցնելու...

Վերադարձաւ Պարիզ և, մի երկու օր յետոյ, ընկաւ շնչասպառ, գռեհիկ ու վարձկան մարդասպանի հարուածների տակ։ Խորշակի առաջին զոհն եղաւ այդ մեծ մարդը՝ որ յետադէմ, արքայապաշտ խաժամուժի աչքում հայրենիքի դաւաճան էր, Գերմանիայի գործակալ...

Պատերազմը վրայ հասաւ և վայրկենաբար օդը ցնդեցին միջազգային ընկերվարութեան բոլոր որոշումները։ Գերման Սօցիալ-Դեմօկրատիան, բացառութեամբ մի քանի ան-

հատների, թիկունք կանգնեց իր հայրենի կառավարութեան, քուէարկեց պատերազմական բիւդջէն, կանգնեց, մի խօսքով, «հայրենիքի պաշտպանութեան» գեռնի վրայ։

Նոյն դիրքը բռնեց Ֆրանսիայի ընկերվարական կուսակցութիւնը, որի առաջնորդները — Ժիւլ Գեդ, Սանբա, Ալբեր Թոմա — մտան նոյնիսկ նախարարական դահլիճի մէջ։ Ֆրանսիացոց համար ակնյայտ ճշմարտութիւն էր, որ նախայարձակը Գերմանիան էր։ Ակնյայտ էր և անգլիական սոցիալիստների համար, որոնց առաջնորդը՝ Արտուր Հինդերսօն, նոյնպէս մտաւ ազգային կառավարութեան մէջ, որպէս նախարար Ազգուիթի և Լլոյտ Ջորջի հետ։

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ

Պատերազմի պատասխանատուութեանց կնճռոտ հարցի շուրջը ստեղծուած է արդէն մեծ գրականութիւն, որի քննութեան մէջ չը պիտի մտնենք, բնականաբար։ Ցիշենք միայն մի քանի փաստեր։ Ցիշենք նախ, որ ինքը գերման սոցիալիզմի աշխարհահռչակ տեսաբանը, Կարլ Կաուցկի—որին Ցեղափոխութիւնից յետոյ յանձնուած էին պետական արխիւները՝ ուսումնասիրելու համար — մեծահատոր աշխատութեան մէջ *) անժխտելի վաւերագրերով հաստատեց, որ պատերազմը շղթայազերծողը զոյգ

*) Wie der Weltkrieg ausbrach (Ինչպէ՞ս բռնկուեց համաշխարհային պատերազմը)։

ցեղակից դաշնակիցներն են — Աւստրիան և Գերմանիան։ Նոյնը Կաուցկիից առաջ, դեռ վիլհէլմեան ռէժիմի տակ, հերոսական քաջութեամբ յայտարարած էր արդէն ի լուր աշխարհի Կարլ Լիբկնեխտ։ Նոյնը յօդուածների ու ճառերի մէջ շեշտած են Էդուարդ Բերնշտայն, Հասազէ, Կուրտ Այզներ և ուրիշներ *)։

Կաուցկու բերած վաւերագրերը կարդացողի մէջ ոեւէ տարակոյս չի մնում, որ Վիլհէլմ կայսրը, միանգամայն վստահ Մեծն Բրիտանիոյ չէզոքութեան վրայ, դէպքերի սկզբից ամէն կերպ քաջալերել է իր դաշնակից Աւստրիային ու մղել նրան դէպի պատերազմ։ Աւստրիան յանդգնօրէն նետուել էր Սերբիայի վրայ, խորհելով, որ նրա ցեղակից Ռուսաստանը պիտի համակերպէր, ինչպէս որ համակերպել էր 1908-ին, երբ Աւստրիան գրեց իր թաթը Բոսնիա-Հերցեգի վրայ և վերջնականապէս կցեց այն իր հողերին։ Երբ տեսաւ, որ Ռուսաստանը այս անգամ չի զիջում և խնդիրը լուրջ կերպարանք է առնում, Աւստրիոյ հրամանատարները պատուաւոր ելք փնտռեցին, բայց Վիլհէլմը թոյլ չտուեց փախչել։

Արդէն 1914-ի Յուլիսի վերջերին, Սերբիայի ուղղուած վերջնագրից յետոյ, Գերմանիայի երկդիմի ընթացքը գուշակել էր տալիս գալիք կատաստրոֆը։ Բերլինը դիմում էր Լոնդոնին և առաջարկում, որ Անգլիան իր չե-

*) Լիբկնեխտ և Այզներ—վերջինը Բավարիայի սոցիալիստ նախարարապետ Ցեղափոխութիւնից յետոյ — սպանուած են արքայականների ձեռքով։

զոքութիւնը յայտարարէ այն պարագային համար, երբ աւստրօ-գերմանները կը բաղխուին ֆրանկօ-ռուսների հետ։ Գրէյ, բրիտանական արտաքին գործոց նախարարը, պատասխանում է (1914 Յուլիս 30-ին), որ այդ առաջարկը անընդունելի է։ Յաջորդ օրը Գրէյ հրաւիրում է միաժամանակ ֆրանսիական և գերման կառավարութիւններին, որ նրանք երկուսով պարտաւորուեն յարգելու Բելգիայի չեզոքութիւնը։ Ֆրանսիան տուեց յանձնառութիւն այդ իմաստով, մինչ Գերմանիան խուսափողական պատասխան տուեց։ Գերմանիան մերժեց նաեւ Գրէյի առաջարկը՝ յանձնելու վճռը Իրաւարար Ատեանի։ Գերման կառավարութիւնը յորդորում էր Գրէյին, որ նա կանգնեցնէ Ռուսաստանում սկսուած զօրաշարժը... թէեւ ինքն եւս եռանդով պատրաստուում էր պատերազմի և պիտի կատարէր զօրաշարժը ոչ Ռուսիոյ պէս, այլ կայծակի արագութեամբ։ Տեսնելով Բերլինի անհաչտ ընթացքը—և մանաւանդ Իրաւարար Ատեանի մերժուելը—Գրէյ չէր կարող հարկադրել Ռուսաստանին կանգնեցնելու զինուորական պատրաստութիւնները, որոնք հաղորդակցութեան միջոցների կիսանահապետական վիճակում և երկրի հակայական տարածութեան արգելքների մէջ կատարուում են խիստ դանդաղօրէն։

Մէկ բան միայն կարող էր փրկել կացութիւնը, կանգնեցնելով զինուորական պատրաստութիւնները բոլոր կողմերում... եթէ Անգլիան այն օրերում, ի տեղի ապարդիւն յորդորների յայտարարէր վճռականապէս, որ

բաղխումի պարագային ինքը պիտի անցնէր Ֆրանսիայի և Ռուսաստանի կողմը... Սակայն, մարդկութեան չար բախտից, անգլիական կառավարութիւնը այն օրերում դեռ պատրաստ չէր այդպիսի մի յայտարարութիւն անելու։ Արեց միայն այն ժամանակ, երբ հրդեհը բռնկուած էր։

Պատերազմը կամեցել էր Վիլհէլմ կայսրը, կամեցել էին թագաժառանգը ու բարձր Սպայակոյտը, որոնց աչքում գերման բանակը անպարտելի էր։ Եւ իրօք նա պիտի մնար անպարտելի ու յաղթական՝ Ֆրանսիայի, Ռուսաստանի, Իտալիայի, Բելգիայի, Ռումանիայի ու Սերբիայի դէմ, պիտի իրագործէր աշխարհակալութեան ու հեգեմոնիայի իր երազը, եթէ Անգլիան և յետագայում Ամերիկան չնետուէին պատերազմի բեմ...

Որքան էլ ճիշտ է, որ Ֆրանսիան Դելկասէի օրերից ի վեր ձգտել է ըստ ամենայնի մեկուսացնել Գերմանիային, շրջապատել այն թշնամիների կուռ օղակով, ինչ էլ որ ասեն Պուանքարէի քաղաքականութեան մասին — Ֆրանսիան չէր որ նիւթեց համաշխարհային պատերազմը և Ժոռէսի կուսակցութիւնը սերբական վերջնագրի օրերից արդէն պարզ տեսնում էր, թէ որ կողմն էին ճշմարիտ դաւադիրները ընդդէմ միջազգային խաղաղութեան...

Ահա թէ ինչու ֆրանսիական սոցիալիստները—անգամ այժմեան կոմունիստների պարագլուխ Մարսէլ Կաշէն իր մի շարք ընկերներով—մտան առանց վարանումի ազգային

պաշտպանութեան բանակի մէջ։ Եւ նոյն ինքը Ժիւլ Գէդ, մարքսեան դպրոցի ամենամոլեռանդ ներկայացուցիչը Ֆրանսիայում, դարձաւ անդամ Վիվիանիի պատերազմական դահլիճի։

Այս բոլորը աւելորդ չէ յիշատակել, քանի որ ռուսական բոլշեւիզմը և իր բոլոր աբեւմտեան համհարզները այսօր Երկրորդ Ինտերնացիոնալի դէմ պայքարելիս, ասվորութիւն ունին պնդելու, որ Ֆրանսիա, Անգլիա, Գերմանիա հաւասարապէս յանցաւոր ու պատասխանատու են պատերազմի համար և որ Ֆրանսիական սոցիալիզմը, Գէդի, Վայեանի, Սանբայի, Ռընոդէլի կուսակցութիւնը դասալիք եղած է ու դաւաճանած ընկերվարութեան ու Ինտերնացիոնալի գաղափարներին, ինչպէս գերմանական սոցիալիզմը Շայդէմանի, Վելսի ու այլոց ղեկավարութեամբ։

Ինչպէ՞ս է արդարանում գերման կուսակցութիւնը... Կարլ Կաուցկի գրել է նաեւ գերմանական Սոցիալ-Դեմոկրատիայի *) ընթացքի մասին հանդէպ պատերազմի։ Նա փորձում է արդարացնել այդ ընթացքը, աւելի ճիշտ՝ փաստաբանել «մեղմացուցիչ պարագաներ»։ Այդ պարագաներից մի քանիսը իրօք ծանրակշիռ են։ Գերման սոցիալիստները տեսնում էին իրենց հայրենիքի դէմ ծառացած ոչ միայն Ֆրանսիան, այլ բռնապետական Ռուսաստանը, որ անմիջապէս վեր էր բարձրացրել Աւստրիոյ նետած ձեռնոցը և իր թեւերի տակ էր առել

*) Այդպէս է կոչւում ընկերվարական կուսակցութիւնը Գերմանիայում։

փոքրիկ ցեղակից Սերբիան։

Եթէ ցարական Ռուսաստանը պատերազմից յաղթող ելնէր իր դաշնակիցների հետ, նա կարող էր բռնանալ համեմատաբար ազատ ու քաղաքակիրթ Գերմանիայի վրայ...

Այդ երկիւղն է, որ թելադրում էր գերմանական Սոցիալ-դեմոկրատիային քուէարկելու պատերազմական բիւջէն և կանգնելու ազգային պշտպանութեան գեանի վրայ։

Այլ պարագայ։ Պրուսական բիրտ ռէժիմը պատերազմի նախօրեակին և առաջին օրերին այնպէս էր կաշկանդել գերման մամուլն ու հանրային կարծիքը, այնպէս էր կտրել Գերմանիան դրսի աշխարհից և այնպիսի դիւային վարդապետութեամբ էր կազմակերպել իր տեղեկատու աղբիւրները, որ գերման ժողովուրդը ոչ մի հնարաւորութիւն չունէր ծանօթանալու համաշխարհային իրականութեանը և ընդունում էր իբրեւ ճշմարտութիւն այն բոլորը ինչ որ հաղորդւում էր պաշտօնական, կառավարական աղբիւրներից։ Իսկ այդ վերջիններները ամէն վայրկեան յօրինում էին ստայոդ լուրեր, ինչպէս օրինակ այն թէ՝ իբր Ֆրանսիական սաւառնակները, առանց պատերազմի յայտարարութեան, ռմբակոծել էին մի շարք սահմանամերձ գերման քաղաքներ։

Չ'երկարենք։ Այսպէս թէ այնպէս, իւրաքանչիւր երկրի ընկերվարական կուսակցութիւն իր քաղաքական գիծն առաջ տարաւ, միջազգայնութիւնը չոգիացաւ, Ինտերնացիոնալի հոծ բանակը պառակտուեց ու չքացաւ հրապարակից։ Եւ պատերազմը շարունակեց

իր աւերածը, առանց ոչ մի ոյժ, քիչ թէ չատ հեղինակաւոր ու ազդեցիկ, ճիգ անէր վերջ տալու մարդկային անօրինակ սպանդանոցին։

Եղան փորձեր վերսկսելու պրոլետարիատի համերաշխ գործակցութիւնը։ Տեղի ունեցան խորհրդաժողովներ զուիցերական Ցիմմերվալտի և Քինթալի մէջ (1915 թ. Սեպտեմբերին և 1916 թ. Ապրիլին). բայց նրանք վաղօրօք դատապարտուած էին վիժման։ Դրանք ժողովներ էին անհատների և ոչ կուսակցական զանգուածների։ Անհատներ՝ որ պատկանում էին Ինտերնացիոնալի ձախ թեւին։

Մեծ, պատերազմող երկիրներից ներկայ էր այդտեղ միմիայն իտալական կուսակցութիւնը, որ իբրեւ միակ բացառութիւն չէր պառակտուած *) և սկզբից ի վեր ընդդիմադիր դիրք էր բռնել հանդէպ պատերազմի ու ազգային կառավարութեան։ Բացակայ էին Գերմանիայի, Ֆրանսայի, Անգլիայի, Բելգիայի ընկերվարական կուսակցութիւնները։

Խիստ հետաքրքրական էին Զուիցերիայի այդ խորհրդաժողովները, իրենց կատարած վիճաբանութիւններով։ Այդտեղ էր և Լենին։ Այդ պատմական ժողովների մէջ էլ դարբնուեցաւ այն «կարմիր» մտայնութիւնը, որ յետագային պիտի ծնունդ տար Երրորդ Ինտերնացիոնալին **)։

*) Եթէ չհաշուենք այն խումբը, որ 1915ին անջատուեցաւ Մուսոլինիի ղեկավարութեամբ և հրահրեց դէպի պատերազմ։

**) Այդ մտայնութիւնը, ինչպէս ասացինք, վաղուց արդէն—900 ական թուականներից—գոյութիւն

Ցիմմերվալդի ժողովի նպատակն էր՝ կազմակերպել բոլոր երկիրներում պրոլետարիատի մասսային բողոք ընդդէմ պատերազմի և ի նպաստ խաղաղութեան։ Բայց ծայր-ձախակողմեան տարրերը Լենինի և Ռադէկի ղեկավարութեամբ չէին գոհանում այդպիսով։ Նրանք պահանջում էին կռիւ սկսել թէ կառավարութիւնների և թէ ընկերվարական մեծ կուսակցութիւնների դէմ, որոնք կանգնել էին ազգային պաշտպանութեան դեանի վրայ և այդպիսով լքել էին պրոլետարական Ինտերնացիոնալի դատը։ Նրանք յայտարարում էին Երկրորդ Ինտերնացիոնալը սնանկ ու մեռած և քարոզում էին ամէն գնով առաջ բերել պատերազմող երկիրների աշխատաւոր զանգուածների մէջ զինադուլ, ապստամբութիւն և սոցիալական յեղափոխութիւն...

Զայն բարբառոյ յանապատի... Պատմութիւնը կնքեց նրանց «պարտուողական» անունով (défaitiste)։ Լենին-Ռադէկի բանաձեւը մերժուեցաւ։ Ուտոպիա էր, ցնորք։ Ֆրանսիայի աշխատաւորներին քարոզում էին լքել պատերազմի դաշտը և ուղղել զէնքը հայրենի բուրժուա կառավարութեան դէմ։ Ֆրանսիական աշխատաւորութիւնը արել էր արդէն մի այդպիսի գործ 1871-ի օրերում և իբրեւ հետեւանք՝ տասնեակ հազարաւոր պրոլետարներ գնդակահարուել էին Père Lachaise-ի պատերի տակ, բուրժուական կառավարութեան հրա-

ունէր ուսուցիչների մէկ մասի մէջ. այժմ նա Ցիմմերվալդի և Քինթալի մէջ հաղորդուում էր արևմտեան սոցիալիստներին։

մանով։ Այժմ, իրաւ է չկար այլեւս գեներալ Գալիֆէի պէս արիւնարբու գահիճ և Թիէռի տեղ Գուանքառէն էր, աւելի ժամանակակից ու չրջահայեաց մարդ։ Ռիսքը նորէն ահաւոր էր։

Սակայն ենթադրենք մի վայրկեան, թէ համեմատաբար ազատ Ֆրանսիայում հնարաւոր էր քիչ թէ շատ լուրջ խլրտումներ յարուցանել աշխատաւորութեան ու պատերազմող բանակի մէջ և այդպիսով նեղը ձգել Գուանքառէներին։ Բայց ֆրանսիական սոցիալիստները լաւ գիտէին, որ գերման-աւստրիական բազմամիլիոն աշխատաւորութիւնը եթէ անգամ ապստամբելու ցանկութիւն ունենար, չէր կարող անել ամենաթոյլ փորձն իսկ, քանի որ գտնւում էր մասսային անողոք գնդակահարումի անխուսափելի վտանգի առջեւ...

Այո՛. Ֆրանսիայի սոցիալիստները մի խիզախ ըմբոստացումով կարո՞ղ էին գուցէ առաջ բերել մի երկրորդ «կոմմունա», նման այն դրութեան, որ ստեղծուել էր Պարիզում 55 տարի սրանից առաջ, ֆրանս-պրուսական պատերազմի ատեն, բայց արեան հեղեղներով ստեղծուելիք այդ դրութիւնը պիտի լինէր խիստ կարճատեւ... վասն զի Գերմանիան պիտի շարունակէր պատերազմը և Ֆրանսիան, արիւնաքամ, չպիտի կարողանար դիմանալ գերման բանակի գրոհին, որը պիտի գար խեղդելու «կոմմունան» և իր յաղթական դրօշը տնկելու Պարիզում, ուսկից պիտի սպառնար ամբողջ Եւրոպային։

Եւ եթէ անգամ — անհնարին վարկած — Գերմանիան չանէր այդ, Ֆրանսիայի գիւղացիութիւնն է—ազգի ճնշող, հողատէր ու բարեկեցիկ մեծամասնութիւնը — որ պիտի գար ոչնչացնելու պարիզեան ընկերվարական կոմմունան...

Այդ հաւանականութիւնները, սակայն, առանձնապէս չէին վախեցնում Ցիմմերվալդի կարմիրներին. Լենին և իր համախոհները այդպիսի արգելքների առջեւ կանգ առնող չէին։ Նրանց համար միեւնոյն էր, թէ ով կ'իշխէր Պարիզի ու Լոնդոնի մէջ—Գուանքառէն ու Լլոյդ Ջորջը, թէ՝ Վիլհէլմ կայսրը...

Բայց միեւնոյն չէր Ժիւլ Գեդի ու Մակդոնալդի կուսակցութեան համար...

Լենինի կոչերը արձագանք չգտան արեւմտեան աշխատաւորութեան մէջ — և համաշխարհային յեղափոխութեան կարմիր առաքեալը գնաց կատարելու իր փորձերը իր սեփական հայրենիքում, գնաց այն ժամանակ, երբ Ռուսաստանում արդէն տապալուել էր ցարական բռնապետութիւնը... տապալուել էր ոչ թէ բոլշեվիկների ձեռքով, այլ սոցիալիստ-յեղափոխականների, մենշեվիկների և կադէտների միահամուռ գրոհով։

ՓԵՏՐՈՒԱՐԵԱՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ
ԵՒ
ԲՈԼՇԵՎԻԿԵԱՆ ՀԱԿԱՀԱՐՈՒԱԾԸ

Յեղափոխական սոցիալիզմը՝ կացութեան տէր.— Փաստաւն հեռանկար.— Բոլշեվիկեան կարաւանի մուտքը Պետրոգրադ.— «Անկցի՞ պատերազմը».— Բոլշեվիզմը յաղթանակեց այդ կոչով.— Սահմանադիր Ժողովի ոգբերգութիւնը.— Բրեստ Լիտովսկ և ներքին ռէակցիա.— Երրորդ Ինտերնացիոնալի հիմնադրութիւնը.— Կոմինտերնի ալիքը Բուդապեշտում ու Գերմանիայում.— Ամէնուրեք՝ պարտուած.— Պատերազմ Լեհաստանի հետ.— Դարձեալ նահանջ.—

Երբ 1917-ի Փետրուարին տեղի ունեցաւ ռուսական Մեծ Յեղափոխութիւնը, բոլշեվիկեան ամբողջ սպայակոյտը— Լենին, Տրոցկի, Զինովիեվ, Ռադէկ և այլն— բացակայ էր Ռուսաստանից։ Մէկ անուն կար բոլորի շրթներին— Կերենսկի։ Մէկ հոսանք էր յաղթանակողը— յեղափոխական սոցիալիզմը։ Մէկ բառ էր հոլովում ողջ մտածող Ռուսաստանը իր այլազան ցեղերով— Սահմանադիր Ժողով։

Ցարիզմը տապալուելով, ժողովրդական, դէմոկրատ ուժերը իրենց ձեռքն էին առել հսկայածաւալ երկրի ղեկը։ Ընկերվարութիւնը տիրական դիրք ունէր կօալիսիոն կառավարութեան մէջ։ Սոցիալիստ-յեղափոխականներն էին կացութեան տէրը։ Կերենսկիի հետ էր Միեւնոյն գահլիճի մէջ Վիքտոր Չերնօվը, սոցիալիստ-յեղափոխական մեծագոյն կուսակցութեան գիտուն պարագլուխը, որ եղել է

միշտ կառուցների առաջին շարքերում, յայտնի է իր ձախակողմեան, արմատական գաղափարներով, յայտնի է, իբրեւ զտարիւն ընկերվարական, որի առաջին մտահոգութիւնն էր՝ հողը յանձնել գիւղացիներին։

Ռուսաստան էր վերադարձել երեսնամեայ աքսորից Գեորգի Պլեխանօվ, ռուս Սոցիալ-Դէմոկրատիայի տաղանդաւոր հիմնադիրը, որ ընդունուեց Պետերբուրգում ծափ ու ովսաննաներով և իր ջերմ կողմնակցութիւնը յայտնեց նոր դէմոկրատ-ընկերվարական կառավարութեանը։

Ռուսաստան էր վերադարձել Կրապոտկինը, հինաւուրց ու աշխարհահռչակ յեղափոխականն ու անիշխանականը, որ նոյնպէս ցընծութեամբ էր դիմաւորել Յեղափոխութիւնն ու նոր ռէժիմը։

Սոցիալիզմի ու ռամկավարութեան շունչն էր անցնում բովանդակ կայսրութեան վրայից և հարիւր միլիոնաւոր ժողովուրդը ազատ, դէմոկրատիկ ռէժիմի տակ սկսում էր ընտրել իր ներկայացուցիչներին Սահմանադիր Ժողովի համար։ Սահմանադիր Ժողով՝ որ լինելով ջախջախիչ մեծամասնութեամբ սոցիալիստ-յեղափոխական՝ պիտի տնօրինէր Ռուսաստանի բոլոր ազգերի ճակատագիրը, պիտի ստեղծէր ընդարձակ երկրից առաջին մեծ, ընկերվարական-ռամկավար պետութիւնը, որը քայլ առ քայլ, աստիճանական բարենորոգումներով պիտի իրագործէր ռամկավարութեան և ընկերվարութեան պահանջները։

Սակայն, ճակատագիրը այլ կերպ էր տնօ-

րինել... Ռուսաստանին և նրա փոքրիկ ժողովուրդներին և հայ ծուատուած ժողովրդին դարձեալ վիճակուած չէր— անգամ ցնծութեան այդ օրերին, անգամ այդ լայնշունչ ու խոստմնալի փետրուարեան Յեղափոխութիւնից յետոյ— թևակոխել նոր, աւելի երջանիկ շրջան, տեսնել ազատ ու մարդավայել կարգեր...

Արևմուտքից եկաւ աքսորականների նոր խումբը— Լենին ու իր ընկերները— եկաւ սոցիալիստական և յեղափոխական նշանաբաններով։ Եկաւ Զուիցերիայից՝ Գերմանիայի վրայով, գերման զրահապատ գնացքի մէջ։ Վիլհելմի կառավարութիւնը շրջապատել էր այդ վերադարձող աքսորականներին ամենայն հոգատարութեամբ։ Նեղն ընկած Գերմանիայի համար՝ ռուս բոլշեվիկների այդ կարաւանը երկնքէն իջած մի մանանայ էր։ Նա գնում էր Ռուսաստան, որպէս ժանտախտի մի ահաւոր բացիլ, որ պիտի կազմալուծէր ոչ միայն ռուսական հսկայ բանակը, այլ և ամբողջ ռուս պետութիւնը...

Գերմանիան գիտէր այդ։ Գիտէր և Կերենսկիի կառավարութիւնը։ Եւ սակայն վեհոգի տրամադրութեամբ թոյլատրեց բոլշեւիկեան կարաւանի մուտքը...

Եւ եղաւ ինչ որ եղաւ... Պետերբուրգ ժամանելով, բոլշեվիկների խումբը սկսեց անմիջապէս բուռն ագիտացիա։ Նա արհամարհանքով մերժում էր նոր կառավարութիւնը, համարում էր այն բուրժուական, պահանջում էր նորէն յեղաշրջել Ռուսաստանը, սկսել քաղա-

քացիական արիւնոտ պատերազմ և տալ իշխանութիւնը բանւորա-գինւորա-գիւղացիական խորհուրդների կամ Սովետների ձեռքը։ Սովէտները պիտի իրագործէին ընկերվարական իրաւակարգը։ Ռուսաստանը նրանց ըմբռնումով ոչ միայն պատրաստ էր ընդունելու սոցիալիստական կարգերը, այլ և տարածելու այդ կարգերը ամբողջ աշխարհի վրայ։

Աղէտաւոր պատրանք էր, որ միլիոնաւոր մէջքեր պիտի ջարդէր և անհաշիւ աւերածներ պիտի նիւթէր...

Լենին ուժեղ էր անտեսագիտական խընդիրների մէջ, ծանօթ էր և Մարքսի վարդապետութեան. նա չէր կարող չգիտակցել, որ Ռուսաստանը ամենատհաս գետինն է ընկերվարական փորձերի համար։ Նրա մեծ յոյսը «Համաշխարհային Յեղափոխութիւնն» էր, որ նրա կարծիքով չուտ պիտի պայթէր և որի շնորհիւ Ռուսաստանն էլ կարող էր ապրել ու բարգաւաճել։

Լենին և ընկերները բուռն թափով հրապարակ նետուեցին քարոզելով բռնի ապստամբութիւն «բուրժուական» կառավարութեան դէմ, կազմակերպելով զանգուածային միթինկներ, թափորներ ու ցոյցեր, կարմրավառ նշանաբաններով՝

— «Անկցի՛ կապիտալիստ կառավարութիւնը, անկցի՛ պատերազմը, յե՛տ կանչեցէք բանակը, տուէ՛ք իշխանութիւնը Սովետներին»։

Յեղափոխական կառավարութիւնը չուզեց հալածել ապստամբներին, նա չուզեց մրոտել

ռուսական մանուկ ազատութեան դրօշը բանտարկումներով ու աքսորներով, նա ցոյց տրուեց այդ բախտորոշ օրերում անսահման համբերողութիւն...

Ռուսը կամ ազատութեան բիրտ դահիճ է և կամ պաշտող անիշխանական սանձարձակ ազատութեան։ Միջին դրութիւն կարծես թէ չկայ նրա համար։

Բոլշեվիկները օր աւուր սաստկացրին խբենց գրոհը։ Եւ նրանց ամենէն զօրաւոր կարգախօսն էր՝ «անկցի՛ պատերազմը», «կեցցէ՛ խաղաղութիւնը», որով նրանք, իբրեւ գերազանց ամբոխագէտներ, թնդացնում էին փողոցներն ու հրապարակները։ Ռուս բանակը, յոգնած, ուժասպառ երեք տարուայ արիւնահեղ պատերազմից յետոյ, ռուս զինուորների — գիւղացիների ու բանուորների — մերկ ու սովալլուկ զանգուածները մէկ բանի էին կարօտ՝

— Խաղաղութեան։

Եւ ահա գալիս են մարդիկ, կարմիր կոմունիստներ, որ ասում են նրանց.

— Թողէ՛ք պատերազմի դաշտը, լքեցէ՛ք Դաշնակիցներին, վերադարձէ՛ք ձեր օճախները և տիրեցէ՛ք ձեր հողերին...

Այդ կոչը հիպնոզի գեր խաղաց։ Նրա չընորհիւ, բոլշեվիզմը յաղթանակեց։

Ռուս բանակը սրտագին ողջունեց խաղաղութեան այդ պատգամը, որ գալիս էր Պետերբուրգի մութինկներից։ Յաղթողը՝ տգէտ ու ակլոր, յոգնած ու անօթի զինուորական մասան էր, որի նախնական բնազգների վրայ վարպետօրէն խաղացին բոլշեվիկները։

Տարօրինակ պատկեր էր ներկայացնում քաղաքացիական կռուի դաշտը։ Մի կողմից՝ իրգաս ու վճռական պայքարողների մի խումբ, որ յենուած էր մայրաքաղաքի պրոլետարիատի և մանաւանդ պատերազմից դահավէժ փախչող զինուորների ու նաւաստիների զանգուածի վրայ, միւս կողմից՝ մի կառավարութիւն, որ ունէր Ռուսաստանի բոլոր ժողովուրդների վստահութիւնն ու համակրանքը, որ տոգորուած էր երկիրը վերաշինելու և բարօրելու ամենալայն իդեաներով ու ծրագիրներով, բայց որ թոյլ էր, վարանոտ, կորցրել էր գլուխը անդրների չչմեցուցիչ յորձանքի մէջ և շարունակ ձգձգում էր ամենահրատապ հարցերի լուծումը, ինչպէս օրինակ հողային հարցը և Սահմանադիր Ժողովի գումարումը...

Ոչ-ընկերվարական տարրերը չնչին փոքրամասնութիւն էին արդէն։ Ռուսաստանը չունէր ուժեղ երրորդ դաս, դէմոկրատիկ բուրժուազիա—և այդ իր մեծ դժբախտութիւնն էր։ Դրեթէ բոլորովին բացակայում էին միջին տարրերը — եզակի փաստ մեծ ազգերի պատմութեան մէջ — այն տարրերը, որոնք ամենուրեք հաւասարակշռող դեր են կատարում։ Եւ այդ հանգամանքն ունեցաւ իր խոր, բացասական անդրադարձումները...

Այդ տարօրինակ երեւոյթին առաջին անգամը ականատես եղանք 1906-ի յեղաշրջման օրերում, երկրորդ Դումայի մէջ, երբ ընկերվարական — գլխաւորապէս սոցիալիստ-յեղափոխական — կուսակցութիւնը առաջնակարգ դերք էր ստացել, թուով ու ազ-

դեցութեամբ, ազգային գերագոյն հաստատութեան մէջ... Այդ իսկ պատճառով երկրորդ Դուման յարուցեց ամենակատաղի թշնամութիւն ցարի շրջապատում և չուտով ցրուեց։

Միջին տարրերը բացակայելով, չկար հաւասարակշռող ոյժը, խաթարւում էր բնականոն էւոլիւցիայի, աստիճանական զարգացումի հնարաւորութիւնը, մի բան, որ օրէնք է մեծ, քաղաքակիրթ ազգերի մէջ... Եւ Ռուսաստանը այդպիսով դատապարտուած է կարծէք յաւիտենօրէն մէկ ծայրայեղութիւնից միւսը նետուելու, առանց էւոլիւցիան դատապարտուած է կարծէք ընթանալու յախուռն, անօրմալ թռիչքներով, ստէպ արիւնալի և միշտ ամուլ ու աւերիչ ոստիւններով՝ ցարիզմից դէպի սոցիալիզմ կամ բոլշեվիզմ...

ՀՈԿՏԵՄԲԵՐԵԱՆ ՅԵՂԱՇՐՋՈՒՄԸ

Վախճանը պարզ էր... Մի շարք անաջող փորձերից յետոյ, բոլշեվիկների համար հասաւ վերջապէս յաղթանակի վճռական օրը — 1917 թ. Նոյեմբեր 7-ը։ Լէօ Տրօցկի, Սուխու�մի նշանաւոր աքսորականը պատմում է խանդավառութեամբ այդ օրուան դէպքերը իր մի անգլիերէն հրատարակութեան մէջ, The History of the Russian Revolution խորագրով։

«Կառավարութիւնը տակաւին նիստ ուներ ձմեռնային Պալատին մէջ. բայց նա արդէն սոսկ ստուերն էր նախկինի. նա քաղաքականապէս

գոյութիւն չունէր։ Նոյեմբերի 7-ին *) Ձմեռնային պալատը հետզհետէ բոլոր կողմերից շրջապատուեց մեր զօրքերով։ Կէսօրեն յետոյ, ժամը 1-ին, յանուն Զինուորական-Յեղափոխական Կոմիտէի, ես ծանուցի Պետրոգրադի Սովետի նիստում, որ Կերենսկիի կառավարութիւնը այլեւս գոյութիւն չունի... Եւ որ ինքը՝ Զինուորական-Յեղափոխական Կոմիտեն պէտք է ստանձնէ իշխանութիւնը»...

Լենին, առժամանակ թաքնուած, նոյն օրը գաղտնապէս գալիս է Սմոլնի (ուր գտնւում էր բոլշեվիկեան սպայակոյտը)։ Նա իմացել էր լրագիրներից, թէ բոլշեվիկները կ'ուզեն իրաւախոհել, կոմպրոմիսի գալ Կերենսկիի կառավարութեան հետ։ Լենին, հարկաւ, դէմ էր ոեւէ համաձայնութեան «բուրժուա», «յետադէմ» «կապիտալիստ» իշխանութեան հետ։

Շարունակենք Տրօցկիի խօսքերով.

«Այդ բոլոր ժամանակ հանդարտօրեն, առանց ոեւէ փողոցային կռուի ու արիւնահեղութեան, կառավարական հաստատութիւնները մին միւսի ետեւից գրաւուեցան մեր զինուորների, նաւաստիների ու կարմիր պահակների գերազանցապէս կարգապահ վաշտերի ձեռքով, համաձայն այն հեռախօսային հրահանգների, որոնք գալիս էին Սմոլնի Ինստիտուտի երրորդ յարկի փոքրիկ սենեակից»...

Ոչ մի դիմադրութիւն։ Լսւում էին միայն Դանի, Մարտովի, Զերնովի և այլ մենշեվիկ ու ս. ր. պարագլուխների ցասկոտ ու անզօր բողոքներն ու ճիչերը «բռնաւորների» և «ուզուրպատորների» դէմ...

*) Նոր տոմարով։

ՀԱՄԱՌՈՒՍԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԴԻՐ ԺՈՂՈՎԸ

Մեր նպատակից դուրս է նկարագրել մանրամասնօրէն պատմական այդ ալէծուփ շրջանի բոլոր դրուագները։ Զենք ծանրանայ և Սահմանադիր Ժողովի անօրինակ ողբերգութեան վրայ... Մի Ժողով՝ որ բերել էր ազատօրէն արտայայտուած կամքը հարիւր միլիոնաւոր ընդհանրութեան, բոլոր այլազան ցեղերի ու համայնքների. մի Ժողով, որ իր ճնշող մեծամասնութեամբ բաղկացած էր ընկերվարական գործիչներից, սոցիալիստ-յեղափոխականներից, որոնց մեծ մասը անցուցել էր երկար տարիներ հերոսական մարտնչումների մէջ և ցարական զնդաններում։ Դեռ Հերցենի օրերից (1860-ական թուականներից) Սահմանադիր Ժողովի (Assemblée Constituante) գաղափարը նուիրական է եղել ռուս յեղափոխական ձախակողմեան թեւերի համար և նոյն իրենք, բոլշեվիկները բարձրաձայն հռչակել էին այն... բայց իշխանութիւնը իրենց ձեռքն առնելուց յետոյ, յայտարարեցին, որ այլ եւս աւելորդ է այն, որ նման գաղափարներն ու հաստատութիւնները բուրժուական նախապաշարումներ են...

Համառուսական Սահմանադիր Ժողովը, որի գումարումը ձգձգուեց ամբողջ 8 ամիս, ժամանակաւոր կառավարութեան վարանումների շնորհիւ, ի վերջոյ գումարուեց *) մի

*) Կովկասահայութիւնը ընտրել էր այդ Ժողովի համար 9 պատգամաւոր, ամէնքը պատկանող Հ. Յ. Դաշնակցութեան։

տխուր մթնոլորտում, երբ հրապարակին տիրել էին արդէն բոլշեւիկները։ Նա տեւեց ուղիղ 12 ժամ, Վիքտոր Չերնովի նախագահութեան տակ։

Ցաղթական բոլշեվիզմի սուինները շողշողում էին ժողովասրահի մուտքին ու անկիւններում. համառուսական առաջին ազատ Պարլամենտը կատարում էր իր հանգիստաւոր վիճաբանութիւնները կարմիր ժանտարմների հսկողութեան տակ և բոլշեվիկ պարագլուխները—հոն էր և Լենին, գոռոզ ու չարախնդաց—ընդգծում էին Նախագահ Չերնովի ամէն մի ֆրազը անարգական բացագանչութիւններով, հեգնանքով ու հռհռոցով...

Մարդիկ, որոնք իրենց ամբողջ կեանքը հոլովել էին նոյն ֆրազները ժողովրդական կամքի ու դեմօկրատիայի մասին, այժմ բրոնանում էին — աւելի կոպտօրէն քան երբեմն ցարի սատրապները—այդ սկզբունքներն ազդարարող ընկերվարականների վրայ, ոտնահարում էին այն նշանաբանները, որոնցով լեցուն է ռուս սոցիալիստ ու նոյնիսկ բոլշեւիկ գրականութիւնը... Տեսարանը սրտաճմլիկ էր։ Ջուր, ապարգիւն ճիգեր էր անում դժբախտաբար Չերնովը իր երկար ճառով. Սահմանադիր Ժողովի մահկանացուն կնքուած էր արդէն... 12 ժամն էլ շատ սեպուեցաւ... Իշխաղների համբերութիւնը հատել էր։ Դիկտատորի հրամանը հնչեց, բիրտ զինուորների սուինները շարժուեցին և Համառուսական Սահմանադրական Ժողովը ցրուեց ամենասանձուկ ձեւով, Նա համակերպեց իր ճակատագրին նոյնպիսի

քրիստոնէական խոնարհութեամբ, ինչպէս համակերպել էր Կերենսկիի կառավարութիւնը բոլշեվիկեան գրոհի հանդէպ...

Համաշխարհային պատմութիւնը երբեք չի պարզել առաջադէմ և պայքարող մարդկութեան առջեւ այդքան արտասուելի ու վհատեցուցիչ մի տեսարան և միմիայն Սահմանադիր Ժողովի այդ կոպիտ խաչտանգումը բաւ է՝ անարգանքի ստուերը ձգելու բոլշեվիզմի վրայ։

Տրօցկի ցինիկօրէն խոստովանում է վերոյիշեալ գրքի մէջ, որ Սահմանադիր Ժողովը լուծեցին, վասնզի մեծամասնութիւնը սոցիալիստ-յեղափոխականներ էին և ուրեմն... իշխանութիւնը պիտի անցնէր այդ կուսակցութեան ձեռքը։ Կաուցկու հետ բանակռուելով, Տրօցկի գրում է, որ Սահմանադիր Ժողովը չլուծուելու պարագային «ամէնայն հաւանականութեամբ այն ժամանակ իշխող սոցիալիստ-յեղափոխական և մենշեվիկ կուսակցութիւնները իրար պիտի վարկաբեկէին՝ ոչ միայն սովետների աջակից տարրերի, այլ և ժողովրդական մասսաների աչքում» (The History ... էջ 121) վասնզի, ասում է, Նոյեմբերեան յեղափոխութիւնը հիմնականապէս յեղաշրջել էր կացութիւնը և ընտրուած Սահմանադիր Ժողովը այլ եւս չէր համապատասխանում երկրի տրամադրութիւններին...

Կարող էին, սակայն, նոր ընտրութիւններ նշանակել... Փաստաբանական ողջամիտ քաշքշուկներ են դրանք, որոնց համար Ռուսաստանի նախկին հզօր պատերազման նախա-

բարը թերեւս զղջում է այսօր... երբ նա ինքը քաշքշւում ու տրօրւում է — որպէս մի ողորմելի խամաճիկ — իրենից բարձր սատրապների ձեռքում...

Վարագոյրն իջաւ։ Ռուսաստանն այլ եւս կարմիր դիկտատորութիւն էր... «զինուորների, նաւաստիների, գործաւորների» եւայլն։ Պետերբուրգը դիկտատորների ձեռքն անցնելով, ամբողջ Ռուսաստանը նրանց ձեռքն էր։ Ռուս ժողովուրդը չէր, որ պիտի ըմբոստանար կատարուածի դէմ։

Պատմութեան մէջ անօրինակ բան չէ, ի հարկէ, որ մայրաքաղաքը բռնադատէ իր կամքը բովանդակ երկրին։ Ապացոյց՝ Ֆրանսիական Մեծ Յեղափոխութիւնը և նոյն Ֆրանսիայի բոլոր յետագայ յեղաշրջումները, որ կատարել է մայրաքաղաք—Պարիզը և որ ընդունել է գաւառը։ Սակայն դրանք յեղաշրջումներ էին, որ բղխում էին ընդհանրութեան կամքեն և որոնցից իւրաքանչիւրը գալիս էր լայնցնելու և ամրապնդելու ճշմարիտ ժողովրդապետութեան սկզբունքը, ազատութիւնն ու մասսային բարօրութիւնը։

ԲՐԵՍՏ-ԼԻՏՈՎՍԿ ԵՒ ՆԵՐՔԻՆ ՌԷԱԿՑԻԱ

Նախ քան ձեռք զարնել ներքին բարեկարգութեան, նոր, սովետական կառավարութիւնը շտապեց լուծել խաղաղութեան հրատապ հարցը։ Գերմանիան գրաւել էր Ռիգան և սպառնում էր Պետերբուրգին։ Հարկ էր ըստ

կարելւոյն չուտով կնքել հաշտութիւն։ Ռուսիոյ նոր վարիչները սկսեցին հոլովել սիրուն ֆրազներ՝ «պատուաւոր խաղաղութիւն», «դեմոկրատիկ խաղաղութիւն»... «առանց նուաճումի ու աննէկսիայի», «ոչ յաղթող, ոչ յաղթուած» եւայլն։

Սակայն, իրօք պատրաստ էին կնքել խաղաղութիւն ամէնածանր զոհաբերութիւններով... Չէ՞ որ բոլշեվիզմը յաղթեց ու երկրի տէր դարձաւ գլխաւորապէս հէնց այն պատճառով, որ քարոզել էր ամէն գնով խաղաղութիւն և զինուորների մասսային դասալքութիւն... Լենին, Տրօցկի և ընկերները, միեւնոյն է, իսպառ կազմալուծել էին ռուս բանակը և բնաւ ի վիճակի չէին պատերազմելու Գերմանիայի, Աւստրիայի և Թիւրքիայի դէմ։

Եւ... ստորագրեցին Բրեստ-Լիտովսկի անպատիւ դաշինքը, որ այնքան ուշ նատեց աշխարհին, մասնաւորապէս հայութեան։

Շուտով ռեակցիան — ներքին ու արտաքին — ծայր տուեց բոլշեվիզմի դէմ։ Հին ռուսական բանակի ցիրուցան մասերը եռում էին ատելութեամբ դէպի նոր տէրերը։ Նրանք շարժուեցին, գլուխ ունենալով Կոլչակին, Դենիկինին, Վրանգելին։

Կոլչակ-Դենիկին-Վրանգելեան ռէակցիայի դէմ բոլշեվիզմը վարեց երկար ու դժուարին կռիւներ և զուրթ եկաւ յաղթանակով։ Կարմիր բանակը կռուեց արիութեամբ ու անձնազոհութեամբ։ Ժողովրդի լայն խաւերն էլ ամենուրեք աջակցում էին նրան։ Դեռ բոլշեվիկեան ռէժիմի մեղրամիսն էր... Գիւղացի-

ութիւնը տէր էր դարձել իր հողին և վախ ունէր, որ Դենիկինները վերստին յափշտակեն այն։ Արդէն գիւղացիք լայնօրէն ճաշակել էին նրանց հասցրած չարիքները, մասնաւորապէս Դենիկինեան արշաւանքի միջոցին, երբ ճերմակ բանակի հրամանատարը յաղթական սլանում էր դէպի Մոսկուա, զարնելով ու թալանելով լայնածաւալ գաւառները և վերջին հարուածը տալով արդէն իսկ քայքայուած գիւղացիական տնտեսութեանը։

«ԿՕՄՄԻՆՏԵՐՆ»

Դենիկին—Վրանգել—Կոլչակեան շարժումը զսպելուց յետոյ, նոր իշխանութիւնը սկսեց փորձեր անել մի կողմից կարգի բերելու ներքին քաոսը, միւս կողմից կազմակերպելու արտաքին ճակատը։

Արտաքին ճակատը — ընդդէմ համաշխարհային կապիտալիզմի և բուրժուազիայի*)։

---

*) Քանիցս գրած եմ, որ անմտութիւն է՝ այդ եւ նման օտար բառերը հայերէնի վերածելը։ Ոչ կապիտալիզմը կը նշանակէ դրամատիրութիւն, ոչ բուրժուազիան՝ քաղքենութիւն... Պարզապէս բարբարոսութիւն են նման թարգմանութիւնները, որոնք ամենեւին չեն արտայայտում լատին կամ յոյն բառերի իմաստը։ Նմանապէս սխալ է «սոցիալիզմ» բառը «ընկերվարութիւն» թարգմանելը։ Սոցիալիզմը շատ առելի լայն գաղափար է, քան ընկերվարութիւնը, որը միայն թարգմանում

Հիմնուեց Երրորդ Ինտերնացիոնալը։ Կեդրոնը — Մոսկուայում, ճիւղերը՝ ամբողջ արեւմտեան աշխարհում, կամաց-կամաց՝ նաեւ արեւելեան երկիրներում։ Եւրոպայից մեզ

է կառավարութեան, վարչութեան մի յայտնի ձեւ, ինչպես բառի կազմն է ցոյց տալիս (ընկեր-վարութիւն)։ Սոցիալիզմ—ոչ միայն կառավարութեան մի ձեւ է, այլ նա միանգամայն կրօն է, արդարութեան մի իդեալ է, ընկերաբանական ու փիլիսոփայական մի սիստեմ է, վերջապես՝ պատմական-հասարակական մի շարժում է։

Աւելի քան հաւատացած ենք, որ մեզ յաջորդող հայ մտաւորական սերունդը — անգամ արեւմտահայը — պիտի գործածէ կապիտալիզմ, բուրժուազիա, պրոլետարիատ, ինտերնացիոնալ, սոցիալիզմ, կոմունիզմ, մատերիալիզմ, իդեալիզմ եւ այլն, ինչպես բոլոր քաղաքակիրթ ժողովուրդները (ասում ենք արդեն՝ փիլիսոփայութիւն, փիլիսոփայական եւ քիչերն են գործածում իմաստասիրութիւն)։

Մենք եւս կը նախընտրենք օտար բառերը, թեեւ, այնուամենայնիւ, երբեմնապես պիտի գործածենք հայերէն ընդունուած թարգմանութիւնները, որոնք ժամանակաւորապես շրջանառութեան մէջ են։ Այդ հայերէն բառերը— թեպետեւ սխալ ու կամայական — մեկեն ի մեկ վերացնել չենք կարող։ Մասնաւորապես մեր արեւմտահայ հայրենակիցները խիստ յամառ են իրենց ազգայնական մոլեռանդութեան մէջ եւ հարկ է վարժեցնել օտար բառերի գործածութեան աստիճանաբար։

այդ նոր Ինտերնացիոնալի մէջ ընկերվարական այն տարրերը, որոնք Ցիմմերվալդի ու Քինթալի օրերից ի վեր բացասական դիրք էին բռնել դէպի Երկրորդ Ինտերնացիոնալը, համարելով այն սնանկ ու մեռած։

Լենին պարագլուխն էր այս նոր միջազգային ընկերակցութեան, որ ռուս բոլշեվիկների կրճատող բարբառով կոչուեց Կոմինտերն (այսինքն՝ Կոմունիստական Ինտերնացիոնալ—տարբեր միւս Ընկերվարական Ինտերնացիոնալից)։

Գործն նախագահը — Զինովիեվ։ Մոսկուայում հաստատուած կենտրոնի մէջ կան ներկայացուցիչներ արեւմտեան երկիրների կոմունիստ*) հատուածներից. բայց իրօք իշխողը ռուս կոմունիստ կուսակցութիւնն է, որը գրեթէ ձուլուած է այժմեան ռուսական կառավարութեան հետ։

Եւ գնացին Զինովիեվի հրամանները դէպի ամէն կողմ — բարձրացնել ապստամբութեան դրօշը Գերմանիայում, Ունգարիայում, Բուլգարիայում, Մարօկկոյում, Զինաստանում... Գործերը մին միւսի ետեւից վիժեցին։ Առաջին փորձը եղաւ Ունգարիայի մայրաքաղաք Բուդապեշտում։ Ունգարիան պատերազմից ելեր էր յաղթուած, քայքայուած, անդամալոյծ։ Ռուսաստանից յետոյ ամենանպաստաւոր գետինն էր ամէն տեսակ արկածախնդրութիւնների համար։ Ուստի Բելա Կուն իր մի բուռն մարդկանցով և Մոսկուայի աջակցու-

---

*) «Կոմունիստ» և «Բոլշեվիկ» սովորաբար կը գործածուին, որպէս նոյնիմաստ բառեր։

թեամբ կարողացաւ, առանց մեծ դժուարութիւնների, կատարել իր «յեղաշրջումը», հեռացնել բուրժուական իշխանութիւնը և հիմնել մաքառական Սովէտը, Խորհուրդը։

Դժուարութիւնը հոն էր, որ Բէլա Կունի այդ մեռելածին «իրաւակարգը» աւազի վրայ կառուցուած մի շէնք էր, որ մի քանի ամիս կեանք միայն ունեցաւ։ Կոմունիզմի յաղթանակը այստեղ եւս — ինչպէս ամբողջ Ռուսաստանում — շղթայազերծեց քաղաքացիական կռուի փոթորիկը, յաղթողները արեան բաղանիքներ սարքեցին իրենց գաղափարային հակառակորդների դէմ, կոտորելով բուրժուազիային, ահաբեկելով երկիրն, հալածելով նաեւ ռամկավար, ընկերվարական տարրերը...

Շուտով, սակայն, վրայ հասաւ ռէակցիան, հուչակաւոր Հորթիի ղեկավարութեամբ, որ նոյնքան արիւնածարաւ ու անխնայ եղաւ հանդէպ կոմունիստների, որքան այդ վերջինները հանդէպ բուրժուազիայի։ Առանձնապէս բուռն էր որսախուճապը հրէաների դէմ, վասն զի կոմունիստական շարժման ղեկավարները ծագումով հրէաներ էին։ Բէլա Կունն մի կերպ իր գլուխն ազատեց, փախչելով դէպի Վիեննա, ապա և Մոսկուա, ուր ապրում է մինչեւ օրս, ներկայացնելով Ունկարիոյ ջարդուած բոլշեվիզմը «Կոմինտերնի» մէջ։

Մանր հարուած էր Մոսկուայի և ամբողջ Երրորդ Ինտերնացիոնալի համար՝ այդ առաջին փորձի վիժումը։ Բուդապեշտից նրանք երազում էին վառել ամբողջ Եւրոպան...

Նմանապէս վիժեց գերման կոմունիստների («սպարտակիստների») ապստամբութիւնը 1919 թուականի սկիզբներում, որ ներշնչուած էր նոյն Մոսկուայի կոմինտերնից և նպատակ ունէր երջանկացնել յաղթուած ու գլխակորոյս Գերմանիան՝ Սովէտների ներմուծումով։ Ռէակցիան այստեղ եւս կատաղի էր և կոմունիզմի երկու ծանօթ պարագլուխները — Կարլ Լիբկնեխտ և Ռոզա Լիւքսէմբուրգ — չարաչար խոշտանգուեցին գերման ազգայնականների ձեռքով։ Այնուհետեւ խեղդուեցան հետզհետէ բոլշեվիկեան ուրիշ արկածախնդիր թռիչքներ Բավարիայում ու Գերմանիոյ ուրիշ կողմերում։ Եւ, ինչպէս կը տեսնենք, կոմունիզմը այդտեղ եւս հետզհետէ պիտի վարկաբեկուի, հասցնելով, սակայն, տարաբախտաբար, մեծ չարիքներ աշխատաւորական և առհասարակ ռամկավարական շարժումներին...

* * *

Զինովիեվ չյուսահատուեց։ Ունգարիայից և Գերմանիայից յետոյ Լեհաստանը կար։ Դաշնակիցների ձեռքով անկախ պետութեան վերածուած այդ երկիրն եւս ներքուստ հիւանդ էր, անկազմակերպ, երերուն։ Մոսկուան այդտեղ եւս փորձեց նետել կոմունիզմի սերմերը և երբ տեսաւ, որ տեղւոյն թոյլ ոյժերով անկարող է ներսէն պայթեցնել երկիրը, որոշեց սեփական ոյժերով նուաճել այն... բոլշեվիկացնել Լեհաստանը։ Տեղի ունեցաւ ռուս բանակի գրոհը Վարշաւայի դէմ։ Այն եւս դատապարտուած էր վիժե-

լու։ Լեհաստանի ետեւը կանգնած էր Ֆրանսիան, իր դաշնակիցը և վաղեմի բարեկամը, որի համար ամենակենսական խնդիրներէն մինն է՝ կանգուն պահել անկախ Լեհաստանը, իբրեւ պատուար Գերմանիայի դէմ։ Ֆրանսիան զրկեց Վարշաւա իր լաւագոյն զօրավարներէն մէկը, Զօր. Վէյգանդ՝ կազմակերպելու Լեհաստանի պաշտպանութիւնը։ Եւ Ֆրանսիայի զինարտադրական ու նիւթական աջակցութեամբ, լեհ բանակը—համեմատաբար փոքրաթիւ, թոյլ, անփորձ, զուրկ ռազմական աւանդութիւններից — յաղթականօրէն նահանջի մղեց ռուսներին, ցոյց տալով աշխարհին, թէ ինչպէս Տրոցկիների ստեղծած համբաւաւոր կարմիր զօրքը — որ անպարտելի էր Դենիկինների ու Կոլչակների խաժամուժային զօրքերի հանդէպ — գիտէ կորագլուխ փախչել մի քիչ թէ շատ կազմակերպուած ու կարգապահ արեւմտեան բանակի առջեւ...

Վաղն էլ, աւա՜ղ, կարող է փախչել և թիւրքական զօրքերի առջեւ Անդրկովկասում, թողնելով Հայաստանն ու հայ ժողովուրդը իր ճակատագրին, ինչպէս 1917 սեւ թուականին...

Ռուս սովէտական զօրքը պարտուեց Վարշաւայի պատերի տակ, միանգամ եւս խորտակուեց կոմմունիստների երազը՝ «վառել Եւրոպան», չղթայազերծել «համաշխարհային Յեղափոխութիւն», — և այնուհետեւ Մոսկուայի հրամանատարները դարձրին իրենց հայեացքը դէպի Արեւելք...

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ

«Ազատ ազգերի ազատ միութիւն». — Սովէտական «Հատաղ Հումայունը». — Գեղեցիկ սկզբունքներ, որ մնում են մեռած տառ. — Սովէտական Սահմանադրութեան յօդուածը Թիւրքահայաստանի մասին. — Խորհուրդների ընտրութեան ձեւը ու խօսքի, մամուլի, գումարումների ազատութիւն՝ միմիայն իշխող կուսակցութեան համար. — Գերագոյն իշխանութեան դերը. — Կուսակցութիւն և իշխանութիւն։

6-րդ Ինտերնացիոնալի այժն ու կշեռը չափելու համար, տեսնենք նախ, թէ ինչ է ներկայացնում նրա կենտրոնական սիւնը — Սովէտական պետութիւնը—թէ որքան ամուր ու կայուն են նրա վարիչների դաւանած վարդապետութիւնն ու կիրառած մեթոդները։

Ռուսաստանը վերանուանուեց «Միութիւն Ընկերվարական, Սովէտական, Դաշնակցական հանրապետութիւնների»։

Այդ միութեան մէջ մտնում են երկու դաշնակցական*] հանրապետութիւններ.

1.— Ռուսիայ Սովէտների Ֆէդէրատիվ հանրապետութիւն.

2.— Անդրկովկասի Սովէտների Ֆէդէրատիվ հանրապետութիւն։

Ապա երկու պարզ հանրապետութիւններ.

1.— Ուկրայնայի հանրապետութիւն.

2.— Բէլօռուսիայի (ճերմակ ռուսների) հանրապետութիւն։

*] Այս բառի տեղ պիտի գործածենք Ֆեդերատիվ բառը։

Այդ չորս հանրապետութիւնների մայրաքաղաքներն են՝ Մոսկուա, Թիֆլիս, Կիեվ և Մինսկ։

Բուն Ռուսաստանի հանրապետութեան մէջ մտնում են մի շարք մանր հանրապետութիւններ՝ Բաշկիրների, Բուրիատների, Մոնղոլների, Դաղստանի, Խրիմզների, Ղրիմի, Կարելիայի, Եակուտների, Թուրքեստանի և այլն։

Անդրկովկասեան ֆէդերատիվ հանրապետութիւնը կազմում են՝ Հայաստան, Վրաստան, Ադրբէյջան։

Սովէտական կառավարութեան մեքենան հսկայ պիրամիդ է, որի ստորոտին կանգնած են գիւղական համեստ խորհուրդները, իսկ գագաթին՝ ամենակարող Գործադիր Կոմիտեն։ Կան և գաւառական խորհուրդներ, նահանգական խորհուրդներ և համերկրային, այսպէս ասած համամիութենական խորհուրդներ, որոնք կոչուած են պատկան կարգով կառավարելու գիւղը, գաւառը, նահանգը, միութիւնը, իւրաքանչիւրը իր ընտրած գործադիր կոմիտէի ձեռքով։

Ի՞նչպէս են ընտրւում այդ բոլոր խորհուրդները կամ սովէտները։

Ոչ ընդհանուր ձայնատուութեամբ (*suffrage universel*), ինչպէս արեւմտեան դէմոկրատ երկիրներում։

Ձայն ունին միայն զինուորները, ինվալիդները, բանւորներն ու գիւղացիները և առհասարակ բոլոր նրանք — առանց խտրութեան ազգի ու սեռի — որոնք ապրում են իրենց սեփական աշխատանքով և բոլորել են 18 տարին։

Գեղեցիկ սկզբունքներ ու յայտարարութիւններ — նոյնիսկ ժամանակակից դէմոկրատիզմի ոգով խմբագրուած — շատ կան, անշուշտ, սովէտական Սահմանագրութեան մէջ։ Եւ ամենէն գեղեցիկը՝ հենց այս յօդուածը «Իրաւունքների Յայտարարութեան» մէջ, խմբագրուած դեռ 1918ին, Համառուսական Սովէտների 5րդ Համագումարի ձեռքով, որ մնում է մինչեւ օրս էլ, գէթ տեսականի մէջ.

«Ռուսաստանի*] սովէտական Հանրապետութեան հիմքն է կազմում ազատ ազգերի ազատ միութիւնը**]։ Որ ասել է թէ՝ ոչ-ռուս ազգերը մտնում են Սովէտների միութեան մէջ իրենց յօժար կամքով և կարող են յօժարակամ դուրս գալ»։

Ահա մի այլ յայտարարութիւն.

«Սովէտների 5րդ Համագումարը սրտագին հաւանութիւն է տալիս ժողովրդական կոմիսարների խորհրդին, որը հռչակում է Ֆինլանդիայի անկախութիւնը, հրահանգում է յետ կոչել ռուսական զօրքը Պարսկաստանից և շնորհում է Հայաստանին լիակատար ինքնորոշման իրաւունք»։

Խօսքը Թիւրքաց Հայաստանի մասին է։ Լէնին չուզեց յետ մնալ Կերենսկիից։ Բայց աւելորդ է ասել, որ այդ «լիակատար ինքնորոշում» բառը մի վրդովեցուցիչ հեգնութիւն էր, քանի որ սովէտական կառավարութիւնը

*] Այն ժամանակ Անդրկովասը դեռ չէր կցուած։

**] Բնագիրը՝ չունիմ ձեռքիս տակ. անգլիերէն թարգմանութեան մէջ կարդում եմ՝ "A FREE UNION OF FREE NATIONS„։

արդէն իսկ քաշել էր ռուս զօրքը նաեւ Թիւրքաց Հայաստանից, մատնելով այն Բեմալին։

Ահա մի շարք այլ յայտարարութիւններ, խմբագրուած ժամանակակից ընկերվարութեան իմաստով ու բարբառով։

Սովէտները կ'ուզեն... «վերջ տալ մարդու շահագործումին մարդու ձեռքով» և հաստատել մի իրաւակարգի, ուր «այլեւս չպիտի լինեն դասակարգային բաժանումներ և պետական ճնշումներ»։

«Ապահովել աշխատաւորների խղճի ճշմարիտ ազատութիւն։ Եկեղեցին զատել պետութիւնից, դպրոցը զատել եկեղեցուց... ապահովել ամէն մի քաղաքացու կրօնական ու հակակրօնական պրոպագանդի ազատութիւն... Զրի ուսում, կրթութիւն գործաւորներին և չքաւոր գիւղացիներին։

Սովէտական Հանրապետութիւնը ապահովում է աշխատաւորներին գումարումի լիակատար ազատութիւն։ Քաղաքացիները իրաւունք ունեն ազատօրէն կազմակերպելու միթինգներ ու թափորներ և ն.*]։

Աշխատանքը՝ պարտադիր բոլոր քաղաքացիների համար. ով որ չի աշխատում, չպիտի ուտի»։

Բայց այս յայտարարութիւնները կարդալիս, չենք կարող չմտածել, որ իրենց տիրապետութեան սկզբից Սովէտները ամենայն խստութեամբ հալածել են ու շարունակում են հալածել նոյնիսկ ընկերվարականներին — սոց.

*] The Soviet Constitution, էջ 15։

յեղափոխականներ, մենշեւիկներ, դաշնակցականներ և ն.—որոնք, սակայն, ոչ միայն սովոր են ապրել իրենց սեփական աշխատանքով, այլ և տառապել են շատ շատերը ցարական բանտերում ու աքսորատեղերում։ Չենք կարող չյիշել, որ սոցիալիստ-յեղափոխական և սոցիալ-դէմոկրատ կուսակցութիւնները չունեն անգամ ամենաչնչին ազատութիւնը որեւէ ժողով գումարելու կամ ոեւէ թերթ հրատարակելու... Եւ որ այդ ազատութիւնը մերժուած է անգամ մի կարգ «հերձուածող», բայց զտարիւն բոլշեվիկներին, ինչպէս Տրօցկի և իր համախոհները։

Առաջ երթանք։ Ահա սովէտական ծրագրի մի այլ կէտ, որ արժանի է ջերմ ուշադրութեան։

— Սովէտները ազատ ապաստանի իրաւունք են տալիս (right of asylum) այն բոլոր օտարերկրացիներին, որոնք իրենց հայրենիքի մէջ հալածուած են քաղաքական կամ կրօնական մեղքերի համար...

Եւ սակայն բուն իսկ ռուս սովէտական հազարաւոր քաղաքացիներ հալածւում են շարունակաբար ռուս կայսրութեան մէջ և ի վերջոյ ապաստան են գտնում Սիբիրում կամ ներքին բանտերում։ Եւ եւրոպական աշխատաւորութիւնն է, որ տարիներից ի վեր, դիմում դիմումի վրայ, պահանջում է, յորդորում, աղերսում սովէտ կառավարութեանը՝ ազատել կամ գէթ մեղմել այն բազմաթիւ ընկերվարականների վիճակը, որոնք ենթակայ են ամենադառն փորձութիւնների՝ Սոլովեցկի

վանքում և այլ սառցային շրջաններում այն պատճառով միայն, որ հաւատարիմ են մնում իրենց գաղափարին և քարոզում են այն։

Այսպիսի փաստեր արդէն իսկ բաւական են սարսուռ բերելու հեռուէն դիտողին և հասկացնելու թէ ինչ ահաւոր խոշտանգումների է ենթարկւում Կարլ Մարքսի վարդապետութիւնը իր վերջնագոյն պաշտպանների ձեռքով...

Շատ կան, այո՛, Սովէտական Սահմանադրութեան մէջ համակրելի, դէմոկրատիկ սկզբունքներ, ինչպէս որ շատ կային գեղեցիկ յօդուածներ տաճկական մեծահռչակ Հատորը Հումայունի և նոյնիսկ Համիտեան Թիւրքիոյ Օրինագրքի մէջ, քաղուած Ֆրանսիական, Նապոլէոնեան Օրինագրքից։ Դժբախտութիւնը հոն է, որ նրանք բոլորը մնում են մեռած տառ և կեանքի մէջ գործադրւում է տրամագրծօրէն հակառակը։

Շատ չէինք ուզի քննադատել նոյնիսկ ընտրողական իրաւունքը այնպէս, ինչպէս այն ձեւակերպուած է բոլշեվիկեան թէօրիայի մէջ։

Անշուշտ, հակակրելի է և ոչ մի արեւմտեան ընկերվարական չի կարող երբեք ընդունել, որ քաղաքացիների մի մասը դուրս ձգուի ընտրողների ցանկից...

Դա երկիւղի նշան է միայն, դա ապացոյց է, որ տիրող իշխանութիւնը երերուն է և բնաւ վստահ չէ իր ոյժերի և իր դատի արդարութեան վրայ։

Այսպէս կոչուած «առանձնաշնորհեալները», մարդիկ, որոնք ապրում են ոչ իրենց

աշխատանքով, այլ ուրիշներին չահագործելով, արդէն իսկ չնչին տոկոս են կազմում Սովէտների մեծածաւալ երկրում, ուր ամենքը հաւասարեցուած են մի համասփիւռ խեղճութեան մէջ...

Երբ, ուրեմն, սովէտական սիստեմը հրաչակում է, թէ ձայն ունեն միայն գործաւորները, գիւղացիք, զինուորներն ու ինվալիդները, դա համարեա թէ դէմոկրատիզմ է, քանի որ համարեա ամբողջ ազգաբնակութիւնն է կանչւում քուէտուփի առջեւ։

Ի՞նչպէս, սակայն։ Ինչպէ՞ս են կատարւում Սովէտների ընտրութիւնները։ Հնարաւորութիւն տրւո՞ւմ է արդեօք տարակարծիք քաղաքացիներին՝ իրենց մտքերն ու զգացումները արտայայտելու և իրենց ուզած մարդիկը ղրկելու տեղական ու կետրոնական կառավարութեանց մէջ...

Ի՞նչ հնարաւորութիւն կարող է լինել մի երկրում, ուր չկայ ընտրողական պայքար, չկայ մամուլի ու ժողովների ազատութիւն, ուր այդ բոլորը գոյութիւն ունի միմիայն իշխող կուսակցութեան համար և ուր այդ իշխող կուսակցութիւնը, նրա իւրաքանչիւր կոմիտէն, նրա իւրաքանչիւր գործակալն ու ներկայացուցիչը, ամենուրեք — յետին գիւղից մինչեւ մեծագոյն կենտրոնը — հարիւրաւոր միջոցներ ունեն իրենց կամքը պարտադրելու և ընդդիմադիր կարծիքների ամէն մի արտայայտութիւն տեղն ու տեղը խեղդելու...

Ընտրութիւնները «սովէտական-սոցիալիստական» հանրապետութեան մէջ այնքան էլ

տարբեր չեն այն սիստեմից, որ մի ժամանակ գործադրում էր Իտալիան կիսաֆէոդալական Թիւրքիոյ մէջ։

Այդտեղ է ամենացայտուն գիծը, որ այնքան տխրօրէն յատկանշում է Սովէտների հաստատած դիքտատորական ռէժիմը[1]։ Դա դիքտատուրա է ոչ թէ աշխատաւոր դասակարգի՝ ընդդէմ բուրժուազիայի, այլ դա դիքտատուրա է մի բուռն փոքրամանութեան — այսինքն կոմունիստ կամ բոլշեվիկ կուսակցութեան՝ ընդդէմ հարիւր միլիոնաւոր աշխատաւոր ժողովրդի, որի հազիւ 2 0/0 են կազմում բուն կոմունիստները։

Դա մարդկային պատմութեան ամենէն դաժան, ամենէն բռնակալ դիքտատուրաներից է։ Եւ միանգամայն բնական է, որ 80 միլիոն գիւղացիութիւնը, այդ դանդաղաշարժ և ընդհանրապէս հլու զանգուածը մերթ ընդ մերթ կատաղօրէն թափ էր տալիս գլուխը և ժայթքում իր ցասումը իշխող կուսակցութեան դէմ...

Սովէտների քաղաքական կազմակերպութեան ամենաէական յատկանիշը այն դերն է, որ վերապահուած է գերագոյն իշխանութեանը։ Տեսականի մէջ այդ իշխանութեան գործադրողը համառուսական*] Սովէտների Կոնգրէսն է, որ միանգամայն եւ օրէնսդիր մարմին է։

1) DICTATURE, գիտի գործածենք դիքտատուրա։ Բառգիրքը թարգմանում է հրամայապետութիւն։ Կարելի է անուանել և կամայապետութիւն։

*) Այս բառն եմ գործածում, խուսափելու համար համամիութենական խրթին բառից։

Նման բոլոր միւս կոնգրէսներին — նահանգական, գաւառական, ազգային ևն. — նա գումարուում է իւրաքանչիւր տարի, ընտրելու համար Կենտրոնական Գործադիր Կոմիտէն։ Սրա մէջ մտնում է և այսպէս կոչուած «Ազգութիւնների Սովէտը», բաղկացած մօտ 100 անդամներից, այն է՝ հինգ անդամ իւրաքանչիւր դաշնակից հանրապետութիւնից։ Կենտրոնական Գործադիր Կոմիտէն նշանակում է և նախարարներին — ժողովրդական կոմիսարներին — նշանակում է իր պրէզիդիումը, նախագահական կազմը, չորս հոգի՝ որոնք նախագահներն են չորս գլխաւոր հանրապետութեանց, այն է՝ Ռուսաստանի, Անդրկովկասի, Ուկրաինայի և Բէլօռուսիայի։ Կենտրոնական Գործադիր Մարմինը գումարուում է երեք ամիսը մի անգամ։

Չկայ մնայուն պարլամենտ, խորհրդարան, որ արեւմտեան դէմօկրատ պետութիւնների մէջ յար և միշտ հսկում է կառավարական գործողութիւնների վրայ։ (Արեւմտեան պարլամենտարիզմը համարուում է «բուրժուական նախապաշարմունք»)։ Այդ պարլամենտի դերը կատարում է 21 հոգուց բաղկացած մի բիւրո, Վարչական Խորհուրդ։ Իսկ ժողովրդական կոմիսարները կատարում են գործադիր իշխանութեան պաշտօն։

Հինգ կոմիսարներ ընդհանուր են համառուսական միութեան համար (նաեւ, ուրեմն, Անդրկովկասեան երեք հանրապետութեանց համար) — այն է՝ Արտաքին գործոց, Պատե-

բազմական ու Ծովային, Հաղորդակցութեան ճամբաների, Արտաքին առեւտուրի և Փոստ-Հեռագրական կոմիսարները։

Դաշնակից հանրապետութիւններից իւրաքանչիւրը ունի իր ֆինանսական, առողջապահական, աշխատանքի, բանւորական հոգատարութեան և այլ երկրորդական կոմիսարիատներ, որոնք, սակայն, ընդհանուր բնոյթ ունեցող խնդիրների մէջ ենթակայ են Համառուսական Միութեան Կոմիսարիատներին։

Այսպէս, ուրեմն, օրէնսդիր իշխանութիւնը գտնւում է իրօք 21 հոգուց բաղկացած փոքրիկ մարմնի, իսկ գործադիր իշխանութիւնը՝ ժողովրդական կոմիսարների ձեռքը։ Եւ երեք ամիսը մի անգամ Կենտրոնական Գործադիր Կոմիտէն գալիս է իր վստահութեան քուէն տալու երկու մարմիններին։ Իսկ տարին մի անգամ, կարճատեւ նիստի ընթացքում, Համառուսական Միութիւնն է, որ գալիս է լսելու իր ընտրած օրգանների զեկոյցները, վաւերացնում է կամ քննադատում։

Գործնականի մէջ՝ համառուսական այդ բոլոր մարմինները գործում են ռուս կոմունիստ կուսակցութեան վարիչ մարմինների մշտնջենաւոր հրահանգներով։ Այդ վարիչ մարմիններն են, ինքը Կուսակցութեան Կենտրոնական Կոմիտէն և նրա ընտրած երկու մարմինները, այն է՝

Օրգբիւրո (այսինքն կազմակերպական բիւրո) և Պոլիտբիւրո (քաղաքական բիւրո)։ Վերջինի անդամներն են՝ Ռիկով, Կամէնէվ, Զինովիեվ, Ստալին, Տոմսկի, Բուխարին։ Այս

մարդիկն են, որ, թէեւ ամէնքը պաշտօնական հանդամանք չունին, վարում են ամբողջ կայսրութեան 130 միլիոն ազգաբնակութեան ճակատագիրը...

Բաւական չէ այդ։ Նրանք կոչուած են և ամբողջ մարդկութեան ճակատագիրը տնօրինելու, վասնզի նրանք գործադիր մարմինն են և Երրորդ Ինտերնացիոնալի, որի նպատակն է միջազգայնացնել ռուսական կարգերը, առաջ բերելով համաշխարհային յեղափոխութիւն...

Այդ Ինտերնացիոնալի Գործադիր Կոմիտէի մէջ կան, ի հարկէ, նաեւ արեւմտեան մի շարք երկիրների պատուիրակներ, բայց նրանց ձայնը խորհրդակցական արժէք միայն ունի. վճռողը Մոսկուան է, Զինովիեվներն ու Բուխարիններն են։

ԲՈԼՇԵՎԻԿԵԱՆ ՀԱԻԱՏԱՄՔԸ

ՄԱՐՔՍԻԶՄ ԵՎ ԲՈԼՇԵՎԻԶՄ

Քննադատութիւնը տիրոջ կարգերի.— Կոմունիզմի տեսական հիմնաւորումը.— Նոր է միայն մեթոդը.— Նա արամագծօրէն հակառակ է Մարքսի վարդապետութեան ոգուն.— Վիհը բոլշեվիզմի և օցիալիզմի միջև.— Էնգելսի խոստովանութիւնը.— Բոլշեվիկները դաւանում են երիտասարդ ու անփոքր Մարքսին և մերժում հասունցած ու փոքնուած Մարքսին.— Ռոզա Լիւքսեմբուրգ, Կլարա Ցետկին.— Ֆրանսիայի բոլշեվիկները.— Ի՞նչ է մարքսիզմը.— Ժխտումն բոլշեվիկեան դիքատատուրայի.— Մարքս և բոլշեվիկեան զինուորա-բիւրոկրատիկ սիստեմը.— Ռուսաստանը անպատրաստ էր կոմունիզմի փորձերի համար.— Ցետկինայ տնտեսութիւն և մասային տգիտութիւն ու խեղճութիւն.—

Նոր ոչինչ չկայ բոլշեվիկեան վարդապետութեան մէջ։

«Կապիտալիզմը մայր-աղբիւրն է ընկերային բոլոր չարիքների, նա ծնում է պատերազմներ ազգերի միջև, արտադրում է թշնամութիւն ու ստրկացում, նա ծնում է և ներքին դասակարգային բախումներ, պարբերական եղբայրասպան կռիւներ... Որովհետև մէկ դասակարգ — վերին, իշխող, կապիտալիստ դասակարգը — թէև ազգի փոքրամասնութիւն, ունի իր ձեռքում, որպէս մասնաւոր սեփականութիւն, տնտեսական ամենակարող ոյժը, ունի այն բոլոր գանձերը, որ կոչւում են արդիւնաբերական միջոցներ, հող ու հանքեր, գրամ, բանկ, գործարաններ

և էն. և դրա չնորհիւ պահպանում է նաև քաղաքական իշխանութիւնը, զինուած ոյժը՝ միւս խոնարհ, աշխատաւոր դասակարգերի վրայ, որոնք ստում են յուիտենօրէն հարստահարուած և ծառայ, կիսաքաղց և թշուառ»։

«Վերջ տալու համար ընկերային այդ աղաղակող անհաւասարութեան, և նրանից բղխող անհամար չարիքներին, աշխատաւոր ժողովուրդը, որ ամէն տեղ ճնշող մեծամասնութիւն է, պէտք է խլէ այդ կապիտալիստ դասակարգից (կամ բուրժուազիայից) քաղաքական իշխանութիւնը, պէտք է խլէ բանակը և յեղաշրջէ սեփականութեան հաստատութիւնը, ջնջէ մասնաւոր սեփականութիւնը. նա պէտք է ինքն իսկ համայնական սկզբունքներով տէր դառնայ բոլոր վերը յիշած գանձերին, համայնօրէն արդիւնաբերէ և համայնօրէն սպառէ։

«Կ'ազատագրուի այդպիսով ոչ միայն պրոլետարիատը*], կ'ազատագրուի և բուրժուազիան**], որը, չնորհիւ իր հարստութեան, դատապարտուած է պարապ, շռայլ, փուճ կենցաղի, հիւանդ է մեծ մասամբ թէ ֆիզիքապէս և թէ բարոյապէս, խեղդւում է սին ու կոպիտ, ուժասպառող ու թունաւորող վայելքների մէջ... Մինչ աշխատաւորների մեծ զանգուածը — ձեռքի ու մտքի պրոլետարիատը — դատապարտուած է նոյն այլասերման, չնորհիւ կարիքի ամէն տեսակ պատահարների, անաշխատութեան ու համաճա-

*) Աքաւոր, ընչազուրկ դասակարգը
*) Հաքուտ, սեփականատէր դասակարգը

բակ ախտերի, թոքախտի, ալքոհոլի ևն. ևն։ Կեանքը կարճատեւ է, աշխատանքը ծանր, վաստակը չնչին, միանգամայն անհամապատասխա՛ն քաղաքակիրթ էակի բազմապիսի պահանջներին։ Մի կեանք, որ լի է վշտերով և քիչ ունի ուրախ ժամեր։

«Կոմմունիզմը, համայնական իրաւակարգը միանգամայն հնարաւոր է, քանի որ համապատասխան է մարդկանց ահագին մեծամասնութեան շահերին։ Կոմմունիզմը հնարաւոր է, քանի որ մարդիկ հետզհետէ միշտ ու աւելի համախմբւում են, կազմում հսկայ ընկերակցութիւններ և իրենց ճիգերը միացնում օգտակար գործունէութեան բոլոր ասպարէզներում։ Կոմմունիզմը հնարաւոր է, քանի որ մեքենաները անհունապէս կատարելագործելով, աճում են անհունօրէն նաեւ արդիւնաբերող ոյժերը։

«Բայց կոմմունիզմը ոչ միայն հնարաւոր է, պատմականօրէն անհրաժեշտ, նա բղխում է ճակատագրօրէն ոչ միայն անտեսական էւոլիւցիայից, այլ եւ քաղաքական, մտաւոր ու հոգեկան յառաջդիմութիւնից։

«Ցնտեսական էւոլիւցիայի հետեւանքով, գիւղերը դատարկւում են ի նպաստ քաղաքացիների, արդիւնաբերութիւնը աճում ու կենտրոնանում է փոքրաթիւ ձեռքերի մէջ, վիթխարի գործարանը կլանում է հետզհետէ փոքրիկ արհեստանոցները, խոշոր առեւտուրը դուրս է մղում մանրը, մեծ բանկերը բռնում են փոքրերի տեղը...

«Կոմմունիզմը պիտի գա՛յ, աշխատաւորների հսկայ բանակը պիտի գա՛յ իր թաթը դնելու այդ կենտրոնացած արդիւնաբերութեանց վրայ և պիտի դարձնէ հանուր համայնքի սեփականութիւն, ծառայեցնելով հանուրի օգտին։

«Սեփականութեան մենաշնորհը ջնջուելով, դասակարգերը կը վերանան և մարդիկ հաւասար կերպով պիտի հիւրընկալուեն բնութեան առատ սեղանի շուրջը, միացած հանուրու ներդաշնակ գործակցութեան մէջ, մէկը բոլորի համար, բոլորը մէկի... միասին աշխատելով և միասին վայելելով։

«Կռիւը մարդկանց մէջ կը դադրի, շահագործումն ու հարստահարումը կը դադրին, պատերազմները կը վերանան և ամէնքը միաբան, համերաշխ կը պայքարեն — բնութեան դէմ...»։

Ահա բոլշեվիկեան հաւատամքը։ Նոր ոչինչ չկայ այդ տեսական յայտարարութիւնների մէջ։ Ամէն բան վաղուց ասուած է արդէն ընկերվարական խորհողների բերնով։ Եւ բոլշեւիկներն էլ սկզբից արդէն ծանուցին աշխարհին, որ իրենք կանգնած են Մարքսեան վարդապետութեան տեսակէտի վրայ։

Նոր է մեթոդը։ Նոր են իրականացման միջոցները, իդէալին հասնելու ճանապարհը*]։

Ռուս կոմմունիզմը ընկերային հաւասար կնճիռը լուծելու համար, առաջադրեց կարմիր,

*) Իրօք այդ մեթոդը, այդ ճանապարհն ևս բարձակ նորութիւն չեն, քանի որ նրանք ըստ էութեան ձևակերպուած են անիշխանական տեսաբանների, մասնաւորապէս Բակունինի, գրուածքներում։

արիւնոտ դիքտատուրայի մեթոդը, որ արդէն տեսանք։ Մի բուռն մարդկանց կամայատիրութիւն անագին մեծամասնութեան վրայ, ոչինչ պարլամենտ, ոչինչ ընդհանուր ընտրական իրաւունք, դիքդատուրա՝ սիստեմատիկ բռնութիւններով ու ահաբեկումով, բուրժուազիայի ու բոլոր հակառակորդների հալածանքով ու ֆիզիքական ոչնչացումով... Մի մեթոդ որ Կարլ Մարքսը և իր հռչակաւոր զինակիցը, Ֆրիդրիխ Էնգելս, ոչ միայն չեն յանձնարարած, այլ և վճռապէս մերժած են։ Մերժած են մասնաւորապէս Ռուսաստանի նման յետամնաց երկիրների նկատմամբ։

Ռուս բոլշեվիկ կուսակցութիւնը, ինչպէս ասացինք, երբեմնի մէկ հատուածն էր ռուսական մեծ Սոցիալ-Դեմօկրատիայի, իսկ այդ վերջինը յայտնի էր, իբրեւ «ուղղադաւան մարքսիստ» կուսակցութիւն։ Անջատուածները, որ մեծամասնութիւն էին, շարունակեցին յայտարարել իրենց, որպէս զտարիւն մարքսիստներ, իբր թէ աւելի հետեւողական, քան փոքրամասնութիւնը, մենշեվիկները։ Եւ որովհետեւ մարքսիզմով տոգորուած է ամբողջ ժամանակակից ընկերվարական վարդապետութիւնը, ուստի և բոլշեվիկեան յեղափոխութեան բոլոր բացասական կողմերի համար՝ շատերը պատասխանատու կոչեցին առհասարակ ընկերվարական վարդապետութիւնը. ուրիշ խօսքով, նոյնացրին բոլշեվիզմ եւ ընկերվարութիւն...

Եւ այդ հանգամանքը անհաշիւ չարիք պատճառեց համաշխարհային սոցիալիզմին։

Միանգամայն կամայական ու անարդար է այդ նոյնացումը։ Ճիշտ է, երկու հոսանքների վերջնական նպատակը էապէս նոյնն է, բայց միջոցները այնքան են տարբեր ու անհաշտ, որ երկուսի միջեւ անանցանելի վիհ կայ։

Բոլշեվիզմը *] ընկերվարութիւն չէ, ոչ ալ մարքսիզմ է։

Իրաւ է, Մարքս և Էնգելս 1847-ին գրել են իրենց հռչակաւոր «Մանիֆեստը», որ անուանել են «կոմմունիստական»։ Իրաւ է, այդ Մանիֆեստի մէջ նրանք արել են մի քանի յայտարարութիւններ, — մասնաւորապէս պրոլետարիատի դիքտատուրայի մասին — որոնք նման են ռուս բոլշեվիկեան յայտարարութիւններին։

Այն ժամանակ սակայն երկու սոցիալիստական առաքեալները տակաւին շատ երիտասարդ էին (27-28 տարեկան) և չափազանց լաւատես։ Նրանք կարծում էին, թէ բաւական է, որ աշխատաւորութիւնը իր ձեռքը առնէ քաղաքական իշխանութիւնը և նա կը կարողանայ անմիջապէս ձեռք զարնել սոցիալիզմի իրականացման։

Նրանց թւում էր մինչեւ անգամ, թէ 1848-ի փետրուարեան յեղափոխութիւնը — որ ծագելով Փարիզում՝ հեղեղել էր ամբողջ ցամաքը — պիտի բռնկուէր սոցիալական կամ ընկերային յեղափոխութիւնը ողջ Եւրոպայում։

*) Բոլշեվիզմ և կոմմունիզմ գործածւում են սովորաբար իբրև համանիշ բառեր, թէև իմաստով տարբեր են։

Բայց պէտք չէ մոռնալ, որ Կարլ Մարքսապրել է մինչեւ 1883-ը։ Իսկ Էնգելս մինչեւ 1895-ը։ Պէտք չէ մոռնալ, որ 1847-ի օրերից ի վեր — երբ նրանք դեռ երկուսով այնքա՛ն անփորձ էին ու դիւրաւ խանդավառուող—կրել են մեծ էւոլիւցիա, և 25-45 տարիների անցուդարձերի ազդեցութեան տակ կուռած ու կոփուած, նրանք հիմնովին փոփոխել են իրենց տեսութիւնները յատկապէս աշխատաւորական, սոցիալիստական տակտիկայի, գործելակերպի նկատմամբ։ Պէտք չէ մոռնալ, որ նրանք արել են նոյնիսկ հանդիսաւոր խոստովանութիւններ իրենց երբեմնի սխալների մասին։

Առաջ բերենք երկու փաստ միայն, որ բաւական հրատանգիչ են։

Առաջին խոստովանութիւնը արել են միասին։ 1872-ին «Կոմմունիստական Մանիֆեստ»-ը հրատարակւում էր Ֆրանսերէն լեզուով։ Մարքս և Էնգելս գրում են նախաբան։ Գրում են այդ նախաբանումհեռանալ խիստ ուշագրաւ տողերը՝ իրենց աշխատութեան այն յոդուածի շուրջը, որ վերաբերում է յաղթական պրոլետարիատի անսիջապէս ձեռք առնելիք յեղափոխական միջոցներին *]։

«Այդ յոդուածը շատ կետերում այսօր ուրիշ կերպ պիտի խմբագրուեր։ Ի նկատի ունենալով մեծ արդիւնաբերութեան հսկայական զարգացումը վերջին քսանեւհինգ տարիների ընթացքում եւ նրա հետ զուգընթացաբար առաջացած գործաւոր դասակարգի կուսակցական կազմակեր-

*) Այսինքն քաղաքական իշխանութիւնը ձեռք գցելուց յետոյ։

պումը· ի նկատի առնելով նախապետրուարեան յեղափոխութեան փորձերը, ապա մանաւանդ փարիզեան կոմմունայի փորձը, որ առաջին անգամը տուեց երկու ամսով բաղաքական իշխանութիւնը պրոլետարիատին, ի նկատի առնելով այդ բոլորը, այս ծրագիրը այսօր հինցած է իր որոշ կէտերում։ Կոմմունեան մասնաւորապէս ապացուցեց, որ բաւական չէ բաղաքական մեքենային տիրանալը, որպեսզի գործաւոր դասակարգը կարողանայ ծառայեցնել այն՝ իր յատուկ նպատակներին»։

Երկրորդ խոստովանութիւնը արեց 1895-ին, մահից քիչ առաջ, Ֆրիդրիխ Էնգելս, որին վիճակուած էր շարունակել Մարքսի գործը և որի մեծ հեղինակութիւնը ընդունել է ամբողջ ընկերվարական աշխարհը և ինքը Լենին։

Դա այն ծանօթ յայտարարութիւններն են, որ հրատարակուեցին իբրեւ նախաբան Die Klassenkämpfe in Frankreich 1848 bis 1850 մարքսեան գրուածքի և որ պէտք է ընդունել իբրեւ մարքսիզմի վերջին խօսք։

«Պատմութիւնը չարդարացրեց մեզ և թոլոր նրանց, որոնք մեզ պէս էին մտածում»— ասում է այդտեղ Ֆրիդրիխ Էնգելս, ակնարկելով նաեւ իր ընկեր Մարքսի վրայ, որ իր գործունէութեան առաջին շրջանում այնքան յաճախ մարգարէացել էր «մօտալուտ կատաստրոֆի» և սոցիալիզմի վաղահաս յաղթութեան մասին։ Անկարելի է, ասում է նա, յեղաշրջել հասարակութիւնը «մի հարիկ մեծ ճակատամարտով», անհրաժեշտ է «դժուարին, յամառ ու յարատեւ պայքար, որ առաջացնէ մեզ

դերքից-դերք ատիճանաբար»։

«Անցել է ժամանակը — շարունակում է Էնգելս — երբ յեղափոխութիւնները կատարւում էին մի անակնկալ հարուածով, չնչին ու գիտակից փոքրամասնութեան ձեռքով, որ գլուխ էր կանգնում անգիտակից զանգուածների... Այնտեղ, ուր հասարակական մարմնի լիակատար յեղաշրջման խնդիր է դրուած, այնտեղ անհրաժեշտ է գործակցութիւնը գիտակից զանգուածների...»։

Դատապարտելով հին տակտիկը, Էնգելս քարոզում է նորը, միակ «խելացին ու նպատակայարմարը»։ Դա օրինականութիւնն է, խաղաղ պայքարը պարլամենտական հողի վրայ, ընտրողական քուէներով...

Ռուս բոլշեվիկները կամ անգիտանում են իրենց երկու մեծ վարպետների այդ նշանակալի խոստովանութիւնները, կամ թէ ասում են պարզապէս.— «Մենք կանգնած ենք Կոմմունիստական Մանիֆեստի տեսակէտի վրայ»...

Այսինքն, ուրիշ խօսքով, նրանք դաւանում են երիտասարդ Մարքսին (27-28 տարեկան) և մերժում են փորձուած, հաստատուած, պատմութեան ու տնտեսագիտութեան բոլոր տուեալներով սպառազինուած Մարքսին ու Էնգելսին։

Եւ դարձեալ հռչակում են իրենց միակ հետեւողականօրէն ու հաւատարմօրէն մարքսեան կուսակցութիւն։

Զգարմանանք և չծանրանանք այս պարագայի վրայ։ Յայտնի է, թէ որքան «աղատօրէն» այդ մարդիկ գիտեն վերգնահատել բոլոր ընդունուած արժէքները և յեղաշրջել անգամ տրամաբանութեան օրէնքները։

Նոյնը տեսնում ենք արեւմտեան բոլշեվիկների մօտ։

«Մենք շարունակում ենք այն գործը, որ սկսել են Մարքս և Էնգելս, ուղիղ 70 տարի առաջ իրենց Մանիֆեստով»,—այսպէս էր յայտարարում դժբախտ Ռոզա Լիւքսեմբուրգ, իր եղերական մահից երկու շաբաթ առաջ*), 1918-ի դեկտեմբերին մի մեծ ճառի մէջ, արտասանուած գերման կոմմունիստ կուսակցութեան առաջին համագումարին։

Աւելի ուշագրաւ կայ։

Ռոզա Լիւքսէմբուրգ «համոզուած էր», որ եթէ Մարքս ու Էնգելս ապրէին մինչեւ մեր օրերը, անպատճառ կը խորհէին ու կը վարուէին բոլշեվիկների պէս, կ'որդեգրէին կոմմունիստական տաքտիկը... վանդի իրենք են բուն, ճշմարիտ յեղափոխական մարքսիզմի մէջ, —մինչ Կաուցկիները, Պլէխանովները, Մարտովները կեղծ մարքսիստներ են, «դեղիններ» են, «սոցիալ-դաւաճաններ» են։

*) 1918ին, երբ դաշնակիցների յաղթանակից յետոյ պայթեց գերմանական յեղափոխութիւնը, մի խումբ կոմմունիստներ — «Սպարտակեան» անուանակ— Ռուսաստանի օրինակով քաջալերուած, փորձեցին Գերմանիայում եւս առաջ բերել սոցիալական յեղափոխութիւն և տալ իշխանութիւնը գործաւորների, զինուորների ու գիւղացիների «խորհուրդներին»։ Փորձը վիժեց. Գերմանիան Ռուսաստան չէր... Եւ սպարտակեան շարժման երկու մեծագոյն զարգլուխները—Կարլ Լիբնեխտ ու Ռոզա Լիւքսէմբուրգ —չարաչար խոշտանգուեցան (1919 թ. Յունուար)։

Նոյնքան ազատօրէն, առանց այլեւայլի, այսօր ֆրանսիական կոմմունիստ կամ բոլշեվիկ կուսակցութիւնը յայտարարում է, որ եթէ Ժորէսը ապրէր՝ բոլշեվիկ կը լինէր...

Տարաբախտաբար այդ մեծ մարդիկ չեն լսում այլեւս մեր աշխարհի անցուդարձը և բոլշեվիզմի մոլեռանդները կարող են անպատիժ ամէն բան փաթթել նրանց շլինքին...

Ռոզա Լիւքսէմբուրգի միանգամ է յայտնում մի այլ հռչակաւոր կին կոմմունիստ, Կլարա Ցետկին,—Մարտովի դէմ մղած իր բանակրռուի մէջ։ Նա խոստովանում է, որ բոլշեվիկեան դիքտատուրան Մարքսի ըմբռնումը չի, բայց նրա համար տարակոյս չկայ, որ Մարքսը լինելով խորապէս յեղափոխական մի մտածող, պիտի փոխէր իր ըմբռնումը պրոլետարիատի դիքտատուրայի մասին։

Ցետկին գոնէ չիտակօրէն անուղղակի յայտարարում է, որ բոլշեվիզմի մեթոդները մարքսիզմ չեն, նոյնիսկ հակառակ են մարքսիզմի, վասնզի Մարքս կանգնած էր պարլամենտարիզմի *) և էւոլիւցիոնիզմի **) գեռնի վրայ *]։

Բայց այդ պարագային փոքր ինչ անյարմար է, այնուամենայնիւ, դնել բոլշեվիկեան մարդանքները մարքսիզմի դրօշի տակ։ Աղաղակող անարդարութիւն է, որ գործուում է ընկերվարական մեծ առաքեալների հանդէպ...

*) Խորհրդարանային կարգերի

**) Առաիհանական, խաղաղ զարգացման

*] Տես. Ցետկինի անգլ. թարգմանութիւնը. Through Dictatorship to Democracy։

«Եթէ Մարքս ապրէր — մեզ հետ կը լինէր»... «Եթէ Ժորէս ապրէր—մեզ հետ կը լինէր»...

Սրանք փաստեր չեն, այլ անճարութեան յայտարարութիւններ, որ չեն դիմանում քննադատութեան։

Եւ, սակայն, այսպէս են ասում շարունակուում, ֆրանսիացի, գերման ու այլ կոմմունիստները, բոլշեվիկները։ Ցեղաթիւրում ու կեղծում են այն մարդկանց աշխարհայեացքը, որոնք պարծանքն են աշխատաւորական շարժման և պաշտամունքը աշխարհի բոլոր ընկերվարականների...

ԻՆՉ Է ՄԱՐՔՍԻԶՄԸ

Ով որ ծանօթ է մարքսեան վարդապետութեան թէկուզ այբբենին, գիտէ այն մի քանի դրութիւնները, որոնց մէջ ամփոփուած է այն.

1. Ըստ Մարքսի, ընկերվարութեան իրականացումը կապուած է տնտեսական զարգացման մի յայտնի աստիճանի հետ։ Ուրիշ խօսքով, որպէսզի ընկերվարական իրաւակարգը կարելի լինի իրագործել, անպայման անհրաժեշտ է, որ կապիտալիստական տնտեսութիւնը հասած լինի զարգացման մի յայտնի շրջանի, որ արդիւնաբերական յարաբերութիւնները որոշ չափով հասունցած լինեն, գործարանները շատցած, հարստութիւնները կենտրոնացած և այլն, վասն զի այդպիսով միայն

կը ստեղծուին ընկերվարութեան, սոցիալիզմի նիւթական նախապայմանները, կը ստեղծուին արդիւնաբերական այն խոշոր ու համատարած գործառնութիւնները քաղաքներում ու գիւղերում, որոնց մէջ աշխատանքը արդէն իսկ կազմակերպուած պիտի լինի համայնական հիմերի վրայ։

2. Նիւթական նախապայմանները բաւական չեն։ Սոցիալիզմի իրականացման համար անհրաժեշտ են և իմացական նախապայմաններ։ Տգէտ, անուս, բիրտ ու գռեհիկ զանգուածների ձեռքով անկարելի է իրագործել մարդկային հաւասարութեան ու ազատութեան վսեմ իդէալը։ Տգէտ ու անփորձ պրոլետարիատը չի էլ կարող կազմակերպել ու վարել ընկերային յարաբերութեանց բարդ, վիթխարի մեքենան։ Տգէտ, անկիրթ աշխատաւորութիւնը անկարող է յարգել մարդկային անձն ու ազատութիւնը։

Պրոլետարիատը պէտք է դեռ կրթուի ու դաստիարակուի, պէտք է շա՜տ կրթուի ու դաստիարակուի։

Ահա անհրաժեշտ ճշմարտութիւններ, որ Մարքս ազդարարել է ժամանակին և որ — յատկապէս վերջին ճշմարտութիւնը — աւելի մեծ ոյժով և աւելի պերճ լեզուով արծարծել է երկարօրէն Ժան Ժօռէսը։

Երկու մեծագոյն սոցիալիստները, որոնցից մէկը հանգչում է այժմ Ֆրանսիական պանթէոնի մէջ, խորապէս համոզուած էին, որ այդ ճշմարտութիւններից դուրս՝ չիք փրկութիւն, որ նրանց հակառակ կատարուած ընկերային յեղաշրջման ամէն մի փորձ պիտի վիժի աղէտալիօրէն։

3. Պէտք են նիւթական նախապայմաններ, պէտք են իմացական նախապայմաններ, պէտք են և քաղաքական նախապայմաններ։ Մարքս միանգամայն անհրաժեշտ է գտնում հատարակապետական - դեմօկրատիկ կարգերը, իբրեւ անցողական մի շրջան դէպի ընկերվարութիւն։ Անհրաժեշտ է գտնում, որ պարլամենտը, խորհրդարանը յարատեւի, ատիճանաբար կատարելագործուելով, որ աշխատաւորութիւնը բազմէ այնտեղ միշտ աւելի ստուար շարքերով, նա մասնակցի բոլոր ընտրական պայքարներին, ձգտէ հետզհետէ ռամկավարացնել հանրային կարգերն ու բարքերը. դառնալ մեծամասնութիւն պարլամենտի մէջ և այդպէս միայն դառնալ իշխող դասակարգ իւրաքանչիւրը իր հայրենիքում...

(Ինչ էլ ասեն բոլշեվիկները, զուիցերական ամենադեմօկրատիկ հանրապետութեան մէջ աշխատաւոր ժողովուրդը աւելի իրաւատէր է, քան թէ ուրիշ տեւէ երկրում)։

4. Մարքս խօսել է, այո՛, նաեւ պրոլետարիատի դիքտատուրայի մասին, իբրեւ ժամանակաւոր, փոխանցական մի դրութեան, բայց ըմբռնել է այն, որպէս մեծամասնութեան դիքտատուրա։ Իսկ այդպիսին կը ստեղծուի այն ժամանակ, երբ—ինչպէս արդէն ասացինք — աշխատաւորութիւնը կը դառնայ յարատեւ մեծամասնութիւն ազգային խորհրդարաններում, կը դառնայ իշխող դասակարգ և տեւականօրէն իր ձեռքը կ՚առնէ երկրի ճակատագրի

դեկը։

Այս է մարքսեան վարդապետութեան ծուծն իսկ։ Կարլ Մարքսը շատ բաներում մեղանչել է իրականութեան ու ճշմարտութեան դէմ, մանաւանդ Կոմմունիստական Մանիֆեստի երիտասարդ Մարքսը. նա սխալուել է գուշակելով 1848-ին մօտալուտ սոցիալական յեղաշրջումը, սխալուել է գուշակելով արդիւնաբերութեան և դրամագլխի շուտափոյթ ու սրարշաւ կենտրոնացումը, սխալուել է, նախատեսելով աշխատաւոր զանգուածների գահավէժ պրոլետարացումը, թշուառացումը, սխալուել է և իր պատմափիլիսոփայական փոքր ինչ հապշտապ ընդհանրացումներով, տնտեսական ազդակները միակ ու տիրական մղիչ հռչակելով մարդկութեան էւոլիւցիայի մէջ և դասակարգային կռիւներ միայն տեսնելով մարդկային պատմութեան ծոցում... բայց վերը յիշած դրութիւնները մնում են անսասան։

Աքսիոմ է *), այո՛, մարքսեան վարդապետութեան աքսիոմներից մէկն է այն՝ որ ընկերային յեղաշրջումը, այսինքն արդիւնաբերութեան միջոցների համայնացումը, կարող է ի կատար ածուիլ միմիայն տնտեսապէս բարձրագոյն չափով զարգացած երկիրներում, հարուստ ու բարգաւաճ երկիրներում, ուր գործարանային կեանքի գահավէժ ալիքների մէջ նիւթական հարստութիւնները արագօրէն դիզւում են, կենտրոնանում համեմատաբար

*) Մի պարզ դրութիւն, որ կարօտ չէ ապացոյցների։

փոքրաթիւ դրամատէրերի ձեռքը և ուր, միւս կողմից, աշխատաւորութիւնն էլ — պրոլետարիատը — ներկայացնում է ոչ միայն բիրտ ֆիզիքական ոյժ, այլ և զարգացած, հասուն, իմացական մի ազդակ, օժտուած արհեստագիտական խորունկ հմտութիւններով և միանգամայն դաստիարակուած ու կարգապահ, գիտակ իր բարձր առաքելութեան, յարգող մարդկային իրաւունքների... Եւ այդ բոլորի հետ միասին աշխատաւորութիւնը, իր յեղափոխիչ ու ազատարար դերը կատարելու համար, պէտք է ունենայ մի յայտնի չափով նիւթական բարեկեցութիւն. վասն զի համաշխարհային պատմութեան մէջ այլ և այլ ժամանակներում բռնկուած ընկերային շարժումները ապացուցում են, որ թշուառ, մերկ ու քաղցած հնագարեան պարիաների վիճակին ենթարկուած թափառաշրջիկ և մուրացիկ բազմութիւնները, լոկ ստամոքսի ճիչին հնազանդուելով, առանց իդէալի յստակ գիտակցութեան, անկարող են լուրջ, տեւական ու արդասաւոր յեղաշրջումն առաջ բերել և ստէպ միայն սարսռալուծող ու աւերիչ դեր են կատարում...

Եւ սակայն, բախտի մի տարօրինակ քմահաճոյքով, կոմմունիզմի իրականացման առաջին մեծ փորձերն եղան մի երկրում, ուր գործարանային արդիւնաբերութիւնը նոր էր ելած իր նախնական շրջանից, ուր չկային դասակարգային մեծ բախումներ, ուր պատերազմից առաջ չէիք տեսնի նիւթական մեծ հարստութիւններ — արեւմտեան չափանիշով — իսկ

պատերազմից յետոյ համատարած խեղճութիւնն էր թագաւորում, ուր, վերջապէս, ինքը աշխատաւոր բազմամիլիոն ընդհանրութիւնը—գիւղացի և գործաւոր—այն դասակարգը, որ կրողն ու կառուցանն է գալոց բարձր իրաւակարգի, ներկայացնում էր սովալլուկ անգրագէտների մի վիթխարի զանգուած, որ գործում էր մի անհաշիւ ու անգիտակից, խօլական տարերայնութեամբ։

Այդտեղից էլ առաջացաւ կատաստրոֆը...

Մարքս դեռ 1859-ին յայտարարել էր իր նշանաւոր գրքի նախաբանում *), որ հասարակութիւնը չի կարող ցատկել զարգացման յայտնի փուլերի **) վրայից... կարող է միայն մեղմել ծննդաբերութեան ցաւերը։

Հէնց այդ ցատկումն է, որ արեց թշուառ Ռուսաստանը մի բուռն խիզախ ուտոպիստների ***) ուսերի վրայ — և գահավիժուեց դէպի մի անդունդ, ուսկից դժուար կարող է ելնել։ Նա կարծեց թէ իր կիսանահապետական վիճակից կարող է նետուել կոմմունիզմի դրախտը կամ գէթ նրա նախադուռը... առանց խոշոր գործարանային պրոլետարիատի և առանց խոշոր, կենտրոնացած ճարտարարուեստի։ (Պատերազմից առաջ ամբողջ Ռուսաստանի գործարանային բանուորութիւնը—չհաշուած լեհականը—հազիւ մէկ ու կէս միլիոն էր։ Ազգաբնակութեան ահագին մեծամասնութիւնը,

*) Zur Kritik der politischen Oekonomie.

**) Phase, փուլ։

***) Utopiste, ցնորապաշտ։

գրեթէ երեք քառորդը, կազմում էին գիւղացիները. մի չնչին մասն էլ կազմում էր խոշոր ու մանր բուրժուազիան, արդիւնաբերող և առեւտրական դասակարգը)։

Մարքսեան գրականութեան մէջ կայ մի այլ նշաւոր ու պատկերաւոր ճշմարտութիւն, որ ասում է, թէ յեղափոխութիւնը պէտք է կատարէ մանկաբարձի դեր միայն։

Ուրիշ խօսքով, նոր, բարձր ընկերային իրաւակարգը, արդէն պատրաստուած ու հասունցած հնի ծոցի մէջ, պիտի բխէ հին, կապիտալիստական իրաւակարգից նոյնքան բնականօրէն, ինչպէս հասունցած երեխան լոյս աշխարհ է գալիս մօր արգանդից... մանկաբարձի թեթեւ օգնութեամբ։ Հմուտ մանկաբարձը այնպէս կը կատարէ գործողութիւնը, որ թէ երեխան ողջ-առողջ մնայ և թէ ծնողը. կամ, դժուարին պարագաներում, երբ ծնողի կեանքը կը վտանգուի, գէթ մանուկը կ'ազատէ մահից. կամ, վերջապէս, մանկան կեանքը վտանգուելով, գէթ ծնողը կը փրկէ։

Ռուս բոլշէվիկները այնպէս կատարեցին մանկաբարձի դերը, որ թէ ծնողը մեռաւ և թէ ծնունդը։ Հին, կապիտալիստական Ռուսաստանը չկայ, բայց չկայ և նորը, կոմմունիստականը։ Պէտք է միանգամայն տգէտ լինել կարծելու համար թէ Ռուսաստանը կոմմունիստական երկիր է կամ թէկուզ միայն կոմմունիզմի, սոցիալիզմի սկզբնաւորութեան մէջը։ Նա ամենայն եռանդով վերակոնգնում է հինը, վերստեղծում է կապիտալիզմն ու բուրժուազիան։ Զգիտենք, քանի՞ տասնեակ

տարիներ կ'անցնին, մինչեւ որ Ռուսաստանի տնտեսութիւնը—հաղորդակցութեան միջոցներ, առեւտուր և այլն—կարենան բարձրանալ գէթ մինչեւ այն խղճուկ մակարդակը զարգացման ու բարգաւաճման, որ գոյութիւն ունէր պատերազմից առաջ, ցարական ռէժիմի ներքոյ...

Երբ բռնութեամբ, հալածանքներով ու վտարումներով, ժառայի զնդակահարումներով ջնջուեց հրապարակից համառուսական հակալեղափոխական բուրժուազիան—իսկ որ մէջ մտնում են սովէտական ըմբռնումով ոչ միայն կապիտալի ու հարստութեան տէրերը, այլ ամբողջ ոչ-սովէտական մտաւորականութիւնը, բոլոր այլադաւան ընկերվարականները—սոցիալիստ-յեղափոխականներ, մենշեվիկներ, դաշնակցականներ, ազատականներ, անհամար արհեստագէտները, գիտնականներն ու գրագէտները—և երբ նոր տէրերը դիմեցին վերաշնութեան, հսկայ երկիրը ծայրէ ի ծայր վերածուած էր tabula rasa-ի, մի կատարեալ «մերկ տախտակի»։

Ռուսաստանի պրոլետարիատը բնաւ պատրաստ չէր վերաշնութեան այդ գործի համար։ Ռուսաստանի պրոլետարիատը պատրաստուած չէ նոյնիսկ ազատութիւնը ըմբռնելու և կիրառելու համար։ Տգէտ ու կոչտ բոսիակի *) համար ազատութիւնը իր քմահաճոյքն է, իր կամայական թռիչքները։ Եւ բոսեակային այդ

*) Մաքսիմ Գորկիի նկարագրած ու գուրգուրած տիպն է։ Բոսիակ մօտաւորապէս նոյն իմաստն ունի, ինչ որ ֆրանսերէնն sansculotte (անվարտիկ) բառը։

մտայնութիւնն ունին իրենք շէֆերը... Քաղաքակիրթ եւրոպացին, ամերիկացին վաղուց գիտէ, որ անհատի ազատութիւնը սահման ունի, որ նա կը վերջանայ այնտեղ, ուր կը սկսուի ուրիշ անհատի ազատութիւնը։ Եւ եւրոպացին, ամերիկացին գիտէ զինքը ենթարկել որոշ դիսցիպլինի, նա սիրում է ազատ լինել, բայց նա գիտէ յարգել նաեւ ուրիշի, իր նմանների ազատութիւնը։ Այդ անհրաժեշտ դիսցիպլինը *), որ խարիսխն է ժամանակակից կուլտուրական համայնակարգի, մշակուել է Արեւմուտքի մէջ դարերի ընթացքում, մշակուել է հէնց ազատութեան ռէժիմի տակ, նրա շնորհիւ, նրա միջոցով։

Իսկ ռուս բոսիակը, որ չի տեսել իր երկրի մէջ ազատ կարգեր, որ չի ճաշակել նոյնիսկ տարրական դատարանակութեան բարիքները, ռուս բոսեակը, որի հարազատ պատճէնն է բոլշեվիկ մտաւորականը, կրէմլում բազմած բոլշեւիկ հրամանատարները, երէկ տարուկ, այսօր տէր, նեռուեց ամենաանձաւակ ազատութեան մէջ, նրա աչքում իր ազատութիւնը բացարձակ է, անսահման, ոչ մի արգելք ու անջրպետ չճանաչող. նրա քմահաճոյքը օրէնք է. և նա զարնում է աջ ու ձախ, թալանում ու կոտորում... «բուրժույներին»։

*) Հայերէն կարգապահութիւն բառը յաճախ չի թարգմանում discipline-ի ճշմարիտ իմաստը։ «Դիսցիպլին» գործածւում է ոչ միայն զինուորական, այլ և զուտ փիլիսոփայական իմաստով։ Առում են, օրինակ, կրօնական դիսցիպլին, բարոյագիտական դիսցիպլին և այլն։

Այդպէս է նա ըմբռնում սոցիալիզմը, Բուրժուաները թշնամի են, Շինգարեօվներն ու Կոկոշկինները թշնամի են, ինտելիգենտները թշնամի են... Զա՛րկ, ուրեմն, բոլորին, զա՛րկ անգամ ընկերվարականներին, ս. դ.-ներին, մենշեվիկներին, որոնք չեն ուզում գլուխները ծռել բօսեակների իշխանութեան առջեւ. զա՛րկ բոլոր քննադատներին, բոլոր այլ կերպ մտածողներին...

*
* *

Մարքս երբէք չի ասել, թէ պրոլետարիատի դիքտատուրան պէտք է պահպանէ բիւրօկրատական-միլիտարական*) հսկայ մեքենան. ընդհակառակը։ Ֆրանսիայի 70ական թուերի քաղաքացիական կռիւների փորձերից հրահանգուած, նա գրել է, որ ճշմարիտ ժողովրդական (աշխատաւորական) յեղափոխութիւնը պէտք է ոչ թէ որդեգրէ բուրժուա և կիսա-աւատական սիստեմներին յատուկ այդ զինուորա-բիւրօկրատիկ մեքենան**), այլ, պէտք է փշրէ, ոչնչացնէ այն***)։

Մարքսիզմի վարպետները ուրիշ կերպ

*) Զինուորապաշտական։

**) Որ տիրում է այսօր Ռուսաստանում... Զարմանալի չէ, որ բոլշեվիկեան այդ բիւրօկրատիզմի ու միլիտարիզմի դէմ սկզբից իսկ զզուանքով բողոքեցին Մարքսի ամենայայտնի և անմիջական աշակերտները, Կաուցկի և այլն։

*) Ծանօթ.—Տես Մարքսի նամակը Կուգելմանին, 12 Ապրիլ 1871 թ.

չեն էլ ըմբռնել պրոլետարական դիքտատուրան, բայց եթէ միայն դեմոկրատիկ հասարակապետութեան ձեւով։

Մարքս ցաւով չեշտում է իր 18 Brumaire-ի մէջ, որ իշխանութեան համար պայքարող բոլոր կուսակցութիւնների առաջին գործն է եղել՝ իրենց ձեռքն առնել այդ մեքենան (բիւրօկրատիան և բանակը), որպէս յաղթողի գլխաւոր աւար... Եւ աւելի ցաւով յայտարարում է, որ «բոլոր նախորդ յեղափոխութիւնները, ի տեղի փշրելու այդ բիւրօկրատիկ-զինուորական կառուցուածքը, միայն կատարելագործել են այն*]...

Որքա՜ն աւելի ցաւ պիտի զգար, եթէ ապրէր ու տեսնէր, որ իր անունով երդւող ռուս բոլշեւիկները պահպանում ու կատարելագործում են կարմիր բանակը, «կարմիր միլիտարիզմը», կարմիր բիւրօկրատիզմը, որ ժխտումն են դէմօկրատիզմին...

Բոլշեվիկ գրականութիւնը առհասարակ լռութեամբ է անցնում Մարքսի առողջ հրահանգների վրայից և սիրով հոլովում է այն ծայրայեղ արտայայտութիւնները, որոնք յատուկ են 1847ի երիտասարդ Մարքսին։ Այդպէս, օրինակ, վերջինն ասել է ասէպ (և առաջին անգամը հէնց նոյն 1847 թուին, «Մանիֆեստի» մէջ), որ, իրաւ է, կապիտալիզմը զարհուրելի արատներ ունի և պէտք է տապալուի, բայց և ընդգծել է —հակառակ իր բուռն ատելութեան դէպի կապիտալիզմը —

*) Ձեռքիս տակ կայ միայն իտալ. թարգմանութիւնը, տես Critica Sociale, 1922, թ. 21

որ նա ժամանակաւորապէս անհրաժեշտ է, որ նա կատարել է քաղաքակրթիչ կարեւոր պաշտօն մարդկային պատմութեան մէջ։ Այս կէտն եւս մոռացութեան են տալիս Բուխարինները և խօսում են միայն կապիտալիզմի բացասական կողմերի մասին։

ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՀԱՒԱՏԱՄՔԸ*)

Յաւիտենական արժէքներ.— Բրիտանական և Ֆրանսական քաղաքակրթութեան նաւաճումները.— Habeas Corpus.— Մարդկութեան ազատամարտը.— Մեծ ցեղափոխութիւնը և մարդկային իրաւունքները.— Ժան Ժակ Ռուսսո և ազատութեան ձեւակերպումը.— Ռամկավարութեան վերելքը Արևմուտքում.— «Ռուսական Մեսիան».— Հակասները միացած.— «Ակիւթացիք»—Դարձ դէպի Ասիա. — Զէկա և Օխրանա.—

Հարկ է, սակայն, փոքր ինչ աւելի ծանծել ազատութեան և ռամկավարութեան գաղափարները, գէթ մի թռուցիկ պատկեր կատարելով պատմութեան և ընկերային փիլիսոփայութեան աշխարհում։

Համայնավարութիւնը **), որ կը յաւակնի համաշխարհային յեղաշրջումն առաջ բերելու, այժմէն արդէն կը յեղաշրջէ, տոկնուվրայ կ'ընէ քաղաքակրթութեան հին, դարաւոր արժէքները. ազատութիւն, հաւասարութիւն, անհատի ինքնօրինութիւն, ժողովրդական գերիշխանութիւն և այլն։

Քաղաքակրթութիւնը «բուրժուական է», «կապիտալիստական է», հետեւաբար այդ բոլոր գաղափարներն ալ բուրժուական են, ու-

*) Այս մէկ գլուխը, որ տպուած է «Հայրենիք» ամսագրի մէջ, կ'արտատպուի հոս գրեթէ նոյնութեամբ և արևմտեան բարբառով։ Մ. Վ.

**) Խօսքս միշտ նոր, բոլշեվիկեան համայնավարութեան մասին է. հինը (կոմմունիզմը) կը նայնանար ընկերվարութեան հետ։

բեմն անարժէք և մերժելի...

Մինչեւ օրս՝ անգամ ամենէն ծայրայեղ գաղափարներ դաւանող յեղափոխական մարդկութեան աչքում՝ ազատութիւնը յաւիտենական, բացարձակ արժէք մըն էր։ Չէ՞ որ մարդկային բովանդակ պատմութիւնը անդուլ կռիւ մըն է ընդդէմ բռնութեան և յանուն ազատութեան։

Յաւիտենական արժէք մը՝ առանց որոյ չկայ մարդկութիւն, չկան ազգեր — բառիս ճշմարիտ իմաստով—կան միայն խօսուն երկոտանիներու քիչ-շատ համերաշխ համախմբումներ։

Ֆրանսան անգամ ազգ մը չէր, նախ քան իր մեծ Յեղափոխութիւնը։ Այն ատեն էր, որ հին ու նոր աշխարհները կատաղաբար իրար զարնուեցան և Յեղափոխութեան գալարումներու մէջ դարբնուեցաւ նոր, արթնցած, ազգայնացած Ֆրանսայի տիեզերական հաւատամքը։

Գերագոյն արժէք մըն է և անհատի անձեռամխելիութեան մեծ սկզբունքը, որ հոյակապ նուաճումն է բրիտանական քաղաքակրթութեան։

Իրաւունք մըն է, որ կը կոչուի Habeas Corpus։ Բառացի ըսել է՝ ունեցիր մարմին մը։ Իսկ իմաստն այն է, որ մարդկային անձը անձեռնմխելի է։

Սովորոյթ մըն է, խոր արմատացած բրիտանական բարքերու մէջ։ Օրէնք մը՝ նուիրագործուած դարաւոր աւանդութեամբ մը։ Եւ որքա՜ն հին... Աւելի հին, քան Ֆրանսա-

կան Յեղափոխութիւնը, քան ամերիկեան Սահմանադրութիւնը։ Հափիրս կորփրս-ի օրէնքը վերջնականապէս հաստատուած է 1679-ին։ Անոր զօրութեամբ անհատ մը — ով ալ լինի, անգլիացի թէ օտար, ազնուական թէ պարզ գործաւոր— չի կարող ձերբակալուիլ ու բանտարկուիլ ոստիկանութեան ձեռքով, գործադիր իշխանութեան հրամանով, առանց դատական ատեանի արտօնութեան։

Ոստիկանութիւնը պարտաւոր է յանցաւոր կարծուածը անմիջապէս ներկայացնել դատական ձեռնհաս ատեանին, որը կը քննէ պատճառները և եթէ մարդը ձերբակալուած է ապօրինի ձեւով, սոսկ կասկածով մը, անմիջապէս ազատ կ՚արձակուի և աւելորդ տեղը չենթարկուիր նախնական բանտարկութեան տառապանքներուն։

Յայտնի է, թէ ինչ զզուելի պատուհաս մըն է այդ նախնական բանտարկութեան տաւորութիւնը, որ տարածուած է բոլոր ցամաքային երկիրներու մէջ և ստէպ ամբողջ տարիներով անմեղ մարդիկ կը փտին բանտերում, սպասելով իրենց դատավարութեան ու արդարացման։

Ոչ ոք կարող է՝ սոսկ քմահաճոյքով մարդ էակ մը, կին մը, խենթ համարուած մը փակել բանտի, կուսանոցի կամ յիմարանոցի մէջ, առանց նախապէս այդ անձը ատեանի առջեւ բերելու, անոր քննութեանը ենթարկելու։ Կամայական ձերբակալումներու և բանտարկումներու համար պատիժ կը սպառնայ յանցաւորին, ով ալ լինի ան, թէկուզ ոստիկա-

նութեան բարձրաստիճան պաշտօնեայ մը։

Նմանապէս Անգլիոյ դատական ատեանը չի թոյլ տար, որ օտարական մը, դիցուք ֆրանսացի մը, ձերբակալուի անգլիական հողին վրայ, Ֆրանսիոյ կառավարութեան պահանջումով։ Իսկ քաղաքական կոչուած «յանցաւորները», անիշխանականներ, դաւադիրներ, ամէն կարգի յեղափոխականներ, հալածական իրենց երկիրներու մէջ, դարերէ ի վեր ազատ ապաստան գտած են Մեծն Բրիտանիոյ հիւրընկալ հողի վրայ, — աւելի հիւրընկալ, անտարակոյս, քան թէ ոեւէ այլ երկիր։ Ցիշենք միայն ռուս, մաջառ, գերման, իտալացի, ֆրանսացի շարք մը յեղափոխականները—Հերցեն, Բակունին, Կոչուտ, Մարքս, Էնգելս, Մաձինի, Վիքտոր Հիւգօ, Ռոշֆոր, Լոնդէ և այլն—որոնք հալածուած իրենց հայրենիքում՝ ապրել ու գործել են երկար տարիներ ազատ Անգլիոյ մէջ։

Մարդ անհատի ազատութիւնը հոն օրէնքով երաշխաւորուած է. դատական իշխանութիւնը յարեւմիշտ կը հսկէ գործադիր իշխանութեան վրայ, որպէսզի չգործուին չարաշահումներ, կամայականութիւններ՝ ի վնաս մարդկանց, լինին անգլիացի թէ օտար *)։

Մարդկային անձը գերագոյն արժէք մըն է, սուրբ ու անքննարարելի, իսկ այդ սկզբունքը ամէն ճշմարիտ քաղաքակրթութեան հիմնաքարն է։

Այդպէս է բուրժուա-կապիտալիստ Անգլիոյ մէջ— դարերէ ի վեր։ Համեմատեցէք, վայրկեան մը «պրոլետար» ու «կոմմունիստ» սովէտական Ռուսաստանի կացութեան հետ, ուր մարդկային անձնաւորութիւնը զուրկ է ամէն արժէքէ — որպէս նախնական վայրենի հորդաներու մէջ—ուր ամենապատուաւոր քաղաքացիներու ետեւէն օրն ի բուն օրական շներու պէս կը սլքտին պաշտօնական ու անպաշտօն լրտեսները, ուր ամէն օր կը ձերբակալեն ու կը բանտարկեն, կ'աքսորեն ու կը սպաննեն «վարչական կարգով», լոկ կասկածով կամ մատնութեամբ, ուր ամէն վայրկեան մարդկային պատիւն ու արժանիքը կը տրորուի կոպիտ ու գռեհիկ ոտիկաններու ոտքերուն տակ... և այն՝ Յեղափոխութենէն ութ տարի յետոյ...

Հակապատկերը կատարեալ է։

Զենք պատմեր այն դարաւոր և խօլական պայքարները, զոր առաջադէմ մարդկութիւնը մղեց յանուն կրօնի ու խղճի ազատութեան, յանուն ազատ, վերլուծող, քննադատող մտքի... Պայքարներ՝ ընդդէմ պապական հաւատաքննութեան, որ կը բռնավառեն ողջ Միջնադարը մարտիրոսութեան խարոյկներով, Հաւսի,

*) Բացառիկ, փոթորկալի ժամանակներում միայն — օր. 1794–1801 թուականներուն — պետական ընդհանուր ազատութեան նկատումներով Հաբեաս Կորպուսի օրէնքը դադարեցուած է ժամանակաւորապէս Պարլամենտի կարգադրութեամբ։ Բայց երբ կացութիւնը վերստին խաղաղուել է, դատական ատեանը յետին հաշուով քննել է իրեն ներկայացուած այլեւայլ դատեր և եթէ գործուել են անիրաւութիւններ այս կամ այն անհատի դէմ, հատուցումն է պահանջել յանցաւորներէն ի նպաստ զոհերու։

Ջորդանո Բրունոի, Լթիէն Դոլէի, Սավանարոլայի և հազարաւոր ուրիշներու աղեխարշ նահատակութեան տեսարաններով... Պայքարներ՝ որոնք վերջացան գիտութեան յաղթանակով ընդդէմ խաւարի ու անպաշտութեան, ազատ մտքի յաղթանակով ընդդէմ մոլեռանդ ու դոգմապաշտ բռնակալութեան։

Մարդկային արեամբ տոգորուած այդ դաժան ժամանակները այլեւս չպիտի վերադառնան, գէթ արեւմտեան Եւրոպայի մէջ, որքան ալ ճիգ թափեն ռուս-ասիական կոմունիզմի ու դիքտատուրայի քուրմերը... Անոնք դեռ կ'ապրին մի առ ժամանակ երկրագնդի 1/6 մասը կազմող լայնածաւալ կայսրութեան մէջ, ուր զանգուածներու քաղաքացիական հաստատութեան մակարդակը անհունապէս ցած է արեւմտեանէն, ուր այդ զանգուածներէն դեռ կը բուրայ ազէտ ու դարշահոտ Միջնադարը։

Ահա և Դէմօկրատիայի աշխարհաշառաչ յաղթանակը — 1789-ին։

Արեւմտեան Եւրոպան գրկած է արդէն խղճի ազատութեան աւետարանը. Անգլիան ատոր հետ միասին հռչակած էր Հաբեաս Կորպուսը, մարդկային անձի անբռնաբարելիութեան մեծ սկզբունքը. Անգլիան կատարած էր և իր քաղաքական յեղաշրջումը 1688-ին, պարլամենտարիզմի կարգերու յաղթանակով։ Ամերիկան, Միացեալ Նահանգները, ապստամբուելով, զատուեր էին Անգլիայէն և հաստատեր իրենց սեփական Սահմանադրութիւնը, ամէրիկեան չունչով տոգորուած (1776 թ.)։

Ֆրանսիային էր վիճակուած դէմօկրատիայի սկզբունքները ազդարարելու ողջ աշխարհին իրենց բովանդակ ծաւալով և ահեղագոռ օրոտումներով... Այդ եղաւ Մեծ Յեղափոխութեամբ։

Ֆրանսիոյ մէջ էր, որ զարգացեր ու հասեր էին գագաթնակէտին՝ բացարձակ միապետութիւնը, կղերա-ազնուական ճնշող կարգերը և բարքերու ապականութիւնը վերին խաւերու մէջ։ Հոն էր, որ ընկերաբաններու, փիլիսոփաներու փայլուն շարան մը, հանճարեղ, պերճախօս, աշխարհահռչակ — Մոնտեսկիօ, Վոլտէր, Ռուսսօ, Դիդրօ, Կոնդորսէ, Տիւրգօ, Դալամբեր — ստեղծեր էին ահագին գրականութիւն մը, որ անխնայ կը քննադատէր ու կը ճաղկէր բռնապետական սիստեմները և կ'ուրուագծէր գալոց ժողովրդապետական իրաւակարգը... Գրականութիւն մը՝ որ Ֆրանսիական ճկուն, դիւթական լեզուին թեւերուն վրայ կ'արշաւէր նաեւ հայրենիքէն դուրս, դէպի բոլոր հորիզոնները...

Ֆրանսիոյ մէջ էր, որ ամենէն առատութեամբ մթերուած էին ամէն տեսակ պայթուցիկ նիւթերը. հոն էր թերեւս և ցեղային ամենէն ըմբոստ խառնուածքը, ամենէն դիւրաբորբոք արիւնը... Ահա թէ ինչո՛ւ հոն էր, որ ժայթքեց ամենէն աւելի բուռն կատաղութեամբ Յեղափոխութեան և Ազատութեան հրաբուխը, որ զոռ ու սթափեցուցիչ արձագանգներն ունեցաւ աշխարհի բոլոր ծայրերում։

Կարդացէ՛ք Մարդկային Իրաւունքներու Մանիֆեստը, որ գրուեցաւ իբրեւ պատուան-

դան յեղափոխական Ֆրանսիոյ առաջին Սահմանադրութեան և որ այնուհետեւ դարձաւ հիմը բոլոր ճշմարիտ, մարդկայնատիպ ու ազատաշունչ Սահմանադրութիւններուն։

Հարիւրաւոր պատգամաւորներ, հաւաքուած Պարիզի մէջ երկրի բոլոր ծայրերէն (1789 թ.), Բաստիլի անկումէն յետոյ, կը յայտարարէին.

«Ֆրանսիական ժողովրդի ներկայացուցիչները՝ նկատելով՝ որ տգիտութիւնը, մարդկային իրաւունքներու մոռացումը կամ արհամարհումը միակ պատճառն են հանրային դժբախտութեանց և կառավարութիւններու բարոյական անկումի, որոշեր են հանդիսաւոր ծանուցումի մը մէջ ցուցադրել մարդու բնական, սուրբ ու անկապտելի իրաւունքները...

1. «Մարդիկ կը ծնուին ու կը մնան ազատ և իրաւահաւասար։ Հասարակական տարբերումները կարող են հիմնուիլ միմիայն հանրային օգտակարութեան վրայ։ (Ծագումով չէ որ կը տարբերուին մարդիկ, այլ միայն բնաձին ձիրքերով, տաղանդով ու առաքինութիւններով. Մ. Վ.)։

2. «Ամէն քաղաքական կազմակերպութեան նպատակն է՝ անխախտ պահել մարդու բնական, անկողոպտելի իրաւունքները։

«Այդ իրաւունքներն են՝ ազատութիւն, սեփականութիւն, ապահովութիւն և դիմադրութիւն ճնշումներուն դէմ։

3. Վերապետութեան ամէն սկզբունք կը գտնուի էապէս ազգի մէջ։

4. Ազատ լինիլ կը նշանակէ՝ ընել այն

ամէնը, ինչ որ չի վնասեր ուրիշներուն։

5. Օրէնքը արտայայտութիւնն է ընդհանրական կամքի։

(Ազատութիւնը սահման մ'ունի, իւրաքանչիւր անհատ պէտք է յարգէ ուրիշներու ազատութիւնը... Այլ խօսքով իւրաքանչիւրը պէտք է հնազանդուի սահմանուած օրէնքներուն. իսկ օրէնքները ընդհանուր կամքի թարգմանն արտայայտութիւն են, ուրիշ խօսքով, անոնց մշակումին կը մասնակցի ամէն մի քաղաքացի, ուղղակի կամ անուղղակի ձեւով մը։ Ուրեմն, վերոյիշեալ հնազանդութեան մէջ ոչինչ կայ ճնշող ու բռնաբարող. քաղաքացիները կը հնազանդին յօժարակամ, իրենց իսկ մշակած օրէնքներուն... Այս է իմաստը ֆրանսացի մեծ յեղափոխականներու յայտարարութեան։ Մ. Վ.)

Ապա կարդացէք հետեւեալ յօդուածները.

10. Ոչ ոքի պէտք է անհանգիստ ընել իր դաւանած կարծիքներու համար, անգամ կրօնական կարծիքներու. միայն թէ անոնց հրապարակային արտայայտութիւնները չխռովեն օրէնքով սահմանուած հանրային կարգ ու սարքը։

11. Գաղափարներու և կարծիքներու ազատ հաղորդակցութիւնը մարդու ամենաթանկագին իրաւունքներէն մինն է։ Հետեւաբար, իւրաքանչիւր քաղաքացի կարող է ազատօրէն խօսիլ, գրել, տպագրել, — հարկաւ միանգամայն պատասխանատու լինելով օրէնքէն որոշուած պարագաներու մէջ, երբ անհատը կը չարաշահէ այդ ազատութիւնը։

12. Այն հասարակութիւնները, որոնց մէջ չկայ իրաւունքներու հաստատ երաշխաւորութիւն մը և ուր իշխանութիւնները *) չեն զատուած իրարմէ, չունին Սահմանադրութիւն մը։

Կարդացէք այս բոլորը և համեմատեցէք «կոմունիստական» Ռուսաստանի Սահմանադրութեան հետ, անոր գործնական կիրառումներուն հետ...

«Մարդկային Իրաւունքներու Մանուցման» անմահ հեղինակները ասկէ 137 տարի առաջ հանդիսաւոր ու պերճախօս բանաձեւերով դատապարտած են և անարգանքի սիւնին գամած բոլշեւիկեան Սահմանադրութեան ծաղրանկարը իր այլանդակ, հակամարդկային կերպարանքով, իր անվերջ հալածանքներով ու սիստեմատիկ բռնութիւններով՝ ընդդէմ անհատի ազատութեան, ապահովութեան, կարծիքներու, դաւանանքներու և այլ տարրական իրաւունքներու...

Մարդկային պատմութեան մէջ ոսկէ տառերով է յաւերժացած այն թուականը—1789—երբ Ֆրանսիոյ յեղափոխական Վեհաժողովը կը ծանուցանէր աշխարհին մարդու եւ քաղաքացու անձեռնմխելի իրաւունքները։

Հրդեհ մըն էր, որ կը բռնկէր Պարիզի մէջ—դարերու ընթացքին կուտակուած պայթուցիկ նիւթերէն—հրդեհ մը, որ կուգար լափելու բոլոր չղթաները, խորտակելու բոլոր դօգմերը։ Նոր կրօն մըն էր, որ կը ծանուցէին Ֆրանսիացի յեղափոխականները հանդէպ ամ-

*) Օրէնսդիր, գործադիր, դատական իշխանութիւններ։ Մ. Վ.

բողջ չղթայակիր ու տառապող մարդկութեան, —ճշգրիտ կրօնական խանդավառութեամբ մը, որպէս անջնջելի, յաւիտենական արժէք մը։

Եւ այդ կրօնն ունեցաւ իր առաքեալները, հերոսներն ու նահատակները — իր միլիոնաւոր հերոսներն ու նահատակները...

* * *

Մրրկաշունչ հանճար մըն էր ազատութեան հաւատամքի առաջին մեծ բանաձեւողը, թէորետիկոսը — Ժան Ժակ Ռուսսո։ Անոր մէջ է, որ կենտրոնացան ժամանակի ցիրցան, տարտամ բաղձանքները ազատութեան ու մարդկայնութեան, որ նա համադրեց ու յայտարարեց հզօր, խօլական կրքով մը։

Վերացական ակզբունքներ չէին, որ դուրս կը վիժէին անոր եռուն ուղեղէն։ Նա ինքը ազատ զաւակն էր փոքրիկ, ազատ հանրապետութեան—Հելվեցիայի—որ խորհրդանիշել էր Վիլհելմ Թէլի լեգենդական անձին մէջ ամենէն վեհ, դիւցազնական պայքարը բռնութեան դէմ, հինգ տարուց ի վեր թօթափել էր օտար լուծը և կ'ապրէր համեմատաբար մարդավայել, ռամկավարական կարգ ու տարքով։

Եւ Ժան Ժակին վիճակուած էր մեծագոյն փոդահարը լինելու աշխարհի մեծագոյն Յեղափոխութեան։ 1789-ի փոթորկէն առաջ նա հրապարակ նետեց իր ամենէն զգայացունց գրուածքը.

«Ընկերային Դաշինք»։

Եւ առաջին տողերուն մէջ կ'ազդարարէր.

— «Մարդս ծնուել է ազատ, բայց ամէն տեղ շղթաներու մէջ է»...

Դատարկ հնչիւն մը չէ այդ ազատութիւնը։ Ժան Ժակ իրաւամբ կ'ըսէ, որ ան մարդկային բնութեան անհրաժեշտագոյն յատկանիշ է, առանց որոյ մարդը մարդ չէ։ Եւ նա կը գրէ։

— Հրաժարիլ ազատութենէ, ըսել է՝ հրաժարիլ մարդկային ամէն յատկութենէ, իրաւունքէ ու պարտաւորութենէ։ Մարդս բարոյազերծ էակ մը կը դառնայ, երբ իր կամքը կը զրկէ ազատութենէ։

Ի հարկէ, մարդիկ և ժողովուրդները ստէպ գիտակցաբար կ'ենթարկեն զիրենք բռնութեան, կը խոնարհուին ոյժի առջեւ։ Բայց դա լոկ հարկադրանք մըն է, անհրաժեշտութիւն մը և ոչ օժտարակամ գործողութիւն մը։ Դուք կը խոնարհուիք աւազակի մը առջեւ, որ անտառի մութ անկիւնում կը յարձակի և ատրճանակի սպառնալիքով կը պահանջէ ձեր քսակը։ Ատրճանակը ոյժ մըն է անոր ձեռքին, ինչպէս որ սուրները ոյժ մըն են օտար, բռնագրաւող զօրքի ձեռքին։ Բայց այդ ոյժը չի ստեղծեր իրաւունք, բռնութիւնը չի ստեղծեր իրաւունք։ Կառավարել հասարակութիւն մը և բռնի ոյժով հպատակեցնել ժողովուրդ մը — միանգամայն տարբեր բաներ են։

«Քանի դեռ ժողովուրդ մը ստիպուած է հնազանդուելու և կը հնազանդուի — լաւ կ'ընէ։ Հէնց որ նա ի վիճակի է լաւ մը թօթափելու և կը թօթափէ — աւելի լաւ կ'ընէ»։

Բռնակալութիւնն ալ իր տեսաբան իրընկարկուներն ունէր, որոնցմէ մէկը հռչակաւոր Գրոցիուս, կ'ըսէր.

— Աղէկ, բայց իրենք ժողովուրդները յաղթողի ձեռքն ընկնելով, կը գերադասեն ծախել իրենց ազատութիւնը՝ գնելու համար իրենց կեանքը։ Չէ՞ որ բռնաւորը կ'ապահովէ իր հպատակներու ֆիզիքական գոյութիւնն ու հանգիստը։

Այդպիսիներուն Ժան Ժակ կը պատասխանէ.

— Ի՞նչ կը շահին սակայն դժբախտ հպատակները, ենթարկուած տէրերու քմահաճոյքներուն, անյագ շահագործումներուն և անդուլ ճնշումներուն... Ի՞նչ կը շահին, երբ անոնց հանգստութիւնն իսկ իրենց թշուառութիւններէն մինն է։ Հանգիստ կեանք կ'ապրուի նաեւ բանտերու մէջ... Իրօք յաղթական բռնակալը մեծ ողորմութիւն մը չըներ իր զոհերուն. փոխանակ սպաննելու զանոնք ապարդիւն ձեւով, ան կը սպաննէ օգտակար եղանակով մը (այսինքն, կը պահէ զանոնք որպէս ստրուկներ և կը շահագործէ անոնց աշխատանքը)։

Ստրուկը չի կարող լինել իրաւատէր քաղաքացի մը, վասն զի ստրուկ և իրաւունք բառերը արդէն իսկ զիրար հակասող ու ժխտող են... Ստրուկը ոչինչի տէր է, ան մարդ չէ։

* * *

Ժան Ժակ Ռուսսոյի այս դասական ան-

ման գրուածքը վերընթեռնելիս՝ ամէն վայրկեան կը մտաբերեմ մեր երկրի վիճակը Խորհրդային վարչաձեւի տակ։ Նախընթաց տողերը կարծես գրուած լինին հայ ժողովուրդի տարամերժ ու ողբերգական պարագայի մասին։

Չէ՞ որ Մոսկուայի ու Անդրկովկասի այժմեան տէրերն ալ կը սիրեն հպարտուծեամբ վեր հանել այն հանգամանքը, որ սովէտական ռէժիմը կ'ապահովէ հայ ժողովուրդի ֆիզիքական ապահովութիւնը, որ առանց ռուս դրօշի ու բանակի, այդ ժողովուրդը կարող է ենթարկուիլ դրացի պետութեան յարձակումներուն, կոտորուել և այլն։

Հպարտ են, այո, սոցիալիզմի և կոմմունիզմի անունով ճառող զուլուսները, որ այդ գերագոյն ոգորմութիւնը կ'ընեն իրենց իսկ սադրանքով նուաճուած ու յօշոտուած հայութեան մնացորդներուն և յոխորտանքով կը բացագանչեն.

— Ապա թո՞ղ համարձակուին դաշնակները պահանջել, որ ռուս զօրքը ձգէ հեռանայ Հայաստանէն, որ Հայաստանը դուրս գայ Խորհրդային Միութենէն... Թո՞ղ քաջութիւն ունենան պահանջելու այդ...

Ձեզ ալ գիտակցիր, որ այդ յիմարական տրամաբանութեամբ իրենք իսկ կը վարկաբեկեն և կ'անարգեն իրենց ռէժիմը։ Զինգիզխանն ալ կուտար հովանաւորութիւն ու ապահովութիւն իր ստորադրեալ հօրդաներուն՝ ուրիշ գիշատիչ հզօրներու դէմ։ «Սոցիալիստ» վարիչներէն այլ բան կը պահանջուէր... Անոնք կը պատճառաբանեն, որպէս Գրօցիուս—

ծանօթ, հինաւուրց իրաւաբան մը —, որպէս բռնապետութեան այլ ռահվիրաներ, որոնք կ'ըսէին իրենց լուծին ենթարկուած ժողովուրդներուն.

— Մենք կ'ապահովենք ձեր ֆիզիքական գոյութիւնը դրացիներու դէմ, բայց պայմանով՝ որ դուք անմոռնչ և անպայման հնազանդութիւն ցուցնէք մեզի հանդէպ։

Եւ ի՞նչ՝ այդպէս չէ Խորհրդային Հայաստանի պարագան։ Ո՞վ է այն հայը, որ ազնուօրէն կրնայ յայտարարել, թէ Հայաստանի հայ ժողովուրդը կ'ապրի քիչ-շատ մարդավայել, քաղաքացիական կեանքով, թէ նա կը վայելէ ոեւէ ազատութիւն, ոեւէ մարդկային—եւ ոչ գրաստային—իրաւունք...

Մեր նոր տէրերը, թիւրքի հետ դաշնակցելով, յօշոտեցին մեր հողն ու ազատութիւնը, դարձուցին Հայաստանը թշուառ նախարտուն մը և այժմ կը յոխորտան «դաշնակներու» և բոլոր հակաթոլշէվիկներու, ամբողջ հայ ժողովրդի հասցէին.

— Չհամարձակուիք շարժիլ, հնազանդուեցէք Սովէտներուն, զոհ եղէք անոնց ոգորմած հովանաւորութենէն, զոհ եղէք, որ չէք կոտորուիր, համակերպեցէք, անձայն, անշըշուկ, որպէս կատարեալ ստրուկներ. և ո՛չ մի բողոք, ո՛չ մի քննադատութիւն, ո՛չ մի ազատ նախաձեռնութիւն — անհատական կամ ընկերային—ամէն բան մեզի ձգեցէք, ամէն բան մենք կը տնօրինենք, խումբ մը ամենագէտ իմաստուններ, Ստալին, Բուխարին, Զինէրին, Լուկային...

Գրոցիուս կ'ապրէր 16-րդ դարու մէջ։ Բոլշէվիկները կ'ապրին 20-րդ դարում և կ'երդնուն Կարլ Մարքսի անունով։

Հայ ժողովուրդը մեծագոյն չարիքէն խուսափելու համար կը փարի նուազագոյն չարիքի մը փխրուն հովանիին *) ... Սովէտական Միութիւնը այդ նուազագոյն չարիքն է... Եւ ատով ալ գոհ են ու կը պարծենան թշուառ նուաճողները...

Անոնց կը պատասխանենք Ժան Ժակի խօսքերով.

— Մեծ բան մը չեն շահեր դժբախտ հպատակները, ենթարկուած տէրերու քմահաճոյքներուն, շահագործումին ու ճնշումներուն... Հանգստութիւնն իսկ իրենց թշուառութիւններէն մինն է. հանգիստ կեանք կ'ապրուի նաեւ բանտերու մէջ... Սարուկը ոչինչի տէր է... Առանց ազատութեան մարդը մարդ չէ...

Ազատ մարդը ունի ինքնորոշման իրաւունք, կ'ենթարկուի իր բանականութեան թելադրած օրէնքներուն։ Ինքնորոշող, ինքնօրէն կամք —ահա էական ատորոգելին ազատ մարդու — աւելացնենք—ազատ ժողովրդի։

Այդպիսի մարդ մը (և ժողովուրդ մը) բնականաբար պիտի յարգէ ուրիշ մարդոց (և ժողովուրդներու) ինքնորոշումն ու ազատութիւնը և ատոր համար՝ պէտք է որ գտնուի քաղաքակրթական զարգացման յայտնի աստիճանի մը վրայ, ունենայ պարտքի և իրաւունքի հասկացողութիւն, չտարուի ընազդով, անասնական ախորժակներով, ստնձարձակ եսամոլութեամբ, որոնք յատուկ են նախաքաղաքակրթական կամ զուտ բնական կենցաղաձեւին (Etat de nature)։

Ընկերային լաւագոյն վիճակն այն կը լինէր, ըստ Ռուսսոի, ուր լիակատար ներդաշնակութիւն տիրէր երկու առերեւոյթս հակընդդէմ սկզբունքներու միջեւ—անհատականութեան ու հաւաքականութեան—ուր իւրաքանչիւրը իր անձն ու կարողութիւնը կը տրամադրէր հասարակութեան ընդհանուր կամքն արտայայտող գերագոյն իշխանութեան և ուր սակայն իւրաքանչիւր անդամ անխախտ կը պահէր իր անհատականութիւնը և հովանաւորութիւն ու պաշտպանութիւն կը գտնէր գերագոյն մարմնի մօտ։

«Մէկը բոլորի, բոլորը մէկի համար»—այս կարգախօսը շատոնց արդէն—դարերէ ի վեր—հռչակուած է Ռուսսոի ծննդավայր Հելվեցիայի մէջ, որ այսօր ալ աշխարհի ամենէն ազատ ու ռամկավար հանրապետութիւնն է։

Գերագոյն իշխանութիւնը—պարլամենտ, կառավարութիւն—պէտք է ներկայացնէ հանրութեան կամքը։ Հրատարակուած օրէնքները պէտք է բխին այդ կամքէն — այսինքն ժողովրդական ներկայացուցչութեան կամքէն—այլապէս օրէնք չեն անուանք, այլ պարզ դեկրէտներ։

Հնազանդուելով երկրի օրէնքներուն, իւրաքանչիւր անհատ-քաղաքացի իրաւք կը հնա-

*) Փխրուն — քանի որ մէջազգային բարդութիւններու պահուն՝ այդ հովանին ալ պատասխան է մէկէն ի մէկ չքանալու և լքելու անպաշտպան հայութիւնը...

զանգուի ինքն իրեն, քանի որ ինքն ալ կը մասնակցի այդ օրէնքներու մշակումին։

Ընտրուած երեսփոխանները, պարլամենտի անդամները պէտք է հարազատ թարգման լինին ժողովրդական կամքի։ Որպէս զի զեղծումներ չլինին, որպէս զի երեսփոխանական թեկնածուները չտարուին իրենց անձնական կամ թայֆական շահերով և չխաբեն, չմոլորեցնեն ընտրող ժողովուրդը,—անհրաժեշտ է որ այդ վերջինը լինի քաղաքականապէս քիչ-շատ հասուն...

Ուշագրաւ է, որ, խօսելով տնաս, յետամնաց ժողովուրդներու մասին, Ժան Ժակը — դեռ 18-րդ դարու մէջ—խիստ յոռետես ակնարկներ կ'ընէ ռուս ժողովրդի վրայ, ըսելով, որ ռուսութիւնը երբեք չպիտի դառնայ քաղաքակրթապէս հասունցած, ազատ, իրաւական հասարակութիւն մը... Անդրադառնալով Պետրոսեան ռէֆորմներու վրայ, «Ընկերային Դայինքի» հեղինակը կ'ըսէ թէ Պետրոսն ալ սոսկ ընդօրինակող հանճար մըն էր, ոչ ստեղծագործող.

«Նա տեսաւ, որ իր ժողովուրդը քարբարոս է, բայց չնշմարեց, որ ան հասունցած չէր քաղաքակիրթ իրաւակարգի մը համար»։

Միանգամայն ճիշտ է, որ Պետրոսը սոսկ մեքենական ընդօրինակող մըն էր արեւմտեան բարքերու, սովորոյթներու, ինչպէս և թիւրքերու Ղազի Մուսթաֆան։ Եւ եթէ Ռուսսօն հրաշքով մը մէկուկէս դար աւելի ապրէր ու տեսնար Պետրոս Մեծի հեռաւոր ժառանգը — Ուլիանով Լէնին — իր «չինարար» աշխատանքին

վրայ, անտարակոյս, աւելի եւս պիտի ամրապնդուէր իր յոռետես գաղափարին մէջ հանդէպ ռուսութեան։ Պետրոսի պէս Լէնինն ալ ուզեց մէկէն ի մէկ, կացնի բիրտ հարուածներով յեղաշրջել ռուսական կեանքը, և հիմնայատակ կործանեց այն...

***

Ռուսսոի գաղափարները, աստիճանաբար սրբագրուելով իր վրիպումներէն—վրիպումներ՝ որոնք անխուսափելի հետեւանք էին ընկերային և քաղաքական գիտութիւններու այն ժամանակուայ յետամնաց վիճակի — հետզհետէ արմատացան արեւմտեան կեանքում, չնորհիւ գլխաւորապէս Ֆրանսիական շարք մը յեղափոխութիւններուն (1789-1830-1848-1870)։ Ազատութեան հետ աճեց հետզհետէ ընկերային հաւասարութիւնը, առանց որոյ, կ'ըսէր Ռուսսօ, ազատութիւնը աներեւակայելի է։ Հաւասարութիւն՝ առ այժմ օրէնքի առջեւ, հաւասարութիւն՝ քուէատուփի առջեւ, պարլամենտական, քաղաքապետական, համայնական ընտրութիւններու առջեւ։

1848-ին փետրուարեան ապստամբութիւնը Պարիզում տապալեց բոլոր պառնէշները ժողովրդի և իր ընտրելիներու միջեւ, վերացրեց բոլոր ցէնզական սիսթեմները և քաղաքական իշխանութիւնն անցաւ քաղաքացիներու զանգուածին։ Հաստատուեցաւ Ընդհանուր Զայնատուութիւնը կամ Ընդհանուր Ընտրողական Ի-

բաւունքը, որու զօրութեամբ ամենայնեին, ամենախոնարհ քաղաքացիները, ամենէն հզօրներու, հարուստներու հետ, հաւասար իրաւունքով կը մասնակցին օրէնսդրական և այլ ընտրութիւններուն։

Այդ մեծ սկզբունքը վերջնականապէս յաղթանակեց Ֆրանսիայի մէջ 1870 թուականին, երբ հաստատուեցաւ Երրորդ Հանրապետութիւնը։ Նոյն սկզբունքը կամաց-կամաց մտաւ դրացի պետութեանց բարքերու մէջ։

Հարկաւ, տակաւին պակասաւոր է այդ ընտրողական սիսթեմը, բայց հետզհետէ կը կատարելագործուի. հետզհետէ կանայք եւս— մարդկութեան կէսը, որ դուրս նետուած էր ընտրողներու, քաղաքացիներու ցուցակէն — կը ստանան ընտրողական իրաւունք և իրենց բաժին մասնակցութիւնը կ'ունենան երկրի ճակատագրին ղեկավարութեան մէջ։

Մարդկային քաղաքակրթութեան ամենահոյակապ տեսարաններէն մինն է, երբ Ֆրանսիայի, Անգլիայի, Ամերիկայի կամ Գերմանիայի մէջ կը հասնի քաղաքական ընտրութիւններու մեծ օրը, երբ ահագին երկիրը կը դառնայ ազատ, լայնարձակ կրկէս մը, ռազմադաշտ մը, ուր զէնքերու շչիւնի տեղ՝ կը տիրէ բուռն, անարիւն բանակռիւը, ուր գընդակներու տեղ՝ ժողովուրդը կը տեղայ իր քուէներուն տարափը—իր գերագոյն զէնքը — եւ երբ քուէներու մեծամասնութիւնը շահելով կը տարուէ ահաւոր հակառակորդ մը, կուսակցութիւն մը և իր ուղած մարդկանց կը ճամբէ դէպի պարլամենտ, նոր ուղղութիւն ու ոգի

տալով երկրի ղեկավարութեանը։

Այդ խաղաղական պայքարները կը կատարուին ազատ խօսքի ու մամուլի, ազատ գումարումի միջոցով, որոնցմով կարծիքներ ու տրամադրութիւններ կը ստեղծուին և ժողովուրդը, կուսակցութիւնները, առանց ոեւէ ճնշումի, իրենց անբռնադատ մտքի ու խղճի թելադրանքով, կը նետեն իրենց քուէները տուփի մէջ և կը յաղթեն կամ կը յաղթուին...

Ասոնք են ահա արեւմտեան քաղաքակրթութեան նուաճումները, այստեղ է ժողովրդապետութեան կամ ռամկավարութեան մեծ սկզբունքը, որ այսօր, անշուշտ, դեռ թերի է, չիրագործուած իր բովանդակ ծաւալով—քանի որ կայ տնտեսական ահաւոր լուծը, նիւթական բարիքներու խորունկ անհաւասարութիւնը, չքաւորութեան դաժան պատուհասը — բայց որ պիտի աճի հետզհետէ և ի վերջոյ, նոյն ազատ հաստատութիւններու միջոցով պիտի իրագործէ նաեւ այն տնտեսական հաւասարութիւնը մարդկանց միջեւ, առանց որոյ մարդկութիւնը երբեք չպիտի գտնէ իր հաւասարակշիռը...

Դանդաղ կ'ընթանայ ընկերային յառաջադիմութեան անիւը, բայց այն, ինչ որ արեւմտեան ազգերը վաստակեր են ռամկավարութեան և ազատութեան ճամբու վրայ՝ դարերու անդուլ ու արիւնոտ կռիւներու մէջ — վիթխարի բան մըն է...

ՌՈՒՍԱԿԱՆ ՄԵՍՍԻԱՆ...

Եւ ահա համաշխարհային պատմութեան բեմ կ'ելնեն ռուս կոմմունիստները և կը յայտարարեն.

— Դատա՞ռկ բաներ են այդ բոլոր նուաճումները—ազատութիւն, ռամկավարութիւն, ընդհանուր ձայնատուութիւն, ազատ խօսքումամուլ — որոնց համար արեւմտեան ժողովուրդները կորանցուցել են իրենց թանկագին ժամանակ... Ցամենայն դէպս, այդ բոլորը լաւ էր բուրժուազիայի շրջանի համար, իսկ այսօր, յաղթական պրոլետարիատի օրերում, անոնք աւելորդ բուրժուական նախապաշարումներ են...

Համաշխարհային պատմութեան բեմ կուգայ արեւելեան ստէպներէն, սիբիրեան տունդրաներէն Մեսսիա մը, որ խիզախ, ինքնավստահ կը յայտարարէ Արեւմուտքին.

— Քո դրոշը հինցած ու մաշած է արդէն, քո դերը լմնցած, այժմ խօսքը իմն է...

Ռուսները հինուց ի վեր ունին իրենց յատուկ միսթիզմը, առաքելութեան գիտակցութիւնը։

Դեռ անցեալ դարու քառասնական թուականներուն բուռն վէճ մը կար ռուս մտաւորականութեան երկու մեծ հոսանքներու միջև. մէկը կողմնակից էր արեւմտեան քաղաքակրթութեան և կ'ուզէր անոր ներմուծումը Ռուսաստանի մէջ։ Միւսը կը քարոզէր՝ հրաժարուիլ Արեւմուտքէն—որու ազդեցութիւնն ը

ը վնասակար կը դիտուէր հայրենիքի համար—և կ'ըսէր, որ Ռուսաստանը իր ուրոյն համքան ունի համաշխարհային էւոլիւսիոնի մէջ, իր ինքնատիպ մշակոյթը, որ և պէտք է զարգացնէ, առանց ընդօրինակելու արեւմտեան ազգերուն։

Դա սլաւոնաֆիլ*) պահպանողական հոսանքն էր, որու պարագլուխը, Ակսակով, միրահարուած ռուս-ասիական բարքերու վրայ, մոռցած անոնց բռնապետական, հակայառաջադիմական էութիւնը, կը գրէր.

— Արեւմտեան պետականութեան հիմքը կը կազմեն բռնութիւնը, սարկութիւնը և առեւլութիւնը. ռուսականի հիմքն են՝ սիրայօժար համաձայնութիւն, ազատութիւն և խաղաղութիւն...

Բայց միմիայն պահպանողականներու մէջ չէին սլաւոնամոլները։ Մենք կը հանդիպինք այդպիսիներուն անցեալ դարու ռուս կոմմունիստներու շարքերուն մէջ ալ։ Տկաչեով, Բակունին և այլն։ Ոմանք կոմմունիստ ընկերվարական, ուրիշներ՝ կոմմունիստ - անիշխանական։

Ատոնց համոզումով՝ Ռուսաստանը պէտք չունէր դասեր առնելու եւրոպական ազգերէն, ընդհակառակը. նա ինքը դաս պիտի տար Եւրոպային... Ռուսութիւնը ունէր իր «միրը», իր նախնական համայնական կարգերը—որոնք դիմադրեր են ժամանակի տարրալուծող հոսանքներուն—և այդ պատճառով ռուս բազմա-

*) Սլաւոնամոլ։

միլեոն գիւղացիութիւնը «պատրաստ է» այժմէն իսկ իրականացնելու կոմմունիստական, համայնավար իրաւակարգը և բնաւ պէտք չունի անցնելու կապիտալիզմի, դրամատիրական կարգերու այն բոլոր ցաւոտ շրջանները, որ անցել են ու կ'անցնին տակաւին արեւմտեան ազգերը... Ռուսաստանը կրնայ հրաշակայի ոստիւնով մը մէկէը ի մէկ ցատկել կոմմունիզմի և հաւասարութեան դրախտը...

Այսպէս կը խորհէին այդ չնաչխարհիկ ընկերվարականները, որ Լէնինի հարազատ գաղափարական հայրերն են։

Եւ ամենէն հարազատը—Բակունին։ Հրաշակաւոր ռուս անիշխանականը՝ որ մեծ դեր խաղաց անցեալ դարու 60-ական ու 70-ական թուականներուն այն բոլոր աշխատաւորական շարժումներուն մէջ, որոնք տեղի ունեցան Եւրոպայի լատին երկիրներու մէջ, գլխաւորապէս Իտալիայում և Սպանիայում, խոր հաւատ մը ունէր իր հարազատ ռուս ազգի առանձնայատուկ միսիոնի վրայ, այն քարացած, նահապետական համայնքի վրայ, որը կը յարատեւէր ցարերու երկրին մէջ, որ եղած էր գրեթէ բոլոր ժողովուրդներու հնադարեան պատմութեան մէջ և որ ինքնին նշան էր արդէն Ռուսաստանի տխուր յետամնացութեան։

Ատելութիւն ու արհամարհանք ունէր Բակունին արեւմտեան դեմոկրատիայի կարգերուն հանդէպ. կը մերժէր ընդհանուր ընտրողական իրաւունքը և բոլոր «բուրժուական» ազատութիւնները։ Անգամ ամենէն ազատ,

ռամկավար երկիրներու մէջ—ինչպէս Անգլիա, Բելգիկա, Զուիցերիա, Հիւսիսային Ամերիկա—ազատութիւնն ու քաղաքական իրաւունքները, որոնցմէ իբր թէ կ'օգտուին աշխատաւորները, ըստ Բակունինի, կատարեալ պատրանք են...

Ահա թէ ինչու նա կատաղաբար կը պայքարէր Մարքսի դէմ։ Կը պայքարէր, վասն զի այդ վերջինը կը գտնէր աշխատաւորութեան փրկութիւնը և ընկերվարութեան յաղթանակը արեւմտեան ռամկավարական մեթոտներուն մէջ, վասն զի նա համոզուած էր, որ յարաճուն դեմոկրատիայի ճամբով միայն, ազատութեան, Ընդհանուր Զայնատուութեան և պարլամենտական կարգերու ճամբով միայն՝ աշխատաւոր և տառապող ընդհանրութիւնը հետզհետէ պիտի աճի, զօրանայ ու յաղթանակէ։

Բակունին կը ծաղրէր այդ ըմբռնումը։ Անոր համար Մարքսի և արեւմտեան ընկերվարութեան առաջադրած ճամբան չափազանց երկար է, նա համբերել չէր կարող, պէտք ալ չկար սպասելու ամբողջ տասնեակ տարիներ, մինչեւ որ աղքատ, ճնշուած դասակարգը, անոր ներկայացուցիչները կազմեն օրինաւոր մեծամասնութիւն Խորհրդարաններու մէջ, պէտք ալ չկար սպասելու ամբողջ տասնեակ տարիներ, մինչեւ որ տգէտ աշխատաւորութիւնը քիչ-շատ հասունանար, լուսաւորուէր,—գիտակցէր իր ազատարարի կոչումը, դառնար ձեռնհաս և արժանաւոր ղեկավար նոր մարդկային իրաւակարգի...

Բակունինի աչքում այնքան դիւրին էր ընկերային յեղափոխութիւն ընելը... Մանկական խաղ մը... Բաւ էր միայն, որ խիզախ ձեռնարկու փոքրամասնութիւն մը գլուխ անցնէր գործին և հրահրէր բանուոր ու գիւղացի բազմութիւնները...

Ընկերային յեղափոխութիւնը կարելի է «ընել»... Այդ ճակատագրական սխալը լիուլի որդեգրեց Ուլիանով Լենին, որու գաղափարների մէջ ոչինչ կար ուրոյն... Բակունինի... Ժորժ Սորէլի գաղափարներն էին։ Բակունինի պէս, Լենին մերժեց արհամարհանքով ննդհանուր ընտրողական իրաւունքը և ամբողջ արեւմտեան դէմոկրատիան (1917 թուականէն ի վեր)։

Ռուսական գեղը տարբե՛ր հունով պիտի հոսէր, Ռուսաստանը հոյակապ դաս մը պիտի տար Արեւմուտքին... Եւ տուեց։

Ուշադրաւ են ռուսական «յատուկ միտիոնի» շուրջը տեղացող զառանցանքները ժամանակակից Ռուսութեան երկու հակամարտ բանակներու մէջ։

Թէ կարմիր կոմմունիստները և թէ ճերմակ միապետականները — Եւրոպա ապաստանած — հաւասարապէս տարուած են ռուսական միստիկանութեան անուրջներով և երկուստեք բռունցք կը ճօճեն Եւրոպայի դէմ, արեւմտեան քաղաքակրթութեան դէմ ու կը ներբողեն Ռուսութեան ինքնատիպ հանճարը...

Ոչինչ այնքան տաղակալի ու վհատեցուցիչ է, ինչպէս ընթերցումը արտասահմանեան ռուս մամուլի ու գրականութեան, ուր վերջա-

տին — ինչպէս 1905ի վիժած յեղափոխութիւնից յետոյ — սկսուած են բիւզանդական անվերջ վէճերը և վերստին հրապարակ են նետուած Բերդիայեվներն ու Մերեժկովսկիները իրենց արտառոց փիլիսոփայութիւններով, միստիցիզմի (խորհրդապաշտութեան) ամուլ ու սին մարզանքներով — ըսելու համար, որ Եւրոպան փուճ է, մեչչանական է, քաղքենի է, որ արեւմտեան քաղաքակրթութիւնն ու ռամկավարութիւնը անանկ են ևայլն։

Հակառակ իրենց երկրի փտութեան, աւերածին ու քաոսին, հակառակ իրենց անկարողութեան հիմնելու ազատ, նորագոյն, իրական պետութիւն մը՝ այդ պատուական ռուս փիլիսոփաներն ու գրողները կը շարունակեն արհամարհել Եւրոպան և հպարտութեամբ կը խորհին, որ վերջ ի վերջոյ, այնուամենայնիւ, «լոյսը պիտի գայ Արեւելքէն»... Ռուսաստանէն։ Ex Orient Lux...։

Անդին, բոլշեւիկեան դրախտի մէջ, ամենամեծ բանաստեղծներու և գրողներու բերնով կը փառաբանուի սկիթիզմը, ռուսութեան ասիական ծագումը։ Բանաստեղծ Բլոկն էր, որ ի լուր աշխարհի կը յեփորէր.

— Այո՛, սկիւթացիներ ենք մենք, այո՛, մենք ասիացի ենք չիլ ու ագահ աչքերով...

— Սկիթիութիւնը, կ՚ըսէ բոլշեւիկեան միստիսիզմի միւս բանբերը, Իվանով-Ռազումնիկ — նոր, յեղափոխական սկիթիութիւնը մօխիրներու պիտի վերածէ ողջ աշխարհը, պիտի պատռէ դիմակը մանր-բուրժուա — Աթլանտի... վանդի բոցերու ուրագանին մէջ,

հողմի ու փոթորկի մէջ աւետաբեր լուր մը կուգայ աշխարհին...

Դա լուրն է սկիւթացիներու յեղափոխական ճշմարտութեան մասին, տիեզերական միակ ճշմարտութեան, որ պիտի սպաննէ մանր-բուրժուական Եւրոպան և որու գալուստը նախազգացել ու գուշակել էր ողջ ռուսական գրականութիւնը*]...

Սկիւթացիք... Դա հին ցեղ մըն է, որու մասին կցկտուր ձեւով գրած են Հերոդոտ ու այլ պատմագիրները, բայց որու շուրջը դեռ չկան ճշգրիտ տեղեկութիւններ։ Հերոդոտի ատենները այդ ցեղը իբր թէ կը բնակի եղեր Դանուբ ու Դոն գետերու միջեւ, Սեւ Ծովէն հիւսիս ձգուող տարածութիւններու վրայ կէս-երկրագործ, կէս-խաշնարած, թափառական ցեղ մը, վրանաբնակ և ձիավարժ... Նման թուրանական, թաթարական ցեղերուն։ Ըստ ոմանց՝ այդ սկիւթացիները մոնղոլական ծագում ունէին։ Անոնք անհետացան ժամանակի ընթացքին, աւելի ճիշդ, ձուլուեցան եկեւոր, հզօր ցեղերուն մէջ։

Այսօր անոնց տեղը սլաւոններն են, գլխաւորապէս մալորոսները։ Ենթադրաբար, սկիւթական արիւնը կայ, խոշոր չափով, ժամանակակից ռուսութեան մէջ։ Ցայտնի է արդէն, որ յետագային, XII դարու մէջ թաթարական հորդաները խուժեցին Ռուսաստան, ուր անոնց դարաւոր տիրապետութեան ընթացքին մաս մը ձուլուեցան աւելի բազմա-

*] Boris Mirsky, Les Scythes.

թիւ ու հզօր սլաւոնութեան մէջ։ Ամէն պարագայի, այժմեան ռուս ցեղը ունի իր մէջ ուժեղ խառնուրդ մը մէկ կողմէն ֆիննական, միւս կողմէն թաթար մոնղոլական, ասիական ցեղերու, որոնցմէ մաս մը կը մնայ տակաւին ցիրուցան Ռուսիոյ հարաւ-արեւելեան կողմերը — Ղրիմ, Ղազան, Ուֆա, Օրէնբուրգ, Աստրախան և այլն։

Անթիւ են այսօր ռուս անուններ, որոնք թաթար ծագում ունին և կուգան այն հին օրերէն. Ուրուսսով, Իւսուպով, Դոնդուկով, Կօրսակով և այլն։ Կ'ըսեն, սկիֆիզմի թէօրիան արծարծողներու շարքում շատ կան թաթար ծագում ունեցող գրողներ ու գործիչներ...

Եւ հպա՛ռտ են անոնք իրենց թաթարական արիւնով և ոմանք նոյնիսկ այդ արիւնին կը վերագրեն ռուս ցեղի ինքնատիպ հանճարը... Հպա՛ռտ են Զինգիզխաններով ու Լանկթամուրներով, որոնց յիշատակը կը յարգեն իրենց ժողովներուն մէջ, երբեմն յոտնկայս...

Գրուած է յաճախ և, որ Ռուսաստանի ամենէն խոշոր ու պատմական դէմքերէն մէկը — Ուլիանով Լէնին — ծնուած Սամարայի թէ Սարատովի նահանգում, նոյնպէս թաթարական կամ կիսաթաթար ծագում ունի։ Եւ առաւել ճշմարտանման վարկած մըն է այդ, որ թաթարութիւնը, մինչեւ օրս, տարաբախտաբար, տուեր է բացառապէս կործանարար հանճարներ (Մենք հայերս փոքր ինչ ծանօթ ենք այդ հանճարներու էութեան հետ, սկսած այն օրերից, երբ թուրանական առաջին հոր-

դաները զրոհ են տուեր դէպի Հայաստան...)

Ամենէն յանդուգն դէմքերը — կ'ըսէր ինծի օր մը Սորբոնի մեծանուն պատմագիր Սէնիոբոս — ռուս պատմութեան ամենէն վճռական, ձեռներէց, յանդուգն դէմքերը գրեթէ միշտ թաթար ու այլ ծագումն ունին. վասն զի բուն սլաւոնները կրաւորական տարր մըն են, զուրկ վճռականութիւնից։

* * *

Կեցցե՛ն, ուրեմն, ակիւթացիները... կեցցէ՛ ակիֆ արիւնը, որ կը հոսի ռուս երակներուն. ա՛ն է ռուս ցեղի փառք ու պարծանքը. անո՛ր զօրութեամբ է, որ Ռուսաստանը նոր ուղի պիտի հարթէ համաշխարհային էւոլիւսիոնի լայնածաւալ աւազանին մէջ։ Անո՛ր զօրութեամբ է, որ Ռուսութիւնը անհաշտ հակառակորդ մըն է Եւրոպայի, «փտած ու նեխուած Արեւմուտքի»։ Անո՛ր զօրութեամբ է, որ — Իվանով-Ռազումնիկի ըսելով — նոր յեղափոխական սկիզբիզմը մոխրակոյտերու պիտի վերածէ մանր-բուրժուա, մեչչանական աշխարհը և նոր, վեհապանծ քաղաքակրթութիւն մը պիտի հիմնէ՝ բոցերու և ուրագաններու, հողմի ու փոթորկի մէջ... Այո՛, ա՛նո՛ր զօրութեամբ ոխերիմ ատելութիւն մը կայ, պատմական և փիլիսոփայական անվերածելի հակամարտութիւն մը կայ Ռուսաստանի և Եւրոպայի միջեւ... Դեռ բանաստեղծ Տիւտչեվ ըսեր է.

— Ռուսիոյ և Եւրոպայի միջեւ կարող է լինել միայն կեանքի ու մահու անհաշտ պատերազմ — և ո՛չ մի բանակցութիւն, ոչ մի զինադադար... Մէկու կեանքը միւսի մահն է...

Եւ ահա այսօր տենդային եռանդով այդ մշտադալար ուտոպիաները երկրի ու արտասահմանի մէջ կ'արծարծեն սկիֆութեան հարցը և կ'ազդարարեն ռուսական Մեսսիայի գալոց չնդալի թատերամուտը...

Ականջ դրէք այս զարմանալի ռուս տաղանդաւորներուն — գրողներ ու գիտնականներ — որոնց գրուածքներէն թունաւոր ատելութիւն մը կը կաթկըթի Եւրոպայի հասցէին... Իրենք սակայն նոր ազատուած հայրենի դժոխքէն, եկած ու ապաստանած են ազատ, հիւրընկալ Եւրոպայի մէջ... Աքսորականներ, որոնց ազգային ինքնասիրութիւնը այնքան տրորուած է բոլշեւիզմի սխրագործութիւններէն յետոյ, որոնք սակայն կը ցուցահանեն անհանդուրժելիօրէն ամբարտաւան ազգայնամոլութիւն մը աշխարհի առջեւ։ Տարամերժ, հիւանդագին դոռոզութիւն մը իրենց անծայր թշուառութեան մէջ... Քաղաքացիական ամէն իրաւունքէ զուրկ այդ պարիաները չեն հաւներ ոչ Եւրոպայի քաղաքական կարգերը, ոչ ալ եւրոպական գիտութիւնը, արուեստը, գրականութիւնը։

Եւ այդ արհամարհանքի մէջ (դէպի եւրոպական քաղաքակրթութիւնը) կը միանան հակոտնեաները, բոլշեւիկներ, միապետականներ և բազմաթիւ չէզոք մտաւորականներ, որոնք

չսիրելով հանգերձ բոլշեւիզմը, կը միանան անոնց՝ նոյն ընդհանուր հակաեւրոպական արշաւանքը մղելու համար... Ոմանք կը փառաբանեն անգամ Իվան Զարոնուրելին, Ռուսիոյ ամենէն դաժան բռնակալներէն մէկը, որ անգութ էր, մարդասպան էր, հալածող էր, բայց ստեղծեց Մոսկովեան հզօր պետութիւնը։

Ուսբրիալով այդ դաժան Իվանի խնկարկուներէն է և ան գոհ է, որ ռուս բոլշեւիկները որդեգրած են մասամբ հին սլավոնոֆիլներու ազգայնական հաւատամքը. ան կ'ատէ Եւրոպան, կ'ատէ Ֆրանսիական Յեղափոխութեան նշանաբանները, ազատութիւն, հաւասարութիւն և այլն. կ'ատէ Եւրոպայի հակակղերական աթէիստ *) պատկերը, կ'ատէ եւրոպական բոլոր իդէալները։

Եւ Ուսթրիալովները լեգէոն են։ Պարզ, գռեհիկ հակայեղափոխականներ, որ կը յարին բոլշեւիկներուն։ Ահա և Լուկիանով։ Նոյն երդուեալ հակառակորդը ռամկավարական ազատութիւններու, նոյն համոզուած խնկարկուն դաժան Իվաններու և բոլշեւիկեան Չէկաներու։

«Ռուսական վաղորդայնը—կ'ըսէ Լուկիանով—որ կը ծագէ այսօրուան բարբարոս ռուսներէն, աւելի լուսեղէն է, անհամեմատ աւելի ազատ, քան եւրոպական դեմոկրատիաներու քաղաքակրթուած այսօրը»**)։ Արեւմտեան դեմոկրատիան, անոր աչքին չարի ու սատանայութեան աշխարհ մըն է, հարստահարութեան

*) Աստուծոյ գոյութիւնը ժխտող։

**) B. Mirsky, Les Scythes։

ու բռնութեան թագաւորութիւն մը։

Անգամ Ստրուվէն, հինաւուրց մարքսիստը, այսօր դարձած միապետութեան ռահվիրայ, կ'անիծէ արեւմտեան դեմոկրատիան, որ աղբիւրն է բոլոր յեղափոխութիւններուն, նաեւ բոլշեւիկեան յեղափոխութեան...

Եւ ահա պրոֆէսոր Նովգորոդցեվ, յայտնի գիտնական, իրաւաբան։ Իր ըմբոստ, անհասանելի բարձունքներէն որպիսի՞ մոլեգնութեամբ այդ ռուս աղանդաւորը կը դատէ ու կը խարանէ ողջ արեւմտեան քաղաքակրթութիւնը։ Տեսարանը նոյնքան գռեհիկ է, որքան ըմբոստացուցիչ։

Նովգորոդցեվ չի հանդուրժեր, որ Եւրոպան ու Ամերիկան կազմակերպեր են իրենց ընկերային-քաղաքական կեանքը առանց կրօնի, որ արեւմտեան պետականութիւնն ու ամբողջ մշակոյթը հիմնուած է ոչ կրօնի վրայ, այլ սոսկ բանականութեան։

Սխա՜լ մըն է այդ և ատկից բոլոր աղէտները։ Պիտի փլի՜ այդ քաղաքակրթութիւնը—կ'ազդարարէ ռուսական գիտութեան ահաւոր քուրմը, և պիտի սկսի նոր մարդկային մշակոյթի շրջան մը, ուր գերիշխող պիտի լինի կրօնը... Պիտի խորտակուին՝ դեմոկրատիա, հասարակապետութիւն, պարլամենտարիզմ... Արդէն իսկ գոցուելու վրայ է «Արեւմտականութեան» դարաշրջանը—և ապագան, ըստ Նովգորոդցեվի, կը պատկանի այն ժողովուրդին միայն, որը ընդունակ կը լինի ընելու գերագոյն ժեսթը՝ վերադարձը դէպի կրօնը...

Այդպիսի ժեսթ մը, հարկաւ կարող է ը-

նել մինչ ռուս ժողովուրդը... Չէ՞ որ անոր պարզ, անխարդախ հոգու մէջ դեռ կենդանի է հին հաւատը, մեծ է անոր խոնարհութիւնը, ուժեղ են «մեսիական» նախազգացումները և այլն։

Արեւմուտքը փտած է, լմնցած, Ռուսաստանն է որ նոր կեանք պիտի բերէ աշխարհին, նոր իդէալ, նոր պետութիւն—կրօնական պետութիւն մը։

Դա՞ր դէպի Արեւելք, դէպի Ասիա... Ռուսը զզուանքով երես կը դարձնէ Արեւմուտքէն։ Սկիֆիզմի գաղափարախօսներու համար որքապղծութիւն մըն է, որ Ռուսաստանը մը-նայ մտաւոր-հոգեկան հաղորդակցութեան մէջ Եւրոպայի հետ. Ռուսաստանը անոնք մկրտեր են նոր անունով մը—Եւրասիա, խառնուրդ մը երկու անուններու՝ Եւրոպա և Ասիա։ Իր աշխարհագրական դիրքով ան Եւրոպայի մէջ է, բայց իր մշակոյթով՝ տարբեր Եւրոպայէն։

Ռուս մտաւորականներու խումբ մըն ալ Բուլղարիոյ մայրաքաղաքէն ազդարարեց աշխարհին «եւրոպական» հաւատամքը։ Անոնք ալ կը գուշակեն արեւմտեան քաղաքակրթութեան շառաչալի անկումը և կը պնդեն, որ Արեւելքը պիտի փոխարինէ Արեւմուտքին։

Զրի, ազգայական գուշակութիւններ, ոգորմելի մարգարէներ, որոնք ոչինչ կ՚ապացուցեն, ոչինչ կը հիմնաւորեն գիտականօրէն, այլ միայն կը պնդեն... Թշուառ Ռուսաստան և թշուառ այն բոլոր ազգերը, որոնք պատապարտուած են անոր հետ քալելու...

Ահա Բերդիաեվ, Մերեժկովսկի և ուրիշներ

—փիլիսոփաներ, տաղանդաւոր գրողներ — որոնք տարբեր ձեւերով թարգման կը հանդիսանան նոյն ռուսական խորհրդապաշտ մտայնութեան։ Բոլշեւիկեան յեղափոխութիւնը սարսափեցրել է անոնց իր հրէշաւոր զարհուրանքներով։ Եւ անոնք զզուած են բոլոր յեղափոխութիւններէն, որոնք «ազատի տիրապետութիւնը» առաջ կը բերեն... — իսկ յեղափոխութիւններու օրրանը Արեւմուտքն է...

Եւ կը գարշին Արեւմուտքէն, Դէմոկրատիայէն... Ելք կը փնտռեն ու կը կորչին կրօնական, միստիքական ցնդաբանութիւններու մշուշին մէջ։

Կրօնը—միակ ու գերագոյն միջոց՝ պայքարելու բոլշեւիզմի դէմ։

Կրօնը—միակ ու գերագոյն միջոց՝ լուծելու եւրոպական, համաշխարհային տագնապը։

Զարիքը կուգայ, «գազանը» կը թագաւորէ, վասն զի մարդիկ մոռցեր են Աստուածը...

Ռուս ժողովուրդը միշտ պէտք է ունենայ իր մեծ կամ փոքր Տօլստոյները։ Մեծ Տօլստոյ իր ամբողջ կեանքը նոյն ուտոպիաները քարոզեց։ Բռնակալութեան դէմ կռուելու համար, ան կը յանձնարարէր քրիստոնէական խոնարհութիւն։ Զարիքի հանդէպ՝ կրաւորապաշտ համակերպութիւն։

Նոյնը գիտակցաբար թէ անգիտակցաբար կ՚ընեն այսօր Մերեժկովսկիներն ու Բերդիաեվները։ Անոնք միայն կը տարբերուին պայքարը, կը բարոյալքեն պայքարող երիտասարդութիւնը *)։

*) Բարեբախտաբար, ռուս միլիոնաւոր տարագ-

Բոլշեւիկները կը խնդան այդ անուղղելի ուտոպիաներու վրայ, որոնք միայն անոնց Ղրաղացին ջուր կը հասցնեն, անոնց թաթարասիական վայրենի ռէժիմը կ'ամրապնդեն։ Եւ միթէ՞ արդէն իսկ չի իրականացած Ռուսաստանի մէջ այդ չնաշխարհիկ «եւրասիացիներու» և «սկիֆներու» իդէալը... Իդէալ մը, որ կը ժխտէ արեւմտեան հաւատամքները, որ զզուանքով կը մերժէ դէմոկրատիան, ազատութիւնը և բոլոր մարդկային իրաւունքները... Իդէալ մը, որ կը վերակենդանացնէ Իվան Գրոզնիներու դաժան բռնունցքը, տերրորի ու հալածանքի թագաւորութիւնը...

Սկիւթացիք յաղթականօրէն քաղցած են արդէն Քրէմլի ապարանքում և մտրակով ու խարազանով կ'իշխեն հարիւր միլիոնաւոր գերիներու վրայ... Անոնք նեռեր են կարմիր ձեռնոցը Եւրոպային ու ողջ Արեւմուտքին և կը ձգտին համաշխարհային յեղափոխութեամբ մը տարածել «եւրասիոյ» տիրապետութիւնը ողջ մարդկութեան վրայ։

Ռուսական Մեսսիան եկե՞ր է իրօք և նոր բան մըն ալ չէ բերեր... Հին գինին է նոր տիկերու մէջ։ Ցարերու ատեն կար Օխրանա, այսօր—Չեկա։ Երկու հիմնաւիներ ռուսական պետականութեան։ Երկու գերագոյն ու անհրաժեշտագոյն հաստատութիւններ, որոնցմէ մէկուն վրայ կը յենուէր ատենօք ցարերու բացարձակ միապետութիւնը, միւսին վրայ կը յենուի այսօր—բոլշեւիկեան դիկտատուրան...

բութեան մէջ կան և առողջ տարրեր, որոնք կը ձգտին կազմակերպել հակաշարժումը բոլշեւիզմի դէմ։

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՒԵՐԱՄԸ

Ցարիզմ և բոլշեվիզմ.— Ճակատների պարպումը.— Ցրուղ բանակը և ուերումի գործը.— «Զարկ բոժոյներին».— Արդիւնաբերութեան և առեւտրի պետականացում.— Երկաթն էլ անդամալուծուած.— Գրոլեատարիատը փախչում է աշխատանքից.— Մի քանի թուեր.— Գործարանները վերածուած մի մի զօրանոցի.— Աշխատանքը՝ ստիպողութեան ու բանակի ոգեանալիքների տակ.— Ոչինչ չի օգնում.— Կոմմունիզմը վիժում է և գիւղում.— Գիւղացին չահ չունի բարելաւելու իր տնտեսութիւնը.— Գիւղը բոյկոտում է քաղաքը.— Տնտեսութեան քայքայում.— Ցայսը՝ արեւմտեան կապիտալը.— Գիւղացիական յաղթանակներ.— Նէօնէպ.— Բնակարանային սեռտեմը.— Թշուառութիւն և պերճանք.—

Զենք մոռանայ, որ Ռուսաստանի ներկայ համատարած թշուառութիւնն ու տնտեսական անօրինակ տագնապը մասամբ հետեւանք են ցարիզմի և մեծ պատերազմի։ Արդիւնաբերութիւնը և մանաւանդ հաղորդակցութեան ու փոխադրութեան միջոցները խիստ յետամնաց էին դեռ ցարական տիրապետութեան օրով։

Բոլշեւիզմը, որ ինքն եւս մի խոշոր չափով ծնունդ է և ստէպ նոյն իսկ հարազատ պատճէն նոյն ցարական համակարգութեան,—բոլշեւիզմը եկաւ տանապատակելու չարիքը, ի սպառ քայքայելու գիւղական տնտեսութիւնը, արդիւնաբերութիւնն ու առեւտուրը։

Ռուսաստանի տնտեսութեանը առաջին ու աղէտաւոր հարուածները տուին նոյն իրենք պատերազմի դաշտից փախչող զինուորները։

Ցաղթական Սովէտը մայրաքաղաքից հրաւիրել էր նրանց տուն վերադառնալ, հռչակել էր նրանց երկրի տեր։ Տարրական միջոցներն անգամ չէին ձեռք առնուած՝ քիչ թէ շատ կանոնաւոր ձեւով կատարելու զօրացրումը։ Ամէն բան ընթացաւ յախուռն ու գահավէժ, բոլոր ճակատներում, Կովկասից մինչեւ Դալիցիա։

Եւ ահա հսկայ զանգուածը խուռներամ շարժուեց ճակատից դէպի ներս։ Շարժուեց հեղեղի պէս, ամէն բան կործանելով։ Միլիոնաւոր մարդիկ են շարժման մէջ և տասնեակ հազարաւոր մղոններ է, որ պիտի կտրեն ու անցնին։ Ամբողջ շաբաթներ և ամիսներ։ Բանի ոյժով իրենց ձեռքն են առնում վագոններն ու լոկոմոտիվները, փճացնում են կարճ միջոցում մեքենաները, անդամալուծում ու գրեթէ կանգ է առնում հաղորդակցութիւնը։ Մարդկային զանգուածը պէտք ունէր նաեւ սնունդի, զգեստի, ատնամանների, դրամի։ Եւ որովհետեւ շատ քիչ էր մնացել այդ անհրաժեշտ բարիքներից, ուստի զարնում ու յափշտակում էին խանութներից՝ ով ինչ կարող էր։ Ո՞վ էր արգիլողը, կարգի հրաւիրողը։ Այդպիսիներին անխնայ ջարդում էին։ Չէ՞ որ յափշտակողները Ռուսաստանի նոր տէրերն էին, որ մէկ կարգախօս միայն գիտէին՝

— Թալանի՛ր, կշտացի՛ր։

«Թալանածը թալանիր»—ասել էր Լենին։

Մասսան աճում էր հեռագիրեռ իր մէջ առնելով կողոպուտի ծարաւ բոլոր ժուլի տարրերը, երկրի տականքը։ Ամբողջ քաղաքներ աւերուեցան։ Ամբողջ շրջաններ ամայացան։

Պէտք էր վերաշինել։ Բայց քչերը կ'ուզէին աշխատել։ Մասսան տիրով կ'երթար ուներորներին կողոպտելու. բայց վերակսել չարքաշ աշխատանքը՝ երկիրը վերաշինելու համար —այդ գաղափարը շատ էլ հաճելի չէր մասսային։ Նա կ'ուզէր միայն սպառել ու վայելել՝ «բուրժուաներին» զրկելով...

Սովէտական կառավարութիւնը փորձեց կազմակերպել աշխատանքն ու արդիւնաբերութիւնը հանուր անիշխանութեան և քաոսի մէջ։ Հռչակուեց «գերագոյն դարմանը»—ազգայնացում կամ համայնացում։ Ազգի, պետութեան սեփականութիւն հռչակուեցին արդիւնաբերութեան բոլոր ճիւղերը, բանկերն ու բոլոր վարկային հաստատութիւնները, անգամ առեւտուրը, մանր ու խոշոր։ Բոլոր խանութներն ու ապրանքները խլուեցին սեփականատէրերի ձեռքից։

Իւրաքանչիւր վայրի սովէտը իր ձեռքում կենտրոնացրեց ամբողջ տեղական առեւտուրը, և դրա հետեւանքը եղաւ այն, որ մեծ ու փոքր առեւտրականները ակսեցին թագցնել ապրանքների առատ պաշարներ, չնայած Չէկաների ահաբեկչական միջոցներին։

Եւ մասսան, որի անունով կատարւում էր «համայնացումը», ակսեց չարաչար տառապել ապրանքների սովից։ Կեանքը օր աւուր սղացաւ, կենսամթերքները սակաւացան։ Գները աճեցին ահաւոր չափերով։ Բանկերը գրեթէ դադար առան, չկատարելով վարկային գործողութիւններ։ Թղթադրամը տպւում ու տարածւում էր հսկայական քանակով, կորցնում

իր արժէքը և գիւղացին հրաժարւում էր մատակարարելու անհրաժեշտ կենսամթերքը քաղաքներին՝ թղթէ կոյտերի փոխարէն, որոնցմով նա չէր կարող ձեռք բերել զգեստ, կաբասի և տնային այլեւայլ առարկաներ։

Համայնացրին, պետականացրին և խոշոր արդիւնաբերութիւնը։ Եւ նրա հսկայ մեքանիզմը կառավարելու համար՝ ստեղծուեցաւ մի հսկայ բիւրօկրատական մարմին, տասնեակ հազարաւոր պաշտօնեաներով, մեծ մասամբ անփորձ ու անձեռնհաս, որ պէս-պէս ծրագիրներ յղացաւ, բայց անկարող եղաւ վերակենդանացնել արդիւնաբերութիւնը։

Կացութիւնը չչափելի փոփոխութիւն չունեցաւ անգամ Կովկասը վերագրաւելուց յետոյ, երբ Սովէտների ձեռքն անցան Բաքուի հարուստ նաֆթահանքերը և Վրաստանի հումի նիւթերի առատ աղբիւրները։ Համաառուսական արդիւնաբերութիւնը կատաստրոֆային ընթացք էր առել։

Զարհուրելին այն է, որ գործաւորները միրայօժար չէին ուզում աշխատել կոմմունիստական Ռուսաստանի մէջ։ Աշխատանքի դիսցիպլինը կազում էր չարաչար։ Իրենք կոմմունիստական առաջնորդները վկայում էին այդ։ Ահա թէ ինչ էր գրում «Էկոնոմիչեսկայա Ժիզն» սովէտական պաշտօնաթերթը 1919 թուին, իր «տարուայ տեսութեան» մէջ.

«Բոլոր գործարաններում *) նկատելի է բանւորների թուի մշտական նուազում եւ կամաւոր անգործութեան անում։

«Շատ շատերը փախչում են աշխատանքից»։

Թերթը շարունակում է.

«Ամբողջ (Պետերբուրգի) գործարանային շրջանում 12,141 բանւորներից 7,585 հոգի միայն աշխատում են իրօք։ Նեվայի մեքենաշինութեան և նաւաշինութեան գործարանում [այժմ փակուած] կամաւոր անգործները [այսինքն աշխատել չկամեցողները. Մ. Վ.] կազմում էին Յուլիսի առաջին կիսում 56 %, երկրորդ կիսում՝ 70 %, իսկ օգոստոսի առաջին կիսում՝ 84 %։ Պուտիլովի գործարանին, անուանապէս պատկանում էին 7,500 բանւոր։ Բայց նրանցից միմիայն 2,800 հոգի էին աշխատում Օգոստոսի 15-ին, այսինքն ընդամենը 37,3 %»։

[«Էկոն. ժիզն», N° 209]

Շարունակենք.

Պետերբուրգի մետաղագործարանները նորմալ ժամանակ բանեցրել են 100-150,000 գործաւորներ։ Եւ մետաղագործների միութիւնը ամենաուժեղն էր Ռուսաստանի մայրաքաղաքում։ Բոլշէվիկեան յեղաշրջումից յետոյ այդ հսկայ արդիւնաբերութիւնը հոգեվարքի մէջ էր, գործարանները փակուած էին մին միւսի ետեւից և բանւորների թիւը այնքան իջաւ, որ կազմում էր հաշիւ նախկինի 7 %-ը։

Նոյն երեւոյթները բոլշէվիկեան թերթը արձանագրում է միւս գործարաններում։ Ամենուրեք աշխատաւորների թիւը նուազում էր և դրա հետ բնականաբար նուազում էր ապրանքների արտադրութիւնը։

Այս բոլորը առաջ ենք բերում ցոյց տալու համար, թէ որքա՞ն պարտքի գիտակցու-

*) Խօսքը Պետերբուրգի մեքենագործական առաջնակարգ ու ծաւալուն գործարանների մասին է, որոնք հին օրերում հռչակաւոր էին Նոյնիսկ Ռուսաստանից դուրս։

թիւն ունէր այն պրոլետարիատը, որ այնքան բարձր նշանաբաններով կատարեց 1917ի հոկտեմբերեան յեղաշրջումը և որ յաւակնում է ընկերային ամենաբարձր իտէալներն իրագործելու ամբողջ աշխարհում...

Նա չէր ուզում աշխատել և շուտով բանութեան սպառնալիքի տակ է, որ պիտի աշխատեցնէին նրան...

Մեքենագործ բանւորների մի համագումար-ժողովի ներկայացուցած զեկոյցի մէջ հետեւեալն է հաղորդուած։

«Կացութիւնը անցեալ տարուանից աւելի է վատթարացել։ Ոչ անցեալ տարի, ոչ այս տարի հնարաւոր չեղաւ գոհացնել բանւորների ապրուստի պէտքերը... Ոչ միայն գները բարձրանում են աւելի աւելի, համեմատութեամբ, քան ամսավճարները, այլ և նկատւում է, որ զանազան ապրանքներ իսպառ անհետանում են բանւորավայրերի շուկաներից։ Անգամ էքսպէդիցիոնները *) դէպի գիւղերը... գործել են անօգուտ, վասնզի գիւղերը ոչինչ չեն տալիս գրամի փոխարէն, պահանջում են իրեր, ապրանքներ. սակայն իրերի պակասութիւնից քաղաքային բանւորները նոյնքան են տառապում, որքան գիւղացիք։ Ուստի և բանւորները լքում են գործարանները»**)։

Տարաբախտաբար, շարունակում է թերթը իր 225-րդ թուի մէջ, մասնաւորելով խօսքը Տաւրիայի շրջանի մասին, թաւած արդիւնաբերական ձեռնարկներից շատերը չեն աշխատում, կամ աշխատում են ժամանակի կէսը

*) Կառավարական արշաւախմբեր, որ գնում են գիւղերը՝ կենսապաշար բերելու... ստէպ բռնի ուժով։

**) «Էկոնոմ. ժիզն» Թ. 220.

միայն... թէեւ, ասում է, ածուխ կայ, մեքենաներ եւս կան բաւական թուով, ջարդուածները կարելի է նորոգել և նոյն իսկ հացն էլ կարելի է ճարել... բայց...

«Չկան կարող մարդիկ, որ կամք ունենան, բանականութիւն և անկեղծ ցանկութիւն ունենան՝ յաջողելու և հատատելու աշխատանքի երկաթէ գիւցիոլին (կարգապահութիւն)։ Մեր հիմնարկութիւնները լի են մարդկանցով, որոնք մտածում են իւրաքանչիւրը իր սեփական բարեկեցութեան և՛ ոչ երկրի մասին...»

Բոլշեվիկները, ուրեմն, անկարող են իրենց մեթոդներով կազմակերպել աշխատանքն ու արդիւնաբերութիւնը, անգամ այն վայրերում, ուր ամէն բան ունին իրենց ձեռքի տակ և չեն կարող պատրուակել, թէ կապիտալիստական Եւրոպայի բլոկադը կամ ներքին հակայեղափոխական շարժումները արգելք են լինում իրենց ճիգերին...

Ազգային տնտեսութեան գերագոյն խորհրդի գլխաւոր գործավարը, քանի մը բարձր սովէտական պաշտօնեաների հետ, ուսումնասիրութեան պատճառ էր տալ Ռուսաստանի մէջ և հետեւեալն էր պատմում գաւառների կացութեան մասին.

«Կենդանիները չքացել են, չկան ամենաարժէքաւոր տեսակները։ Անասունները դժուարութեամբ են շահագործւում... չկան հաղորդակցութեան և փոխադրութեան միջոցներ... Մեծ ջրաղացները կանգ են առել, վառելանիւթի պակասութեան շնորհիւ։ Մետաղ չկայ անգամ մեծ կենտրոններում։ Աշխատանքը խիստ դժուարին է և ոչ ամէնքին մատչելի։ Գաւառակներում և կենտրոններում (գաւառական)

կազրել պրոլետարիատի զանգուածները՝ աշխատելու։ Սահմանուեցին Չէկայի յատուկ մասնաճիւղեր և զինուորական ատեաններ։ Կարմիր զօրքի որոշ հատուածներ, որ աւելորդ էին դարձած զինուորական գործի համար, ի տեղի ցրուելի, կազմեցին «Աշխատանքի բանակ», իր սպաներով ու ենթասպաներով։ Մի նոր թիւրօկրատիա... Եւ երեւակայեցին, թէ ահա, վերջապէս, պիտի բարձրանայ արդիւնաբերութիւնը, պիտի աճի աշխատանքի արդիւնաւէտութիւնը։

Այդ էլ չօգնեց։ Մերկ, կիսաքաղց մասսաների աշխատանքը, տերրորի սպառնալիքի տակ, առանձին փոփոխութիւն չբերեց։ Գիւղացիք շարունակում էին բոյկոտ անել քաղաքները։

Կարմիր Դիքտատորը հրամայում էր՝ (ցորենը գիւղերից բերելու համար).

«Ներքակալեցէ՛ք և բերէ՛ք Մոսկուա բոլոր նրանց, որոնք կը թագցնեն հացահատիկները»... Նրանք կը փակուեն կենտրոնացած քէյմփերի մէջ և կ՚ենթարկուեն տաժանակիր աշխատանքների։

Ահաբեկումը դարձաւ գերագոյն միջոց՝ պարտադրելու աշխատաւոր զանգուածներին սոցիալիստ կառավարութեան հրամանները... Սովն ու հալածանքը առան իրենց ճանկերի մէջ ոչ միայն մայրաքաղաքներն ու բանւորական կենտրոնները, այլ ամբողջ հսկայածաւալ կայսրութիւնը։ Մահացութիւնը զարհուրելի էր։ Առանց արեւմտեան աշխարհի առատաձեռն օգնութեան, կատաստրոֆը կարող

էր թերեւս ճակատագրական լինել ռուս ժողովուրդի ու օլիգարխական ռէժիմի համար։

Եւ այդ կատաստրոֆը անխուսափելի արդիւնք էր բոլշէվիկեան գործակերպի։ Արդիւնք էր այն բանի, որ Ռուսաստանի նոր վարիչները քանդել, ոչնչացրել էին, սիստեմատիկ սաքոտաժի *) էին ենթարկել երկրի բոլոր տնտեսական կապերն ու հնարաւորութիւնները։ Արդիւնք էր այն պարզամիտ, նահապետական կոմմունիզմի, որ մի բուռն ֆանատիկոսներ—թէկուզ և լաւագոյն իդէալներով ու բաղձանքներով տոգորուած—կամեցան զօռով պատուաստել տնտնապէս ու կուլտուրապէս խոպան, յետամնաց Ռուսաստանին...

Եւ երբ տեսան իրենց աւերիչ գործունէութեան կոշմարային հետեւանքները, սկսեցին մի կողմից յետ նահանջել, միւս կողմից այժմ կարմիր բանակին և իմպերիալիստական ախորժակներին՝ կորսուած երկիրները վերանուաճելու և նրանց նիւթական հարստութիւնները վերագրաւելու համար։

Հաշակելով հանդերձ, որ բոլոր ժողովուրդները ունին իրաւունք իրենց բախտը ազատական կամքով տնօրինելու, բոլշէվիկ դիքտատորները յայտարարեցին.

— «Այժմ մեզ համար մէկ ելք միայն կայ—ուժեղացնել բոլոր միջոցներով կարմիր զօրքը... և ըստ կարելւոյն չուտ միացնել Ռուսաստանին Դոնի շրջանը և Կովկասը, այդ հիմնական աղբիւրները մեր տնտեսական գոյութեան, յառաջ քան մեր լաւ «դաշնակիցները

*) Փճացում

ժամանակ կ'ունենան դուրս կորզելու այնտեղից բոլոր պաշարները»։

ԿՈՄՄՈՒՆԻԶՄԸ ԳԻՒՂԵՐՈՒՄ

Կոմմունիստական ծրագիրները վիժել էին նաեւ գիւղում։ Արդէն իսկ գիւղական տնտեսութիւնը ծանր հարուածներ էր կրել կալուածատիրական գոյքերի ու գործառնութիւնների աննպատակ, վանդալական աւերումներից, որ կատարել էին գիտակցութիւնից զուրկ ռուս ժուժիկները։

Սովէտական բարձր իշխանութիւնները իրենք իսկ ի վերջոյ խոստովանեցին, որ իրենց ուզածը ուտոպիա է, ցնորք է և որ անհնարին է բռնի ոյժով խոթել բազմամիլիոն գիւղացիութիւնը սոցիալիզմի մէջ։ 1918 ի մայիսեան հրովարտակով գիւղացին պարտաւորւում էր որոշուած գնով ծախել պետութեանը այն յաւելուածը, որ կը մնայ գիւղացիական արդիւնաբերութիւնից, իր անձնական պէտքերը գոհացնելուց յետոյ։ (Հողագործը պահում էր նաեւ արտադրութեան այն բաժինը, որ անհրաժեշտ էր գիւղատնտեսութեան կարիքների համար)։

Սակայն, գիւղացիք, ինչպէս ասացինք, տրամադիր չէին ծախելու պետութեանը բերքերի յաւելուածը, քանի որ փոխարէնը ստանում էին միայն «դրամ» անուանուած անարժէք թղթակոյտեր։ Միւս կողմից, բերքերի այդ յաւելեալը նրանք չէին էլ կարող պահել,

քանի որ այդ պարագայում հոչակւում էին կուլակ, «բռունցք», չարաշահող և այլն և սովէտները բռնագրաւում էին տնտեսուած պաշարները։

Գիւղացին բնաւ ցանկութիւն չունէր նոյն իսկ բարելաւելու և բարձրացնելու իր տնտեսութիւնը... Նա չէր կարող տնտեսել, չէր կարող չուկայ հանել վաճառելու,—նրա անձնական ձեռներէցութիւնը խեղդուած էր։ Նա բնաւ, ի հարկէ, չէր հասած այն գիտակցութեան, թէ համաշնորհն կազմակերպուած տնտեսութիւնը աւելի շահաւէտ է, քան մասնաւոր տնտեսութիւնը։

Գիւղական արդիւնաբերութիւնը այդպիսի պայմաններում չէր կարող առաջադիմել, նա եւս քայքայուեց ու անդամալուծուեց...

Աւելորդ է ասել, որ 1917-ին բոլշեվիկներին կատարած հողային ռէֆորմը ոչինչ չունի իր մէջ կոմմունիստական։ Հողը խլուեց կալուածատէրերից և տրուեց գիւղացիներին։ Այսինքն կատարուեց բուրժուա-ագրարային յեղաշրջում, նոյնը, ինչ որ եղել էր Ֆրանսիայում 1789-ի յեղափոխութեան միջոցին։ Այդ ռէֆորմը պիտի լինէր արդէն համառուսական Սահմանադիր Ժողովի և նրանից ծնուելիք ընկերվարական կառավարութեան առաջին ակտերից մէկը։ Բոլշեվիզմը չի կարող պարծենալ այդ ռէֆորմով, ինչպէս չի կարող պարծենալ և ցարիզմի տապալման ակտով, վասն զի ինքը չէր տապալողը... Գիւղերում եւս ռուս «կոմմունիստ» կառավարութիւնը իրօք հաստատեց մասնաւոր սեփականութիւն, կապալը և «բը-

ռունցքը», գիւղերում եւս համեմատաբար ուշնեւոր և բարեկեցիկ խաւերը չարունակեցին հարստահարել ու չահագործել չքաւոր ռարրը, գիւղական պրոլետարիատը։ Գիւղերում եւս Լենինի յղացած կոմմունիստական վերիվայրումը յանգեց ի վերջոյ — կապիտալիզմի լիակատար յաղթանակին...

ՆԷՊԸ

Լենինն ինքը, սարսափած իր կատարած աւերմունքների առջեւ, չեփորեց՝

— «Դեպի յե՛տ»...

Ուրիշ ելք չկար։ Ցնտեսութիւնը ի սպառ կործանւում էր և սովի զարհուրանքը համակում ողջ կայսրութիւնը։ Պէտք էր վերահաստատել... կապիտալիզմը։ Պէտք էր վերականգնել... բուրժուազիան։ Այն բուրժուազիան, որ կոտորել ու տարագրել էին մարքսիզմի նեղաճակատ աղանդաւորները, երեւակայելով, թէ սոցիալիստական ու յեղափոխական գործ են կատարում...

Պէտք էր ամէն գնով պահպանել սովէտական իշխանութիւնը և «պրոլետարիատի դիքտատուրան»...

Օպպորտիւնիզմի, պատեհապաշտութեան երկիւղը չէր, որ կարող էր կանգնեցնել «Համաշխարհային Յեղափոխութեան առաքելոներին։ Նրանք եկել էին պատեհապաշտութեան record-ը խփելու։

Անիւը դէպի յե՛տ... Եւ սկսուեց հռչակաւոր նեպ-ի շրջանը։ «Նոր տնտեսական քաղաքականութեան» շրջանը։ Նրա նշանաբաններն էին, ազատութիւն առեւտուրի, ազատութիւն անհատական նախաձեռնութեան թէ գիւղում, թէ քաղաքներում։ Հրաւիրել օտար կապիտալիստներին Ռուսաստան, տալ նրանց արտօնութիւններ, կնքել բուրժուական պետութիւնների հետ փոխառութիւններ ու առեւտրական համաձայնութիւններ։

Ազատ առեւտուր և ազատ անհատական նախաձեռնութիւն — բոլշեվիկեան բռունցքի տակ ու համառուսական ամայութեան մէջ...

Այդ եւս ոչ ոքի չէր ժպտում։ Այդ եւս անկարող էր փրկել նաւը խորտակումից։ Այդ լաւ գիտէին և բոլշեվիկ առաջնորդները, ուստի իրենց բովանդակ յոյսը դրին... եւրոպական կապիտալի ներմուծման և եւրոպական փոխառութիւնների վրայ։ Եւ այդ էր, որ գրուեց սովէտական օրակարգի առաջին տեղում։

Դեռ 1919-ի հոկտեմբերի 9-ին նոյն պաշտօնական «Էկոնոմիչ. Ժիզն»-ը թիւ 225-ի իր խմբագրական յօդուածի մէջ գրում էր հետեւեալ զգայացունց տողերը.

«Դուրս քշելով ռուս և օտար կապիտալիստներին, որոնք ցեղափոխութիւնից առաջ տիրել էին մեր արդիւնաբերութեան մի խոշոր մասին, մենք բաց ենք անում նրանց (կապիտալիստների) աչքի մի նոր դուռ, արտօնութիւնների միջոցով և թոյլ ենք տալիս նրանց՝ աշխատելու կապիտալիստական ձեւով... Օտար կապիտալի մուտքը և շրջանառումը սովէտական Ռուսաստանի մէջ պիտի հրահրէ մեր սեփական կապիտալիստներին... Կ ա պ ի տ ա լ ի զ-

մը չպիտի «չնչցուի սովէտական Ռուսաստանում, ընդհակառակը՝ խոր արմատներ պիտի ձգէ և պիտի զօրանայ...*)

«Կապիտալիզմը Արևմուտքում ցոյց տուեց աւելի դիմադրական այժ, քան ենթադրւում էր և նրա հաշուեյարդարի ժամը թւում է բաւական հեռաւոր...»

Այս հանդիսաւոր յայտարարութիւններով արդէն ռուսական բոլշէվիզմը դրոշմում էր իր վրայ անանկութեան ու դատապարտութեան կնիքը։

Բոլոր նախորդ ծրագիրներն ու քայլերը, բոլոր աղէտաւոր փորձերը, կատարուած պրոլետարիատի մէջքի վրայ, հուչակուեցին իրենց հեղինակների բերնով իսկ, իբրեւ մոլորութիւն ու ցնդաբանութիւն...

Բաւական չէր այդ։ Շուտով մի ուրիշ նահանջ եւս պիտի կատարէր սովէտական իշխանութիւնը։ Գիւղացիական յուզումները գնալով սաստկացան։ Գիւղացիութիւնը լենինեան սիստեմի մէջ դիտւում էր, իբրեւ սոցիալիզմի թշնամի մի տարր. ուստի և գտնւում էր մի տեսակ ստորադրեալ վիճակի մէջ հանդէպ քաղաքային պրոլետարիատի և նրա իշխանութեան։ Բայց ահա գիւղը ըմբոստացաւ՝ իր անարդ վիճակի դէմ բողոքելով։ Սկսուեց կոմմունիստ գործակալների համաճարակ կոտորած։

Ցուզմունք և իրարանցում Կրէմլի մէջ։ Ժողովներ, կոնգրէսներ, բուռն վիճաբանու-

*) Ստորագծողը մենք ենք։ Մ. Վ.

թիւններ՝ յատկապէս գիւղացիական խնդրի շուրջը։ Եւ հնչեց նոր կարգախօս.

— «Դէմքերնիս դէպի գիւղ։ Ստալինները նոր զգացին, որ Ռուսաստանի պէս գիւղատնտեսական մի երկրում հարիւր միլիոնաւոր աշխատաւոր գիւղացիութիւնը ողնաշարն է ընդհանուր տնտեսութեան։ Նոր զգացին, որ սուիններով չի կարելի մղել այդ հսկայ զանգուածը դէպի սոցիալիզմ։

Միւս կողմից, տեսան զարհուրանքով, որ «կոմմունիստական» փորձերի չնորհիւ երկիրը չքաւորութեան անդունդն է գլորւում, — ապաւում է ցարիզմից մնացած դրամագլուխը, ոսկին... Տեսան, որ Եւրոպան փոխառութիւններ չի ուզում կնքել, որ ֆինանսական վիճակը դառնում է կատաստրոֆային և Ռուսաստանը ի սպառ պիտի կործանուի, եթէ տեւէ ձեւով չարաչարի հարստութիւններ...

Եւ ահա այս անգամ — նահանջ՝ ամբողջ ճակատի վրայ։ Նէպին յաջորդեց նեօնէպ։

Նորագոյն տնտեսական քաղաքականութիւն... Դարձեալ նոր շրջան. Կոմմունիստական իշխանութիւնը ազատ ապարէզ է տալիս մասնաւոր կապիտալին՝ ոչ միայն առեւտրի, այլ և արդիւնաբերութեան մէջ... Նա, որ միաժամանակ վայրենի մոլեռանդութեամբ կոչ էր արձակում գիւղացիներին, պրոլետարներին. «թալանեցէ՛ք թալանածը», այժմ յորդորում է նրանց.

— Հարստացէ՛ք...

Բոլշէվիկները դիմում են գիւղին և ասում. — զարգացրէ՛ք կապիտալիստական յարաբերու-

թիւններ, աշխատեցէք և արտադրեցէք, ինչպէս կ'ուզէք, միայն թէ հարստանաք և ստեղծէք երկրի մէջ հարստութիւններ, ապա թէ ոչ «պրոլետարիատի դիքտատուրան» չի կարող ապրել...

Բոլշէվիզմը ազատ ճամբայ է տալիս մասնաւոր դրամագլխին, այսինքն բացառում է ինքզինքը,—մխիթարուելով նրանով, որ հողը և խոշոր արդիւնաբերութիւնը մնում են տակաւին պետութեան սեփականութիւն ու մենաշնորհ...

Նէօնէպը արդէն լիակատար ժխտումն է կոմմունիստական վարդապետութեան։ Այդ նահանջն եւս բոլշէվիկները արին վախից, մուժիկի սպառնալիքների տակ. ինչպէս որ նէպն էլ 1921-ին որդեգրեցին Կրոնշտատի ապստամբութեան ճնշման տակ...

Դիքտատուրան փրկելու համար խստագոհաբերեցին կոմմունիզմը։ Դարձան մասնաւոր կապիտալի ու մասնաւոր սեփականութեան ջատագով. փոքր ինչ «խելօքացան», բայց ի՞նչ գնով... Արեան հեղեղների։

Նէօնէպը զգալի զարկ տուեց առեւտրին ու արդիւնաբերութեան, փոքր ինչ կեանք ներշնչեց կիսանդամալոյծ Տիտանին։ Տիտանը չափազանց վայրենի էր — խակ ու կոպիտ — որպէսզի կարողանար գրկել ու մարսել սոցիալիզմի մեծ վարդապետութիւնն ու իրաւակարգը, որոնք կը վերապահուին աւելի հարուստ և տնտեսապէս ու կուլտուրապէս շատ աւելի զարգացած երկրների համար...

Գիւղատնտեսական արդիւնաբերութեան

ծաւալը, Ռուսաստանի մէջ, ըստ նորագոյն վիճակագրութեան, հասել է նախապատերազմեան ծաւալի 72 o/o-ին։ Եւ այդտեղ էլ կանգ է առել։ Այլ եւս դժուար կարող է բարձրանալ։ Զմոռանանք, որ երկիրը դեռ գտնւում է աւերածութեան վիճակի մէջ. չկան, քիչ են հաղորդակցութեան միջոցները, տրդիւնաբերութեան գործիքները, մեքենաները և այլն։ Եւ, որ ամենէն սարսափելին է, չկայ վարկ։ Հսկայական միջոցներ են պէտք բոլշէվիկեան աւերածը շտկելու համար, — նոր ճամբաներ, գործարաններ, մեքենաներ շինելու և այլն։ Բայց ո՞ւր է դրամագլուխը... Պատերազմից առաջ Ռուսաստանը արտահանում էր այլ և այլ գործուածքներ միլիարդների արժէքով, այսօր արտահանում է հազիւ միայն $^1/_5$-ը նախկինի։ Դրամագլուխ կարող էր տալ միայն Եւրոպան, իսկ նա չի տայ. քանի դեռ կ'ինչխեն Ռուսաստանում Բուխարիններն ու Ստալինները...

Եւրոպական կապիտալիստները բնաւ չեն հրապուրուում ռուս կոմմունիստների առաջարկած շնորհներով. կոնցեսիաներով և այլն։ Վասն զի ռուս պետական իրաւակարգը բնաւ սեւէ վստահութիւն չի ներշնչում նրանց։ Բոլշէվիզմը չի տալիս նրանց և չի էլ կարող տալ սեւէ երաշխիք՝ թէ Ռուսաստան ներմուծուած եւրոպական դրամագլուխը կ'ունենայ իւրօք գործելու, շրջանառելու հնարաւորութիւն, ապահովութիւն ու ազատութիւն։ Եւրոպացիք բնաւ վստահ չեն, թէ իրենց կառուցած արդիւնաբերութիւնը Ռուսաստանի կենտրոննե-

ռում ու ծայրերում՝ չպիտի քանդուի ու յա-
փշտակուի աւարառու, անիշխանական տար-
բերի ձեռքով, չպիտի ենթարկուի սովէտական
ամենակուլ բիւրօկրատիայի քմահաճոյքներին
և մի գեղեցիկ օր նոյնիսկ չպիտի բռնագրաւ-
ուի...

Նէօնէպը փոքր ինչ, այո՛, կենդանութիւն
կը մացնէ կիսամեռ օրգանիզմի մէջ, «բուր-
ժոյները», վաշխառուները, «կուլակները» կը
բարգաւաճին, կը տեսնենք քիչ թէ շատ լայն
առեւտրական յարաբերութիւններ, կը տես-
նենք կապիտալիզմի քիչ-շատ զարգացում ու
առաջադիմութիւն, բայց ընդհանուր ժողովրդ-
ական բարօրութիւն—ո՛չ երբեք... քանի դեռ
կանգուն է սովէտական Դիքտատուրան։

*
* *

Այդպէս օդը ցնդեց անլուր աղէտների մէջ
կոմմունիստական աշխարհաշինութեան ամ-
բողջ սիստէմը կարմիր Ռուսաստանում,—սիս-
տէմը մի մարդու, որին բոլշէվիկ հաւատա-
ցեալները չահախնդիր հիացմունքով հռչակե-
ցին, որպէս ամենամեծ յեղափոխականը մարդ-
կային պատմութեան...

Եւ երբ պարզ, միամիտ ռուս գործաւորը
հարց է տալիս կոմմունիզմի պարագլուխներին՝
էլ ինչո՞ւ կործանեցինք, արեան հեղեղների
մէջ թաղեցինք մեր բուրժուազիան, եթէ վե-
րստին պիտի ստեղծէինք նոյն դասակարգը.
ինչո՞ւ սովի ու բնաջնջումի մատնեցինք մի-

լիոնաւոր ժողովուրդ յանուն սոցիալիզմի իրա-
կանացման, եթէ կապիտալիզմը պիտի վերա-
ծնէր և աւելի եւս պիտի հեռացնէր մեզ սո-
ցիալիստական իրաւակարգից,—նրան մխիթա-
րում են պատասխանելով.

— Հանգի՛ստ եղիր, մեր այս նոր սիս-
տէմը, այո՛, կապիտալիզմ է, բայց սա մի
առանձին տեսակի բան է, սա պետական կա-
պիտալիզմ է, կամ, կ'ուզէք, պետական սո-
ցիալիզմ, ուր քաղաքականապէս իշխողը էլի
պրոլետարիատն է... քանի որ կառավարու-
թիւնը կազմում են սոցիալիստներ։

Սակայն այս տեսակ յայտարարութիւն-
ները չեն, որ կարող են սփոփել մերկ ու ա-
նօթի պրոլետարիատին։ և սվ որ պնդէ, թէ
այդ թշուառ պրոլետարիատը տէր է Ռուսաս-
տանի, թէ իրօք նրա դիքտատուրան է այնտեղ
թագաւորողը, գիտակցաբար կը կեղծէ ու կը
յեղաթիւրէ իրականութիւնը։

Վասն զի այդ «պետական սոցիալիզմի»
մէջ աշխատաւորը դարձեալ վարձկան է, ինչ-
պէս արեւմտեան երկիրներում, այն տարբե-
րութեամբ, որ արեւմտեան երկիրների մէջ,
աշխատաւոր քաղաքացին, գործաւորը կամ
դաշտային պրոլետարը, ընդհանրապէս անհա-
մեմատ աւելի է վարձատրւում իր աշխատան-
քի համար, աւելի կուշտ է ուտում և աւելի
տաք է հագնւում։ Ռուս պրոլետարը իր օրա-
վարձով հազիւ կարող է քարշ տալ մի սեւ,
թշուառ գոյութիւն։ Ինչպէս հին ցարական
օրերում, նա այսօր եւս դեռ ատամների կըր-
ճատոցով է անցնում Մոսկուայի չքեղ ու լեցուն

խանութների առջևից, ուր ամբարուած են բոլոր այլազան կենսամթերքներն ու այլ բարիքները, որոնք իրեն համար չեն. և դիքտատորութեան անդամ պրոլետարը, «երկրի ճակատագրին տէր» զանգուածը դեռ ստիպուած է հանրային ճաշարանների ու բոլոր հաստատութիւնների մէջ—ուր նա սպասաւորում է—թշուառօրէն ձեռք երկնցնել բարեկեցիկ վայելողներին, բուրժուազիային՝ մի քանի կոպէկներ մուրալու համար... վասն զի ստացած օրավարձով չի կարող ապրեցնել իր ընտանիքը։

Վայելողը դարձեալ մի չնչին փոքրամասնութիւն է և ամենէն առաջ ինքը սովէտական բարձր պաշտօնէութիւնը, որ անգամ ամենազարհուրելի տարի ու թշուառութեան տարիներում, երբ Ռուսաստանի ժողովուրդները կոտորւում էին զանգուածօրէն, ինքն ապրում էր առանց զրկանքների, շրջապատուած կենսական բոլոր յարմարանքներով։

Վայելողը «ապեցներն» են, մասնագէտները և առհասարակ «պրոլետարական» արիստոկրատիան։ Դրանք բոլորը ունեցել են միշտ և ունին այսօր էլ՝ թէ առատ ամսական և թէ յարմարագոյն բնակարաններ։

ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԸ

Բոլշէվիզմը հպարտ էր մանաւանդ իր բնակարանային նոր սիստէմով։ Սկզբներում, սովէտական տիրապետութեան մեղրամիսի մէջ,

շատ չեփորեցին Եւրոպայում այդ բնակարանային ռէժիմի մասին, որ համարւում էր բոլշէվիկեան դրախտի առաջին քարիքներից մէկը։ Արեւմտեան պրոլետարիատը ցնծութեան ճիչեր էր արձակում, լսելով թէ ինչպէս Ռուսաստանի քաղաքներում լաւագոյն բնակարանները, սիրուն, հոյակապ բուրժուական ապարանքները դրուած են աշխատաւոր պրոլետարիատի տրամադրութեան տակ։

Այդ եւս կեղծիք էր։ Իրականութիւնը այդտեղ եւս բերաւ միայն յուսախաբութիւն։ Բնակարանային յեղաշրջումն եւս չկշտացրեց պրոլետարին, ոչ էլ ազատեց նրա ընտանիքը ցրտահարութեան պատուհաններից։ Իրենց ընդարձակութեամբ ու ճոխութեամբ հանդերձ, Ռուսաստանի տներն ու պալատները դարձեալ խիտ նեղ են գալիս աշխատաւոր մասսաներին։

Կացութիւնը հակիրճ ու առարկայօրէն բնորոշելու համար, մենք դարձեալ կը դիմենք սովէտական աղբիւրներին, որոնք ի հարկէ բնաւ չահ չունին իրենց ստեղծած իրականութիւնը մռայլ գոյներով ցուցադրելու։ Եւ սովէտական վկայութիւնները վերաբերում են բնակարանային այժմեան պայմաններին,—այն դրութեան, որ գոյութիւն ունի ութ տարուայ բոլշէվիկեան տիրապետութիւնից յետոյ։

1924 Մայիսին Մոսկուայում կատարուած անկետան (քննութիւն) ցոյց տուեց, որ 180 բանուորական ընտանիքներից միմիայն 2-ը ունին սեփական բնակարան։ 64-ը ունին -1ական կամ 2-ական սենեակ միայն, բազմաընտանիք բնակարաններում։ 4 ընտանիք ապ-

ռում են 2 սենեակի մէջ, այսինքն իւրաքանչիւր սենեակում՝ 2 ընտանիք։

Միջին հաշուով ամէն մի անկողնի մէջ պառկում են երեք հոգի։ Երբեմն 2-3 տղամարդ քնում են միաժամանակ մէկ անկողնում, շատերը պառկում են յատակի վրայ։ 117 երեխաներից միայն 34-ը ունեցել են իւրաքանչիւրը իր մահճակալը։ Շատ դէպքերում ամբողջ ընտանիքը բացի իր բնակած սենեակից չունի ուրիշ տեղ՝ կերակուր եփելու, կերակուր պահելու կամ տնտեսութեան այլ պէտքերի համար *)։

Քաղաքներից դուրս գտնուող գործարանային կազարմաները ներկայացնում են նոյն պատկերը, ինչ որ Յեղափոխութիւնից առաջ էր։ Ահա, օրինակ, թէ ինչպէս են ապրում Լենինի ու Տրոցկիի անունը կրող Ուրալեան հանքերում *).

«Այստեղ, գրում է բոլշեվիկ օրգանի թղթակիցը, ստեղծուած են բոլոր պայմանները՝ վարակիչ հիւանդութիւնների ծագման ու տարածման համար։ Չկան այստեղ նշաններն անգամ այն հաճելի յարմարաւորութեան, որ տնքան անհրաժեշտ է վատառուրաց ու յոգնատանջ մարդու բարոյական և ֆիզիքական հանգստի համար։ Բնակարանները տեղ-տեղ այնպէս են լեփ-լեցուն, որ անգամ ճնշմամեղէնը չորցնելու ամենանուազ տեղերը դարձած են բնակատեղիներ։ Ընդհանուր կաղարմաների մէջ տիրում է կեղտ ու անկարգութիւն։ Նրանցից մէկը նախկին ախոռատուն է... Ջրաբը ցուրտ է նրանց մէջ... լուսամուտների ապակիները ջարդուած... Լայն»

*) Տրուդ (սովէտ. Թերթ) 11 Յուլիս 1924 թ.

*) Նկարագրուած է սովետական «Գիգիենա Տրուդոյի Թղթակցի ձեռքով, 1923 թ. 10–11.

Եւ սովէտական թերթը յայտարարում է.

«Բնակարանային հարցը՝ ինչպէս առաջ, նոյնպէս և այսօր՝ մնում է չափազանց ցաւոտ...»։

Քիչ չատ յարմար բնակարաններ ունի միայն աշխատաւորների չնչին, առանձնաշնորհեալ մասը մեծ քաղաքներում. մինչ ճնշող մեծամասնութիւնը ապրում է առաջուան պէս անտանելի պայմաններում։

Առանձնաշնորհեալ տարրին են վերապահուած և պերճանք ու վայելքները։ Մոսկուայում և այլ քաղաքներում թագաւորող զեղխութեան ու խրախճանքների մասին միմիայն Եւրոպայի բուրժուական մամուլի թղթակիցները չեն, որ գրում են։ Նոյն ինքը սովէտական պաշտօնաթերթն է — «Իզվեստիա» — որ հրատարակում էր դեռ 1921 թ. Նոյ. 11-ին, ահաւոր սովի միջոցին, այս սարսափելի վկայութիւնը.

«Անգամ ամենահարուստ կապիտալիստական երկրում չկայ այնքան սանձարձակ զեղխութիւն, այնպիսի ղուայլութիւն եւ այնպիսի պերճանք, որպիսին տիրում է մեր սովէտական բարձր պաշտօնեաների շրջանում եւ նոր թրխնուած բուրժուազիայի մէջ։ Փարիզում, Լօնդոնում, Նիւ Եօրկում այդ պերճանքը տիրում է առատութեան մէջ, իսկ մեզ մօտ նա բազառում է մի չլսուած աղքատութեան եւ մի երբեք չտեսնուած սովի միջոցին»։

Եւ այդ քաղուածքը բերող Դանը, մէկը ռուս սոց.-դեմ. կուսակցութեան պարագլուխներից, որ բնաւ անհաշտ հակառակորդ չէ ռուսական Սովէտների, աւելացնում է.

«Այն ժամանակից ի վեր անբարոյականութիւնն ու պերճանքը աւելի անել են։ Քաղաքների փողոցներում փայլում են վանառատները, սրճարանները ու ճաշարանները։ Թատրոններ, կաբարեներ, պարի ու խաղի դահլիճներ... դրուած են հարուստների տրամադրութեան տակ, իսկ այդ վերջինները դրուած են կարմիր միլիսի (քաղաքապահ զօրքի) մի առանձին հատուածի հովանաւորութեան ներքոյ...*)։

*) Th.Dar, Arbeiter in Sowietrussland, Berlin, 1923, էջ 35։

ԱՐԵՒՄՏԵԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՀԱՄԱՑՆԱՎԱՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԱՐԵՒՄՈՒՏՔՈՒՄ

Առաջին շրջան.— Մոսկուայի հիպնոզը տգեմաեան պրոլետարիատի մէջ.— Բոլշեվիկեան փոքրերը մի շարք երկիրներում և ազէտաւոր վիժումը.— Կոմունիստական շարժումը Իտալիայում.— Սերբատի ընդդէմ Մոսկուայի իտալական քաղաքականութեան.— Տուրատի բոլշեվիզմի մասին.— Լենին ընդդէմ Տուրատիի.— Իտալական կուսակցութիւնը և Մոսկուայի «պայմանները».— Ցեղափոխական անցքերը Իտալիայում.— Գործարանների գրաւում.— Լիբքնոխի կոնգրէսը.— Մոսկուայի բանագրանքը Տուրատիի հատուածին դէմ.— Կոնգրէսը վերջանում է պառակտումով.— Պառակտում նաև Ֆրանսիայում, Գերմանիայում.— Բոլշեվիզմը անզօր է անգլիական Labour Party-ի հանդէպ.— Կոմունիզմը Բուլգարիայում, Չեխոսլովակիայում.— Ֆիասկո ամենուրեք.—

Դէպի ո՞ւր...

Տեւականութեան ի՞նչ երաշխիքներ ունի այս սովէտական հասարակակարգը, ի՞նչ ոյժեր կարող են ամրապնդել կամ տապալել այն, բարձրացնել կամ խորտակել։

Ահա հարցեր, որ ամէն օր հոլովում են միլիոնաւոր լեզուներ, Ֆինլանդիայի սահմաններից մինչեւ Արաքսի հովիտը։

Գուշակութիւններ անելը դիւրին բան չէ, մանաւանդ Ռուսաստանի նկատմամբ, որ, ինչպէս ասում են, բոլոր կարելիութիւնների աշխարհն է։ Ամէն բան ակներեւ է. սովէտական

ռէժիմը իր ներկայ ձեւով չի կարող ապրել, յարատեւել, եթէ դրսի ազդակներ օգնութեան չհասնեն. եթէ արեւմտեան կապիտալիզմը չաջակցէ փոխառութիւններով և այլ ձեւերով և եթէ, մանաւանդ, արեւմտեան աշխատաւորութիւնն ու սոցիալիզմը օգնութեան չգան՝ նոյն բոլշէվիկեան յեղաշրջումը նիւթելով Արեւմուտքում։

Իրենք համայնավար առաջնորդները լաւ գիտեն այդ, ուստի և իրենց մեծագոյն յոյսը դրել են համաշխարհային վերիվայրումների վրայ։ Յիշենք վերսաին Տրօցկիի խօսքը.

«Այս պատերազմը փրել է ամբողջ կապիտալիստական աշխարհի հիմերը և այդ իրողութեան մէջ է մեր անպարտելի յոյսը։ Մեզ կաշկանդող իմպէրիալիստական օղակը պիտի փշրուի պրոլետարական յեղափոխութեամբ։ Մենք այլևս չենք կասկածում *)։

Մենք կասկածում ենք։ Արեւմուտքը բնաւ հասունցած չէ կոմունիստական յեղաշրջումների համար։ Աւելի եւս. Երրորդ Ինտերնացիոնալի դէմ, որ կազմուած է Ռուսաստանի հեգեմոնիայի տակ **), ծառանում է Արեւմուտքում ճշմարիտ ընկերվարական Ինտերնացիոնալը ***), որ վճռականորէն մերժում է Մոսկուայի ասիական մեթոդները և քաշում զանգուածները իր եռեւից։

Փոքր ինչ մանրամասնենք այս կարեւոր նիւթը. տեսնենք աշխատաւորական տրամա-

*) The History of the Russian Revolution։

**) Գլխաւորութիւն։

***) Սովորաբար կոչում են երկրորդ Ինտերնացիոնալ, թէև ոչ բոլորովին ճշգրիտ։

դրութիւնները աշխարհում, տեսնենք, թէ ի՞նչ է ներկայացնում Երրորդ Ինտերնացիոնալը այլ և այլ երկիրներում, թէ ի՞նչ փոխ-յարաբերութիւններ կան Երկրորդի և Երրորդի միջեւ և թէ սկսուած պայքարի մէջ ո՞ր կողմն են յաղթանակի հաւանականութիւնները։

Անտարակոյս. ռուսական Յեղափոխութիւնը զօրաւոր ցնցումներ առաջացրեց արեւմտեան աշխատաւորութեան մէջ և մեծ յոյսեր ծնեցրեց։ Պատերազմը, ինչպէս տեսանք, արդէն իսկ դժգոհութեան փոթորիկ էր հանել ընդդէմ բուրժուազիայի։

Պետերբուրգում գումարուած համառուսական Սահմանադիր Ժողովը գրեթէ ամբողջովին ընկերվարական էր...

Նորածին պետութիւններն անդամ, կենտրոնական Եւրոպայից մինչեւ Անդրկովկաս, թէև չատերը տակաւին յետամնաց, ընդունեցին մեծ մասամբ ռամկավարական սահմանադրութիւն ընկերվարական գունաւորումով։

Եւ երբ բոլշէվիզմն էլ տիրեց Ռուսաստանում, երբ Կրէմլի արքայական ապարանքներում բազմեցին ծանօթ ընկերվարական դէմքեր՝ Լենին, Տրօցկի, Լունաչարսկի ևն., արեւմտեան աշխատաւորութիւնը, առանց իրազեկ լինելու Ռուսաստանի անցուդարձին, կարծեց թէ իրօք պրոլետարիատն է այնտեղ իշխողը և խանդավառութիւնը, մանաւանդ ձախակողմեան տարրերի մէջ, ահագին էր։ Մայր-ձախակողմեաններ ծափահարելով չգոհացան և ուզեցին գործի դիմել անմիջապէս, ապատամբել, քարոզ քանդ անել հին աշխարհը և իրականացնել

սոցիալիզմը։ Այդ նպատակով կազմուեցան բոլոր արեւմտեան երկիրներում կոմմունիստական, բոլշեվիկեան կուսակցութիւններ, որոնք փարեցին Մոսկուային, և Երրորդ Ինտերնացիոնալի շարքերը արագ-արագ աճեցին։

Հէնց որ, սակայն, նրանք խոսքից անցան գործի, ծայր տուեց յետադարձ հոսանքը և կոմմունիզմի ու համաշխարհային յեղափոխութեան բանակը յետ նահանջեց, ճարակուած, ու հետզհետէ փոքրացաւ։

Բոլշեվիկեան յեղափոխութեան փորձը չարաչար վիժեց նախ Գերմանիայում, ուր Կարլ Լիբկնեխտ և Ռոզա Լիւքսեմբուրգ 1918-ին սկսեցին բուռն ագիտացիա, խորհելով, թէ արդէն կատարուած յեղաշրջումին կարող է իսկոյն յաջորդել ընկերային, դասակարգային յեղաշրջումը և աշխատաւորութեան դիքտատուրան։

Ագիտացիան, քաջալերուած Մոսկուայից, յանգեց ապստամբութեան։ Ապստամբութիւնը իսկոյն խեղդուեց արիւնի մէջ և երկու պարագլուխները սպանուեցան։

Արեան բաղանիքների մէջ խեղդուեց նաեւ Ունգարիայի համայնավար շարժումը։ Այնտեղ սակայն, բոլշեվիզմը փոքր ինչ աւելի բախտաւոր եղաւ. յաղթանակեց և մի քանի ամիս էլ ապրեց։ Բէլա Կունի ղեկավարութեամբ հաստատուել էր «պրոլետարիատի դիքտատուրա»։ Չաւէշտ էր... Վասն զի Ունգարիայի ընդհանուր տնտեսական ու սոցիալական պայմանները նոյնքան աննպաստ էին կոմմունիզմի փորձերի համար, որքան Ռուսիայինը։

Անգամ Զուիցերիայում համայնավարութիւնը հող գտաւ ծաւալուելու։ Զուիցերիայ ընկերվարական հինաւուրց կուսակցութիւնն եւս, խանդավառուած Ռուսիայ օրինակով, յաքեց Երրորդ Ինտերնացիոնալին և արդէն 1918-ի վերջերին մի ուժեղ փորձ արեց «պրոլետարիատի դիքտատուրան» իրականացնելու։ Կազմակերպուեց մի ընդհանուր գործադուլ, որի նըմանը գուցէ չէր եղած այդ երկրի տարեգրութեան մէջ։

Բայց այդ շարժումն եւս անմիջապէս զսպուեց և նոյնիսկ գիւղացիներն էին, որ ապառազէն, կատղած խմբերով նեռւում էին դէպի քաղաքները՝ պատժելու խռովարարներին։ Ալպեան փոքրիկ հանրապետութիւնն եւս —էապէս գիւղացիական մի երկիր, դարերով սնուած ազատութեան պաշտամունքով—հասկացրեց, որ բնաւ որամադիր չէ ճաշակելու ռուսական կվասը...

ԿՈՄՄՈՒՆՆԻՍՏԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԻՏԱԼԻԱՅՈՒՄ

Ուժգին անդրադարձումներ ունեցաւ ռուս յեղափոխութիւնը Իտալիայում։

Գերմանիան, Ունգարիան, Ռուսաստանի պէս, պարտուած երկիրներ էին, ուր բնականաբար աւելի խոր էր զանգուածների զժգոհութիւնն ու ատելութիւնը դէպի իշխող դասակարգերը, ուր բուրժուազիան իսպառ վարկաբեկուած էր և ուր, հետեւաբար, աւելի

ուժեղ էր նաեւ ձգտումը՝ թօթափելու միանգամ ընդ միշտ անհանդուրժելի լուծը կապիտալիզմի ու բուրժուազիայի, որոնք շղթայազերծել էին համաշխարհային պատերազմը և անլուր չարիքներ նիւթել աշխատաւոր ժողովուրդների համար։

Իտալիան դաշնակից պետութիւն էր, ուրեմն յաղթող պատերազմի մէջ։ Բայց Իտալիայում չատ կային պայթուցիկ նիւթեր և ընկերվարական կուսակցութիւնը ուժեղ էր, տոգորուած յեղափոխական ձգտումներով։

Ուժեղ էր նաեւ Արհեստակցական Միութիւնը։ Ամբողջ ընկերվարական կուսակցութիւնը հանդիսաւոր կերպով, համագումարի որոշումով, յարեց Երրորդ Ինտերնացիոնալին, այսինքն Մոսկուային։

Իտալիայի օրինակը ամենէն հետաքրքրականն ու հրահանգիչն է և մենք մօտիկից հետեւել ենք իտալական շարժումներին, ուստի թող թոյլ տրուի փոքր ինչ երկար կանգ առնելու նրանց վրայ։

1919-ի Մարտին, կուսակցութեան վարիչ մարմինը ճնշող մեծամասնութեամբ վճռեց դուրս գալ Միջազգային Ընկերվարական Բիւրօից և ընդունեց ռուս բոլշեվիկեան նշանաբանները։ Այդ ծանրակշիռ որոշման մեծապէս նպաստեց Սերրատի, Իտալիայ սոցիալիստական շարժման ամենափայլուն դէմքերից մինը, որ արդէն այցի էր գնացել սովէտական Ռուսաստան, ուրիշ մի քանի իտալացի սոցիալիստների հետ։ Ուխտագնացութեան խանդավառ շրջանն էր, Մոսկուան—նոր Մէքքա...

Միաժամանակ Ֆրանսիայից եւս Մոսկուա էր գնացել սոցիալիստների մի պատգամաւորութիւն, գլուխ ունենալով Մարսել Կաշէն և Ֆրոսսարդ, որոնք շրջագայեցին ամբողջ սովէտական Ռուսաստանում և ծանօթացան նոր կարգերի հետ։ Գնացել էր և անգլիական պատգամաւորութիւն։

Բոլոր պատգամաւորները վերադարձին մամուլի մէջ գրեցին իրենց տպաւորութիւններն ու ուսումնասիրութեան արդիւնքը. ոմանք՝ դրական ու վարդագոյն, ուրիշները՝ բացասական և յոռետես։

Սերրատին բնաւ խանդավառներից չէր։ Նա չէր թագցնում սովէտական կարգերի և արտաքին ու ներքին քաղաքականութեան արատները։ 1921-ի ամառը Հռոմում երկար զրոյցի մէջ, նա պատմում էր ինձ դառնութեան ու ցաստմի շեշտերով Սովէտների արեւելեան և իսլամական քաղաքականութեան մասին, որը նրա կարծիքով միանգամայն հակասոցիալիստական է։

«Երբ հասայ Մոսկուա, ասում էր Սերրատի, ինձ համար ցաւոտ անակնկալ էր՝ տեսնել մեր ռուս կոմունիստ ընկերների շրջաններում Էնվէր փաշային... և ես հաղորդեցի Լէնինին իմ զարմանքն ու վրդովմունքը...»։

Ուրիշ շատ բաներ Մոսկուայի մէջ հրում էին Սերրատիին. այնուամենայնիւ, նա յայտնի վերապահումներով յարել էր Մոսկուայի Ինտերնացիոնալին և աշխատել էր մտցնելու ամբողջ իտալական կուսակցութիւնը։

Իսկ Մարսէլ Կաշէն և Ֆրոսսար *) Ռուսաստանից Փարիզ վերադառնալով, առանց վերապահութեան ներբողեցին սովէտական յեղափոխութիւնը և սկսեցին բուռն ագիտացիա՝ Ֆրանսիոյ սոց. հատուածը մացնելու Երրորդ Ինտերնացիոնալի գիրկը։

Հետաքրքրական է մեր նոյն վերոյիշեալ զրոյցի մէջ Սերրատիի յայտնած կարծիքը Կաշէնի ու Ֆրոսսարի մասին.

—«Մենք միասին պատեցանք Ռուսաստանը, եղանք Վոլգայի նահանգներում, եղանք և հարաւում։ Մեր ամէն մի քայլափոխին Կաշէնն ու Ֆրոսսարը, սովէտական ռէժիմի ստեղծած աւերածների հանդէպ, բացագանչում էին վրդովուած. «C'est fou! c'est insensé», (Սա խելագարութիւն է, սա անմտութիւն է)։ Եւ զարմանում եմ, որ այժմ Փարիզ վերադարձած այդ ֆրանսիացի ընկերները անվերապահ գովքն են անում սովէտականութեան...»։

Աւելացնենք, որ ինքը Սերրատին ի վերջոյ ստով գլխով մտաւ Լէնինեան փարախի մէջ, և, իր հայրենիքում հալածական, գրեթէ միշտ ապրեց Մոսկուայում **)։ Ուշագրաւ են մետամորֆոզի ***) այդ փաստերը։ Ընկերվարական այդ բոլոր դէմքերը, Սերրատի, Կաշէն, Լացցարի, Մաֆֆի, վերջերս նոյնիսկ

*) Առաջինը այժմ պարագլուխն է Ֆրանս. կոմունիստ կուսակցութեան, երկրորդը հեռացած է որդէն կուսակցութիւնից։

**) Նորերս վերադարձաւ Իտալիա և այնտեղ վախճանուեց։

***) Կերպարանափոխութիւն։

Տրէտ. Իւնիոնիզմի քանի մը առաջնորդներ, Ռուսաստանի մէջ թռուցիկ պտոյտից յետոյ, խորապէս, անշուշտ, տպաւորուում են ռէժիմի ահաւոր տարկանոնութիւններից, հանուր աւերածի, փրկութեան ու թշուառութեան տեսարաններից, բայց և ըստ երեւոյթին խորունկ տպաւորութիւն է գործում նրանց վրայ և այն իրողութիւնը՝ որ մեծածաւալ կայսրութեան գլուխը, այնուամենայնիւ, կանգնած են ընկերվարական դէմքեր, որ վեհաշուք Կրէմլի ապարանքներում երէկուայ ցարի ու մեծ իշխանների տեղ՝ բազմած են Տրօցկիներն ու Կամենեվները, որ այնտեղ, այդ ապարանքներում, տեղի են ունենում աշխարհի կարմիր յեղափոխականների կոնգրէսները...

Այս հանգամանքը շատ է շոյում ընկերվարական մարդկանց տեսողութիւնը և նրանք, հակառակ բոլոր յուսաբեկող ատուերների, սիրում են օրօրուիլ պատրանքով՝ թէ այս բոլորը ժամանակաւոր է և թէ շուտով, այնուամենայնիւ, պիտի քալէ սոցիալիստական վերաշինութեան մեծ գործը...»։

Եւրոպացի բոլշէվիկ ու կիսաբոլշէվիկ ուղեւորները սիրով կիրառում են այդ տակտիկական կեղծիքը, գովում, դրուատում են ռուս բոլշէվիկեան իրաւակարգը իրենց երկիրների պրոլետարիատի առջեւ, խորհելով, որ, այսպէս թէ այնպէս, 132 միլիոն ժողովուրդ ունեցող Ռուսաստանի տէրը այսօր ընկերվարականներ են և որ նրանց օգնութեամբ հնարաւոր պիտի լինի թերեւս բռնկեցնել աշխատաւորական յեղաշրջումը նաեւ Արեւմուտքում...

Ոչ մէկը նրանցից համոզուած չէ, թէ իրօք Ռուսաստանում պրոլետարիատն է կացութեան տէրը և թէ նա այսօր աւելի երջանիկ է, քան ցարի օրով... Ո՛չ ոք — ոչ իսկ այդ ահագնաժողովուրդ ու կարմրաշանթ Մաֆֆին *), որ մի օր իտալական պարլամենտի դահլիճներից մէկում, ուրիշ սոցիալիստ երեսփոխանների հետ ուշի ուշով ունկնդրում էր մեր մի բանախօսութեան, կատարուած իրենց հրաւէրով, բոլշեւիկեան բռնութիւնների մասին Հայաստանի մէջ և ի հարկէ միանգամայն թերահաւատ չէր իր լսած փաստական զեկոյցի հանդէպ, որը պարզում էր իր շուարած աչքերի առջեւ մի զզուելի տեսարան, — Հայաստանի բռնի նուաճումը և հայ անկախութեան խոշտանգումը՝ կոմունիստների և իրենց դաշնակից թիւրքերի ձեռքով...

Այնուամենայնիւ, հանդէպ իրենց բուրժուազիայի, հանդէպ ֆաշիստ կառավարութեան՝ այդ անոյշ երազողները — Մաֆֆի և ընկերներ — ամէն առթիւ պարլամենտի մէջ հռչակում են ռուսական դրախտի սքանչելիքները։

Աւելի սկեպտիկ և թերահաւատ են, Սերրատիի հետ, Ռուսիա այցելող միւս իտալացի առաջնորդները, Նոֆրի և մանաւանդ Դորագօնար, որ հեղինակաւոր պարագլուխն է Իտալիայի հոյակապ Աբիսեստակցական Միութեան և որի ջանքերով գլխաւորապէս այդ մեծ զանգուածը սթափուեց իր վայրկենական

*) Իտալական պարլամենտի անդամ և կոմունիստական պարագլուխ։

մոլորանքից և հեռու մնաց բոլշեվիզմից ու Երրորդ Ինտերնացիոնալից։

Սակայն, ինչպէս ասացի, ռուսական յեղաշրջման սկզբներում Եւրոպայի մէջ ամէնքն էին քիչ թէ շատ բռնուած բոլշեվիզմի հիպնոզով, ի բաց առեալ քանի մը խոշոր և հեռատես պարագլուխներ, — և դրանց մէջ էր իտալական սոցիալիզմի հին ու պատկառելի առաջնորդը, Ֆիլիպպօ Տուրատի։ Նա սկզբից իսկ, իր ահագին ժողովրդականութիւնը կորցնելու ռիսքով յայտարարեց, որ բոլշեվիզմից, համայնավարութիւնից ոչինչ չի դուրս գայ քաջի աւերածից, որ ռուսական յեղափոխութիւնը աշխատաւորութեան յաղթանակ չէ, որ դա սոցիալիզմ չէ, ոչ էլ կոմունիզմ, այլ միանգամայն հակարնկերվարական մի հոսանք, միջնադարեան հաւատաքննութեան ու բարբարոսութեան մի յետադարձ շարժում։

Հեղինակաւոր սոցիալիստի այդ խայթիչ գնահատականը պաղ ջուր ցանեց Քրեմլի ասիական սոցիալիզմի ինքնահաւան քուրմերի վրայ։ Ահա թէ ինչ է գրում Տուրատիի մասին ինքը Լենին, իր մի գրքի մէջ *)։

«Գ. Գ. Տուրատի, Թրեվէսի, Մոգիլիանիի, Դուգոնիի և ընկերութեան քաղաքական աշխատանքը... ծայրէ ի ծայր սոցիալ-դաւաճանութիւն է...

... Իտալիայի ընկերվարական կուսակցութիւնը եթէ իրօք կ'ուզէ յարիլ Երրորդ Ինտերնացիոնալին, պէտք է դուրս քշէ խայտառակօրէն Տուրատիին ու

*) Lenin, "L'Estremismo", malattia d'infanzia del Communismo, Milan 1921. էջ 95։ Բնագիրը չունենալով ձեռքս տակ, օգտւում եմ իտալերէն թարգմանութիւնից։

իր ընկերներին և դառնալ կոմմունիստ կուսակցութիւն ոչ միայն անունով, այլ և գործով։

Տուրատիի գաղափարակից եղան՝ Թրէվէս, Պրամպոլինի, Մաթէօթի **) և այլն, ամէնքը փայլուն ու ազդեցիկ ընկերվարական առաջնորդներ։ Երբ նրանք տեսան, որ անկարող են դիմադրել իրենց երկրի մէջ Մոսկուայի գործադրած զանգուածային հիպնոզին, համակերպեցան և մինչև իսկ—կուսակցութիւնը ձեռքից չտալու համար *) — իրենք ևս դժկամ սրտով հետևեցին զանգուածին և ձեւականորէն մտան Երրորդ Ինտերնացիոնալի մէջ (գիտէին Թերեւս, որ այդ մուտքը ժամանակաւոր հանգամանք ունի և որ զանգուածը շուտով պիտի լուսախաբուէր ու գարձի գար)։

Բայց երբ Մոսկուան փորձեց իր խնամակալութեան տակ առնել Իտալիայի ընկերվարական շարժումն ու կուսակցութիւնը, երբ Երրորդ Ինտերնացիոնալի գործադիր մարմինը հասկացրեց, որ իտալացիք պէտք է շարժուեն Մոսկուայի ղեկավարութեամբ ու հրահանգներով, այն ժամանակ Տուրատիները քարձրացրին անողոք պայքարի դրօշը։

Մոսկուայի հրահանգները ամփոփուած էին հռչակաւոր 21 կէտերի մէջ, որ պարտադիր ու անպայման պէտք է ընդունէին բոլոր երկիրների ընկերվարական կուսակցութիւնները՝ համերաշխօրէն ընդհանուր յեղափոխութիւն բանկեցնելու համար։

Այդ դժբախտ 21 կէտերից բխեցին անբաւ չարիքներ արևմտեան աշխատաւորական շարժման համար։ Մոսկուայի այդ յաւակնոտ ուղղը պատճառ եղաւ անհաշիւ պառակտումների, որոնք մինչև օրս մեծապէս կաշկանդում են արեւմտեան ընկերվարական շարժումը, բաժնելով այն մի շարք իրարու հակամարտ բանակների։

Սերրատի բերաւ Մոսկուայից այդ պառակտիչ վաւերագիրը Իտալիայի իր ընկերներին։ Երկար կը լինէր 21 կէտերը մի առ մի յիշատակել։ Մոսկուան թելադրում էր ի միջի այլոց՝

Դուրս վտարել կուսակցութիւնից չափաւոր և ռէֆորմիստ համարուած պարագլուխներին, Տուրատիին, Թրէվէսին, Մաքսիմիանիին (նմանապէս Մոսկուայի քաւրմերը պահանջում էին՝ Ֆրանսիայում արտաքսել Լոնգէին, Իրնոդէլին ու նմաններին, Անգլիայում՝ Մաքդոնալդին ու Հենդերսոնին, այսինքն Labour Party-ի ամենէն սիրուած և ամենէն հեղինակաւոր ղեկավարներին. Գերմանիայում՝ Կաուցկիին և նրա բոլոր համախոհներին, Բելգիայում՝ Վանդերվելդին և այլն)։

Մոսկուան պահանջում էր՝ անպայման փոխել կուսակցութեան անունը, ընդունել «կոմմունիստ» յորջորջումը։

Մոսկուան հրահանգներ էր տալիս, թէ ինչպէ՞ս պէտք է վարել դասակարգային կռիւը, ինչպէ՞ս ոտքի հանել գաղութները, ինչ-

**) Նահատակուած ֆաշիստների ձեռքով։

*) Կուսակցութեան ստեղծողներն գլխաւորապէս Տուրատի և իր մի խումբ գործակիցներն են (Առաջնակարգ դեր են ունեցել նաև հանգուցեալ Անդրէա Կոստա—հիմնադիրներից—և Բիսոլատի)։

պէս մղել պրոպագանդ և ագիտացիա գիւղացի ազգաբնակութեան մէջ, բանակի մէջ և այլն։

Այդպէս — 21 կէտից բաղկացած մի հաւատամք։

Մոսկուայի դիքտատորներին ի պատասխան, Տուրատի հպարտօրէն բացագանչում էր.

—«Մենք չենք կարող թոյլ տալ, որ Իտալիան դարձնեն մի տեւէ ռուսական նահանգապետութիւն...»։

Իսկ մի այլ թերթ գրում էր.

— «Իտալական սոցիալիստների դէմ հրատարակուած է բանադրանք Ասիայի Լէնկթիմուրների կողմից։ Ցայտնի է, որ Ասիան աւելի հարուստ է անապատներով, սովի և աղէտների տեսարաններով, քան թէ արդարութեան, բարօրութեան ու քաղաքակրթութեան պատկերներով...»։

Ցիրաւի գռեհիկ ու անհանդուրժելի մի յաւակնութիւն էր, երբ ռուս կոմմունիստները, որ դեռ երէկ իրենց հարիւր միլիոնաւոր ժողովրդի հետ թաւալում էին միջնադարեան սարկութեան ու խաւարի ծոցում և այսօր, պատմական բացառիկ հանգամանքներից նը-պաստաւորուած, իրենց ձեռքն էին առել իշխանութիւնը,— անհանդուրժելի էր, երբ նրանք գալիս ու ասում էին դարաւոր քաղաքակրթութեան տէր բարձր ու ռամկավար երկիրների — Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի — կուսակցութիւններին.

— «Դուք այսուհետեւ մե՛զ պիտի հնազանդուէք, մե՛նք պիտի ղեկավարենք ձեր

շարժումները Մոսկուայից, մե՛նք պիտի վարենք ձեր երկրի ճակատագիրը»։

*

* *

Մինչ Մոսկուան ղրկում էր իտալական սոցիալիստներին իր օրոտուն շրջաբերականները (1920 թ.), պահանջելով արտաքսել աջակողմեան տարրերը, Իտալիայում տեղի էին ունենում ծանրակշիռ անցքեր։ Գործադուլները պայթում էին գրեթէ ամէն օր երկրի բոլոր կենտրոններում, հաղորդակցութիւնը ատէպատէպ կանգ էր առնում, արդիւնաբերութիւնը՝ նմանապէս. ծայրայեղ տարրերը խլացրնում էին մթնոլորտը յեղափոխական լոզունգներով, կոչ էին անում՝ բուռն հարուածով տապալել իշխող կարգերը և հաստատել Սովիէտներ, Ռուսաստանի օրինակով... Պարլամենտական ընտրութիւնները ճամբեցին 155 հոգի ընկերվարական երեսփոխաններ Ազգային գերագոյն Խորհրդարանը։ Նրանց մէջ ճնշող մեծամասնութիւնը կարմիրներ էին, «դէպի Մոսկուա՛» աղաղակողներ... Ամիսներով երկիրը ծփում էր ալեկոծութեան, անիշխանութեան և քաոսի մէջ։ Վայրկեաններ կային, երբ թւում էր թէ կառավարչական մեքենան ահա պիտի իսպառ անդամալուծուի և Իտալիան պիտի դառնայ երկրորդ Ռուսաստան...

Կատաղուեց նոյն իսկ անհաւատալին։ Բուրժուական կառավարութեան աչքերի առջեւ, կազմ ու պատրաստ հարիւր հազարաւոր

բանակի առջև, մեռաղազգոծ աշխատաւորները Թորինոյի շրջանում, մի գեղեցիկ օր գրոհ տուին զանգուածներով դէպի ահագին գործարանները, դուրս քշեցին տէրերին և իրենց ձեռքն առան արդիւնաբերութիւնը...

Աննախընթաց խանդավառութիւն։ Մայրայեղ տարրերը խորհեցին, որ այս անգամ արդէն մօտ է «սովէտը», մօտ է «պրոլետարիատի դիքտատուրան» (Ուրիշ տեղեր գիւղական պրոլետարիատը գրաւում էր կալուածատէրերի հողերը)։

Միամիտ պատրանք էր։ Դուրս քշելով գործարաններից բուրժուա տէրերին և բուրժուազիայի ճարտարագէտներին ու ամէն տեսակ մասնագէտներին, աշխատաւորութիւնը, զուրկ տեփական մասնագէտներից և մասնաւանդ զուրկ դրամագլխից ու վարկից, արտաքին աշխարհի հետ ոչ եւ է յարաբերութիւնից, զուրկ բոլոր հնարաւորութիւններից, բնականաբար անկարող եղաւ քայլեցնելու արդիւնաբերութեան հսկայ մեքենան և մի քանի օր յետոյ, տեփական կաշուի մատակարարութիւնից զրկուած, վերադարձրեց գործարանները բուրժուազիային։ Սա իր տեսակի մէջ աննախընթաց ու եզակի փորձ էր ամբողջ Եւրոպայում։

Կառավարութեան գլուխն էր Ջիոլեատի, պառաւ աղուէսը, որ վարպետութեամբ տարաւ իր գործը։ Կառավարութիւնը չէզոք մնաց, ոչ մի միջամտութիւն զօրքի ու ոստիկանութեան կողմից, երբ մին միւսի ետեւից գրաււում էին հսկայական գործարանները։ Ջիոլեատի լաւ գիտէր, որ կոմմունիստների

փորձը պիտի վիժէր և — վիժեց։ Ընկերվարականներից շատերը զարմացան, որ զօրքը չմիջամտեց և այդ ահաւոր գործողութիւնն անցաւ առանց արիւնահեղութեան։ Ոչ մի տարակոյս. արիւնը պիտի հոսէր հեղեղով, եթէ իտալական աշխատաւորութիւնը յամառէր ու աւելի հեռուն գնար. վասն զի անզէն էր, զուրկ պաշտպանութեան ամէն միջոցից։ Աւելին կար. միջին դասակարգերն եւս տրամադրուած էին թշնամաբար դէպի գործաւոր դասակարգը, չնորհիւ չափազանց յամախակի գործադուլների, որոնք անդամալուծում էին հաղորդակցութիւնն ու առեւտուրը, կանգնեցնում էին կեանքը, տարածելով մշանջենական անապահովութեան զգացումը։

Աշխատաւորութեան փորձը վիժեց։ Իսկ եթէ հրաչքով բոլշեվիզմը յաղթէր և սովէտական կարգերը հաստատուէին Իտալիայի մէջ, երկիրը պիտի ենթարկուէր բլօկադի և ժողովուրդը, կտրուած քաղաքակիրթ երկրագունդից, պիտի մատնուէր զանգուածային սովամահի, աւելի մեծ աղէտների, քան Ռուսաստանը։ Վասն զի Իտալիան իր հացն անգամ դրսից է ստանում, ինչպէս և բազմաթիւ այլ կենսամթերքներ և արդիւնաբերութեան հում նիւթեր։

Ջիոլեատին խաղաղ ձեւով առաջին ուժեղ հակահարուածը տուեց իտալական բոլշեվիզմի սին երազներին (նրա գործը յետագայում շարունակեց — արդէն բռնի, դիքտատուրական միջոցներով — ֆաշիզմը, Մուսսոլինին, որ բաւական հարազատութեամբ ընդօրինակեց Մոս-

կուսայի վարչական մեթոդները՝ սոցիալիզմի ուրուականը սնչացնելու նպատակով)։

Եւ ահա կոնգրէս է Լիվոռնոյում։ Ընկերվարական կուսակցութեան հարիւրաւոր պատգամաւորները հաւաքուել են Իտալիայի բոլոր ծայրերից։ Պիտի որոշեն կուսակցութեան վարքագիծը համաշխարհային իրարանցումի այդ օրերին։ Պիտի պատասխանեն և Մոսկուայի դրած պահանջին։

Պահանջը կատէգորիկ է, վճռական, անվերապահ.

— Դո՛ւրս վտարել «աջակողմեաններին», այսինքն նրանց, որոնք հիմնել են կուսակցութիւնը, սնուցել, մեծացրել են այն և տասնեակ տարիներ վարել են նրա պայքարները... Տուրատի, Թրէվէս, Մոդիլեանի, Գրամպոլինի և ուրիշներ։ Հանդիսաւոր ու դրամատիկ վայրկեան էր։ (Վայրկեան, որ ունեցաւ ֆրանսիական ընկերվարական կուսակցութիւնը Մոսկուայի նմանօրինակ պահանջի հանդէպ)։ Ամբողջ Իտալիայի և, կարելի է ասել, ամբողջ սոցիալիստ Եւրոպայի աչքերը յառած էին դէպի Լիվոռնո։ Կոմունիստական Յեղափոխութիւնը վիժել էր Գերմանիայում, վիժել էր Ունգարիայում և ուրիշ տեղերում։ Խորտակւում էր «համաշխարհային յեղափոխութեան» մեծաշուաչ ծրագիրը և Լենինի ու Զինովիեվի վերջին յոյսը Իտալիան էր... Իտալիան՝ ուր ընկերվարական շարժումը նոյնքան խոր ու ծաւալուն էր, որքան իշխող դասակարգերը տկարացած և գլխակորոյս։

Մոսկուան սրատարոփ սպասում էր Լիվոռնոի կոնգրէսի ելքին։ Յեղափոխութիւնը Իտալիայում պիտի բռնկուէ՞ր ըստ Լենինի, եթէ իտալական կուսակցութիւնը անվերապահօրէն յարէր Երրորդ Ինտերնացիոնալին և շարժուէր Մոսկուայի հրահանգներով *)։

Համագումարին ներկայ են բոլոր հոսանքները։ Ճնշող մեծամասնութիւնը «միութենականներն» են։ Այսինքն այն շարքերը, որոնք, յարելով հանդերձ Երրորդ Ինտերնացիոնալին, դէմ են Մոսկուայի դրած պայմաններին, դէմ են Տուրատիների արտաքսման, դէմ են առհասարակ սեւէ արտաքին միջամտութեան և կողմնակից են իտալական սոցիալիզմի կուսմիութեան և ուրոյն, ավտոնոմ գործելակերպի։

Այդ հոսանքի ղեկավարն էր ինքը Սերրատի։ Նրա ժողովրդականութիւնը մեծ էր այդ օրերում։ Մոսկուայի ուխտադրուժն է նա, բայց և չի ուզում Լենինների խնամակալութիւնը։ Նրա դէմ կանգնած է զտարիւն կոմունիստների, բոլշեվիկների փոքրամասնութիւնը, Բոմբաչի, Մաչցի, Գրացիադեի և այլն։ Սրանք հաւատարիմ երկրպագուներն են Մոսկուայի։ Սրանք անպայման պահանջում են

*) Ուշագրաւ է, որ Իտալիայի ընկերվարական կուսակցութիւնը եղել է իրօք ամենէն զտարիւն ու անհաշտը Եւրոպայում՝ սոցիալիստական վարդապետութեան ու գործելակերպի տեսակէտից,— քանի որ ամբողջ կուսակցութիւնը, չափաւոր կոչուած Տուրատիից մինչև կոմունիստ Մաչցի, դէմ է եղել պատերազմի, դէմ է եղել Իտալիայի մասնակցութեան, պայքարել է բուռն կերպով յանուն խաղաղութեան և եղել է Ցիմմերվալդում։

հեռացնել ամենից առաջ Տուրատոիին։ Սրացն աչքում Սերրատին անգամ ուխտադրուժ է, ռէֆորմիստ է, հակայեղափոխական է։ Որով. հետեւ չի ենթարկւում կոյր զկուրայն Մոսկուայի պահանջներին։ Եւ որովհետեւ կողմնակից չէ անմիջական յեղափոխութեան և սովէտական դիքտատուրայի։

Գուցէ երբեք իտալական սոցիալիզմը չէր ունեցած աւելի փոթորկոտ մի համագումար։ Առաջին նիստերից մէկում բեմ է բարձրանում Մոսկուայից եկած Երրորդ Ինտերնացիոնալի յատուկ պատուիրակը։ Դա մի բուլգար է, Կաբակչիեվ անունով։ Բուլգար թէ սերբ, ռուս թէ հրէա, հայ թէ վրացի՝ բոլշէվիկը իր յատուկ դիմագիծն ունի, իր շարժուձեւերը, իր խօսելու տոնը, գոռոզ ու վէս, ամբարտաւան և կոպիտ։ Մոսկուայի կիսագրագէտ առաքեալը, իւրացրած անշուշտ սոցիալական գիտութեան ու փիլիսոփայութեան վերջին խօսքը, եկել էր Լիվոռնո՝ ամբիոնից դաս ու խրատ կարդալու... Տուրատիներին, որոնք իրենց գիտութեամբ ու իմացականութեամբ արեւմտեան ամբիոնների զարդն են։ Երեւոյթը պարզապէս grotesque էր, ծիծաղելիօրէն զաւեշիկ։

Եւ առաջին վայրկեանից իսկ՝ սրահի մէջ ստեղծուեց թշնամական տրամադրութիւն հանդէպ Կաբակչիեվի, որ ահագին թղթակոյտը ձեռին սկսեց կարդալ ֆրանսերէն Մոսկուայի պատգամները։ Թշնամական տրամադրութիւն՝ որ, ի հարկէ, ուղղուած էր Մոսկուայի վարիչների դէմ։ Թոյլ չտուին, որ աւարտէ ընթերցումը... Երկար էր ու տաղտկալի։ Դժգոհութիւն և

աղմուկ, նախագահի անընդհատ զանգահարութիւն։ Դեռ ընթերցումի կէսին չհասած, Կաբակչիեվ, ժողովի պահանջումով ստիպուած եղաւ իջնել բեմից։ Նրա փոխարէն բեմ ելաւ իտալացի մի կոմունիստ և կարդաց զեկոյցի իտալերէն թարգմանութիւնը։

Ի՞նչ էր ասում Կրէմլիի գործակալը։

Խօսում է երկաթօրէն ռուսական յեղափոխութեան մասին, վերլուծում է հասարակական կացութիւնը, տնտեսական, քաղաքական տագնապները, կանգ է առնում և Մոսկուայի արեւելեան քաղաքականութեան վրայ, պատասխանում է իտալական սոցիալիստների մեղադրանքներին, պարզում է, որ «Էնվէր փաշան, ճիշտ է եղել է Բաքու կօնգրէսի մէջ, բայց եղել է իբրեւ սոսկ հիւր և կարողացել է միայն կարդալ իր յայտարարութիւնը...»։

Բացատրում է, որ Բաքուի կօնգրէսը կոչ է արել տաճիկ բանւորներին ու գիւղացիներին՝ ապստամբելու, որ այդ կօնգրէսը դատապարտել է Թիւրքական նացիօնալիզմի պարագլուխներին և այլն։

Բացատրում է, որ Երրորդ Ինտերնացիոնալի գործադիր մարմինը չի բաղկացած միայն ռուսներից, որ այնտեղ կայ ամէն ազգի ներկայացուցիչ։ Ի վերջոյ, կատաղաբար յարձակում է աջակողմեան սոցիալիստների, «ռէֆորմիստների» *), «օպպորտիւնիստների» **) վրայ, պահանջում է, յանուն Մոսկուայի, նրանց արտաքսումը... Ռէֆորմիստները, ա-

*) Բարենորոգչական։

**) Պատեհապաշտ։

սում է Կաբակչիեվ, ճիշտ է, լաւ խօսքեր ունին առաջ յեղափոխութեան մասին, բայց դա միայն զանգուածները սիրաշահելու համար է...

Ուրիշ խօսքով, իտալական բոլոր անուանի պարագլուխները յայտնւում են կապիտալիստներ։

Կամ պէտք է ենթարկուել Մոսկուայի որոշումներին, կամ պէտք է դուրս գալ Ներորդ Ինտերնացիոնալից — ասում է Կաբակչիեվ... Ով մեզ հետ չէ, թշնամու հետ է, հակայեղափոխական է...»։

Զեկոյցի բիրտ տոնը յարուցանում է ընդհանուր վրդովմունք։ Եւ այդ զգացումի առաջին թարգմանն էր Բարաբօնո, ձախակողմեան առաջնակարգ դէմքերից մէկը։ Նա դէմ է ռէֆորմիստներին և նոյն իսկ կոմունիստական գունաւորումն ունի։ Բայց յայտարարում է, ի պատասխան Կաբակչիեվի և Մոսկուայի վարիչների, որ Իտալիան Ռուսաստան չէ...

«Իտալիայում անկարելի է հաստատել «ընտիրների» դիքտատուրա ամբողջ երկրի վրայ։ Մեր ժողովրդի հոգեբանութիւնը նման չէ ռուս ժողովուրդի հոգեբանութեան։ Դիքտատուրան մեզ մօտ կարող է պահպանուել միայն մասային գնդակահարութիւններով...»։

Մի այլ պատգամաւոր, Վայշերկա, դիմելով զուտ «կոմունիստներին» կամ բոլշեվիկներին, ասում է.

— Չի կարելի չարունակ ջատագովել բռունի, արիւնոտ միջոցները, երբ անզէն ու անպատրաստ էք...*)

*) Կոդրէոի մանրամասն արձանագրութիւնը տես, Avanti! 1921-ի թուերը, Յունուար 16-ից մինչեւ 22-ը։

Այս խօսքերի վրայ զուտ կոմունիստները սկսում են ոռնալ։ Տեղում է փոխադարձ վիրաւորանքների տարափ։ Բոմբաչին—տիպիկ բոլշեւիկ—հանում է գրպանից ատրճանակը և թափահարում։ Մի խումբ ընկերվարականներ յարձակում են նրա վրայ և քարշ տալով դուրս տանում սրահից։

Բոլշեվիկների մի այլ խումբ նետւում է դէպի բեմ, սկսում է բռունցքամարտ։ Տիրում է անասելի ժխոր ու իրարանցում.

— Դուք դանակի յեղափոխականներ էք, կոչում է Վաշերկա բոլշեվիկներին և խօսում յախուռն, անհաշիւ բռնութիւնների ու արիւնահեղութիւնների դէմ։

Բեմ է բարձրանում Տուրատի։ Ընդհանուր ու պատկառոտ ուշադրութիւն և խորունկ լռութիւն։ Ժողովրդական հինաւուրց տրիբունը այլ եւս վայրկեանի մարդը չէ, յեղափոխութիւն ու դիքտատուրա պոռացողը չէ, Մոսկուայի դրօշին խնկարկողը չէ։ Բայց, այնուամենայնիւ, դեռ կչիռ ունի և Բոմբաչիները չեն համարձակւում ընդհատել նրան։

Տուրատի կրկնում է իր մշտական յանկերգը.

— Տհաս, անպատրաստ պրոլետարիատով չի կարելի նիւթել ընկերային Մեծ Յեղաշրջումը. տհաս, անպատրաստ տնտեսական և քաղաքական պայմանների մէջ չի կարելի իրականացնել կոմունիզմը, որ նրա աչքում նոյն սոցիալիզմն է։

Տուրատի ծառանում է բանաձրանքների ու պառակտումների սիստեմի դէմ և նետում

է Մոսկուայի դիքտատորներին այս խայթիչ մեղադրանքը.

— Ռուսական բոլշեվիզմը յուսահատորէն մեզ է կառչել, որպէս զի կարողանայ պահպանել իր գոյութիւնն ու իշխանութիւնը...

Բայց Տուրատին բնաւ չէր կամենայ արեան ծով դարձնել Իտալիան՝ լոկ միայն պահպանելու համար Մոսկուայի մէջ դիքտատուրական ռէժիմը, որը նրա աչքում հոմանիշ է սանձարձակ բռնապետութեան, քանի որ խեղդել է ռուս ժողովրդի ազատութիւնը և սովի ու մահու արհաւիրքը սփռել ամբողջ երկրի մէջ։

Բանադրանքների, արտաքսումների դէմ, խօսում է երկարօրէն և Սերրատի։ Անհերքելի փաստերով նա ցոյց է տալիս, որ պատեհապաշտութիւնը տիրում է հէնց Երրորդ Ինտերնացիոնալի մէջ։

Նա մերկացնում է նոյնիսկ Զինովիեվի *) ամօթալի կոմպրոմիսները, իրաւախոհութիւնները...

«Ցեղափոխութիւնները չեն կատարւում հրամաններով — ասում է իտալացի ընկերվարական առաջնորդը — նրանք չեն առաջանում նախօրօք սահմանուած չափի ու ձեւի համեմատ, որոշեալ ժամանակին և մանաւանդ հեռուէն եկած շրջաբերականներով։ Անկարելի է, հակապատմական է և հակամարքսիստական՝ սեղմել աշխարհի պատմութիւնը մէկ հատիկ մամուլի տակ... Արհեստականօրէն սարքուած բռնկումները յանգում են

* Նախագահ Երրորդ Ինտերնացիոնալի։

պրոլետարական անօգուտ ջարդերի, ինչպէս եղաւ Գերմանիայում... Եւ արհեստական պատակտումները ճշմարիտ դաւաճանութիւն են աշխատաւոր մասսաների դէմ...

Ամենէն զգայացունց մերկացումն արաւ Սերրատի — Լիվորնոյի կոնգրէսում — Մարսել Կաշէնի մասին, որ այսօր պարագլուխն է ֆրանսիական կոմունիստների։ Կաշէնը Երրորդ Ինտերնացիոնալի մէջ է, ասաց Սերրատի, բայց նա երէկուայ «սոցիալ-դաւաճանն» է, երէկուայ սոցիալ-ազգայնականն է և կողմնակից է եղել պատերազմի...

«Ես պնդում եմ, ճչում է իտալացի ընկերվարականը, որ պատերազմի և մեր չէզոքութեան ժամանակ Մարսել Կաշէնը եկաւ և այն միտքն էր պաշտպանում, թէ Իտալիան պէտք է յարի պատերազմին... Եկաւ մեզ մօտ, մենք նրան դուռը ցոյց տուինք։ Այն ժամանակ գնաց «Քոռիէրէ տելլա Սէրա»ին և մասոնների սրահում մի ճառ խօսեց. Ապա գնաց Ռուսաստան, յորդորելու Կերենսկիին՝ շարունակելու պատերազմը. իսկ նոյն օրերում մենք Լէնինի ու Տրոցկիի հետ կողմնակից էինք անջատ հաշտութեան»։

Եօթ օրուայ տենդային վիճաբանութիւններն ու յուզիչ կոչերը՝ զէթ տակտիկական նրկատումներով պահպանելու միութիւնը՝ ապարդիւն անցան։ Ոչինչ չ՚ազդեց զուտ կոմմունիստների վրայ, ոչ մի ընկերվարական կոչ ու յորդոր։ Նրանք հաւատարիմ մնացին Մոսկուայի կարգախօսին և անջատուեցին, հիմք դնելով նոր կուսակցութեան և օրգանի։ Շուտով

պառակտումը աւելի խորացաւ. անջատուեց նաեւ այսպէս կոչուած մաքսիմալիստ թեւը, որի ղեկավարն էր Սերրատի։ Այս տարօրինակ մարդն էլ թողեց, ի վերջոյ, անողոք քննադատի իր դիրքը և բռնեց «Կանոսայի», Մոսկուայի համար։ Ուրիշ խօսքով, միացաւ Իտալիայի նորանջատ կոմմունիստ հատուածին։ Կուսակցութիւնը, սակայն, մաքսիմալիստ լինելով հանդերձ, չհետեւեց Սերրատիին, այլ կատաղօրէն խարանեց նրան, հեռու պահուելով բոլշեվիզմից։ Սերրատի, այդ քայլից յետոյ, գրեթէ բոլորովին կորցրեց իր ժողովրդականութիւնը Իտալիայում։ Այդպէս են յաճախ վերջացնում այն առաջնորդները, որոնք փայլուն յատկութիւնների հետ՝ ունենում են թոյլ, յեղյեղուկ նկարագիր։

Այդպէս պառակտուեց ու փոչիացաւ Իտալիայի երբեմն մեծ ու հմայիչ ընկերվարական կուսակցութիւնը։

Այդպէս Մոսկուայի աղանդաւորները ոչնչացրին Իտալիայի մէջ թէ՛ սոցիալիզմը, թէ՛ դէմոկրատիան, ազատ խօսքը, ազատ մամուլը և ժողովրդական պարլամենտը։ Եւ նրանց աւերակների վրայ խրոխտ, ամբարտաւան բարձրացաւ յետադէմ Ֆաշիզմը, որ այսօր ձգտում է հեղեղել ամբողջ արեւմուտքը...

ՊԱՌԱԿՏՈՒՄԸ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ

Մոսկուայի դաւերին զոհ գնաց և Ֆրանսիայի մի ժամանակ հզօր սոցիալիստ կուսակ-

ցութիւնը, որ Ժորէսի, Գեդի, Վայանի, Պրէսանսէի օրով այնքան գեղեցիկ և ազդեցիկ դիրք ունէր պարլամենտի մէջ։ Նոյն քսան ու մէկ կէտ-պայմանները, նոյն տենդային համաժողովները, նոյն կոչ ու յորդորները Մարսէլ Սանբայի, Ռիբնօդէլի, Լոնգէի ու այլ պարագլուխների կողմից, որոնք արտասանելով աղաչում էին իրենց կարմիր ընկերներին՝ չխախտել միութիւնը, չենթարկել կուսակցութիւնը Մոսկուայի հրամանատարութեան... Ոչինչ չօգնեց։ Կոմմունիստները այստեղ եւս անջատուեցին Մարսէլ Կաշէնի ու Ֆրոսսարի առաջնորդութեամբ։ Մոսկուա գնացող երկու ուխտաւորներն են, որոնցից մէկը, Ֆրոսսար, շուտով ձգեց կոմմունիստ հատուածը, միւսը, Կաշէն, մնում է այսօր գլխաւոր ղեկավար Անդրէ Բերտոնի, Մոնմուսոի, Դորիոի և այլոց հետ։ Ոչ մի փայլուն դէմք ղեկավարների չարքում և ոչ մի լուրջ կազմակերպութիւն ֆրանսիական գաւառի մէջ, ուր ուժեղ մնում է ըստ առաջնոյն ընկերվարական կուսակցութիւնը։ Վերջինի ազդեցութեան տակ են նաեւ Պարիզի աշխատաւորական զանգուածները։ Կոմմունիստ հատուածը իշխում է գլխաւորապէս պարիզեան արուարձաններում. վերջին ընտրութիւններին նա կարողացաւ պարլամենտ ղրկել ընդամենը 26 երեսփոխան, մինչ ընկերվարական կուսակցութիւնը՝ աւելի քան հարիւր։ Համայնավար հոսանքը հետզհետէ թուլանում է Ֆրանսիայում, հակառակ մամուլի, խօսքի լիակատար ազատութեան և Մոսկուայի դրամական աջակցութեան։

Բոլշեվիկների կամ կոմմունիստների գեբագոյն յոյսը քաղաքական և ֆինանսական տագնապներն են, որոնք, տարաբախտաբար, պատերազմից ի վեր յաճախակի են Ֆրանսիայում։ Պատերազմներ, հանրային պարտքերի աճում, դրամի անկում, կենսական մթերքների սղում, — ահա սրանք են ստեղծում այն հիւանդոտ մթնոլորտը, որի մէջ ապրում է կոմմունիզմը։ Դրանցից զուրս՝ նա դատապարտուած է բարկացաւի։ Նրա կռիւը աւելի շատ ընկերվարական կուսակցութեան դէմ է, քան կապիտալիզմի ու բուրժուազիայի։ Պարլամենտի մէջ ամէն քայլափոխի նա հակառակում է ընկերվարականներին, ձգտելով երեւալ աշխատաւոր մասսաներին ըստ կարելոյն կարմիր, անհաշտ, արմատական։ Նա հակառակ էր անգամ Ժորէսի աճիւնը Պանթէոն փոխադրելուն. այդտեղ եւս տեսնում էր բուրժուազիայի սրբապղծող մատը և ընկերվարականների պատեհապաշտ մտայնութիւնը։

Քիչ-շատ լուրջ քաղաքական կուսակցութեան կշիռ չունի կոմմունիզմը Ֆրանսիայում։ Բայց մէկ պաշտօն նա կատարում է վարպետօրէն. այն է՝ Մոսկուայի գործակալութեան կամ բիւրօի պաշտօնը։ Մարօկկոի պատերազմի սկզբից ի վեր, Ֆրանսիացի համայնավարները ճիգ աւ ջանք չխնայեցին, որպէսզի Ֆրանսիան պարտուի և կորցնէ աֆրիկեան այդ կիսաբարբարոս ու լայնածաւալ երկիրը, որ անկարող է ինքնակլուխ առաջադիմել (ինչպէս երբեմն Հնդկաստանը, Եգիպտոսը), որ տարիներից ի վեր գտնւում է ֆրանսիական հովանաւորութեան տակ և իր բնական բերքերով ու ապրանքների փոխանակութեամբ մեծ զարկ է տալիս Ֆրանսիայի տնտեսութեանը։ Համայնավարները լաւ գիտեն, որ եթէ Մարօկկոյաղթի ու անջատուի, Ալժերը և միւս գաղութներն եւս պիտի հետեւեն նրա օրինակին։ Նրանք լաւ գիտեն, որ Մարոկկոի ապստամբութիւնը քաջալերւում է նաեւ թիւրքական համիսլամականների կողմից։ Նրանց հոգը չէ, թէ ամբողջ բազմամիլիոն իսլամ աշխարհը կարող է ոտքի կանգնել ազգայնամոլ, օտարատեաց, յարձակողական հակումներով և այն ժամանակ վա՛յ Ֆրանսիայի ու Անգլիայի բարեբութեան, վա՛յ ամենից առաջ աշխատաւորութեան. նրանք գիտեն, որ Մոսկուան արդէն եղբայրացած է իսլամի հետ և մեծ պատուարն է համիսլամութեան, ինչպէս երբեմն Վիլհելմ II-ը։

Եւ ամիսների ընթացքում Ֆրանսիայի կոմմունիստները, Մոսկուայի հրահանգով և նրա դրամով ձգտում էին կազմալուծել ֆրանսիական բանակը Մարօկկոյում, թռուցիկներով հրաւիրում էին զինուորներին լքել շարքերը, կազմակերպել մասսային դասալքութիւն... Նրանք մինչեւ իսկ գաղտնի տեղեկագիրներով ու սուրհանդակներով իրազեկ էին պահում Աբդիւլ Քէրիմին *) ֆրանսիական զօրքի կացութեան մասին, զինուորների տեղափոխութեան և այլն։ Դեռ պատերազմը չկատուած,

*) Մարօկկոի ապստամբ Ռիֆի հրամանատարը, որ այժմ պարտուած ու աքսորուած է Ֆրանս. կառավարութեան ձեռքով։

կուսակցութեան կենտրոնը Պարիզից հեռագիր ղրկեց նոյն Աբդիլ Քէրիմին, որով ցերմապէս շնորհաւորում էր և քաջալերում նրա ըմբոստ ընթացքը, լաւ գիտնալով, որ այդ Աբդիլ Քէրիմը մի աւազակաբարոյ աշիրէթապետ է, որը պահում է իր ժողովուրդը ճշմարիտ նախիրի վիճակում, խեղդում է նրա մէջ ազատութեան ու առաջադիմութեան ամէն մի նշոյլ և նոյն իսկ ստրուկներ պահում հնադարեան ձեւով...

Այսպէս թէ այնպէս, ֆրանսիական համայնավար կուսակցութիւնը այդ ճանապարհի վրայ, իբրեւ Երրորդ Ինտերնացիոնալի մասնաճիւղ, որոշ մասնաւորութիւն պատճառում է իր հայրենի կառավարութեանը։ Իր մշտական ագիտացիայով նա վարակում է աշխատաւորական որոշ խաւեր, սաստկացնում է երկրի տագնապը և խրախուսում ու ուժեղացնում է Աբդիլ Քէրիմների դիմադրութիւնը հեռաւոր գաղութներում։ Սակայն երբ կամենում է աղմուկից անցնել գործի, անմիջապէս մատնում է իր ներքին տկարութիւնը։ Համայնավարները փորձեցին 24 ժամուայ ընդհանուր գործադուլ շղթայազերծել, իբրեւ բողոք Մարոկկոի պատերազմի դէմ, բայց փորձը վիժեց արգասաբերելիօրէն։ Աշխատաւորութեան չնչին տոկոսը միայն արձագանգ տուաւ։

* * *

Գերմանիայում եւս բոլշեվիկները ամաւոր վնասներ պատճառեցին աշխատաւորական շարժ-

ման և առաջ բերին ուժեղ ռէակցիա։ Լինելով չնչին փոքրամասնութիւն, նրանք մի քանի անգամ, Մոսկուայի «Կոմինտերն»ի հրահանգով, փորձեցին ընկերային յեղաշրջում առաջ բերել և հաստատել սովէտական կարգեր։ Ապարդիւն արիւնհեղութիւններ։ Այստեղ եւս բոլշեվիկների ամենակատաղի յարձակումները տեղում են ընկերվարական կուսակցութեան դէմ, որը չի ուզում ընդունել Լենինի դեղատումը իր երկրի առողջացման համար։ Այստեղ եւս խոր է պառակտումը և բուռն են միջհատուածային կռիւները։

Մի ժամանակ, տնտեսական ծանր ճգնաժամի չնորհիւ, բաւական ուժեղացել էր համայնավար հոսանքը Գերմանիայի մեծ քաղաքներում։ Մոսկուայի հմայքն էլ դեռ ուժեղ էր... Ապա հետզհետէ հոսանքը նուազեց։ Վերջին մէկ տարուայ մէջ կուսակցութիւնը կորցրեց մօտ մէկ միլիոն հաւատացեալներ։ Տեղատուութեան այդ հոսանքին մեծապէս նպաստում էր կոմմունիստների արտաքոց գործելակերպը։ Նրանք ստէպ միանում էին ձալբագոյն աջակողմեաններին, յետադէմ արքայականներին՝ միայն թէ խանգարեն ծրագիրները ընկերվարական կուսակցութեան, որը նրանց աչքում մեծագոյն թշնամին է... Այդպէս, Հիճդենբուրգ ընտրուեց նախագահ գերմանական Հանրապետութեան, չնորհիւ այն հանգամանքի, որ համայնավարները չուզեցին ձայն տալ ընկերվարական հզօր կուսակցութեան թեկնածուին, այլ առաջ քշեցին իրենց սեփական թեկնածուն, որով ձայները բաժնը-

ւեցին և աջակողմեանները տարան յաղթանակը։ Ընտրուեց միլիտարիզմի ամենացցուն ներկայացուցիչը, Վիլհելմ կայսրի երկրպագուն, Հինդենբուրգը, ընդդէմ Մարքսի, որ թեկնածուն էր ընկերվարական-դեմոկրատ բլոկի *)։

Այդպիսի տարօրինակ մտայնութեամբ համայնավարները չեն կարող, ի հարկէ, յարատեւ յաջողութիւն ունենալ։ Բայց նրանք դեռ բաւականաչափ այժ ունին՝ մթնոլորտը երբեմն երբեմն աղմկելու, խռովութիւններ ու խլրտումներ յարուցանելու, որոնք, հարկաւ, ոչ մի առնչութիւն չունին ընկերային, համաշխարհային յեղափոխութեան հետ, այլ միայն զօրացնում են ռէակցիայի բանակը։

* * *

Անգլիայում ռուսական Համայնավարութեան բացիլը չկարողացաւ աւերած անել... Այդտեղ նա զարնուեց բրիտանական զգաստ ու առողջ մտայնութեան ապառաժին։ Կոմունիստական շարժումը չնչին ծաւալ ունի երկրի մէջ, իսկ պարլամենտում նա գոյութիւն չունի։ Մէկ հատիկ կոմունիստ կայ,

*) Այդ բլոկը ստացաւ 13,752,640 ձայն, որից մօտ 10,000,000-ը ընկերվարական ձայներ էին։

Հինդենբուրգ ստացաւ 14,639,399 ձայն.

Թէլման (կոմունիստների թեկնածուն) մէկ միլիոն 931,891 ձայն։

Այս թուերից ընթերցողը կը տեսնէ ընկերվարական և կոմունիստ հաստատութիւնների յարաբերական այժը։

այն էլ անգլիացի չէ, հնդիկ է։ (Սախլաթվալա)։ Աշխատաւորական մեծ կուսակցութիւնը, բարեբախտաբար, ազատ մնաց պառակտումներից։

Երկար կը լինէր ցուցադրել բոլշեվիզմի աւերածները բոլոր երկիրներում։ Պառակտումի և քայքայման պրոցէսը, բնականաբար, առանձնապէս ուժեղ եղաւ յաղթուած պետութիւնների մէջ, ուր աշխատաւոր դասակարգերի դժգոհութիւնը ամենէն խորն էր և իշխողների դիմադրութիւնը համեմատաբար ամենէն թոյլը։ Ահա, օրինակ, Բուլգարիան։ Զարհուրելի ճգնաժամ անցուց։ Համայնավարները, Ստամբուլովեան, ագրարեան դժգոհ տարրերի հետ, խիտ դաւագրական ցանցով պատել էին երկիրը։ Անվերջ տերրօրներ, ուժանակային պայթիւններ եկեղեցիներում, մասսային գընդակահարումներ ու կախաղաններ... Մոսկուայի գործակալները առատ դրամական պաշարով լուն էին դրել Բուլգարիայում, մեծ յոյս ունէին պայթեցնելու բուրժուական կառավարութիւնը և սովէտները հաստատելու։ Այդտեղ եւս փորձը վիժեց։ Ուժանակային դաժան գործողութիւնները, որ բազմաթիւ անմեղ զոհեր էին առնում, միայն աւելի պաշտպանեցին ժողովուրդը համայնավար հոսանքից։

Ծանր ֆիասկո կրեց բոլշեվիկեան շարժումը նաեւ Չեխոսլովակիայում, ուր ատենօք ուժեղացել էր, Աւստրիայում, ուր հրապարակին տիրում է Վիքտոր Ադլերի ստեղծած ընկերվարական հոյակապ կուսակցութիւնը, Բելգիայում, ուր տիրական է Վանդերվելդների

կոած հինաւուրց կաղմակերպութիւնը, որ չէ ուզում լսել անգամ համայնավար մեթոդների մասին և վերջերս նոյնիսկ մերժեց Մոսկուայի Կոմմինտերնի ղրկած նպատը... Նոյնը Հոլլանդիայում, Զուիցերիայում, Շվէտիայում, Նորվէգիայում և այլն։

Այս տեսութիւնից պարզ է, թէ ինչ է ներկայացնում համայնավարութիւնը արեւմտեան աշխարհում և թէ որքան «լուրջ» ճիգեր են անուում համայնավար տարրերը՝ համաշխարհային սոցիալական յեղափոխութիւնը չղթայազերծելու համար...

Սակայն, չարուենակենք։

ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԻ ՎԵՐԱԾՆՈՒՆԴԸ

Անգլիական Labour Party-ի դերը.— Խորհրդաժողովները Բերն, Ժընեւ, Լիւցերն.— Միութեան բանակցութիւնները Լոնտոնի և Վիեննայի միջեւ.— Մէկ հակատի գաղափարը.— Ջենովայի միջազգային կոնֆերանսը և Մոսկուայի դիմումը Արեւմուտքի ընկերվարականներին.— Մանեսովը — Զիլերին, Կրասին, Ռակովսկի Ջենովայում.— Ընդունելութիւնը իտալական թագաւորի մօտ.— Երեք Ինտերնացիոնալի համագումարը Բերլինում.— Վանդերվելդ Հայաստանի մասին, Մաքդոնալդ՝ Վրաստանի.— Ռոդէկի պատասխանը.— Սոց.-յեղ. մահազգաներերի հարցը.— Կեօլնի ժողովը և Հ. Ց. Դաշնակցութեան բանաձեւը.— Ինի Յանձնաժողովը.— Խզում.— Վանդերվելդ Մոսկուայում.— Ամստերդամի Ինտերնացիոնալը.— Երեքուն միլիոն արհեստաւորների կամ ակերգում.— Թէ ինչպէս բոլշեվիկները ձգտում են պայթեցնել այն.— Համբուրգի կոնգրէսը և երկու Միութիւնների ձուլումը.— Որոշումները Հայաստանի և Վրաստանի մասին։

Կոմմունիզմի կամ բոլշեվիզմի փիասկոն բացայայտ է։ Երբորդ Ինտերնացիոնալը բոլոր երկիրներում, կարճատեւ վերելքից յետոյ, այժմ կազմալուծման և անկումի շրջան է ապրում։

Պիտի կարողանա՞յ վերստին բարձրանալ ու տիրել զանգուածների սրտին ու մտքին... Ձենք կարծում։ Որովհետեւ արեւմտեան աշխատաւորութիւնը ճաչակեց արդէն բոլշեվիկեան չարժման պտուղները։ Որովհետեւ այդ աշխատաւորութեան հոծ զանգուածները միշտ

աւելի և աւելի համախմբւում են ընկերվարական դրօշի տակ։ Որովհետեւ Երրորդ Ինտերնացիոնալի դէմ միշտ աւելի հզօր ու ազդեցիկ՝ ծառանում է Երկրորդ վերակազմեալ Ինտերնացիոնալը։

Այդ վերջինը պառակտուած ու քայքայուած պատերազմի ընթացքում, վերածնուեց 1923 թ. Մայիսին Համբուրգի համաշխարհային Կոնգրէսի մէջ։ Երկար է և այդ վերածընունդի պատմութիւնը։ Պատմենք համառօտ կերպով։ Զինադադարից յետոյ (1918) զանազան տեղերում փորձեր եղան վերակազմելու աշխատաւորական ոյժերը։ Տեղի ունեցան միջազգային մի շարք կոնֆէրանսներ, խորհրդաժողովներ (Բերն, Լիւցերն, Ժընեւ և այլն)։ Այդ կոնֆէրանսների մէջ, որոնց մասնակից էր և Հ. Յ. Դաշնակցութիւնը, ամենից բարձր ու զօրաւոր հնչում էր Անգլիայի աշխատաւորական կուսակցութեան ձայնը, որը մնում էր իբրեւ միակ հած ու ուժեղ բեկորը հին Ինտերնացիոնալի։ Նրա ղեկավարները, Մաքդոնալդ և Հենդերսոն, շատ ճիգ թափեցին միութեան համար։

Նրանց դէմ կանգնեցին նախկին ձախակողմեան տարրերը, որոնք Լենինի ու այլ կոմունիստների հետ եղել էին Ցիմմերվալդի և Կինթալի ժողովներում, համակիր էին ռուսական յեղափոխութեան, հաւատում էին, թէ իրօք Ռուսաստանը ընթանում է սոցիալիզմի ճանապարհով, հաւատում էին, թէ հնարաւոր է արեւմտեան Եւրոպայում եւս չղթայազերծել ռուսական ձեւով յեղաշրջումներ և հաստա-

տել պրոլետարիատի դիկտատուրա։ Այդ տարրերը համախմբուելով, կազմեցին այսպէս կոչուած Վիեննայի Միութիւնը։ Նրա մէջ մտաւ գերմանական «անկախների» մեծ զանգուածը, որ անջատուել էր գերման Սոցիալ-դեմոկրատիայի մեծամասնութիւնից, որը «անկախների» աչքում շատ էր աջակողմեան և ունէր մեղսակցութիւն պատերազմի ու այլ հակաընկերվարական արկածների մէջ։

Վիեննայի միութեան մէջ մտան նաեւ ռուս ս. ր. և ս. դ. հատուածները և ֆրանսիական Ժօռէսիստները՝ Ռընօդել, Լանգէ, Սանբա, Բլում և այլն։ Գերման և աւստրիացի պարագլուխներն էին՝ Կրիսպիէն, Հիլֆերդինգ, Ադլէր, Օտտօ Բաուէր և այլն։

Այս բոլոր դէմքերը, բացի Ռընօդէլից և Բլումից, ունէին բոլշեվիկեան համակրութիւններ, Մոսկուան դեռ հմայք ունէր նրանց աչքում...

Միւս կողմից բոլոր հակաբոլշեվիկ տարրերը համախմբուեցան Անգլիայի Աշխատաւորական Կուսակցութեան շուրջը և կազմեցին Լոնդոնի Միութիւնը *) Նրա մէջ մտնում էին— անգլիական եւ բելգիական ամբողջ կուսակցութեան հետ, գերմանական, հոլլանդական, չվէտական, ունգարական, սպանիական ու այլ հատուածների հետ—կովկասեան կուսակցութիւնները, վրացի մենշեվիկները և Հ. Յ. Դաշնակցութիւնը։

Մաքդոնալդ և Հենդերսոն, իբրեւ ղեկա-

*) Ղեկավարող կենտրոնը Լոնդոն էր։ Միւս Միութեան կենտրոնը — Վիեննա։

վարներ Լոնդոնի Միութեան, շարունակեցին իրենց եռանդուն աշխատանքը՝ բոլոր ոյժերը միացնելու և նախկին մեծ Ինտերնացիոնալը վերաշինելու համար։ Այդ նպատակով երկար բանակցութիւններ վարեցին Վիեննայի Միութեան հետ։ Վերջինը դիմադրում էր... Նրա դեռ մի ոտքը Մոսկուայում էր։ Նա դեռ չըլացած էր Կրէմլի մէջ հաստատուած «պրոլետարիատի դիքտատուրայով»։ Եւ նա դեռ յոյս ունէր, որ պիտի կարողանար ազդել ռուսների վրայ, չէզոքացնել նրանց թշնամութիւնը դէպի արեւմտեան ընկերվարականները, միացնել բոլոր ոյժերը, ստեղծել մէկ միայնակ Ինտերնացիոնալ, կազմել աշխատաւորական մի ընդհանուր ու հզօր ճակատ համաշխարհային բուրժուազիայի դէմ՝ Մոսկուայից մինչեւ Լոնդոն։ Եւ այդ նպատակով նա երկարօրէն բանակցում էր Մոսկուայի հետ։

Պատրանք էր։ Մոսկուայի կոմունիստները լսել չէին ուզում միութեան մասին, նրանք դաւաճան էին հռչակել արեւմտեան սոցիալիստներին և որոշել էին ամէն գնով բոլշեվիկացնել Եւրոպայի ու Ամերիկայի ընկերվարական հատուածները։

Բայց երբ հասաւ Ջենովայի կոնֆէրանսի օրը, նրանք յանկարծ փոխեցին տակտիկը։ Սովէտական Ռուսաստանը կ'ուզէր ճանչցուել եւրոպական կապիտալիստ պետութիւնների կողմից, կ'ուզէր վերականգնել իր կապերը Արեւմուտքի հետ։ Կ'ուզէին այդ՝ նոյն իրենք պետութիւնները, կ'ուզէր ժանաւանդ բազմամիլիոն աշխատաւորութիւնը, որ տառապում

էր տնտեսական համատարած և յարաճուն ճգնաժամից։ Այդ պատճառներից մէկը հէնց այն էր, որ Ռուսաստանը իր տարածութեամբ, 132 միլիոն ժողովրդով և հարուստ հողերով ու հանքերով, դուրս էր մնում համաշխարհային առեւտրի ու արդիւնաբերութեան շրջանառութիւնից, որ ուստ ժողովուրդը չէր կարող՝ ոչ Արեւմուտքի ապրանքները գնել, ոչ էլ արտահանել իր հում բերքերը դէպի Արեւմուտք։

Եւ ահա 1922-ի գարնանը եւրոպական կապիտալիզմը—արդէն բաւական ուժեղացրած իր դիրքերը, չնորհիւ ռուսական բոլշեվիզմի յաթուցած պառակտումների ու ռէակցիայի—գալիս էր Լլոյդ জորջի ղեկավարութեամբ Ջենովայի կոնֆէրանսի մէջ իր պայմանները թելադրելու սովէտական Ռուսաստանին։

Կապիտալիստական Եւրոպան պատրաստ էր ճանաչելու Մոսկուայի կառավարութիւնը, եթէ նա համաձայնուէր վճարելու ցարի ժամանակից մնացած պարտքերը, եթէ նա հնարաւորութիւններ ստեղծէր արեւմտեան դրամագլխի շրջանառութեան համար Ռուսաստանում և այլն։

Չիչերին իր սպայակոյտով եկաւ Ջենովա։ Առաջին շփումն էր բուրժուական Եւրոպայի հետ։ Եւ կոմունիստ չէֆերը ցոյց տուին, որ «կարմիր, յեղափոխական անհաշտութիւնը» դատարկ ֆրազ է, ստեղծուած միայն իրենց անձային հօտերի համար։ Նրանք ցոյց տուին արտակարգ պատեհապաշտութիւն ու ճկունութիւն։ Նրանք մասնակցեցին անգամ ի պատիւ թագաւորի տրուած ճաշկերոյթին, ցիլինդրով

ու ագդինգոդով գնացին ներկայացան Վիքտոր Էմանուէլին և մինչեւ իսկ չզլացան մեծարանքի խօսքեր ուղղելու նրան... Դէպքը մեծ չափով յարուցեց Իտալական կոմմունիստ շրջաններում և նոյնիսկ նրանց պաշտօնաթերթը հրապարակով դատապարտեց Զիչերինի, Ռակովսկիի և Կրասինի այդ ժեստը, որ բնաւ անհրաժեշտ չէր... Անշուշտ այդ պարոնները կարող էին ամենայն դիւրութեամբ խոյս տալ ճաշից ու թագաւորից և ոչ ոք տարօրինակ չպիտի գտնէր նրանց ընթացքը, որը գէթ մի անգամ կը համապատասխանէր իրենց կարմիր ու անհաշտ ժարգոնին։

Ռուսական պատուիրակութիւնը Ջենովա էր։ Եւ որպէսզի նա յաջողէր դիմադրել կապիտալիստ պետութիւնների պահանջներին ու քիչ-շատ պատուով դուրս գալ Կոնֆէրանսից, Մոսկուան դիմեց արեւմտեան սոցիալիստ կուսակցութիւններին մի անսպառելի առաջարկով —գումարել համեւրոպական մի խորհրդաժողով, Լոնդոնի, Վիեննայի ու Մոսկուայի Միութեանց ներկայացուցիչներից և մշակել ծրագիր ընդհանուր գործակցութեան, ուրիշ խօսքով՝ կազմակերպել միասնական մեկ ճակատ արեւմտեան կապիտալիզմի դէմ։

Վիեննացիք ցնծացին այդ անակնկալ առաջարկից, մինչ Լոնդոնի Միութիւնը կասկածով դիմաւորեց այն... Ռուս բոլշեվիկները ամէն օր «դեղին», «դաւաճան» ու այլ մակդիրներն էին շպրտում արեւմտեան ընկերվարականների երեսին, իսկ այժմ յանկարծ նրանց գործակցութիւնն են խնդրում... Պարզ

էր, որ Մոսկուայի քայլը մի սոսկ մանէովր էր, զուրկ անկեղծութիւնից։ Մոսկուան բնաւ չէր ուզում տեւական գործակցութեան կապեր ստեղծել արեւմտեան միութիւնների հետ, նրա նպատակն էր միայն իր գումարած խորհրդաժողովով թոզ փչել կապիտալիստ պետութիւնների աչքին, ցոյց տալ նրանց, որ ամբողջ եւրոպական աշխատաւորութիւնն է կանգնած Սովէտների ետեւը և այդպիսով Ջենովայի Կոնֆէրանսում զիջումներ չորթել պաշտօնական Եւրոպայից։

Այնուամենայնիւ, Լոնդոնի Միութիւնն եւս ընդունեց ռուսների առաջարկը և Բերլինում գումարուեց 1922 թ. Մարտ 12-ին ծրագրուած Խորհրդաժողովը, ուր մասնակցում էին Լոնդոնի Ինտերնացիոնալից՝ Մակդոնալդ և Վանդերվելդ, Վիեննայի Միութիւնից՝ Ադլեր, Կրիսպիէն, Օտտո Բաուէր, Բրակ ու Զոլ Ֆոր և Երրորդ Ինտերնացիոնալից՝ Կլարա Ցետկին, Ֆրոսսար և Ռադէկ։ Վերջինը եկել էր Մոսկուայից։

Պատկերը տպաւորիչ էր. նիստերը տեղի էին ունենում գերմանական Ռայխստագի ընդարձակ ու չքեղ սրահի մէջ, ներկայ էր խուռն բազմութիւն, ի միջի այլոց ընկերվարական շարժման երկու վէթերանները՝ Կաուցկի ու Բերնշտայն։ Իտալիայից կար Սերրատի։ Կային և փոքրիկ ազգերի պատգամաւորներ, Հ. Յ. Դաշնակցութեան, վրացի մենշեվիկների, Ատրբէյջանի և այլն։

Միամիտները կարծում էին թէ նոր գաղափարներ էր բացւում համաշխարհային ընկեր-

վարական չարժման մէջ, թէ Մոսկուան, խը-
բատուած չորս-հինգ տարուայ աւերիչ փորձե-
րից, սկսում է զղջալ, փոխել տակտիկը, մո-
տեցնել այն՝ արեւմտեան սոցիալիզմի գործե-
լակերպին...

Սին լոյսեր։ Առաջին իսկ վայրկեանից
Եւրոպան և Ասիան իրար զարնուեցան բուռն,
անհաշտ հակամարտութեամբ։ Մաքսիմալիզ,
անգլիական բարքերի խստապահանջ ներկա-
յացուցիչը, յայտարարում է.

— Մենք նախ և առաջ պիտի գնենք
Մոսկուային մի անհրաժեշտ պայման. այն է՝
ճշտութեամբ կատարել իր պատուիրակների
այստեղ տալիք յանձնառութիւնները և ստորա-
գրելիք որոշումները։

Ռադէկ, Մոսկուայի ներկայացուցիչը,
պատասխանեց մէֆիստոֆելեան ծիծաղով։ Բայց
որքա՜ն տեղին էր Մակդոնալդի այդ կծու, խայ-
թիչ յայտարարութիւնը։ Նա գիտէր, ամբողջ
Երկրորդ Ինտերնացիոնալը գիտէր, որ այդ
խորհրդաժողովը Մոսկուայի համար մի խաղ է
միայն, քան աւուր պատշաճի, որ այդ մարդ-
կանց հետ անհնարին է ունէ գործակցութիւն,
որ նրանք իրենց տուած խօսքը չպիտի կատա-
րեն, որ նրանց համար խոստում կատարելը,
յանձնառութիւններին հաւատարիմ մնալը, շի-
տակութիւնը և բոլոր նման առաքինութիւն-
ները լոկ «բուրժուական նախապաշարումներ»
են, որոնք կարող են միայն ծիծաղ յարուցա-
նել Ռադէկների մօտ։

Երկրորդ Ինտերնացիոնալը բնաւ չէր հա-
ւատում Երրորդի մարդկանց շիտակութեան։

Այդ ժողովը մի պատեհ առիթ էր արեւմտեան
ընկերվարականների համար՝ մի անգամ եւս
մերկացնելու և խարանելու ռուսական բոլշե-
վիզմի ներքին ու արտաքին քաղաքականու-
թիւնը։ Էմիլ Վանդերվելդ յուզիչ ճառի մէջ
նշաւակեց, թ միջի այլոց, Հայաստանի և Վը-
րաստանի բռնի նուաճումը կարմիր Ռուսիայի
ձեռքով.

— «Բազմատանջ հայ ժողովուրդը—ասում
էր նա, դիմելով Ռադէկին—դրուած է այսօր,
ձեր շնորհիւ, երկու կրակի մէջ, քեմալական
բռնակալութեան և կարմիր բռնակի...»։

Խօսեց երկարօրէն և Մակդոնալդ, մաս-
նաւորապէս Վրաստանի մասին, որի անկա-
խութիւնը Մոսկուան խոստացել էր յարգել
յատուկ դաշնագրութեամբ, որ սակայն պա-
տռուեց ցինիկօրէն և Վրաստանը գրաւուեց։
Ռադէկ պատասխանեց երկար ճառով։ Նա լը-
ռութեամբ անցաւ Հայաստանի վրայից—գու-
ցէ խօսք չգտաւ պատասխանելու Վանդերվելդի
խարանող ակնարկին և ծանրացաւ Վրաստանի
պարագայի վրայ։ Քաղաւածքներով ու վաւե-
րագրերով նա փորձեց հերքել Մոսկուայի վը-
րայ ծանրացած մեղադրանքները, ասաց, որ
հին վրացական մենշևիկ կառավարութիւնը ազ-
գայնամոլ էր, չովէնիստ, ճնշող ու հալածող,
որ Վրաստանի անկախութիւնը ստեղծուած էր
գերման կայսերական բանակի ձեռքով, որ
վրացի մենշեվիկ սոցիալիստները—Ժորդանիա,
Մերեթելի և այլն—Թիֆլիսի մէջ «կեցցէ՛» էին
գոռում Վիլհելմ II-ի զօրավարներին, որ մեն-
շեվիկեան վարչութիւնը յարուցել էր խոր դժ-

գոհութիւն ժողովրդական խաւերի մէջ, որ, վերջապէս, կովկասեան նաւթը պէտք էր Ռուսաստանին, Բաթումը պէտք էր Մոսկուային... և եթէ ռուսները չգրաւէին Կովկասը, միևնոյն է, պիտի գրաւէին Համաձայնութեան պետութիւնները, որոնք գարձրել էին Վրաստանը իրենց գործունէութեան ու գաւերի խարիսխ... և այլն և այլն։ Փաստեր, որոնք, ի հարկէ, չէին կարող արդարացնել ռուս-բոլշեվիկեան բռնագրաւումը։

Երկար չենք կարող ծանրանալ այդ պատմական նիստերի վրայ, որքան էլ հետաքրքրական լինին նրանք։ Միանգամայն անհնարին չէր, ի հարկէ, համերաշխ գործակցութիւն Մոսկուայի և Արևմուտքի միջև՝ որոշ խնդիրների շուրջը։ Այդպէս էր կարծում Վիեննայի Միութիւնը, որ ամէն կերպ աշխատում էր գրանել շփման կէտեր և համաձայնութեան բերել Լոնդոնն ու Մոսկուան, նոյնիսկ ի հարկին զոհաբերելով Վրաստանի անկախութեան դատը և միւս ծանրակշիռ խնդիրը՝ ռուս սոցիալիստ-յեղափոխականների՝ որոնք երկար ժամանակից ի վեր փակուած էին ռուսական բանտերում և որոնց սպառնում էր մահուան պատիժ։

— Անե՛նք առաջին քայլը, փոքրիկ, նուազագոյն պահանջներ միայն դնենք Մոսկուային, իրագործենք առաջին էտապը, այնուհետև աստիճանաբար կ'ընդարձակենք համաձայնութեան եզրները։ Ես ինքս լաւատես եմ ապագայի վերաբերմամբ։

Այսպէս էր ասում մեզ Ֆրիդրիխ Ադլեր։ Նա հաւատում էր, որ շուտով համաշխարհային ռէակցիայի դէմ պիտի կանգնի միացեալ աշխատաւորութեան անառիկ պատնէշը, մի ծայրը Մոսկուայում։ Հաւատում էին Վիեննայի պատգամաւորները, որ հնարաւոր կը լինէր անմիջապէս կազմակերպել Մոսկուայի հետ բողոքի ու ցոյցի հսկայական թափօրներ ամբողջ Եւրոպայում, ցոյցեր ընդդէմ պատերազմի ու միլիտարիզմի, ապա և ընդհանուր, համատարած գործադուլներ, որոնք կարող էին խիստ նեղը ձգել արևմտեան բուրժուազիային և լուրջ զիջումներ խլել նրանից։

Սխալուած էին Ադլեր և իր ընկերները իրենց լաւատեսութիւնների մէջ Մոսկուայի նկատմամբ։

Լոնդոնի Ինտերնացիոնալը անդրդուելի էր իր պահանջների մէջ։ Նա պահանջում էր ազատել բանտերից ռուս բազմաթիւ ընկերվարականներին և դուրս քաշել ռուսական զօրքը Վրաստանից։ Նա արդէն մի քանի անգամ առաջարկել էր Մոսկուային՝ պլեբիսցիտ *) սարքել Վրաստանի մէջ, խառն Ցանձնաժողովի ձեռքով, իմանալու վրաց ժողովուրդի ճշմարիտ կամքը երկրի կառավարութեան վերաբերմամբ **)։

Վիեննայի Միութիւնը փոքր ինչ դժկամակութեամբ՝ համակերպեց Լոնդոնի պահանջներին և երկուստեք մի շարք պայմաններ գրին Մոսկուայի ներկայացուցիչներին։ Վերջնական ձե-

*) Հանրաքուէ։

**) Նման առաջարկ Ինտերնացիոնալը չէր կարողանել խորհրդային Հայաստանի նկատմամբ, քանի դեռ Թիւրքերը բանակ էին գրած Ախուրեանի վրայ...

ւակերպութեան մէջ նրանք այլ եւս չպնդեցին Վրաստանը պարպելու պահանջի վրայ, այլ միայն թելադրեցին Մոսկուային, որ նշանակուի յատուկ խառն Ցանձնաժողով և նրա ձեռքը տրուին բոլոր վաւերագիրները ռուսական գրաւման շուրջը։

Մոսկուային ուղղուած պայմանների շարքում առաջնակարգ տեղ էր բռնում սոցիալիստ-յեղափոխական մահապարտների հարցը։ Ոչ ոք չէր կասկածում, որ այդ տասնեակ գաղափարական երիտասարդները պիտի կախուէին իբր դաւադիրներ ընդդէմ սովէտական տիրող կարգերի։ Նրանց դատը պիտի կատարուէր մօտ օրերում։ Արեւմտեան ընկերվարականները պահանջեցին Բերլինում, որ այդ դատը լիներ հրապարակային և որ թոյլ տրուի Եւրոպայից իսկ՝ դրկելու փաստաբանները։

Որոշուեց, վերջապէս, որ քիչ յետոյ գումարուին Բերլինի մէջ 3-ական պատուիրակներ Լոնդոնի, Վիեննայի եւ Մոսկուայի Ինտերնացիոնալից՝ խորհրդակցելու ապագայի առնելիքի մասին (այսպէս կոչուած ինների Ցանձնաժողովը)։ Իսկ մինչ այն Ռադէկ պիտի տաներ Եւրոպայի ընկերվարական Միութեանց պահանջները Մոսկուայի կենտրոնին։

Իննի Ցանձնաժողովի գումարման նախօրեակին կայացաւ, 1922 թ. Մայիսին, Գերմանիայի Կէօլն քաղաքում—Լոնդոնի Ինտերնացիոնալի Դարձադիր Մարմնի խորհրդակցութիւնը։ Ներկայ էր, ի շարս այլ անդամների, և հայկական պատգամաւորութիւնը։ Ժողովը մշակելու էր մի շարք պահանջներ, որոնք

պէտք է առաջադրուէին Մոսկուային՝ Իննի Ցանձնաժողովի գալիք նիստի մէջ։

«Դաշնակցութեան» ներկայացուցչի մի զեկոյցից յետոյ, ընդունուեց միաձայն հայկական դատի վերաբերմամբ մի որոշում, որի իմաստը հետեւեալն էր.

Լոնդոնի Ինտերնացիոնալը պահանջում է Մոսկուայի կառավարութիւնից՝ կորովի միջոցներով ազդել Թիւրքիայի դաշնակցի վրայ, որպէսզի նա պարպէ Միջազգային կոնֆէրանսներում սահմանուած Թիւրքահայաստանի մի մասը, ուր պիտի համախմբուի փախստական հայութիւնը և կազմակերպուի Ազգերի Լիգայի հովանաւորութեան տակ։

Այդ որոշումը, ի շարս միւսների, Լոնդոնի Միութեան երեք պատգամաւորները, Մակդոնալդ, Վէլս և Վանդերվելդ տարան Բերլին Իննի Ցանձնաժողովին։ Մոսկուայի պատգամաւորը եկել էր արդէն։ Եկել էր բացառական պատասխաններով։ Ժողովը ցրուեց առաջին իսկ նիստին, առանց խորհրդակցութեան դիմելու։ Մոսկուան ընդունում էր մէկ պահանջը միայն, այն, որ վերաբերում էր սոց.-յեղափոխական բանտարկեալներին։ Արեւմտեան սոցիալիստների ճնշման տակ, Մոսկուան համաձայնուեց սարքել հրապարակային դատավարութիւն և արտօնեց Լոնդոնի Ինտերնացիոնալին՝ իր ներկայացուցիչները դրկելու, նոյնիսկ փաստաբանի պաշտօնով։ Վանդերվելդ ստանձնեց մեղադրեալների փաստաբանութիւնը և երկու ընկերներով գնաց Մոսկուա։ Բայց սովէտական կառավարութիւնը

այնքան խոշընգոտներ դրեց փաստաբանի առջև, որ այդ դատն ուս դարձաւ սովորական կատակներից մէկը և Վանդերվելդ, գործը դեռ նոր սկսած, հարկադրուած եղաւ վերադառնալ Եւրոպա։

Արեւմտեան Ինտերնացիոնալի ճնշումը մէկ էական կէտի մէջ, այնուամենայնիւ, ազդու եղաւ։ Սովէտները չհամարձակուեցին մահուան պատժի ենթարկել մեղադրեալներին։ Նրանք առայժմ մնում են բանտերում։

Մէկ ճակատի գաղափարը, այդպիսով, չիրականացաւ։ Եւ նա չպիտի իրականանայ, մինչեւ չփոխուի բոլշեվիզմի մտայնութիւնն ու գործելակերպը։ Հերթական էր մնում Լոնդոնի և Վիեննայի միութեան հարցը։

ԱՄՍՏԵՐԴԱՄԻ ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ

Մինչ արեւմտեան երկու մեծ ընկերվարական միութիւնները — Լոնդոնի և Վիեննայի — բանակցում էին ձուլման համար, չեզոք ու հանդարտ հոլլանդական հողի վրայ վերակազմուեց ու վերածնուեց Միջազգային Արհեստակցական Միութիւնը, որ նոյնպէս պառակտուած էր պատերազմի միջոցին։

Ընկերվարական Ինտերնացիոնալը աշխատաւորների քաղաքական կազմակերպութիւնն է, իսկ Արհեստակցական Միութիւնը — զուտ տնտեսական կազմակերպութիւնը։ Իբրեւ այդպիսին՝ վերջինը առհասարակ չեզոք է մնում

ընկերվարական այլ և այլ ուսմունքների ու հատուածների հանդէպ, մղում է դասակարգային պայքարը պարլամենտներից դուրս, տնտեսական հողի վրայ, ձգտում է կազմակերպել այնքան բոլոր այլազան ճիւղերի աշխատաւորներին, ձգտում է բարւոքել աստիճանաբար նրանց կացութիւնը ներկայ դրամատիրական սիստէմի մէջ, պահանջներ է դնում գործատէրերին—8 ժամեայ աշխատանքի օր, օրավարձի յաւելում, ծերութեան ապահովում և այլն—և երբ այս կամ այն արդար ու ստիպողական պահանջը մերժւում է գործարանատէրերից, շղթայազերծում են մեծ գործադուլներ, որոնք երբեմն վիթխարի ծաւալ են առնում և սնուցւում են այն միջոցներով, որ Արհեստակցական միութիւնները *) ամբարում են տարէց-տարի իրենց կենտրոնական գանձարաններում հարիւր հազարաւոր անդամների ամսատուրքերից։

Այդ կազմակերպութիւններից ամենահինը և ամենահարուստն է բրիտանականը—Trades Unions—որ հինգ միլիոնի չափ անդամներ ունի և որ վաղուց ներկայացնում է պատկառելի ոյժ Անգլիայի տնտեսական և քաղաքական կեանքում (Labour Party-ն **) այդ հզօր միութեան զուտ քաղաքական-պարլամենտական կազմակերպութիւնն է)։

Վերածնուեց Արհեստակցան Միջազգային

*) Կոչւում են նաև բանուորական սենատներ։

**) Լէյբըր Պարտի— Աշխատաւորական կուսակցութիւն։

Միութիւնը պատերազմի աւերածից յետոյ Ամստերդամի Համագումարում, 1919 թուին։ Այդ պատճառով՝ նա կոչւում է սովորաբար Ամստերդամի Ինտերնացիոնալ։ 1919-ի Յուլիս 28-ին Ամստերդամում հաւաքուած էին 40 պատգամաւոր՝ 12 երկիրներից։ 1922-ի Ապրիլ 20-ին Հաագի արհեստակցական Համագումարին՝ կային արդէն 107 պատգամաւոր՝ 19 երկիրներից, որ ներկայացնում էին չորս 24 միլիոն արհեստաւորներ։ Այսօր Միութեան մէջ կազմակերպուած արհեստաւորների թիւը հասնում է մօտ 30 միլիոնի։

Ռուսաստանում՝ սինդիկատների մէջ կազմակերպուած արհեստաւորներին հաշւում են մօտ 6 միլիոն։ Ռուսական սինդիկատները, բնականաբար, չէզոք մնալու իրաւունք չունեն։ Նրանք խստօրէն կուսակցական են և կուրօրէն ենթակայ իշխող կուսակցութեան։ Նրանք պարտաւոր են դաւանել բոլշեվիզմ, կոմմունիզմ, լենինիզմ,

Մոսկուայի կոմմունիստները սկզբից ի վեր աշխատեցին բոլշեվիկացնել նաև Ամստերդամի արհեստակցական Միութիւնը։ Նրանք շատ ճիգ ու դրամ թափեցին այդ գործի համար։ Մոսկուայի ու Երրորդ Ինտերնացիոնալի գործակալները բոլոր արեւմտեան երկիրներում ներս սպրդեցին բանւորական սինդիկատների մէջ և սկսեցին կազմակերպել կոմմունիստական կորիզներ, «բջիջներ»։ Այդ աշխատանքը կատարւում է այսօր եւս։

Կոմմունիստներին չեն հետաքրքրում այն բոլոր ազէֆորմները—օրավարձի յաւելում, աշխատանքի ժամանակի կրճատում և այլն—որոնց համար սինդիկատները պայքարում են ամէն օր։ Նրանք արհամարհում են «մանրմունր բարենորոգումները» և կ'ուզեն ամէն բան ձեռք բերել մեկ հարուածով, բոլշեվիկեան յեղափոխութեամբ։ Ուստի և տնտեսական խնդիրները մի կողմ թողած, նրանք զբաղւում են արհեստակցական միութիւնների ծոցում բացառապէս քաղաքական պրոպագանդով, ձգտում են նեռել այդ միութիւնները Մոսկուայի փարախը։

Իսկ Ամստերդամի Միութեան վարիչները, որ լաւ գիտեն ռուսական մեթոդի աղէտաւոր բնոյթը, սկզբից իսկ անհաշտ կռիւ յայտարարեցին կոմմունիստներին, որոնք, ընկերվարական կուսակցութիւնները պառակտելուց յետոյ, այժմ էլ կ'ուզեն Արհեստակցական հոյակապ Միութիւնը «ներսից պայթեցնել» իրենց «բջիջային գործունէութեամբ...»։

Երբ բոլշեվիկներին հարց են տալիս. «հապա ինչո՞ւ Մոսկուայի վարիչները խստիւ արգիլում են մենշեվիկների ու սոցիալիստ-յեղափոխականների մուտքը ռուս արհեստակցական միութիւնների մէջ և խեղդում են ամէն ազատութիւն,—մինչ դուք պահանջում էք մեզնից այդ ազատութիւնը և վրդովւում ու կատղում էք, երբ մենք արգելում ենք ձեզ մտնել ու պայթեցնել մեր ընկերվարական միութիւնները,—Մոսկուայի գործակալները ցինիկօրէն պատասխանում են միջնադարեան եզուիտների ձեւով.

«Մենք կոմմունիստներս դէմ ենք ազա-

տութեան, ուստի և ձեզ չենք տալիս այն։ Բայց դուք ընկերվարականներդ ազատութեան կողմնակից էք, ուստի պարտաւոր էք տալ մեզ այդ ազատութիւնը...»։

Լենին ինքը աուել էր հրահանգները պառակտիչ գործունէութեան համար։ Եւրոպայի Արհեստակցական Միութիւնները նրա աչքում պահպանողական էին, յետադէմ, պատեհապաշտ, «դեղին» և այլն, նրանց չէֆերը՝ բուրժուազիայի ու նոյնիսկ ոստիկանութեան հետ ուղղակի կամ անուղղակի կապուած մարդիկ էին։ Այդպէս էր յայտարարում իր գրուածքի մէջ, «Կոմմունիզմի մանկական հիւանդութիւնը» խորագրով. և որպէս զի կարելի լինէր մտցնել բոլշէվիկեան հոսանքը բանւորական սենդիկատների մէջ, Լենին հրահանգում էր ա-րեւմտեան կոմմունիստներին՝ խտրութիւն չդնել միջոցների մէջ։

«Ոչ մի տարակոյս—գրում էր նա—որ պատեհապաշտութեան առաջնորդները դիմելու են բուրժուական դիւանագիտութեան բոլոր հնարքներին, բուրժուա կառավարութիւնների, կղերի, ոստիկանութեան ու դատական ատեանների աջակցութեանը, որպէսզի փոքրն կոմմունիստների մուտքը սենդիկատների մէջ, որպէս զի դուրս վտարեն նրանց այնտեղից բոլոր պատշաճ ձեւերով...

«Պէտք է իմանալ դիմադրել այդ բոլորին, պատրաստ լինել ամէն զոհաբերութեան,—և, եթէ անհրաժեշտ է ի գործ դնել նոյնիսկ խարամանկութիւն, խարդախութիւն, անօրինական մեթոդներ, ի հարկին լռել, ի հարկին թագցնել, վարագուրել ճշմարտութիւնը, մանելու համար արհեստակցական միութիւնների ծոցը և այնտեղ մնալու և կոմմունիստական աշխատանք կատարելու...» *)։

*) Lenin, L'Estremismo, Malattia d'infanzia del Communismo, էջ 41։

Այս հրահանգների հանդէպ՝ Պոլ Ֆոր, ֆրանսիական ընկերվարական կուսակցութեան ընդհանուր քարտուղարը, բացագանչում է վրդովմունքով.

— «Մի կուսակցութիւն, որ ընդունում է այս տեսակ փիլիսոփայութիւն, ինքզինքը վարկաբեկում է եւ անարգում։

«Այս է անա, այս թշուառ խարդախութիւններն են, որ առաջարկում են իբրեւ իդեալ Ֆրանսիայի պրոլետարիատին.

«Այն Ֆրանսիայի, որ ունեցել է Վոլտեր ու Դիդրո, Մեծ Յեղափոխութիւն ու Կոմմունա, Հիւգո եւ Լամարտին, Անատոլ Ֆրանս եւ Ժորես... Allons donc !» *)։

Պէտք չէ երեւակայել, թէ Ամստերդամի Միութեան մէջ կազմակերպուած մի քանի տասնեակ միլիոնաւոր աշխատաւորութիւնը տարուած է միայն առօրեայ հոգսերով, օրավարձի ու աշխատաժամի խնդիրներով։ Այդ հսկայ կազմակերպութիւնը էապէս ընկերվարական մի մարմին է, որ ամենօրեայ պայքարի ու տառապանքի մէջ երբեք չի մոռանում իր վերջնական նպատակը՝ կապիտալիզմի տապալումը և աշխատանքի, արդար ու մարդկային իրաւակարգի հիրապետումը։ Ամստերդամի արհեստակցական Ինտերնացիոնալը, խորապէս հակաբոլշէվիկ, ընթանում է միշտ թեւ թեւի՝ ընկերվարական-քաղաքական Ինտերնացիոնալի հետ, որդեգրում է նրա բոլոր պահանջները, պայքարում ընդդէմ միլիտարիզմի

*) Paul Faure, Le Bolchévimse en France, էջ 49։

ու յանուն խաղաղութեան, ձգտելով միաժամանակ դարմանել անտեսական այն զարհուրելի, համաշխարհային ճգնաժամը, որից ամենէն աւելի տառապում է ինքը աշխատաւորութիւնը։

Վերածնունդ՝ Լոնդոնում, վերածնունդ՝ Ամստերդամում... Ընկերվարութեան ալիքն էր, որ վերստին բարձրանում էր արեւմտեան համաստիւռ աւերածի ու քաոսի մէջ։ Միւս կողմից բոլշեվիզմի կամ արեւելեան սոցիալիզմի աստղն էր, որ թեքւում էր դէպի անկում։ Անգամ Վիեննայի Միութիւնը, որ մէկ ոտքով արդէն Երրորդ Ինտերնացիոնալի մէջ էր. կամաց-կամաց, Մոսկուայի խարդախ մեթոդներից զզուած, երես դարձրեց բոլշեվիզմից և սկսեց աւելի բարեացակամ աչքով նայել դէպի Լոնդոն ու Ամստերդամ։ Կատարուեց մի այլ նշանաւոր դէպք. Գերմանիայի անկախ ընկերվարական կուսակցութիւնը, որ ողնաշարն էր Վիեննայի Միութեան, զատուեց այդ վերջիններից և վերստին միացաւ իր երկրի ընկերվարական մեծամասնութեան։

Միութեան ճանապարհը այնուհետեւ հարթուած էր։ 1923 թ. Մայիսի Համբուրգի Միջազգային կոնգրէսում ընդհանուր ու բուռն խանդավառութեան մէջ հռչակուեցաւ Ինտերնացիոնալի միացումը։ Լոնդոնի ու Վիեննայի Միութիւնները ձուլուեցին նրա մէջ։ Նրա գիրկը մտան և Իտալիայի հին ընկերվարական կուսակցութեան — Տուրատտիի, Մատիլիանիի և այլն — և Ռուսաստանի ս. ր.ներն ու ս. դ.ները։ Լայնարձակ սրահի մէջ հազարից աւելի պատուիրակներ կային, որ ներկայացնում էին տասնեակ երկիրներ՝ Անգլիա, Ֆրանսիա, Գերմանիա, Շվէտիա, Նորվէգիա, Դանիա, Իտալիա, Բելգիա, Հոլլանդիա, Սպանիա, Զուիցերիա, Ունգարիա, Ամերիկա, Աւստրիա, Ռուսաստան, Ուկրայնա, Հայաստան, Վրաստան, Բուլգարիա, Սերբիա, Ռումանիա։ Ռուսական պատուիրակութեան մէջ էր Զերնով, Նախկին Սահմանադիր Ժողովի նախագահը, Մինոր, Լազարեվ, Աքսելրոդ, Աբրամովիչ և այլն։ Վրաստանի պատգամաւորներն էին՝ Ժորդանիա, նախկին վարչապետ, Մերեթելի, Ռամիշվիլի և ուրիշներ։ Հայոց պատգամաւորները — Ջամալեան, Համբարձումեան, Վարանդեան։

Ռուսական հարցը—որ բոլշեվիզմի տիրապետութեան օրերից ի վեր դարձել է միջազգային հարց—մէկն էր օրակարգի կարեւորագոյն խնդիրներից։ Աբրամովիչ, ռուս սոցիալ-դեմոկրատ կուսակցութիւնից, ներկայացրեց կոնգրէսին ընդարձակ ու փաստալի մի զեկոյց։ Ընդհանուր հաւանութեան ու ծափերի մէջ նա չեշտեց, որ բոլշեվիկեան մեթոդներով կարելի է կործանել ամբողջ երկիրներ, բայց ոչ երբեք ընկերվարական մարդավայել կարգեր ստեղծել։ Թուերը ձեռին, զեկուցողը ցուցահանեց Համագումարի առջեւ ռուս բոլշեվիզմի հինգամեայ տիրապետութեան պատկերը... Ռուսաստանի ատիճանական աւերումն ու խորտակումը։ Եւ ահա նրա եզրակացութիւնը։

— Բոլշեվիկեան դիկտատուրան պետք է

ոչնչացուի Ռուսաստանի ներքին ոյժերով եւ նրա աւերակների վրայ պետք է կառուցուի Դեմոկրատիայի շենքը։

Զգայացուցց մի անակնկալ էր ռուս սոցիալիստ-յեղափոխականների յայտարարութիւնը, որ նախագահը կարգաց Ժողովին, ռուսները հաղորդում էին, որ Համբուրգի համար սոց.-յեղ. կուսակցութիւնը նշանակել է իբրեւ պատուիրակներ՝ Ռատեր, Տիմոֆեեվ, Ռակով եւ այլն, որոնք, սակայն, չեն կարողացել գալ, քանի որ պահուում են սովէտական բանտերում...

Առաջ բերենք մի քանի որոշումներ, միաձայն ընդունուած Կոնգրէսից.

«Եւրոպական աշխատաւորութիւնը, ուժեղացած 1918-ի յեղափոխական նուաճումներով, որոնք տապալեցին միապետական ռէժիմները, ուժեղացած բանւոր կազմակերպութիւններու հզօր ծաւալումով եւ մանաւանդ բրիտանական Լէյբըր Պարթիի սրարշաւ վերելքով, պարտաւոր է ընդդիմադրել պետութիւններու իմպերիալիստական քաղաքականութեանը իր սեփական քաղաքականութիւնը, որու նշանաբաններն են՝ խաղաղութիւն եւ ժողովուրդներու ազատութիւն... Ան պարտաւոր է թոյլ չտալ, որ բանտան ժողովուրդներու իրաւունքներուն վրայ, պարտաւոր է խաղաղ լուծումն պահանջել ազգամիջեան վէճերու եւ ընդհարումներու»։

«Աշխատաւոր դասակարգը պարտաւոր է իւրաքանչիւր երկրի մէջ իր բոլոր միջոցներն ի գործ դնել, որպէսզի Ազգերու Լիգան լայնալով, ամկավարական բնոյթ ստանալով եւ աշխատաւորութեան յարաճուն ու վճռական ազդեցութեանն ենթարկուելով, դառնայ կենդանի գործիք մը, որ կրնայ փրկել խաղաղութիւնն ու ազգերու իրաւունքը եւ կրնայ վերաքննել գոյութիւն ունեցող միջազգային դաշնագիրները»։

«Ճերմակ ահաբեկումը Ունգարիայում, ֆաշիստական դիկտատորութիւնը Իտալիայում, հակահայ հայածանքները Թուրքիայում ոչ միայն խոշտանգել են ամկավար հոսանքը այդ երկիրներու մէջ, այլ եւ վտանգաւոր օրինակներ են, որ կարող են թունաւորել նաեւ ուրիշ երկիրներու քաղաքական կեանքը»։

ՈՐՈՇՈՒՄ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

«Համագումարը կը դատապարտէ յամառ շարունակումը, Ռուսաստանի մէջ, կառավարական տերրորի, ինչպէս եւ ոչնչացումը ամկավարական ազատութեանց... Միանգամայն կը թելադրէ, որ աշխատաւորական ուժերը թոյլ չտան զինուած միջամտութիւններ Ռուսիոյ ներքին կեանքին մէջ... Բայց եւ միեւնոյն ժամանակ՝

«Համագումարը կը հրաւիրէ սոցիալիստական կուսակցութիւնները աշխատելու, որ դաշնակից պետութիւնները իրաւապէս ճանչնան ռուսական կառավարութիւնը եւ վերականգնեն դիւանագիտական եւ առեւտրական յարաբերութիւնները Ռուսիոյ հետ»։

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՎՐԱՍՏԱՆ

«Համագումարը կը հրաւիրէ աշխատաւոր զանգուածներու ուշադրութիւնը այն իրողութեան վրայ, որ ոչ միայն Արեւմուտքում, այլ և Արեւելքում ոտնահարուած է ժողովուրդներու ճակատագիրը։

«Համագումարը կը բողոքէ ընդդէմ այն ապիւնոտ տիրապետութեան, որուն ենթարկուած է Հայաստանը Թուրքիոյ եւ Ռուսաստանի կողմէն եւ կը պահանջէ հայ ազգին համար ազատ իրաւունք սեփական ճեռքով տնօրինելու իր բախտը։

«Համագումարը կը պահանջէ, որ սովէտական զօրքերը հեռանան Վրաստանէն եւ որ վրացի ժողովուրդը վերստանայ իր գերիշխանութիւնը»։

ԵՐԿՈՒ ԻՆՏԵՐՆԱՑԻՕՆԱԼԻ ՊԱՅՔԱՐԸ

ԸՆԿԵՐՎԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԲՈԼՇԵՎԻԶՄ

Արեւմուտք և Արեւելք.— Ցարիզմի շարունակումը.— Դեմոկրատիա և Դիքտատուրա.— Տարբերութիւնը ընկերային և քաղաքական յեղափոխութեան միջեւ.— Թրեդ Իւնիոնների խաղը Մոսկուայի հետ.— Գլրսել և Բրեյլսֆորդ.— Անգլիական Լէյբըր Պարտիան և համայնավարութեան գաղափարը.— Կաուցկի.— Մարտով-Զինովիեվ գաղեմարը.—

Եւ ահա անհերթեթ կացութիւն։ Երկու աշխատաւորական Ինտերնացիոնալ՝ դէմ առ դէմ։ Մէկը՝ այդ վերակազմեալը, որ կոչուում են, ըստ հին սովորութեան, Երկրորդ Ինտերնացիոնալ, միւսը՝ Երրորդը, Մոսկուայինը։ Մէկը ընկերվարական անուանն է կրում, միւսը՝ կոմունիստական, համայնավար։ Որպէս երկու թշնամի բանակներ, որ ձգտում են իրար ջնջել, աւելի ճիշտ, իրար կլանել։ Երկուսն էլ պրոլետարիատի ու գիւղացիութեան անունով։

Բայց... մէկը ծնունդ է արեւմտեան կեանքի ու էւոլիւցիայի, միւսը՝ արեւելեան, ասիական կեանքի։ Արեւմուտքը, տեսանք արդէն, դարեր շարունակ աշխատել է քայլ առ քայլ իրականացնել ազատ, ռամկավար ժողովրդապետութիւնը։ Եւ այդ վերջինը այսօր գոյութիւն ունի — ոչ ի հարկէ իդէալական, կատարեալ ձեւով—Մեծ Բրիտանիայում ու իր հովանաւորած երկիրներում, գոյութիւն ունի

Հիւսիսային Ամերիկայում, Զուիցերիայում, Ֆրանսիայում, Հոլլանդիայում, Սկանդինաւեան երկիրների մէջ և այլն։ (Լիակատար կը դառնայ միայն գալոց ընկերվարական սիստեմի մէջ)։

Արեւմտեան ժողովրդապետութեան էական յատկանիշերն են՝ ընդհանուր ընտրողական իրաւունք — գաղտնի, ուղղակի, հաւասար և այլն—պարլամենտական կարգեր, մեծամասնութեան կամքի տիրապետութիւն, փոքրամասնութեան իրաւունքների ապահովում, օրէնդիր, վարչական և դատական մարմինների անջատում ու անկախութիւն, մարդկային անձի անքննադատելիութիւն, մամուլի, խօսքի ազատութիւն և ազատութիւն հաւատամքի, ժողովների, ընկերակցութեան ու սենեակների, գործադուլների և այլն։

Այսօր, անշուշտ, յետ-պատերազմեան համաշխարհային և համատարած տագնապի մէջ (ներքին, միջազգային, քաղաքական, ֆինանսական և այլն) — Դէմօրատիայի սկզբունքն ես մի յատնի տագնապ է ապրում։ Բայց այդ վիճակը ժամանակաւոր է և յամենայն դէպս ապագան դարձեալ պատկանում է Դէմօկրատիային, ժողովրդապետութեան և ոչ ֆաշիստական կամ բոլշէվիկեան Դիքտատուրային։ Ոչ մի հոգմ, ոչ մի Լենին կամ Մուսոլինի չեն կարող սաստկացնել Մեծն Բրիտանիայի, կամ նոյնիսկ Ֆրանսիայի, Ամերիկայի ամրակավարութեան և պարլամենտարիզմի *) հիմերը, որ ստեղծուել են իբրեւ արդիւնք

*) Խորհրդարանային (ոչ խորհրդային) կարգեր։

երեք-չորս դարու մտաւոր հոյակապ շարժման։ Վասն զի այդ երկիրների ընկերվարական կուսակցութիւններն իսկ ամուր կը մնան այն համոզման մէջ, որ ընկերվարութիւնը Դէմօկրատիայի տրամաբանական զարգացումն է և որ իրենք ժառանգն են այդ մեծ, դարաւոր, ազատական հոսանքի, պահպանողն ու շարունակողն են նրա ծանուցած յաւիտենական արժէքների և ամենից առաջ՝ Ազատութիւն—արժէքի...

Դէմօկրատիան իրաւք կրթութեան ու դաստիարակութեան մի խնդիր է, մտքի և հոգու դիսցիպլինի խնդիր։ Ապացոյց՝ որ Դիքտատուրայի ու բռնութեան սիստէմները ծաղկում են յետամնաց, քաղաքակրթութեան ստորին աստիճանի վրայ գտնուող երկիրներում — Ռուսաստան, Թուրքիա, Ունգարիա, Բուլգարիա, Յունաստան, Սպանիա, Իտալիա։

Դէմօկրատիան կրթութեան ու դաստիարակութեան պրոբլեմ է,—դաստիարակութիւն անհատի և զանգուածի։ Եւ ճշմարիտ ժողովրդապետութիւնը կարող է միայն իրականանալ այն երկիրներում, ուր իւրաքանչիւր քաղաքացի կը ճանաչէ ոչ միայն իր իրաւունքները, այլ և իր պարտաւորութիւնները, ուր հանրային բարքերի մէջ խորապէս կ'արմատանայ դիսցիպլինը, հնազանդութիւնը օրէնքներին, այսինքն հնազանդութիւնը մեծամասնութեան կամքին, ժողովրդական իշխանութեան։

Քաղաքացիական այդ մեծ առաքինութիւնները բաւականաչափ խոր արմատներ են ձգած բրիտանական, ամերիկեան, զուիցերա-

կան, ֆրանսիական, հոլլանդական, բելգիա-
կան, սկանդինաւեան բարքերի մէջ, ուստի և
Դէմոկրատիան համեմատաբար խոշոր չափով
իրագործուած է այդ երկիրներում։

Եւ ահա արեւմտեան ընկերվարական Ին-
տերնացիոնալը, Երկրորդ, վերակազմեալ Ին-
տերնացիոնալը, ծնունդ լինելով նոյն դարա-
ւոր ռամկավարական հոսանքի, համոզուած է,
որ պիտի հասնէ իր իդէալին—ընկերվարական
իրաւակարգին — նոյն դեմոկրատիայի ճանա-
պարհով, ազատ, ռամկավար կարգերի մէջ,
նրանց շնորհիւ, նրանց միջոցով, թէկուզ և
դանդաղ, երկարատեւ ճիգ ու պայքարով։

Միւս Ինտերնացիոնալը, ասացինք, հարա-
զատ ծնունդ է ռուս-ասիական պայմանների։
Ռուս ժողովուրդը, չնայած հարիւր տարուայ
իր յեղափոխական պայքարին, տարաբախտա-
բար, երբեք չճաշակեց արեւմտեան ազատ
կարգեր, երբեք նրան չյաջողուեց՝ սահմանել
ժամանակակից, ազատական, ռամկավար ի-
րաւակարգ։

Բոլշեվիզմը իրօք չարաւնակում է ցարիզ-
մի գիծը։ Ինչպէս որ երէկուայ Ռուսաստանն
էր թշնամի, ժխտող արեւմտեան դեմոկրա-
տիզմի, նմանապէս այսօրուանը։ Նրա պե-
տական սկզբունքը մնում է նոյնը—մի չնչին
փոքրամասնութեան դիքտատորութիւն՝ ընդ-
դէմ ահագին մեծամասնութեան...

Եւ այդ ազատասպան հաւատամքի մէջ
համայնավարութիւնը միանգամայն համերաշխ
է գտնւում իր գաղափարական հակոտնեայի՝
իտալական Ֆաշիզմի հետ։ Դիքտատուրա բա-

ոը հաւասար եռանդով հոլովւում է երկու
հակընդդէմ քաղաքական բանակների մէջ,—
յեղափոխական կոմմունիստների և բուրժուա-
պահպանողականների։ Երկու կուռք—Լէնին և
Մուսոլինի։ Երկու անուն—մէկ մեթոդ...

Երկուսն էլ իրենց մոլեռանդ հաւատացեալ-
ներին յայտարարում են թէ մեռած են միանգամ
ընդմիշտ 1789-ի *) աշխարհաղթող սկզբունք-
ները, որոնք սրբագործում են մարդ-էակի տար-
րական իրաւունքները. սո՛ւտ է թէ անհատը
պէտք ունի ազատութեան՝ իր ցաւերը յայտ-
նելու, իր առօրեայ խնդիրները արծարծելու
հրապարակային վիճաբանութեամբ. սո՛ւտ է,
թէ մարդ-քաղաքացին պէտք ունի ազատ խօս-
քի ու մամուլի, ազատ հաւատամքի ու ժո-
ղովների. սո՛ւտ է, թէ մարդիկ կ'ուզեն տնօ-
րինել իրենց ճակատագիրը իրենց ազատ կամ-
քով, առանց արտաքին ճնշումի, բռնադա-
տութեան. սո՛ւտ են, աւելորդ են, վնասա-
կար նախապաշարմունքներ են՝ այդ բոլոր ի-
րաւունքներն ու ազատութիւնները... և յա-
ւագոյն է, որ մի բուռն մարդիկ — կոմմու-
նիստներ կամ ֆաշիստներ — կամ թէ մի հա-
տիկ հրամանատար, Լէնին կամ Մուսոլինի,
անսահման իրաւունքներով օժտուած, վարէ
ժողովրդի և անհատների ճակատագիրը... նը-
ման վազեմի արքաներին, որոնք «Աստուծոյ
զօրմութեամբ» գահ էին նստում և տասնեակ
տարիներով իշխում ընդարձակ երկիրների
վրայ։

---

*) Ֆրանսիական Մեծ Յեղափոխութեան։

Այս սքանչելի դաղափարներով էր, որ ռուս համայնավարները հրաչակերտեցին իրենց Դիքտատուրան։ Դիքտատուրա, որ մի աննշան փոքրամասնութիւն — ընդամէնը մի քանի հարիւր հազար կոմունիստներ — գործադրում են հարիւր միլիոնաւոր ընդհանրութեան վրայ։ Դիքտատուրա՝ որ ընդօրինակումն է հին ցարական բիւրոկրատիայի, ուր չկայ տեւէ ազատ հրապարակային վիճաբանութիւն՝ անգամ ամենահրատապ խնդիրների շուրջը, անգամ ազվէթների ընտրութեան ժամանակ, ուր չկայ տեւէ ընտրական պայքար կոմկուսի ու կոմբջիջների անձուկ սահմաններից դուրս, ուր ամէն ինչ կատարւում է իշխանութեան — այսինքն մեծ ու պզտիկ ազվէթների — հրամանով և մասսաների դիակնային հնազանդութեամբ, ուր քաղաքացիական իրաւունքները գոյութիւն ունին իրաք միայն կոմունիստ կուսակցութեան անդամների համար, ուր, վերջապէս, թագաւորում է մի անօրինակ, մարդկային պատմութեան մէջ չտեսնուած լրտեսական սիստեմ, որ իր նուրբ կատարելագործման ատիճանով կը գերազանցէ ցարական ու համիդեան օրերի բոլոր լրտեսական կազմակերպութիւնները...

Եւ ռուս համայնավարութիւնը — նրա հետ ամբողջ Երրորդ Ինտերնացիոնալը — համոզուած են, որ այդպիսի քաղաքական բարքերով պիտի հասցնեն ոչ միայն Ռուսաստանը, այլ և ամբողջ աշխարհը՝ ընկերվարական ամենաբարձր, ամենավսեմ համայնակենցաղին...

Ծիծաղելի յաւակնութիւն է, որ, ի հար-

կէ, չէր կարող քալել և արդէն իսկ վիժած է։

Արեւմտեան աշխատաւորութիւնը իր ճընշող մեծամասնութեամբ և ի դէմս իր լաւագոյն տարրերի՝ յետ մղեց այդ բոլշեվիկեան մեթոդները, որոնք կարող են առաջնորդել քաղաքակիրթ մարդկութիւնը միայն դէպի վայրենացում։

Այո՛, անշուշտ, Դեմոկրատիայի ճանապարհը երկար է, դժուարին, երբեմն վհատեցուցիչ։ Այո՛, պարլամենտական ռէֆորմների, աստիճանական ռամկավարացման և առհասարակ խաղաղ, օրինական միջոցներով, տարաբախտաբար շուտ չենք հասնի Իդէալին — մարդկային բովանդակ ազատագրութեան, բոլոր կաշկանդող շղթաներից։ Այո՛, գիտենք, ամենապարզ, ամենազատ, ամենադէմոկրատիկ զուիցերական Հանրապետութեան մէջ՝ դեռ ուժեղ են դասակարգային հակադրութիւնները, դեռ խորունկ է ունեւորի և չքաւորի նիւթական անհաւասարութիւնը — աղբիւր նաեւ մտաւոր, հոգեկան, ֆիզիքական անհաւասարութեան... Բայց ի՞նչ արած... Սոցիալական յեղաշրջումը — կրկնենք յաճախ այս ծանրակշիռ ճշմարտութիւնը — անհունապէս տարբեր է քաղաքական յեղաշրջումներից, որպիսիք կատարուել են 17րդ դարուց ի վեր ամբողջ լուսաւոր և կիսախաւար երկրագնդի վրայ, — քաղաքական յեղաշրջումներ, ուր պէտք էր միայն գահընկէց անել միապետին կամ սահմանափակել նրա իշխանութիւնը պարլամենտական կարգեր հաստատելով... Դիւրին էր համեմատաբար այդ գործը, Ռոբեսպիէռների և Դան-

ռոնների գործը, կերենսկիների ու Եփրեմների գործը... Դիւրին էր, որովհետեւ նրա հեղինակները—քաղաքական յեղափոխութիւնների հերոսական դերակատարները— բարձրացնելով ապատամբութեան դրօշը ընդդէմ վայրագ, միահեծան բռնապետութեան, քար ու քանդ անելով Բաստիլները և միապետական բոլոր զնդանները, խօսում էին բազմամիլիոն ընդհանրութեան սրտից, պաշտպանում էին մարդկային ամենատարրական իրաւունքները...

Հապա երբ պէտք է յեղաշրջել ընկերային բովանդակ կառուցուածքը, երբ պէտք է բոլորովին նոր հիմերի վրայ դնել արդիւնաբերութեան, փոխանակութեան և ապրանքների բաշխման գործը. երբ պէտք է հիմնայատակ վերիվայրել սեփականութեան զարհուրելի հաստատութիւնը—արմատացած մարդկային գիտակցութեան մէջ անյիշատակ դարերից ի վեր—երբ հարկ է հաւասարեցնել քաղաքացիներին ոչ միայն օրէնքի, այլ և նիւթական բարօրութեան ու երջանկութեան խնդրի շուրջը, — այդտեղ արդէն յեղափոխականի գործը անհունապէս բարդանում է, դժուարանում, նա այլ եւս չի կարող գործել յուսահատութեան, անհամբերութեան ժեսթերով, ապըստամբական խօլ ու յախուռն թռիչքներով, այլ պէտք է անդուլ, յարատեւ քարոզչութեամբ մատչելի անէ իր գաղափարը ամենալայն զանգուածներին, ազգի հոծ մեծամասնութեան. նա պէտք է—ամբողջ սերունդների տաբածութեան վրայ—պարզէ, բացատրէ այդ զանգուածներին, որ ընկերվարական կամ հա-

ւաքական սեփականատիրութեան ու արդիւնաբերութեան ձեւը*) աւելի արդար է, աւելի բարձր, աւելի օգտակար ու արգասաւոր, քան թէ ներկայ սեփականատիրութեան ու արդիւնաբերութեան սիստէմը, ուր դրամագլուխը, հանքերն ու գործարանները, հաղորդակցութեան ու փոխանակութեան միջոցները պատկանում են համեմատաբար փոքրաթիւ տէրերի և աշխատաւոր պրոլետարիատը, զուրկ ամէն դրամագլխից, ստիպուած է, ապրելու համար, ծախու հանել նոյն տէրերին իր մկանների և ուղեղի ոյժը և իր արտադրած նիւթական բարիքներից, իր դժուարին աշխատանքի փոխարէն, ստանալ այնքան միայն, որ հազիւ կարողանայ ապահովել իր ու իր ընտանիքի ապրուստը։

Այո, որքան էլ բնական ու ըմբռնելի է վաստակաւոր և չքաւոր ընդհանրութեան մէջ երբեմն արտայայտուող անհամբերութիւնը, ցասումը և ծայրայեղ ժեսթերը, — այդպիսի ընթացքով չէ, որ նա պիտի հասնէ իր նպատակին։ Այդպիսի ժեսթերով առաջ է գալիս միայն կոծանում...

Ոչ ոք չի կարող աւելի սոցիալիստ ու կոմմունիստ լինել, քան Էնգելս։ Իսկ նրա վերջին պատգամն է—ընթանալ քայլ առ քայլ,

*) Այսինքն մի ձեւ, ուր ժողովուրդը, ամբողջ իր ձեռքն առնելով արդիւնաբերութեան բոլոր միջոցները, հող ու դրամագլուխ, հանք ու գործարան և այլն, պիտի արդիւնաբերէ հաւաքական, ներդաշնակ ճիգերով և պիտի բաշխէ արտադրելիք հարստութիւնները քաղաքացիներին՝ ըստ իւրաքանչիւրի նիւթած աշխատանքի, կատարած ծառայութեան։

էւոլիւցիայի, աստիճանական ռէֆորմների ճանապարհով, զինուած համբերութեամբ ու շրջահայեցութեամբ։

Էւոլիւցիայի, ընդհանրապէս խաղաղ զարգացման մեթոդը — կ'աւելացնէինք մենք — չի ժխտում, որ երբեմն բռնի միջոցներն եւս կարող են դառնալ անհրաժեշտ ու օգտակար։ Ինքը Մարքս սիրում էր գուշակել, որ, օրինակ, Անգլիայի մէջ, ամենափարթամ կապիտալիզմի հայրենիքում, ընկերվարական յեղաշրջումը կարող է կատարուել միանգամայն խաղաղ ձեւով, առանց բախումների ու արիւնհեղութիւնների։ Բայց անգամ Անգլիայում, անգամ խաղաղասէր և գերազանցապէս էւոլիւցիոնապաշտ Labour Party-ի շարքերում պակաս չեն խորհողներ, նման Մակդոնալդին ու Հենդերսոնին, որոնք բնաւ չեն վտարում գալոց սոցիալական վերիվայրումների աշխարհից բռնի միջոցների կիրառման հնարաւորութիւնները։

Սակայն այդ կը լինի միայն այն ժամանակ, երբ, ինչպէս ասացինք, նոր կարգերն արդէն հասունցած կը լինին հիների ծոցում և երբ բռնութիւնը պիտի գայ միայն — կարել Մարքսեան արտայայտութեամբ — որպէս մանկաբարձ...

Կ'ուզէինք բերել այստեղ վերջաբանը մեր մի գրուածքի *), որ հակառակ իր 16-ամեայ հնութեան, այսօր, ռուսական աղէտաւոր փորձերից յետոյ, աւելի թարմ ու այժմէա-

*) «Հոսանքներ», Լ. Ց. Դաշնակցութեան տպարան, 1910 թ.։

կան է, քան երբեք։

Գրելով «Յեղափոխական սինդիկալիզմի» մասին — մի հասանք, որ շատ կողմերով նմանում է այժմեան բոլշէվիզմին — մենք գրում էինք բաւական հետեւեալը.

«Սինդիկատներ *) և կուսակցութիւն, բանւորութիւն և սոցիալիստ մտաւորականութիւն, միացած, թեւ թեւի տուած, յանուն ընդհանուր իդէալի, յանուն ամբողջ հարստահարուած մարդկութեան ազատագրման, — այդ ելքը... Յեղափոխական սինդիկալիզմը վերջ ի վերջոյ ստիպուած կը լինի համակերպիլ այդ հին, փորձուած իմաստութեան։ Նա ստիպուած կը լինի վերջ ի վերջոյ դուրս գալ անձուկ իր սահմաններից, թողնել անձուկ իր ըմբռնումը սոցիալիզմի առաքելութեան, թողնել կուսի վտանգաւոր ծայրայեղութիւնները, նրա փոքր ինչ նահապետական, կոպիտ ձեւը, թողնել նաեւ արիւնի իր անօգուտ պաշտամունքը, գետնատարած երկրպագումը «խիզախ, արի փոքրամասնութեան»։ Նա ստիպուած կը լինի՝ հանրային, ժողովրդական ճնշման տակ՝ չափաւորել կատաստրոֆային, անիշխանական իր տենդը... և կը գրկէ վաղ թէ ուշ ընդհանրական, ամբողջական սոցիալիզմի դատը։

«Սոցիալիզմի իդէալը — ժողովուրդների բովանդակ ազատագրութեան իդէալն է. իսկ այդ հոյակապ նպատակը չի կարող իրագործուել կղզիացած մի շարժումով. անակնկալ, թէկուզ և հզօր մի հարուածով... Երբ մի օր

*) Արհեստակցական միութիւններ։

ապագայում այս կամ այն երկրի պարլամենտի մէջ, ժողովրդական ձայնատուութեան մի յորձանքով, սոցիալիստները կազմեն ճնշող մեծամասնութիւն—նրանք դեռ չեն կարող տիրանալ այդ երկրի ճակատագրին, տակնուվրայ անել ամէն ինչ, չեն կարող սահմանել սոցիալիստական հասարակութեան նոր կարգերը, եթէ աշխատաւոր ընդհանրութիւնը, պրոլետարիատը պատրաստ չլինի բուրժուազիային ըստ ամենայնի փոխարինելու, եթէ նա բաւականաչափ հասունցած չլինի այդ նոր կարգերն իրագործելու, մարսելու։

Ահա թէ ինչո՛ւ սոցիալական ռէվոլիւսիոնից, յեղափոխութիւնից առաջ անհրաժեշտաբար և պատշաճ ծաւալով պէտք է կատարուի սոցիալական էվոլիւսիոնը, զարգացումը,—մի անհուն աշխատանք պրոպագանդի, կազմակերպման, ռէֆորմային օրէնսդրութեան, կրթութեան ու դաստիարակութեան...

«Պրոլետարիատը պէտք է առաջնայնդանդաղօրէն, յամառ ու դժնդակ պայքարի մէջ, դիրքից դիրք անցնելով և նուաճումից նուաճում։

«Երբ նա կ՚ազատուի ասիճանաբար սեւ ու խեղդիչ թշուառութեան ճիրաններից, երբ բանւորական օրէնսդրութեան կիրառումով նա հետզհետէ կը կազդուրուի, կը բարգաւաճի ֆիզիքապէս ու հոգեպէս, երբ կրթութեան բարիքները տարածուելով, ընդհանրանալով, կ՚ազատի նրա քաղաքակրթական պաշարը, հմտութիւնը, կը լայնանայ նրա մտաւոր հորիզոնը, երբ նա կը դառնայ քաղաքական ու հասարա-

կական պատկառելի ոյժ, ընդունակ վարելու կեանքի վիթխարի, բազմակնճիռ մեխանիզմը, երբ ռամկավարական հաստատութիւնները — Հանրապետութիւն, Ռեֆերենդում, Ժողովրդական Նախաձեռնութիւն, Ժողովրդական Զօրասիստեմ *) (milices) և այլն — կը կատարելագործուին ու կ՚արմատանան մասսաների գիտակցութեան մէջ, երբ արհեստակցական և գործակցական միութիւնները, սինդիկատներն ու կօօպերատիվները կը ցանցատեն ամենուրեք, կը ճիւղաւորուին թէ՛ արդիւնաբերական կենտրոններում և թէ գիւղական լայնարձակ հորիզոններում, երբ սոցիալիզմը անդուլ ու մեթոդիկ քարոզչութեամբ իր գիրկը կը գրաւէ խեղճ ու տգէտ ժողովրդային ընդհանրութիւնից միլիոններ և միլիոններ, կը հաստատէ իր հմայքը կեանքի բոլոր ասպարէզներում, «կը վարակէ» նաեւ զինւոր քաղաքացիներին, երբ պրոլետարիատի յարաճուն ազդեցութեան տակ, նրա քաղաքական պատգամաւորութեան ճիգերով **) կը կատարուի երկրի այլ և այլ խաչոր, ընդարձակ գործունութիւնների ***) պետականացումը կամ ազգայնացումը, երբ նա մասնակի նուաճումներով կը բանայ դէթ մի քանիսը մեծագոյն խոշընդոտներից, կը թունաւորէ կապիտալիզմը՝ իր կենսական աղբիւրների մէջ, կը դառ-

*) Այդ հաստատութիւնները ծաղկում են փոքրիկ Զուիցերիայում։

**) Պարլամենտի մէջ։

***) Երկաթուղիների, հանքերի շահագործման և այլն։

նայ ահաւոր մի գործոն թէ՛ պարլամենտում ու քաղաքային խորհրդարաններում և թէ սրանցից դուրս. հզօր իր թւով ու օրակով, գիտակ իր մեծ առաքելութեան, տոգորուած իր ջինջ ու վեհափառ իդէալով, — այն ժամանակ սոցիալական յեղափոխութիւնը կը պոյթի ապահովաբար, առանց նոյնիսկ արհաւրալի կատաստրոֆների, այն ժամանակ ընդհանուր համատարած գործադուլն եւս կարող է դուրս գալ զառանցանքների աշխարհից, դառնալ կենդանի իրականութիւն... Այն ժամանակ էլ ոչ մի ոյժ — երկրաւոր կամ երկնային — չի գիմանայ աշխատաւորական լեգէոնների յորձանքին...*):

ԱՆԳԼԻԱՅԻ ՍՈՑԻԱԼԻՍՏՆԵՐԸ ԵՒ ՀԱՄԱՑՆԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

Երկու ինտերնացիոնալը անհաշտ կռուի մէջ են։ Ո՞րը որին պիտի նուաճէ, ծծէ ու կլլէ... Արեւմտեան սոցիալիստների համար այդ կռուի վախճանը բնաւ տարակուսելի չէ։ Ո՞ւմ պիտի նուաճէ Մոսկուայի ինտերնացիոնալը.— Բրիտանական կազմակերպութիւնը... Նա վաղուց մերժել է և շարունակում է մերժել ռուսների գործելակերպը։ Մերժում են անգամ այն անգլիացի ընկերվարականներ — Trades Union-ների պարագլուխներ — որոնք առհասարակ զիջող, ներողամիտ, բարեացակամ վերաբերմունք են ցոյց տուել դէպի ռուս բոլշեվիկներն ու նրանց գործերը։ Այդպիսինե-

*) «Հոսանքներ», էջ 371–374։

րից է Պրքսել, որ գնաց Մոսկուա և աշխատում է ստեղծել ռուս արհեստակցական միութիւնները արեւմտեան հզօր ու համանուն Միութեանը*)։ Նպատակն է՝ մէկ, ընդհանուր, համաեւրոպական ճակատ ստեղծել ընդդէմ յարձակուն կապիտալիստական ռէակցիայի։ Պատրանք է, ի հարկէ։ Ռուս արհեստակցական Միութիւնը, ինչպէս ասացինք, զուտ կուսակցական, բոլշեվիկեան մի մարմին է, ենթակայ Մոսկուայի վարիչներին, իսկ այդ վերջինները երբեք չկամեցան լրջօրէն գործակցել Ամստերդամի մարմնի հետ՝ ընդհանուր ճակատ ստեղծելու համար։ Նրանք միայն անհնարին ճիգեր թափեցին կազմալուծելու և ներսից պայթեցնելու համաեւրոպական արհեստակցական այդ հսկայ կազմակերպութիւնը, որպէս զի նրա տեղ տիրէր հրապարակին միմիայն կոմունիստական արհեստակցական միութիւնը։

Պրքսելի ձգտումն է՝ անգլիական և համաշխարհային բուրժուազիայի դէմ օգտագործել Ռուսաստանի արհեստակցական միութեան և ռուս սովէտների պատկառելի ոյժը։

Այդ տիրական մտահոգութեան առջեւ նրա աչքում մեղմանում են բոլշեվիզմի հասցրած չարիքները և նա իր մի խումբ ընկերներով մեծ ճիգեր է անում՝ Մոսկուայի բարեկամութիւնը չհեղուլու։

Իր վերադարձին, նա նոյնիսկ գովեց բոլշեվիկներին և ասաց հրապարակով, որ ներկայ սովէտական կառավարութիւնը լաւագոյն է

*) Սյոմինքն Ամստերդամի Ինտերնացիոնալին։

բոլոր նախորդ ռուսական կառավարութիւն-
ներից *)։

Այնուամենայնիւ անգամ Մոսկուայի այդ
անաչառ բարեկամը յայտարարեց միաժամա-
նակ, որ, ի հարկէ, ռուսների պոլիցիական
մեթոդները անկարելի է կիրառել Անգլիայում
և առհասարակ աղատասէր Արեւմուտքում,
ուր վաղուց թօթափուած են պոլիցիական ռէ-
ժիմները...

Ահա մի այլ դէմք — Բրէյսֆօրդ։ Անգլիոյ
Աշխատաւորական Կուսակցութեան ամենա-
փայլուն հրապարակագիրներից մէկը, ամենէն
հմուտը համաշխարհային և մանաւանդ ռու-
սական աւ արեւելեան խնդիրների մէջ։ Նա եւս
ժամանակին կատարել է ջերմեռանդ ուխտա-
գնացութիւն դէպի Մոսկուա. և մի քանի տարի
շարունակ իր խմբագրած թերթի մէջ — The
New Leader — և այլ թերթերում այնքան հա-
մակրանքով էր խօսել ռուս բոլշէվիկեան ցե-
ղափոխութեան մասին, որ նրան առհասարակ
համարում էին բոլշէվիկ և Մոսկուայի մարդ։
Սակայն նախանցեալ տարի (1924 թ. Սեպ-
տեմբերի վերջերը), երբ մենք բոլոր երկիրնե-
րի պատուիրակներս հաւաքուած էինք Լոնդոնի
մէջ խորհրդաժողովի, — մեր առջեւ բացուեց
մի ուշագրաւ տեսարան։ Ռուս ընկերվարա-

*) Համեմատութիւնը այստեղ իրօք արուած է սօվէտական և ցարական ռէժիմների միջեւ... քանի որ Կերենսկի-Մելիւկով-Զերնովի կառավարութիւնը ժամանակ իսկ չունեցաւ ռեւէ ռէժիմ հաստատելու... Մի այդպիսի համեմատութիւնից ռուս Սօվէտները չեն կարող, ընդհանրապէս, դուրս գալ շահով աւ պատուով...

կան պարագլուխները բուռն կերպով յարձակ-
ուեցին Բրէյլֆօրդի վրայ, որ ներկայ էր մեր
Համագումարին, իբրեւ պատուիրակ բրիտ.
«Լէյբուր Պարտի»ի։ Ռուսները իրաւացի կերպով
նկատում էին, որ անհնարին է մի անգլիացի
ընկերվարական առաջնորդի համար՝ գովեստի
խօսքեր շռայլել ռուս բոլշէվիզմին, որը կա-
տաղօրէն հալածում է ռուս ընկերվարական-
ներին և հազարներով տանջում է բանտերում,
Սիբիրում և Սոլովէցկիի առոցարաններում։
Եղան նոյն ժողովի մէջ խիստ յարձակումներ
նաեւ Լէյբուր Պարտի-ի պաշտօնաթերթ Daily
Herald-ի դէմ։ Նա եւս շատ էր գրել ռուսա-
կան բոլշէվիզմի մասին նպաստաւոր յօդուած-
ներ։ Անօրմալ երեւոյթ... Պաշտօնական օր-
գանը մի կուսակցութեան՝ որը ոչ միայն հա-
կաբոլշէվիկ և հակակոմունիստ է, այլ և
անխնայ դուրս է քշում իր շարքերից կոմմու-
նիստներին։

Այդ յարձակումներին պատասխանեցին թէ՛
Բրէյլֆօրդ և թէ պաշտօնաթերթի խմբագի-
ը, որ նմանապէս ներկայ էր։ Խիստ հնտա-
քրքրական էին պատասխանները։ Թէ մէկը
և թէ միւսը հակաբոլշէվիկ են։ Բայց կան
նրանց համար իրենց ներքին, քրիստոնական
և աշխատաւորական ցաւերը...

«Մենք ամէն կերպ աշխատում էինք, որ
մեր կառավարութիւնը ճանաչէ սօվէտական
Ռուսաստանը, որպէսզի ստեղծուին բնականոն
յարաբերութիւններ այդ երկրի հետ, որից
մեծ ակնկալութիւններ ունինք մեր տնտեսա-
կան կեանքի և մեր աշխատաւորութեան հա-

մար... Մի՛ մոռացէք, ընկերներ, որ մենք ունինք միլիոնաւոր գործակցուրկ աշխատաւորներ... Դա մեզ համար այնքան հրատապ ու մտահոգիչ մի հարց է, որ մենք պատրաստ ենք երբեմն նոյնիսկ գավեսոի մի քանի խօսքեր ուղղել Սովէտներին, որպէսզի նրանք հաւատ ներշնչեն մեր երկրի հանրային կարծիքին և փութացնեն Ռուսաստանի լիակատար ճանաչման ժամը։ Մենք լաւ գիտենք բոլշեվիզմի էութիւնը և բնաւ երբեք բոլշեվիկ չենք...»։

Դուք չեկան, ի հարկէ, Միջազգային Խորհրդաժողովին այդ տարօրինակ պատասխանները...

Բայց ո՞վ կարող է գիտնալ Անգլիայի ընկերվարականների բոլոր շարժառիթները։ Երբեմն նրանք պատրաստ են մինչեւ իսկ ներբողել բոլշեվիկեան յեղափոխութիւնը՝ լոկ մի բան սարսափեցնելու համար իրենց ազգային բուրժուազիային և զիջումներ շորթելու համար։ Իսկ մտերմական զրոյցների մէջ նրանք սովորական humour-ով կ'ասեն.

— «Դուք հայերդ, վրացիներդ, ռուս և այլ հալածականներդ երդուեալ թշնամի էք բոլշեվիզմի,—այդ միանգամայն հասկանալի է։ Հասկանալի է և այն, որ ռուսական փորձը չի կարող երբեք օրինակ լինել քաղաքակրթուած Արեւմուտքի համար... Սակայն, անպէտք լինելով Արեւմուտքի համար, այդ սիստեմը կարող է պատշաճել Ռուսաստանի պէս մի երկրի, ուր կան տակաւին կիսավայրենի ժողովուրդներ... Այնտեղ թերեւս կարող է իրագործուել մի տեսակ նախնական կոմմունիզմ, նման այն սիստեմներին, որոնք եղել են այլ և այլ մարդկային ցեղերի մէջ նախապատմական ժամանակներում... Չէ՞ որ Ռուսաստանը «միր»-ի, համայնքի, նահապետական կոմմունիզմի երկիրն է, չէ՞ որ դիքտատուրան նրան պատշաճ մի ռէժիմ է, չէ՞ որ ռուս ժողովուրդը անզարգացած է քաղաքականապէս և տուեալ չէ աւելի ազատ ռէժիմների... Եւ այլն և այլն։

Յամենայն դէպս, ռուսական ձեւի մի դիքտատուրա ապրել չի կարող ոչ իսկ ամիսներ Փարիզում, Լոնդոնում, Վաշինկտոնում»։

Բրէյլսֆորդ եւս, հակառակ իր բոլոր ռուսանպաստ յօդուածներին *), համոզուած հակաբոլշեվիկ է — այդպէս էլ յայտարարեց համագումարում։ Երբ բրիտանական մի պատուիրակութիւն վերադառնալով Մոսկուայից, հրատարակեց իր տպաւորութիւններն ու կարծիքները ռուս երկրի մասին, Բրէյլսֆորդ այդ առթիւ հետեւեալը գրեց։

— «Ռուսաստանում չկայ քաղաքական կամ քաղաքացիական ազատութեան ստուերն անգամ։ Չկայ ոչ մամուլի, ոչ խօսքի ազատութիւն։ Իշխող կոմմունիստ կուսակցութիւնը չի հանդուրժում ոեւէ օպոզիցիա (ընդդիմադիր ոյժ), ոեւէ ձեւի տակ։ Անգամ կու-

*) Մեկ յօդուածի մէջ նա գրեթէ նոյնիսկ գատապարտում էր վրացիների վերջին ապստամբութիւնը Սովէտների դէմ,— և ոչ այն պատճառով, որ դա հղկիցած, անպատրաստ և վրացոց համար ոչ տաւար մի ձեռնարկ էր...

սակցութեան ներսում ձեւի համար թղթի վրայ գրուած կանոնագիրը առանց այլեւայլի ստնահարում է վարչ քլիկի կողմից։ Ցենզուրան (գրաքննութիւնը) խեղդում է գրական ստեղծագործութիւնը։ Չկայ ոչ մի անկախ մամուլ, որպիսին սակայն եղել է անգամ ցարիզմի ամենավատթար ժամանակներում, չնայած բոլոր հալածանքներին...»։

Մոսկուան իր յաւիտենական դաւերով ի վերջոյ յետ մղեց իրենից այդ սակաւաթիւ գործիչներն անգամ։ Մաքդոնալտի կառավարութեան դէմ աւելի եռանդով դաւում էր ռուս-անգլիական կոմմունիզմը, քան Բոլդուինի կուսակցութիւնը։ Այդ վերջինի անակնկալ յաղթանակի մէջ վճռական դեր խաղացին կոմմունիստները և այն երկիւղը, որ նրանք ներշնչել էին ոչ միայն պահպանողական, այլ և ազատական տարրերին։ Ռուսական կարգերի նոյնիսկ հեռաւոր ուրուականը, նրանց ներմուծման նոյնիսկ աղօտ հաւանականութիւնը Անգլիայի մէջ սարսափեցրել էին անգամ ժողովրդական, դեմոկրատ տարրերը և մղել նրանց պահպանողական կուսակցութեան գիրկը *)։

Ընկերվարական Լէյբուր Պարտի-ն տեսաւ, որ կոմմունիստները աւելի վտանգաւոր են աշ-

*) Եւ այդ կուսակցութիւնը տարաւ չախչախիչ յաղթանակ, բայց դլխաւորապէս ի հաշիւ ազատականների։ Աշխատաւորական կուսակցութիւնը թէեւ այնպէս կորուստներ ունեցաւ (193-ից նրա ներկայացուցիչների թիւը պարլամենտում իջաւ 153-ի), բայց ընդհանուր առմամբ պահպանեց իր դիրքերը։

խատաւորական դատի համար, քան պահպանողականները։

Ընտրութիւններից յետոյ աշխատաւորական Daily Herald-ը անճանաչելի էր... Ահա թէ ի՞նչ էր գրում նա կոմմունիզմի (կամ բոլշեվիզմի) մասին.

«Կոմմունիստական շարժումը ահագին չարիք է պատճառել։ Եթէ, այսուհանդերձ, մենք աւելի համբերատար ենք դէպի ռուսական ձեւի կոմմունիզմը, պատճառն այն է, որ մենք հաշուի ենք առնում նրա պատմական ծագումը։ Նա անխուսափելի հետեւանք է մի հրէշային բռնակալութեան. նրա իրագործողը մի ժողովուրդ է, որ իր զանգուածով անընդունակ է յարմարուելու արեւմտեան դեմոկրատիային։ Մեր դէմոկրատիան հնարաւոր է, վասն զի ամբողջ դարեր ենք գլորել՝ այն պատրաստելու համար։ Ռուսաստանում, անգամ կրթուած դասակարգը հազիւ միայն հարիւր տարուայ կեանք ունի։ Բռնութիւնը, անգրագիտութիւնը, դաւը, լրտեսութիւնը, ազատ կարծիքի ճնշումը, անտարբերութիւնը դէպի ճշմարտութիւնը, — սրանք բոլորը ռուսական բնաւորութեան գծերն են, որ ստեղծել է դեսպոտիզմը (բռնակալութիւնը)։ Ռուս պահպանողականութիւնը տարբեր է Բոլդուինի ուղղութիւնից։ Հարկաւ, մենք յետ ենք մղում այդ բարբարոս և օտար վարդապետութիւնը...»։

Եւ սա բրիտանական սոցիալիզմի ընդհանուր կարծիքն է։

Իր մի համագումարում, Լիվերպուլի մէջ— անցեալ սեպտեմբերի վերջերում—Աշխատաւո-

ական կուսակցութիւնը որոշեց ճնշող մեծամասնութեամբ չընդունել իր գիրկը որեւէ կոմմունիստ։

Միանգամայն բնական որոշում։ Այդ մարդիկ մտնում էին Աշխատաւորական կուսակցութեան մէջ — ինչպէս նաեւ Ամստերդամին յարող արհեստակցական միութիւնների մէջ— մէկ նպատակով միայն՝ քանդել այդ բոլոր ընկերվարական կազմակերպութիւնները, որոնք նրանց աչքում սխալ, դաւաճան ուղղութիւն ունին և բոլշեվիկացնել այդ զանգուածները, ներշնչել նրանց ռուսական ոգին, մղել նրանց անգիտակցաբար դէպի նոյն ձախորդ, վաղաժամ, յախուռն շարժումներն ու աղէտները... Տարբե՞ր է նրանց գործելակերպը ընկերվարական գործելակերպից — հիմնականապէս տարբեր երկու կուսակցութիւնները անհաշտելի են, ուստի և կոմմունիստի համար տեղ չկայ երբեք ընկերվարական կուսակցութեան շարքերում, ինչպէս և ընկերվարականը տեղ չունի երբեք կոմմունիստական կուսակցութեան մէջ։

Նոյն շարժառիթներով էր, որ 1896-ի Լոնդոնի միջազգային սոցիալիստ համագումարը որոշեց դուրս վտարել իր ծոցից անիշխանականներին, որոնք, նման բոլշեվիկներին, մտնում էին բանւորութեան շարքերի մէջ կազմալուծման գործը միայն առաջ տանելու և այդ շարքերը անիշխանական դարձնելու համար։ Աշխատաւորութեան դատն էր վնասւում այդ դաւադրական ձեռնարկներից, զանգուածները չհետեւեցին և չէին կարող հետեւիլ ա-

նիշխանական առաքեալներին, որոնք կ'ուզէին առաջ բերել սոցիալական յեղափոխութիւն մի բուռն փոքրամասնութեան խելայեղ ժեստերով, թագաւորներին և նախարարապետներին կոտորելով և ռումբեր նետելով պարլամենտների ու այլ հանրային հաստատութիւնների մէջ... *)։

ԿԱՈՒՑԿԻ, ՄԱՐՏՈՎ ԵՒ ԶԻՆՈՎԻԷՎ

Զենք յիշատակի բոլոր հակաբոլշեվիկ ու հեղինակաւոր կարծիքները Եւրոպայում։ Ուղղափառ մարքսիզմի ամենահեղինակաւոր քուրմերից Կարլ Կաուցկի, Մարքսի և Էնգելսի անմիջական աշակերտը, Լենինի ու մեր բոլորիս ուսուցիչը, երկար ու խորունկ ուսումնասիրութիւնից յետոյ, արձակել է քանիցս իր անվերապահ դատավճիռը բոլշեվիզմի ու Երրորդ Ինտերնացիոնալի դէմ։ Նա յայտարարում է բառացի թէ չկայ աշխատաւորութեան համար աւելի վատթար, աւելի վտանգաւոր թշնամի, քան Սովէտական ռէժիմը... Աւելի վատթար, ասում է Կաուցկի, քան մաղառ Հորթի, իտալացի Մուսսոլինիի և նոյնիսկ ռուս ցարերի բռնապետութիւնը...

Ոչ ոք կենդանի գէմքերի մէջ աւելի եր-

*) Այսօր այլևս գոյութիւն չունի անիշխանական կուսակցութիւն, երբեւ քիչ թէ շատ ազդեցիկ գործօն որեւմտեան շարժումների մէջ։ Նա գրեթէ բոլորովին լուծուած է բոլշեվիզմի և տինգիկաների մէջ։

կար և աւելի ջերմեռանդ չի սպասաւորել պրոլետարական, ընկերվարական իդէալին և ոչ ոք աւելի իրաւունք ունի խօսելու այդ իդէալի անունով, քան Կարլ Կաուցկի։ Բայց ռուսական բոլշէվիկների աչքում նա «դեղին» է, հակայեղափոխական է, սոցիալ-դաւաճան է, կապիտալիզմի և բուրժուազիայի գործակալ է, վասն զի մերժում է բոլշէվիզմը։ Կաուցկու հետ են, սակայն, Օտտօ Բաուէրները և Ֆրից Ադլերները, որոնք դեռ երէկ մէկ տարի առաջ Երրորդ Ինտերնացիոնալի մէջ էին։

Դիմենք մի այլ հեղինակութեան։ Այս մէկի դէմ բոլշէվիկները քաջութիւն չեն ունենայ չպրտելու վերոյիշեալ անարգանքները։

Լիսցիդ Մարտով։ Ռուս Սոցիալ-Դեմոկրատիայի պարագլուխը Պլեխանովից յետոյ, այն մարդը, որի հեռանալը բոլշէվիկեան բանակից մեծ ցաւ պատճառեց Նոյնիսկ Լենինին։ Արդարեւ, Մաքսիմ Գորկի, վերջերս հրատարակած իր մի խիստ հետաքրքրական գրուածքում *) հետեւեալն է գրում.

— Եւ նրանից (Լենինից) ցաւի, զղջումի մէկ խօսք միայն լսեցի.

— «Ափսո՜ս, որ Մարտովը մեզ հետ չէ. այո՛, շատ ափսոս — ի՜նչ զարմանալի ընկեր է նա և ի՜նչ ազնիւ մարդ...»։

Արդ, Մարտով նոյն անզիջող քննադատականն ու ամբաստանութիւնն է ուղղել սովէտական յեղափոխութեան և ռէժիմի դէմ,

*) Ֆրանսերէն՝ Lenin et le Paysan Russe (Տես էջ 89)։

ինչ որ «դաւաճան Կաուցկին»։ Բաւական է յիշել նրա յուզիչ մենամարտը Զինովիեվի հետ Հալլէի կոնգրէսում (1920-ի վերջերին), ուր գերմանական «անկախների» կուսակցութեան առջեւ նրանք երկուսով պիտի պարզէին իրենց տեսակէտները համայնավարութեան եւ ընկերվարութեան շուրջը։ Բաւական է կարդալ Մարտովի արամաբանող և խարանող ճառը ի պատասխան Զինովիեվի, որը եկել էր յատկապէս Մոսկուայից՝ փաստաբանելու Սովիէտների դատը Գերմանական պրոլետարիատի առջեւ եւ միանգամ ևս ծանուցանելու «Համաշխարհային Յեղափոխութեան» մօտալուտ բանկումը։

Մարտով, հին ու մարզուած մարքսիստը, շատ աւելի հմուտ մարքսիզմի և ընկերային գիտութիւնների մէջ, քան Զինովիեվներն ու Ստալինները, ցոյց տուեց անժխտելի վաւերագրերով, թէ որքան կոպտօրէն խեղաթիւրուած ու կեղծուած է Կարլ Մարքսը Մոսկուայում և թէ բոլշեվիկեան Յեղափոխութիւնը վիժած է հէնց այն պատճառով, որ դէմ է գնացել մարքսիզմի օգուն, արհամարհել է տնտեսական ազգակի դերը, անտես է առել Ռուսաստանի արդիւնաբերութեան յետամնաց վիճակը։

Մարտով խարանում է բոլշեվիկների պատեհապաշտութիւնը։ Ասում է, որ նրանք միանում են անգամ էնվէր փաշային, տալիս են արտօնութիւններ արեւմտեան բուրժուազիին՝ կապիտալիզմը վերաստեղծելու համար Ռուսաստանում։ Նրանք ամբոխավար ձեւերով շահագործում են զանգուածների դժգոհ, ըմբոստ

որամադրութիւնները, խոստանալով նրանց, մօտալուտ ու համատարած հասարակական յեղաշրջումներ և մղելով նրանց դէպի կորուստաբեր բռնկումներ։

Մարտով ասում է, որ ռուս բոլշեվիկները պատմական ծանր պատասխանատուութիւն ունին յեղափոխական շարժման այն բոլոր աղիտաբեր վիժումների համար, որ տեղի են ունեցել Ֆինլանդիայում, Բավարիայում, Ունգարիայում։

Խօսելով բոլշեվիզմի արեւելեան քաղաքականութեան մասին, նա ասում է ի միջի այլոց։

«Այն վաւերագրերը, որ այսեղ կարդաց Զինովիեվը, բոլշեվիկների և Էնվեր փաշայի յարաբերութեանց մասին, աւելի վշտալի են, քան զաւրաճալի։ (Շա՜տ ճիշտ է, գոչում են ժողովից)։ Եւրոպական դիպլոմատիայի և նրա պարագլուխների այդ անողոք գատախազները խոստանում են ժողովուրդների դահիճ Էնվեր փաշային տալ իրենց վստահութիւնը, եթէ նա զղջայ, քաւէ իր սխալները։ Այդպէս, մէկ միլիոն հայերի կոտորածը ներւում է աւելի դիւրութեամբ, քան «տարտարոսի հակայեղափոխական դաւաճանութիւնը» մի Ռոբէր Սմիլլի, մի Միւհայմի, մի Դարագոնայի» (Շա՜տ լաւ, գոչում են սրահից)։

Մարտովին բազմիցս նախազգուշացրել էին, որ եթէ Հալլէի կոնգրէսին հրապարակով գուրս գայ բանակաւելու Զինովիեվի դէմ, իր անձը պիտի վտանգուի Ռուսաստան վերադարձին...

Ընկերվարական պարագլուխը այդ աթիւ զզուանքով յայտարարում է, որ այդ իրողութիւնն ինքնին ապացոյց է, թէ որքան ցած

մակարդակի վրայ է կանգնած ռուսական յեղափոխութիւնը (Լսեցէ՛ք, լսեցէք)։

— «Ամօթ եմ զգում իմ երկրի համար, երբ մտածում եմ, որ ռուս պրոլետարիատի քսան տարուայ հերոսական կռիւներից ու երեք յեղափոխութիւններից յետոյ, օտարերկրեայ ընկերները դեռ իրաւունք են համարել մի այդպիսի նախազգուշացումն ուղղելու ինձ։ Եւ, անտարակոյս, իմ այստեղ արտասանած իւրաքանչիւր խօսքի համար ընդդեմ բոլշեվիկ կուսակցութեան ու քաղաքականութեան, այժմ իսկ, նախ քան իմ վերադարձը, արդէն վրէժխնդիր կը լինին այնտեղի իմ կուսակցական ընկերներից, որոնցից հարիւրաւորներ հեծում են բանտերում...*) (Ցաւզմունք սրահի մէջ. ճիշտ. ամո՜թ, ամո՜թ... Երկարատեւ ժխոր և նախագահի զանգակահարութիւն)։

---

*) Քաղուածները բերում ենք հաւի իտալերէն թարգմանութիւնից, տպուած Միլանի գիտական-ընկերվարական հանդէսի մէջ (Critica Sociale 1921 թ., թիւ առաջին)։

Համաշխարհային յեղափոխութեան տեղ՝ համաշխարհային ռէակցիա...

Ուրիշ բան չէր կարող արտադրել այդ նոր տեսակի Համայնավարութիւնը, որ բոլշեվիզմ անունն է կրում և որի պատուարն է հին, յետամնաց Ռուսաստանի նոր, կարմրագգեստ սատրապութիւնը։

Նա աշխարհ եկաւ 1917 թուականին մեծ յաւակնութիւններով։ Նա պէտք է— ըստ հեգելեան արտայայտութեան—ոտքի վրայ կանգնեցնէր երկրագունդը, որ դրուած է գլխիվայր։ Նա պէտք է մէկ հարուածով փարատէր տիեզերական աղջամուղջը և իրագործէր արդարութեան ժարդկութեան դարաւոր երազը։

Բայց իր խանձարուրի մէջ իսկ՝ նա կրում էր արդէն ճակատագրական և մահաբեր բծերը։ Իր բարոյական մահկանացուն կընքում էր արդէն 1917-ին, երբ բռնի ոյժով ցրւում էր համառուսական Սահմանադիր Ժողովը, երբ սուիններին ապաւինելով, դուրս էր քշում ընկերվարական մեծ ու ծաւալուն կուսակցութիւնները այն բոլոր դիրքերից, որ նրանք նուաճել էին խաղաղ, ռամկավարական ընտրութիւնների ճանապարհով...

Աւերակների վրայ բազմած, Ղազարոսի

պէս աղքատ ու սնանկ, կղզիացած ու երեքուն՝ նա տեսաւ, որ իր փրկութիւնը համաշխարհային իրարանցումի մէջ է և փորձեց վառել հրդեհը՝ նախ Արեւմուտքում, ապա երբ այնտեղ փորձերը ձախողեցին, դիմեց դէպի Արեւելք, դէպի Թիւրքիա, դէպի Բալկաններ, վերջապէս, դէպի Ծայրագոյն Արեւելք։ Ամէն տեղ—ֆիասկո։

Աֆրիկայում և Ասիայում, մօտ ու հեռաւոր Արեւելքում նա պարզում է փարիսեցի/օրէն ազգերի ազատութեան դրօշը, ոտքի է հանում կիսավայրենի ժողովուրդները ընդդէմ իմպերիալիստ Եւրոպայի, յանուն ազգային ինքնորոշման և անկախութեան, իսկ ներսում, իր տիրապետութեան սահմանների մէջ խեղդում է բոլոր ազգային ինքնորոշումներն ու անկախութիւնները և նոյնիսկ կիսաֆէօդալական թիւրք հայաջինջ բռնակալութեան հետ միացած, դաւ է նիւթում փոքրիկ, աղատասէր հայ ժողովրդի դէմ, պատռում նրա ազատութեան դաշնագիրը, մասնատում նրա հողերը և բաժանում նրա դարաւոր ոսոխներին...

Քաղաքացիական կռիւները, համաշխարհային իրարանցումն ու քաոսը — նրա գոյութեան պատճառն են, նրա հարազատ տարերքը, որից դուրս՝ նա ընդարմանում է, շնչահեղձ լինում։ Սկզբից ի վեր նա «մարգարէացել էր», թէ պետութիւնների յարաբերութիւնները միշտ աւելի պիտի սրուին, թշնամանան, թէ ֆրանս-գերման հակամարտութիւնը վերստին պիտի բռնկուի արիւնահեղ բախումներով, թէ Թիւրքիան ու Իսլամ աշխարհը

ապստամբելով պիտի խորտակեն ֆրանսանգլիական իմպերիալիզմը, թէ նոյնը պիտի անեն Չինաստանը, Հնդկաստանը, Պարսկաստանը...

Բայց գուշակութիւնները միշտ էլ վրիպեցին. նոր պատերազմի տեղ՝ առաջ եկաւ Լոկարնօի խաղաղութեան դաշնագիրը, Ֆրանսիան յաղթանակեց Մարոկկոյում ու Սիրիայում, Անգլիան՝ Մոսուլի մէջ,—և Թիւրքիան, հակառակ իր «սրտառուչ բարեկամութեան» Մոսկուայի հետ՝ միշտ աւելի հեռանում է Սովէտներից ու հակւում դէպի Եւրոպա. նմանապէս՝ Պարսկաստանը, Չինաստանը և միւս ասիական երկիրները։

Սկզբից ի վեր՝ «մարգարէացել էր», թէ շուտով ահա արեւմտեան պրոլետարիատը կը կը պարզէ կարմիր դրօշը—Երրորդ Ինտերնացիոնալի դրօշը—դուրս կը քշէ ընկերվարական «պատեհապաշտ» և «դաւաճան» պարագլուխներին, և կը նիւթէ ընկերային յեղաշրջում, Սովէտների դշանաբանով։

Այդտեղ եւս ամբարտաւան մարգարէն ցոյց տուեց իր խեղճութիւնը, ցոյց տուեց, թէ որքան սխալ է ըմբռնել և գնահատել եւրոպական անցուդարձերը։

Եւրոպայի պրոլետարիատը երես դարձրեց Ասիայի կարմիրներից, մնաց հաւատարիմ իր վաղեմի, ընկերվարական պարագլուխներին և նրանց հետ վերստեղծեց ընկերվարական Ինտերնացիոնալը։

Այդ արդէն մահավճիռն էր ռուսական համայնավարութեան դէմ... Երկու հակա-

մարտ Ինտերնացիոնալից՝ մէկը ներկայացնում է Ասիան, միւսը՝ Եւրոպան, մէկը՝ բռնութեան սկզբունքը, միւսը՝ ազատութեան։ Մէկը դաւանում է դիքտատուրա, միւսը՝ ռամկավարութիւն։ Երկուքը՝ անհաշտելի հակառակներ են, մէկը փնտռում է յաւիտենօրէն կռիւ, իբարանցում, արիւնատ ցնցումներ ու կատաստրոֆներ, միւսը՝ կազմակերպուելով ու մղելով հանդերձ իր դասակարգային պայքարը, լծուել է Եւրոպայի ու աշխարհի վերաշինութեան հսկայ գործին, այն գիտակցութեամբ, որ պատերազմներից, քաղաքական, ֆինանսական տագնապներից ամենէն աւելի տառապում է ինքը աշխատաւոր ընդհանրութիւնը... բայց նաեւ այն գիտակցութեամբ, որ եւրոպական ու համաշխարհային կացութիւնը դեռ բնաւ հասունցած չէ ընկերային, սոցիալիստական Յեղափոխութեան համար...

Այստեղ է դժուարակնճիռ հանգոյցը, որ անանցանելի խրամատ է ձգել ռուսական Համայնավարութեան և եւրոպական Ընկերվարութեան միջեւ։

Ցստակ ու որոշ է այդ վերջինի հաւատամքը։ Ընկերային (սոցիալիստական) Յեղափոխութիւնը չի «արուում» բռնութեամբ ու դէկրէտներով, բուրժուազիան թալանելով ու կոտորելով, այլ նա կ'առաջանայ ինքնաբերաբար, երբ արդէն պատրաստ կը լինին նրա անհրաժեշտ տարերքները հասարակութեան արգանդի մէջ. այսինքն, երբ տնտեսական կեանքը, արդիւնաբերութիւնը կը հասնի իր զարգացման բարձրագոյն աստիճաններին, երբ

ամկավարութեան ոգին կը թափանցէ երկրի բոլոր հատատութիւնները, երբ հարստութեան նիւթական բարիքների հետ կ'ամբարուի նաեւ բաւականաչափ գիտութիւն, փորձառութիւն, մշակոյթ՝ մանաւորապէս աշխատաւոր դասակարգի մէջ, որին վիճակուած է մի օր ստանձնել բուրժուազիայի դերը, վարել տընտեսական և ընկերային կեանքի բովանդակ մեքանիզմը։

Ընկերային Յեղափոխութիւնը առաջ կը գայ այն ժամանակ, երբ ընկերվարական գաղափարը ոչ միայն կը նուաճէ մեծամասնութիւն, ոչ միայն խոր արմատներ կը ձգէ տընտեսական յարաբերութիւնների մէջ, այլ և կը տարածէ նոյն արմատները Իրաւունքի ու կուլտուրայի աշխարհում, երբ մանաւորապէս աշխատաւորութիւնը կը հասնի ամենաբարձր գիտակցութեան, որպէս զի կարենայ ազատագրել ոչ միայն իր դասակարգը (դա ռուս-բոլշեվիկեան յղացումն է, որ արատաւորում է սոցիալիզմի մեծ վարդապետութիւնը), այլ բովանդակ մարդկութիւնը... և որպէս զի իշխանութիւնն իր ձեռքն առնելով, նա արժանի լինի իր վեհ, պատմական կոչման, կառավարէ երկիրը համաձայն մարդկայնութեան պատուիրաններին և ոչ իր նեղ, դասակարգային էգոիզմի թելադրանքին։ Եւ դրա համար անհրաժեշտ է կրթութեան ու դաստիարակութեան երկարատեւ պրոցէս՝ Դէմոկրատիայի և Ազատութեան գերագոյն նշանակի տակ։

Դիքտատուրայով, բռնութեամբ ու դեկրէտներով չի կարելի պատրաստել ընկերվարա-

կան գիտակցութիւն մասսաների մէջ, ոչ էլ այնպիսի տնտեսական յարաբերութիւններ, որոնք չկան կեանքի մէջ, որոնց տակաւին չի պատրաստել, կամ անբաւարար չափով է պատրաստել տուեալ երկրի պատմական զարգացումը։

Ահա թէ ինչո՛ւ այդ բոլոր ներկայ ու անցեալ խորհրդային երկիրներում — Ռուսաստան, Ունգարիա, Բաւարիա — չի եղել իրօք ոչ մի ընկերային, սոցիալիստական յեղափոխութիւն, ինչպէս որ չի եղել ու չկայ պրոլետարիատի դիքտատուրա։

Ընդհակառակը՝ այդ երկիրներում կատարուածը ընկերային հակայեղափոխութիւն է, քանի որ իշխող համայնավար կուսակցութիւնը կոխկռտել, փճացրել, սաբոտաժի է ենթարկել տնտեսական զարգացման բնականոն ընթացքը և հասցրել է տնտեսական յարաբերութիւնները միջնադարեան վիճակին։

Եթէ ռուս սովէտները սկսէին նրանով, ինչով վերջացրին (նէօ-նէպ . . .)— ի հարկէ, աւելի լաւ կ'անէին—նուազ վատթար։ Տնտեսութեան սաբոտաժը և երկրի ընդհանուր վիճակը այնքան զարհուրելի չէին լինի։ Ցարիզմն անգամ այս աստիճան չէր դանդաղեցրել տընտեսական զարգացման պրոցէսը...

*
* *

Շատերն են ասել—համայնավարութիւնը, բոլշէվիզմը զուտ ռուսական մի երեւոյթ է, առանձին կրքով չեշտում է այդ Մերեժկովսկի, Ռուսաստանի և Եւրոպայի ժամանակակից մեծագոյն գրողներից ու գրական քննադատներից մէկը։

Զուտ ռուսական երեւոյթ է—և նրա մէջ ապրում է Ստենկա Ռազինի, Պուգաչեովի, Բակունինի անհանգիստ ու աւերիչ ոգին, Տոլստոյի ժխտման ոգին,—ժխտումն արեւմտեան կուլտուրայի «արուեստական պատուղների», քաղաքակրթութեան բարդ ու կնճռոտ նուաճումների և ձգտումն դէպի բնութիւն, դէպի բնական, նահապետական պարզութիւն—Մերեժկովսկիի բարբառով— «դէպի բնազանցական վայրենութիւն», դէպի հարթ ու հաւասար ստեպը, դէպի լայնարձակ ու միօրինակ ստեպը, ծննդավայրը հին, թափառական սկիւթացիների... Այդ ոգին է, որ արտայայտւում է նոյնութեամբ Արակչէէվի, Բակունինի, Պուգաչեովի, Ռազինի, Լէնինի, Տոլստոյի մէջ...

«Մ կրաւեցին, հարթեցին Ռուսաստանը—այժմ կը հարթեն Եւրոպան ու ողջ աշխարհը...»։

Այստեղ արդէն վրիպում է Մերեժկովսկիի գրիչը։ Համայնավարութեան պատուհասը, ասում է նա, պիտի հեղեղէ ու կործանէ նաեւ Եւրոպան, վասն զի սա էլ ունի իր Տոլստոյը—Ժան Ժակ Ռուսսօն։

Սակայն Ժան Ժակը Տոլստոյ չէ, հակառակ իր մի քանի գաղափարներին, արտայայտուած իր ծանօթ երիտասարդական «ճառի» մէջ՝ «ընկերային անհաւասարութիւնների» շուրջը։

Ընկերային դաշինքի հեղինակը և Ազատութեան թէօրիայի առաջին մեծ ձեւակերպողը—որի մտքերը ցուցադրեցինք ներկայ գրքուածքում—խորապէս արեւմուտցի է իր ամբողջական դէմքով։

Անշուշտ, նա եւս իր հրեղէն հանճարով առաջ բերեց փոթորիկներ ու աւերումներ—տալով ամենաուժեղ զարկը ֆրանսիական Յեղափոխութեան—բայց հոս տեղն է յիշատակել գերման բանաստեղծի ծանօթ բառերը «Die Lust der Zerstorung ist eine shaffende Lust...»*)։

Ռուսսօն Տոլստոյ չէ և մանաւանդ Բակունին ու Լէնին չէ։ Ռուսաստանը երբեք չպիտի կարենայ բռնադրել իր քայքայիչ, տարբալուծող վարդապետութիւնները ազատասէր ու ստեղծագործող Արեւմուտքին։ Ռուսական համայնավարութիւնը, Լէնինի Երրորդ Ինտերնացիոնալը երբեք չպիտի կարենայ յաղթահարել արեւմտեան բազմամիլիոն ու գիտակից ընկերվարական բանակը, այլ ինքն է, որ հարուածներ կրելով, հեռզհեռէ պիտի նահանջէ իր փխրուն դիրքերից և ի վերջոյ պիտի չքանայ անփառունակ մահով, որպէս ժահրատ մի վերք հիւանդ մարդկութեան կուրծքի վրայ, ու պիտի տեղի տայ—հաւատա՛ւմ ենք այնու-

*) Աւերումի ոգին ստեղծագործող ոգին է (բառացի՝ ցանկութիւն. Մ. Վ.)։

ամենայնիւ—նոր, ստեղծագործող հոսանքնե-
րի ու կարգերի... Պիտի կերտուի Դիքտատու-
բայի ու բռնութեան աւերակների վրայ նոր,
ազատ Ռուսաստանը իր հարիւր միլիոնաւոր
ժողովուրդով ու տասնեակ ազգութիւններով...
Պիտի կերտուէ՛ նոյն արիւնոտ աւերակների
վրայ Հայաստանը, այդ (ապէս եւրոպատիպ
Համայնքը, որ 5-րդ դարուց ի վեր—երբ Քը-
րիստոնէութեան նշանակի տակ, տաճարի գիւ-
ռից յետոյ, մէկէն ի մէկ բողբոջեց իր չքեղ
գրականութիւնն ու փարթամ մշակոյթը—բը-
նազդօրէն մղուել է դէպի Արեւմուտք, ձրգ-
տելով իրեն արժանի տեղը բռնելու ազատ ազ-
գերի գերդաստանում, բայց որի բոլոր ազա-
տական և չինարար մղումները խաթարուել են
յաւիտենօրէն իր ասիատիպ, ապիկար ու ա-
զատասպան դրացիների ձեռքով...

ՄԱՏԵՆԱՇԱՐ «ՅՈՒՍԱԲԵՐ»

1.— ԼՈՒԱԾ ՋՐԱՂԱՑԸ, Հ. Զուտերման 2 Շիլին
Թրգմ. Գ. Մխիթարեան
2.— ԻՆՉ ՁԷՐ ԵՒ ԻՆՉ ՉՊԻՏԻ ԼԻՆԻ
ՄԵՐ ՈՒՂԻՆ Վ. Նաւասարդեան 1 Շիլին
3.— ՀԱՑ-ԹՐԻԱԿԱՆ ԿՆՃԻՌԸ Ռուբէն 6 է. դ.
Նախաբան՝ Վ. Նաւասարդեան
4.— Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ
ԱՆԵԼԻՔԸ Վ. Նաւասարդեան 8 է. դ.
5.— ԵՐԿՈՒ ԱՄԻՍ ԲՈԼՇԵՎԻԿԵԱՆ
ԲԱՆՏՈՒՄ Բախշի Իշխանեան 10 է. դ.
Կենսագրական գծեր՝
Վ. Նաւասարդեան
6.— ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ «ԼԻԿԻԻԴԱՑԻԱՆ»
(Բոլշեւիզմի սնանկութեան առիթով)
Վ. Նաւասարդեան 7 է. դ
7.— ԷՋԵՐ ԻՄ ՕՐԱԳՐԷՆ Գ. Նժդեհ 5 է. դ.
8.— ԸՆԿԵՐՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ
ԴԵՄՈԿՐԱՏԻԶՄԸ Վ. Նաւասարդեան 2 է. դ.
9.— ԹԵՐԷԶ ՌԱՔԷՆ Էմիլ Զոլա
Թրգմ. Գ. Մխիթարեան 15 է. դ.
10.— ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԲԱՂԱՔԱԿԱՆ
ՈՒՂԻՆ Վ. Նաւասարդեան 7 է. դ.
11.— ԿԱՑՍԸԸ Լ. Շանթ 10 է. դ.
12.— ՀԱՑ ՄԻՏՔԸ. Ս. Ֆրանգեան 3 է. դ.
13.— ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՎԷՃ «Յուսաբեր» 2 է. դ.
14.— ԿԱԹՈՒՇԿԸ Ա. Ահարոնեան 3 է. դ.
15.— ՀԱՄԱՑՆԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ
ՀԱՄՍՇԽԱՐՀԱՑԻՆ ՅԵՂԱՓՈԽՈՒ-
ԹԻՒՆԸ Մ. Վարանդեան 12 է. դ.

ՀԱՑԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԻՒՆԸ Գիրք 3 է. դ.
Վ. Նաւասարդեան